

Հարգելի ընթերցող,

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունն իր գործունեության տասն տարիների ընթացքում համաձայնեց է ազնի թան չդառնալու օրացված, որոնք հաշվառվել են www.artsakhlib.am հասցեով գործող «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքէջ, որն Արցախի և Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների վարարչյալ գիտական, գեղարվեստական և մասնագիտական կույրների համահավաք շտեմարան է:

Ներկայումս կայքում առկա կույրների թանկան անցել է 13.500-ի, իսկ կույրների հեղինակների թիվը՝ 6.100-ի սահմանափակքը:

Եթե ունեք Արցախի և Հայաստանի վարարչյալ տաղարված գիտական աշխատանք և այն կցված կայքէջում տեղադրելու զանկություն, խնդրում ենք ուղարկել artsakhlib@gmail.com էլեկտրոնային փոստով: Իսկ եթե փնտրում եք Արցախի և Հայաստանի վարարչյալ տեղեկատվություն, առկան դեռ չեք գտել, գրե՛ք մեզ նույն հասցեով և մենք կփորձենք օգնել ձեզ:

Նշենք, որ «Գիտական Արցախ» տարրերականում ընդգրկված գիտական հոգվանների էլեկտրոնային տարրերականները ևս կարող եք մե՛կ-մե՛կ հերքունել Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքէջ:

Dear reader!

«Union of Young Scientists and Specialists of Artsakh» (UYSSA) NGO has initiated more than four dozen programs during the ten years of its activity, of which the Artsakh E-Library website can be singled out - www.artsakhlib.am, which presents a consolidated repository of scientific, artistic and educational materials reflecting various spheres of life of Artsakh and Armenia.

Currently, the number of materials on the site exceeded 13,500, and the number of authors of materials - 6,100.

If you have published scientific work about Artsakh and Armenia and you wish to make it available on our website, please send it to the following e-mail address: artsakhlib@gmail.com. And if you are looking for the information on Artsakh and Armenia but have not found it yet write to us to the same e-mail and we will try to help you.

It should be noted that you can also download FREE electronic versions of scientific articles published in the journal «Scientific Artsakh» from the Artsakh E-Library website.

Уважаемый читатель!

Общественная организация «Объединение Молодых Учёных и Специалистов Арцаха» (ОМУСА) в течение своей десятилетней деятельности инициировала более четырёх десятков программ. Среди них можно выделить сайт *Электронной библиотеки Арцаха* - www.artsakhlib.am, который является сводным хранилищем научных, художественных и познавательных материалов, отражающих различные сферы жизнедеятельности Арцаха и Армении.

На данный момент количество материалов на сайте превысило 13,500, а количество авторов материалов - 6,100.

Если у Вас имеется изданная научная работа об Арцахе и Армении и желание опубликовать на нашем сайте, то просим отправить её на следующий адрес электронной почты: artsakhlib@gmail.com. А если Вы ищете сведения об Арцахе и Армении, но пока ещё не нашли их, напишите нам по тому же адресу, и мы попробуем помочь Вам.

Отметим, что также можете БЕСПЛАТНО скачать из сайта Электронной библиотеки Арцаха электронные варианты научных статей, опубликованных в журнале «Научный Арцах».



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ SCIENTIFIC ARTSAKH НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(23), 2024



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(23), 2024

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ SCIENTIFIC ARTSAKH НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4 (23), 2024

www.scientificartsakh.com

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականն ընդգրկված է նաև ԲԻՈԼԿ միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում և գտնվում է www.elibrary.ru կայքում:

The journal «**Scientific Artsakh**» is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Supreme Certifying Committee of the Republic of Armenia (SCC RA).

The journal «**Scientific Artsakh**» is also included in the RSCI (Russian Scientific Citation Index) International Scientific Information Database and posted on www.elibrary.ru website.

Журнал «**Научный Арцах**» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (БАК РА).

Журнал «**Научный Арцах**» также включен в международную научно-информационную базу данных РИНЦ и размещен на сайте www.elibrary.ru.



«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2024

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ (№14/5, առ 31.05.2023 թ.):

Համարը հրատարակության է երաշխավորել
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը:

Նվիրվում է Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման հիմնադրման 10-ամյակին

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արման ԱՍՐՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու

Անդամներ՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լենա ԱՍՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Զուլիխտա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գայանե ԵՂԻՍԱԶԱՐՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)
Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)
Օտտո ԼՈՒԽՏԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, մշակութաբանության դոկտոր, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մանուկ Մբրահամ ՄԱԼԽԱՍՅԱՆ, աստվածաբանության դոկտոր, պրոֆեսոր (**Ելու Յորք, ԱՄՆ**)
Աշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալեքսանդր ՆԵՎԵՐՈՎ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ (**Սարատով, ՌԴ**)
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ամիր ՉԱԲԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ելու Յորք, ԱՄՆ**)
Գուրգեն ՊԵՏՐՈՍՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր (**Ելուրեներգ, Գերմանիա**)
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն ՍԱՖՐԱՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)
Ջրիտան ղը ՎԱՐԴԱՎԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Լոնդոն, Մեծ Բրիտանիա**)
Գարիկ ԶԵՈՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գիտական Արցախ, № 4 (23), 2024, Երևան, «ԱՐՅԱՒ» հրատարակչություն, 2024,
256 էջ:**

**«Գիտական Արցախ» պարբերականի 2024 թ. 4-րդ (23-րդ) համարի տպագրույթ-
յան աջակցել է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամը, ինչի համար
էլ հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:**

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the Journal «Scientific Artsakh».

***Dedicated to the 10th Anniversary of the Establishment
of the Union of Young Scientists and Specialists of Artsakh***

EDITORIAL COUNCIL

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D. in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Arman ASRYAN, Ph.D. in Economics

Members:

Anna ASATRYAN, Doctor of Arts, Professor
Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Amit CHHABRA, Doctor of Law, Professor (New York, USA)
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Irina HAYUK, Doctor of Cultural Studies, Associate Professor (Lviv, Ukraine)
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D. in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Manuk Abraham MALKHASIAN, Doctor of Theology, Professor (New York, USA)
Ashot MARKOSYAN, Doctor of Economics, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D. in Economics, Associate Professor
Alexander NEVEROV, Doctor of Economics, Associate Professor (Saratov, Russia)
Gurgen PETROSSIAN, Doctor of Law (LL.M.) (Nuremberg, Germany)
Ruben SAFRASTYAN, Academician of NAS RA, Doctor of History, Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economics, Professor
Christian de VARTAVAN, Doctor of History (London, Great Britain)
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Gayane YEGHIAZARYAN, Doctor of Philology, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 4 (23), 2024, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2024, 256 pages.

The publication of the 4th (23rd) issue 2024 of the Journal «Scientific Artsakh» was supported by the «Luys» Cultural, Scientific, Educational Foundation, to whom we express our deepest gratitude.

**Посвящается 10-летию основания
Объединения молодых учёных и специалистов Арцах**

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Арман АСРЯН, кандидат экономических наук

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Анна АСАТРЯН, доктор искусствоведения, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Кристиан де ВАРДАВАН, доктор исторических наук (Лондон, Великобритания)
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, доктор культурологии, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Гаяне ЕГИАЗАРЯН, доктор филологических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Манук Авраам МАЛХАСЯН, доктор богословия, профессор (Нью-Йорк, США)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Александр НЕВЕРОВ, доктор экономических наук, доцент (Саратов, Россия)
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Гурген ПЕТРОСЯН, доктор юридических наук (Нюрнберг, Германия)
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Рубен САФРАСТЯН, академик НАН РА, доктор исторических наук, профессор
Амит ЧАБРА, доктор юридических наук, профессор (Нью-Йорк, США)

Научный Арцах, № 4 (23), 2024, Ереван, Издательство «АРЦАХ», 2024, 256 страниц.

Изданию 4-го (23-го), 2024 г. номера журнал «Научный Арцах» содействовал культурный, научный, образовательный фонд «Луйс», за что мы выражаем глубокую благодарность.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS СОДЕРЖАНИЕ

Խմբագրականի փոխարեն. ԱԵԳՄՍ-Ի 10-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ9

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Արթուր Ղամբարյան. Օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքները (հայերեն)12

Artur Ghambaryan. Prohibitions on the Use of Evidence Obtained in Accordance with the Procedure Established by Law (in Armenian)

Артур Гамбарян. Запреты на использование доказательств, полученных в установленном законом порядке (на армянском)

Նազելի Սուքիասյան. Բյուջետային օրենսդրության խախտումների պատասխանատվության իրավական առանձնահատկությունները (հայերեն)25

Nazeli Sukiasyan. Legal Peculiarities of Liability for Violations of Budget Legislation (in Armenian)

Назели Сукиасян. Правовые особенности ответственности за нарушение бюджетного законодательства (на армянском)

Մարիամ Գրիգորյան, Ռոման Բեգլարյան. Արցախում կատարված պատերազմական հանցագործությունների համար միջազգային իրավական պատասխանատվության որոշ հիմնահարցեր (հայերեն)36

Mariam Grigoryan, Roman Beglaryan. Some Issues of International Legal Responsibility for War Crimes Committed in Artsakh (in Armenian)

Мариам Григорян, Роман Бегларян. Некоторые вопросы международно-правовой ответственности за военные преступления, совершенные в Арцахе (на армянском)

Ալեքսանդր Կոչուբաև. Բնական իրավունքի ազդեցությունը հայ իրավաբանական ուսմունքների վրա (հայերեն)49

Alexander Kochubaev. The Influence of Natural Law on Armenian Legal and Political Teachings (in Armenian)

Александр Кочубаев. Влияние естественного права на армянские правовые и политические учения (на армянском)

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

Մհեր Շիրինյան. Հավաքական գործակցության մոդելը անվտանգային արտաքին քաղաքականության ձևաչափում. տեսամեթոդական գնահատումներ (հայերեն)60

Mher Shirinyan. The Model of Collective Cooperation in the Format of Foreign Policy Security: Theoretical-Methodological Assessments (in Armenian)

Мгер Ширинян. Модель коллективного сотрудничества в формате внешне-политической безопасности: теоретико-методологические оценки (на армянском)

Մարտին Աղաջանյան. Թվային փոխակերպումը որպես ինտեգրված սոցիալական ծառայությունների արդյունավետության բարձրացման գրավական (անգլերեն)73

Martin Aghajanyan. Digital Transformation as a Driver for Improving the Effectiveness of Integrated Social Services (in English)

Мартин Агаджанян. Цифровая трансформация как гарант повышения эффективности интегрированных социальных услуг (на английском)

Շարեն Ղազարյան. Վրաստան-ՌԴ հարաբերությունների էվոլյուցիան (2003-2008թթ), աշխարհաքաղաքական լարվածության, տնտեսական ճնշումների և ռազմավարական հնարավորությունների SWOT վերլուծություն (անգլերեն)84

Karen Ghazaryan. The Evolution of Georgia-Russia Relations (2003-2008): a SWOT Analysis of Geopolitical Tensions, Economic Pressures and Strategic Opportunities (in English)

Карен Казарян. Эволюция отношений Грузия-Россия (2003-2008): SWOT-анализ геополитических напряженностей, экономических давлений и стратегических возможностей (на английском)

Բագրատ Վարդանյան. Կենսաէթիկական ժամանակակից քաղաքագիտության համակարգում. քաղաքական պատասխանատվության ձևավորման կենսաէթիկական և բարոյական հրամայականները (հայերեն)99

Bagrat Vardanyan. Bioethics in the System of Modern Political Science: Bioethics and Moral Imperatives of Forming Political Responsibility (in Armenian)

Баграт Варданян. Биоэтика в системе современной политической науки: биоэтика и моральные императивы формирования политической ответственности (на армянском)

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

Ռենա Մովսեսյան. Ղարաբաղի բարբառի դարձվածների ուսուցումը (հայերեն)108

Rena Movsesyan. Teaching Phraseological Units of the Karabakh Dialect (in Armenian)

Рена Мовсесян. Обучение фразеологизмам Карабахского диалекта (на армянском)

Վարդուհի Բարսեղյան. Անանիա Սանահնեցու «Մեկնութիին Մատթեի Աւետարանի» երկի նորաբանությունները և դրանց իմաստաբանական առանձնահատկությունները (հայերեն)121

Varduhi Barseghyan. Neologisms in the «Commentary on the Gospel of Matthew» by Anania Sanahnetsi and their Semantic Feature (in Armenian)

Вардуи Барсегян. Неологизмы в «Комментарии к Евангелию от Матфея» Анании Санахнеци и их семантические особенности (на армянском)

Սպարտակ Մխիթարյան. Հայերենով գովազդների առանձնահատկությունները սոցիալական ցանցում (անգլերեն)131

Spartak Mkhitaryan. Features of Armenian-Language Advertising on Social Media (in English)

Спартак Мхитарян. Особенности армяноязычной рекламы в социальных сетях (на английском)

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Հովհաննես Հովակիմյան. Վանո Սիրադեղյանի գրական մուտքն ու արձագանքները (հայերեն)143

Hovhannes Hovakimyan. Vano Siradeghyan's Literary Debut and Responses (in Armenian)

Ованнес Овакимян. Литературный дебют Вано Сирадегяна и отклики (на армянском)

ԱՐԿԵՍ, ИСКУССТВО, ART

Միսակ Հարթենյան. Սփյուռքահայ արվեստագետների օֆորտների ժանրաթեմատիկ առանձնահատկությունները 20-րդ դարի Եվրոպայի հասարակական-քաղաքական իրադարձությունների համատեքստում (հայերեն)156

Misak Hartenyan. Genre-Thematic Individuals of Etchings by Armenian Diaspora Artists in the Context of Socio-Political Events in Europe of the 20th Century (in Armenian)

Мисак Артенян. Жанрово-тематические особенности офортов армянских художников диаспоры в контексте общественно-политических событий в Европе XX века (на армянском)

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

Անի Ավագյան, Աննա Առաքելյան. Տրավմատիկ հիշողությունների հոգեկան վերափոխումների առանձնահատկությունները կրկնվող տրավմաների դեպքում (հայերեն)171

Ani Avagyan, Anna Arakelyan. The Features of Psychic Transformations of Traumatic Memories in Case of Repetitive Traumas (in Armenian)

Ани Авагян, Анна Аракелян. Особенности психических трансформаций травматических воспоминаний в случае повторяющийся травм (на армянском)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Աննա Հակոբջանյան, Նարինե Միրզոյան, Դավիթ Հայրապետյան. Բռնի տեղահանվածների սոցիալ-տնտեսական խնդիրների կարգավորման միջազգային փորձը և դրա տեղայնացումը ՀՀ-ում (անգլերեն)178

Anna Hakobjanyan, Narine Mirzoyan, Davit Hayrapetyan. The International Experience in Addressing the Socio-Economic Issues of Forcibly Displaced Persons and its Localization in Armenia (in English)

Анна Акобджанян, Нарине Мирзоян, Давит Айрапетян. Международный опыт в решении социально-экономических проблем вынужденно перемещенных лиц и его локализация в Армении (на английском)

Շարեն Ներսիսյան. Ֆինանսական հոսքերի ձևավորման գործընթացը ՀՀ առևտրային կազմակերպություններում (հայերեն)188

Karen Nersisyan. Process of Formation of Financial Flows in Commercial Organizations of the RA (in Armenian)

Карен Нерсисян. Процесс формирования финансовых потоков в коммерческих организациях РА (на армянском)

Արմեն Մարտիրոսյան. Մշակույթը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների հասանելիության առնչություններում (հայերեն)199

Armen Martirosyan. Culture in the Context of Achieving UN Sustainable Development Goals (in Armenian)

Армен Мартиросян. Культура в контексте достижения целей устойчивого развития ООН (на армянском)

Նարեկ Մելքումյան. Թվայնացման և թվային փոխակերպման ինստիտուցիոնալ և կազմակերպական հիմքերը ՀՀ պետական կառավարման համակարգում (հայերեն)217

Narek Melkumyan. Institutional and Organizational Foundations of Digitalization and Digital Transformation in the Public Administration System of the Republic of Armenia (in Armenian)

Нарек Мелкумян. Институциональные и организационные основы цифровизации и цифровой трансформации в системе государственного управления Республики Армения (на армянском)

Անուշ Պետրոսյան. ՀՀ կառավարության ծրագրերում հարկային քաղաքականության հիմնական առաջնահերթությունների վերլուծությունը (հայերեն)239

Anush Petrosyan. Analysis of the Key Priorities of Tax Policy in the Government Programs of the RA (in Armenian)

Ануш Петросян. Анализ основных приоритетов налоговой политики в программах правительства РА (на армянском)

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները250

The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH»252

Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»254

ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ԱԵԳՄՄ-Ի 10-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ

«Գիտական Արցախ»-ի սույն համարը նվիրված է **Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) 10-ամյակին**, որն առանձնացավ ինչպես ձեռքբերումներով, այնպես էլ, ցավոք, կորուստներով:

Կազմակերպության գործունեության առաջին 10-ամյակի բարձրությունից հարկ է որոշակի արձանագրումներ կատարել Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման նվաճումների մասին:

ԱԵԳՄՄ-ն հիմնադրվել է **2015 թվականի հունվարի 13-ին** և առաջնորդվելով **«Գիտելիքն ուժ է»** կարգախոսով՝ մինչև օրս կազմակերպել է հինգ տասնյակից ավել նախագծեր՝ միջազգային գիտաժողովներ, գիտական ընթերցումներ, դասընթացներ, ճանաչողական հանդիպումներ, օլիմպիադաներ, մրցույթներ, կլոր սեղաններ, գրքերի շնորհանդեսներ, տպագրություններ և այլն՝ նպատակ ունենալով միավորելու Արցախի երիտասարդ գիտնականներին ու մասնագետներին, նպաստելու նրանց գիտական ու ստեղծագործական զարգացմանը, մասնագիտական աճին, միջազգային ինտեգրմանը, ինչպես նաև Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի հասարակական, գիտակրթական կյանքին ակտիվ մասնակցությանը:

Նշված նախագծերից մի քանիսն ունեն նաև միջազգային բնույթ, մասնավորապես՝ **«Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան»** խորագրով գիտաժողովը, **«Արցախի էլեկտրոնային գրադարան»** կայքը և **«Գիտական Արցախ»** պարբերականը:

2020 թ. 44-օրյա պատերազմը խափանեց ինչպես Արցախի Հանրապետության՝ որպես լիիրավ պետության, այնպես էլ ԱԵԳՄՄ-ի կենսագործունեությունը, այն ակտիվ գործունեություն էր ծավալում հիմնականում Արցախում: Հոբելյանական 5-րդ գիտաժողովը կազմակերպվեց ոչ թե 2020 թ.-ին, այլ՝ 2021 թ.-ին:

ԱԵԳՄՄ-ն 2016-2019 թթ. և 2021 թ. սեպտեմբեր ամիսներին Ստեփանակերտում կազմակերպել է միջազգային երիտասարդական գիտաժողովներ՝ **«Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան»** խորագրով, որը նպատակ ուներ քննարկելու հայոց պետականության մասնավորապես վերջին հարյուրամյակի հիմնախնդիրները, ձեռքբերումներն ու զարգացման հեռանկարները, ինչպես նաև բացահայտելու երիտասարդ հետազոտողների գիտական ներուժը՝ ի նպաստ մեր ազգային շահի:

2021թ. սեպտեմբերի 10-12-ը Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում կայացել է **«Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան»** միջազգային 5-րդ հոբելյանական գիտաժողովը: Այն **նվիրված էր Արցախի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյակին**, որին մասնակցել են 10 երկրների 50 անվանի ու երիտասարդ գիտնականներ: Գիտաժողովի արդյունքները տպագրվել են



«Գիտական Արցախ» պարբերականի 10-11-րդ համարներում, որոնց շնորհանդեսը կազմակերպել ենք Ստեփանակերտում, 2022թ. հունվարի 28-ին:

Նշված խորագրով **միջազգային 5 գիտաժողովներին** մասնակցել են աշխարհի **մոտ 20 երկրների 410 մասնակիցներ**, գիտաժողովներն էական նշանակություն են ունեցել Արցախում գիտության զարգացման նոր շեշտադրումների կյանքի կոչման և միջազգայնացման գործում:

2018 թվականին ԱԵԳՄՄ-ն կյանքի կոչեց մի կարևոր նախագիծ՝ գործարկվեց www.artsakhlib.am հասցեով **«Արցախի Էլեկտրոնային գրադարան»** կայքը՝ նպատակ ունենալով մեկտեղելու Արցախի վերաբերյալ գիտական ու գեղարվեստական գրականությունը՝ այն նախ և առաջ օտարերկրացիների համար դարձնելու Արցախի մասին օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու աղբյուր, խթանելու հայկական երկու հանրապետությունների վերաբերյալ հետազոտությունների իրականացումը, ինչպես նաև որոշակիորեն հակազդելու տարբեր մեդիահարթակներում Ղարաբաղյան հակամարտության, հայոց պետականության և այլ իրողությունների վերաբերյալ Ադրբեյջանի և Թուրքիայի կողմից խեղաթյուրվող նյութերին: ԱԵԳ-ը տեղեկատվական պաշարների համակարգված համալրման ու հանրայնացման միջոցով մասնակցում է ուսումնասիրական ու գիտահետազոտական գործընթացներին, ապահովում է շահակիցների տարբեր խմբերի գրադարանային-տեղեկատվական սպասարկումը:

Ներկայումս կայքում առկա է մոտ **6,500** հեղինակների ավելի քան **14,000** աշխատանքներ: Աշխարհի մոտ **160** երկրների ավելի քան **478,000** այցելումների կողմից կայքի թեմատիկ էջերն առ այսօր դիտվել են մոտ **1,2 մլն** անգամ, որը լավ ցուցանիշ է նշված Էլեկտրոնային գրադարանի համար: Ընդ որում, կայքի առավելություններից է այն, որ հիմնական գրականության ներբեռնումն **ԱՆՎՃԱՐ** է: Կայքի անվճար լինելը խթանում է ընթերցանությունը, նպաստում հայոց հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտությունների իրականացմանը. այն գիտությամբ զբաղվելու քարոզչություն է: Կայքի համալրման կարևորագույն սկզբունքը անընդհատությունն է, ինչպես նաև հավաքածուի համալրման աղբյուրների բազմազանեցումը:

Կազմակերպության առանցքային նախագծերից մեկը, ինչպես նշեցինք, 2018թ.-ին **«Գիտական Արցախ»** եռալեզու պարբերականի հիմնադրումն էր (www.scientificartsakh.com), որը 2019 թ.-ից ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, իսկ նախաձեռնողն ու հրատարակիչը՝ ԱԵԳՄՄ-ն:

Այս պահի դրությամբ հրատարակվել են Պարբերականի **23** համարներ, որոնցում տպագրվել են **677 հեղինակների 588 հոդվածներ**, իսկ հոդվածագիրները ներկայացնում են աշխարհի **19** երկրներ՝ Հայաստանը, Արցախը, Արաբական Միացյալ Եմիրությունները, ԱՄՆ-ը, Բելառուսը, Գերմանիան, Դոմինիկյան Ժողովրդական Հանրապետությունը, Եգիպտոսը, Իսրայելը, Իրանը, Լեհաստանը, Լիբանանը, Հարավային Օսեթիան, Ղազախստանը, Շվեյցարիան, Չինաստանը, Ռուսաստանը, Վրաստանը և Ուկրաինան:

Արտասահմանյան գիտնականների ներգրավումը գիտական հանդեսի աշխատանքներին համապատասխանում է ԱԵԳՄՄ-ի առաքելությանը, ուստի՝ մեր աշխատանքի գլխավոր արդյունքը պետք է լինի այն, որ օտարերկրացիներն «Արցախ» ասելով հասկանան ոչ թե հակամարտություն, դեռևս չլուծված

հիմնախնդիր, այլ պետությանը ներհատուկ բոլոր հատկանիշներով օժտված և միջազգայնորեն դեռևս դե յուրե չճանաչված երկիր, որն ապօրինաբար և ցեղասպանական ակտի սպառնալիքի ներքո հայաթափվել է Ադրբեջանի ռազմական գործողությունների հետևանքով, որտեղ մարդիկ ապրել են, արարել, նաև՝ զբաղվել գիտությամբ: Ավելին, Արցախն աշխարհին հայտնի է նաև իր անվանի գիտնականներով, պետական ու ռազմական գործիչներով, արվեստագետներով, գրողներով և այլն:

Պարբերականի հերթական հաջողությունը գրանցվեց 2023 թ. դեկտեմբերին, երբ պաշտոնապես ընդգրկվեց **РИИЦ** (Российский индекс научного цитирования) միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում (www.elibrary.ru), որտեղ առկա են սակավաթիվ հայկական գիտական պարբերականներ:

Պարբերականի գործունեության ընթացքում բազմաթիվ հոդվածագիրներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, մի շարք հեղինակների շնորհիվ է դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումներ, սա էլ ավելի է բարձրացրել Գիտական Արցախի հեղինակությունը, իսկ խմբագրակազմն իր հերթին ավելի է խստացրել գիտական հոդվածներին ներկայացվող որակական պահանջները:

Հոդվածագիրների կողմից առավել գրագետ գիտական հոդված պատրաստելու և տարբեր պարբերականների ներկայացնելու նպատակով ԱԵԳՄՄ-ն նախաձեռնել է **«Ինչպե՞ս գրել գիտական հոդված և տպագրել РИИЦ-ում ու Scopus-ում»** դասընթացների կազմակերպումը, որը, մասնակիցների կարծիքով, Եակնորեն բարելավել է հոդվածագրության իրենց հմտությունները:

Այս տարիներին Կազմակերպությունը նոր համագործակցություններ է սկսել բուհերի և գիտակրթական կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով էլ ավելի ամրապնդելու գիտական կապերն ու իրականացնելու նոր գիտական նախագծեր, իսկ արդեն իսկ իրականացվող առնվազն 3 նախագծերի թվերը խոսում են և առանձին մեկնաբանության անհրաժեշտություն չունեն:

Արցախի ապօրինի (նաև՝ ժամանակավոր) բռնազավթման և հայաթափման հանցավոր գործողությունից հետո **Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորումն** էլ ավելի մեծ պատասխանատվություն է ստանձնում գիտական հանրույթի միավորման, գիտակրթական նախագծերի իրականացման և Արցախի հիմնախնդիր՝ գիտականորեն հետազոտման ու հանրայնացման սուրբ գործում: Կազմակերպությունն այսօր զինվորագրվել է նաև արցախագիտության պահպանման, զարգացման ու տարածման առաքելությանը:

ԱՎԵՏԻԶ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԵԳՄՄ-ի հիմնադիր,

*«Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր,
Արցախի էլեկտրոնային գրադարանի նախաձեռնող և համակարգող,
փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ
ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ***

ՀՏԴ 341.3

DOI: 10.52063/25792652-2024.4.23-12

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և
սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
artur.ghambaryan@gmail.com
ORCID: 0000-0002-6322-4664

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքի առանձնահատկությունները:

Նշված նպատակին հասնելու համար կատարված ուսումնասիրության խնդիրներն են.

1. ցույց տալ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքի և ապացույցների անթույլատրելիության հարաբերակցությունը,
2. ուսումնասիրել.
 - 2.1. ապացույցի փոխարինած լինելու կամ դրա հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկածը
 - 2.2. հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունեցող անձից ստացված տվյալները,
 - 2.3. պաշտպանի բացակայությամբ տրված ցուցմունքից դատարանում հրաժարվելը՝ որպես ապացույցի օգտագործման արգելքի դեպքերին վերաբերող նորմերի բովանդակություն:

Հետազոտության իրականացման ընթացքում հեղինակի կողմից կիրառվել են հետազոտման ընդհանուր մեթոդները՝ դիալեկտիկական, սինթեզետիկ, պատկաման և տրամաբանական, անալիզի և սինթեզի, ֆորմալ-դոգմատիկ մեթոդաբանությունը, և, մասամբ՝ իրավահամեմատական մեթոդը:

Հեղինակի հիմնական եզրահանգումներն են՝

1. օրենսդիրը ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով իրավաբանորեն անհնարին է համարել օրենքով սահմանված կարգով ձեռք բերված համապատասխան ապացույցների օգտագործումը, քանի որ, ամենայն հավանականությամբ, հիմք է ընդունել այն ենթադրու-

* Հոդվածը ներկայացվել է 07.11.2024թ., գրախոսվել՝ 28.11.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

թյունը, որ նկարագրված երեք իրավիճակներում ապացույցները հավաստի չեն (ապացույցի ոչ հավաստիության կանխավարկածը).

2. **հիշատակված հոդվածի տեքստային ձևակերպումը թույլ է տալիս այն կիրառել նաև այն դեպքերում, երբ տեղեկության կրողը մարդն է, օրինակ՝ մարդուն այլ մարդով փոխարինելու միջոցով նրա կրած տվյալները փոխարինելու կամ դրանց հատկանիշները փոփոխելու դեպքերում:**

Հիմնաբանոր՝ ապացույց, փաստական տվյալի անթույլատրելիություն, ապացույցի ոչ հավաստիության կանխավարկած, ապացույցի օգտագործման արգելք, անթույլատրելիության և օգտագործման արգելքի տարբերություն, ապացույցի թույլատրելիության և հավաստիության հատկանիշ, պաշտպանի բացակայությամբ տրված ցուցմունք:

Ընդհանուր դրույթներ

ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի կարգավորման առարկան լայն է. այն սահմանում է ոչ միայն օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներն անթույլատրելի ճանաչելու նյութական կանոնները և վարույթային կարգը, այլ նաև օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու արգելքները: Օրինակ՝ թիվ ԵԴ1/0442/01/23 գործով պաշտպանը միջևորդել է մեղադրյալ Հ. Խ.-ի՝ որպես ձերբակալվածի հարցաքննության արձանագրությունը (ցուցմունքը) ճանաչել անթույլատրելի, քանի որ այն տրվել է պաշտպանի բացակայությամբ (Դատական գործ N: ԵԴ1/0442/01/23) : Նշված գործով դատավոր Ջ. Հայրապետյանը, ուղղելով փաստաբանին, իրավացիորեն նշել է, որ այս պարագայում պետք է քննարկել ոչ թե ապացույցի թույլատրելիության մասին նորմերի, այլ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու արգելքի կիրառության հարցը (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մաս):

Օրենքով սահմանված է օրինական ճանապարհով ստացված տվյալները՝ որպես ապացույցներ օգտագործելու երեք արգելք: Այսպես՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալները չեն կարող որպես ապացույց օգտագործվել, եթե՝

1) առկա է դրանք փոխարինած լինելու կամ դրանց հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկած.

2) դրանք ստացվել են այն անձից, որը հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու պատճառով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները.

3) մեղադրյալը դատարանում հրաժարվել է պաշտպանի բացակայությամբ իր տված ցուցմունքներից (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասեր):

Օրենսդիրն իրավաբանորեն անհնարին է համարել այս ապացույցների օգտագործումը, քանի որ, ամենայն հավանականությամբ, հիմք է ընդունել այն ենթադրությունը, որ նկարագրված երեք իրավիճակներում ապացույցները հավաստի չեն (ապացույցի ոչ հավաստիության կանխավարկածը): Օրենսդիրը, ըստ էության, կասկածի տակ է դրել այս իրավիճակներում հայտնված ապացույցների հավաստիությունը: Ինչպես նշվեց, եթե առկա է տվյալը (տվյալի կրիչը կամ ապացույցը) փոխարինած լինելու ողջամիտ կասկած, ապա ենթադրվում է, որ այդ ապացույցը հավաստի չէ, կամ եթե տվյալները ստացվել են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձից, ով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները, ապա ենթադրվում է, որ նման անձից ստացված տվյալները հավաստի չեն, կամ եթե մեղադրյալը դատարանում

հրաժարվել է ցուցմունքից, որը նախաքննության ընթացքում տվել է պաշտպանի բացակայությամբ, ապա ենթադրվում է, որ այդ ցուցմունքը հավաստի չէ:

Ապացույցի անթույլատրելիության և օգտագործման արգելքի տարբերությունները

Վերոգրյալից պարզ դարձավ, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածում ամրագրված են տվյալների (ապացույցների) օգտագործման անհնարինության վերաբերյալ երկու խումբ նորմեր. առաջին խումբը *օրենքի էական խախտմամբ* ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության մասին նորմերն են, իսկ երկրորդը՝ *օրենքով սահմանված կարգով* ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու սահմանափակման (արգելման) նորմերը:

Տվյալներն (ապացույցներն) անթույլատրելի են, եթե ձեռք են բերվել օրենքի էական խախտմամբ, իսկ ապացույցի օգտագործման արգելքի դեպքում թեև ապացույցը հավաքելիս օրենքի խախտում թույլ չի տրվել, սակայն Օրենսդիրը, հիմք ընդունելով այդ իրավիճակում հայտնված ապացույցների ոչ հավաստիության կանխավարկածը, արգելել է թույլատրելի (օրինական ճանապարհով ստացված) ապացույցների օգտագործումը:

Ի տարբերություն ապացույցի անթույլատրելիության՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցի օգտագործման արգելքի դեպքում «թունավոր ծառի պտուղները թունավոր են» կանոնը և ապացույցի թույլատրելիության անհամաչափության (ասիմետրիայի) կանոնը կիրառելի չեն, քանի որ վերջին երկու կանոնները կապված են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալների հետ: Օրինակ՝ ի տարբերություն «թունավոր ծառի պտուղները թունավոր են» կանոնի, օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալների օգտագործումը թեև ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով արգելվում է, սակայն օրենքը չի արգելում այդ տվյալների (օրինական ճանապարհով ստացված) հիման վրա ձեռք բերված այլ ապացույցների օգտագործումը: Օրինակ՝ քննիչը հոգեկան խնդիրներ ունեցող անձի ցուցմունքի հիման վրա կատարել է խուզարկություն և ձեռք է բերել իրեղեն ապացույցներ: Այս պարագայում հոգեկան խնդիր ունեցող այն անձի ցուցմունքը, որը առողջական խնդիր ունենալու պատճառով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները, իրավաբանորեն չի կարող օգտագործվել, սակայն նրա ցուցմունքի հիման վրա կատարված խուզարկության արդյունքում ձեռք բերված ապացույցները կարող են օգտագործվել որպես ապացույց:

Ապացույցների օգտագործման արգելքները

Ապացույցի փոխարինած լինելու կամ դրա հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկածը

Օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալները չեն կարող որպես ապացույց օգտագործվել, եթե առկա է դրանք փոխարինած լինելու կամ դրանց հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկած (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետ): Այս նորմի հիմքում ընկած է ապացույցի ոչ հավաստիության կանխավարկածը, քանի որ Օրենսդիրը, տվյալը (տվյալի կրիչը կամ ապացույցը) փոխարինած (հատկանիշները փոփոխած) լինելու ողջամիտ կասկածից ելնելով, ենթադրում է, որ այդ ապացույցը հավաստի չէ:

Այս նորմում խոսք է գնում երկու տարբեր իրավիճակների մասին. առաջին իրավիճակը տվյալի կրիչները (օրինակ՝ տեղեկություններ բովանդակող առարկաները և փաստաթղթերը) այլ կրիչներով *փոխարինելու* ողջամիտ կասկածի մասին է:

Առարկաները և փաստաթղթերն այլ կրիչներով փոխարինելու դեպքում փոխարինվում են նաև այդ կրիչների բովանդակած տվյալները:

Երկրորդ իրավիճակը տվյալի կրիչի հատկանիշները *փոփոխելու* ողջամիտ կասկածի մասին է, որի պարագայում, թեև կրիչներն այլ կրիչներով չեն փոխարինվել, սակայն փոփոխության են ենթարկվել այդ կրիչի հատկանիշները, որի արդյունքում փոփոխվել են նաև տվյալները:

Տվյալները փոխարինելու կամ դրա հատկանիշները փոփոխելու ռիսկերից խուսափելու համար կարևոր նշանակություն ունի, հատկապես, առարկաները կամ փաստաթղթերը փաթեթավորելու, կնքելու, պահպանելու, տեղափոխելու վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված նորմերի պահպանումը:

Տվյալները փոխարինած լինելու կամ դրանց հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկածը կարելի է փարատել, իսկ ապացույցի ոչ հավաստիության կանխավարկածը կարելի է հերքել, օրինակ, այդ ապացույցը ձեռք բերած կամ կազմած անձին դատարանում հարցաքննելու եղանակով (ՀՀ քր. դատ. օր.-ի 311-րդ հոդվածի 4-րդ մաս):

Վերոգրյալից պարզ է դառնում, որ տվյալները փոխարինելու կամ դրանց հատկանիշները փոփոխելն իրականացվում է այդ տվյալների կրիչների փոխարինման կամ փոփոխման միջոցով: Որպես տեղեկությունների կրիչ՝ առաջին հերթին, հանդիսանում են առարկաները և փաստաթղթերը, սակայն նկատի ունենալով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում չի նշվում տեղեկության կրիչի տեսակի կամ բնույթի մասին, ուստի՝ այս հոդվածի տեքստային ձևակերպումը թույլ է տալիս այն կիրառել նաև այն դեպքերում, երբ տեղեկության կրողը մարդն է, օրինակ՝ մարդուն այլ մարդով փոխարինելու միջոցով նրա կրած տվյալները փոխարինելու կամ մարդու կրած տվյալների հատկանիշները փոփոխելու դեպքերում: Օրինակ՝ ողջամիտ կասկած կա, որ իրական վկայի փոխարեն ցուցմունք է տվել պլաստիկ վիրահատության միջոցով նրան էապես նմանեցված այլ անձ: Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ բացակայում են ցուցմունքները փոխելու նպատակով մեղադրյալի կամ վկայի նկատմամբ հարկադրանք կիրառելու մասին փաստեր, սակայն իրավիճակն առաջացնում է ողջամիտ կասկած այն մասին, որ համապատասխան խոցելի իրավիճակում հայտնված անձի հաղորդած տվյալները փոփոխվել են, օրինակ՝ ձերբակալված անձը, որի վրա առկա են վնասվածքներ, ցուցմունք է տվել պաշտպանի բացակայությամբ, և ցուցմունք տալուց անմիջապես հետո նրան ազատ են արձակել: Այս իրավիճակը թույլ է տալիս ենթադրել, որ բարձր է հավանականությունը, որ նման իրավիճակում անձի հաղորդած տվյալները ենթարկվել են փոփոխության:

Այս հարցում հետաքրքրական է թիվ ԼԴ2/0062/01/18 գործով դատարանների որոշումները, որոնք եթե կայացվեին 2021թ. ՀՀ քր. դատ. օր.-ի գործողության պայմաններում, ապա դատարանների համար առավել հեշտ կլինեք տարբերակել ապացույցի թույլատրելիության և հավաստիության հատկանիշները: Նշված գործով բացակայել է անձից խոստովանական ցուցմունքները բռնությամբ կամ սպառնալիքով կորզելու որևէ փաստ, սակայն այդ խոստովանական ցուցմունքները ստացվել են այնպիսի պայմաններում, որոնք այդ ցուցմունքների պատշաճության վերաբերյալ հարուցում էին ողջամիտ կասկածներ, մասնավորապես՝ անձը գտնվել է անազատության մեջ, նրա հետ անազատության պայմաններում ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից պարբերաբար անցկացվել են «օպերատիվ հարցազրույցներ», որից հետո անձը տվել է խոստովանական ցուցմունք: Այդ ընթացքում բացակայել է պաշտպանը, խոստովանական ցուցմունքներ տալու նախաձեռնությամբ հանդես է եկել անձը՝ վարույթն իրականացնող մարմնին այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով, իրեն մեղավոր ճանաչելուց և խոստովանական ցուցմունք տալուց անմիջապես հետո անձն արգելանքից ազատ է արձակվել:

Նշված գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը փաստել է, որ նշված խոստովանական ցուցմունքների անթույլատրելիության մասին բողոքաբերը վերաքննիչ բողոքում չի նշել այնպիսի արձանագրված փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կտային հաստատված համարելու, որ անձը նախաքննական ցուցմունքները տվել է հարկադրանքի կամ ապօրինի ազդեցության արդյունքում: Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշված գործով 12.02.2021թ. որոշմամբ արձանագրել է. «Վերը նշված հանգամանքները ողջամտորեն կասկածի տակ են դնում անձի՝ նախաքննական խոստովանական ցուցմունքների թույլատրելիությունը, ապա նաև **արժանահավատությունը** (ընդգծումը՝ հեղ.): Մասնավորապես, սույն գործով տեղի ունեցած վերոնշյալ հանգամանքների ժամանակագրական հաջորդականությունը, անկողմակալ դիտորդի տեսանկյունից ստվերում է անձի՝ նախաքննական խոստովանական ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը: Նման պայմաններում, ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս, մինչ անձի նախաքննական խոստովանական ցուցմունքները՝ որպես վերջինիս մեղքը հիմնավորող փաստական տվյալներ դիտարկելը պետք է պատշաճ իրավական գնահատականի արժանացնելին դրանք ձեռքբերելուն նախորդող և հաջորդող հանգամանքների համակցությունը. դա հնարավորություն կտար պատշաճ երաշխավորելու վարույթի արդարացիությունը: Այս համատեքստում ստորադաս դատարանները պետք է ձեռնարկելին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն, այդ թվում՝ համապատասխան այցելությունները կատարած ոստիկաններին, անհրաժեշտության դեպքում՝ նաև ձերբակալվածների պահման վայրի աշխատակիցներին հարցաքննելու և անձի նախաքննական ցուցմունքների ձեռքբերման պայմանները ստուգելու ուղղությամբ» (Դատական գործ N: ԼԴ2/0062/01/18):

Ինչպես նկատում ենք, ՀՀ վճռաբեկ դատարանը որոշման մեջ անդրադարձել է ապացույցի թույլատրելիությանն այն պարագայում, երբ անձի նկատմամբ բռնություն գործադրելու մասին որևէ ուղղակի կամ անուղղակի փաստ չի եղել: Եթե այս դատական որոշումը կայացնելու պահին գործեր ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը, ապա դատարանը հնարավորություն կունենար նշված նորմի հիման վրա արգելելու ապացույցի օգտագործումը, քանի որ ստեղծված իրավիճակը, իրավամբ, առաջացնում է ողջամիտ կասկած, որ խոստովանական ցուցմունք տված անձի կրած տվյալների հատկանիշները փոփոխվել են:

Հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունեցող անձից ստացված տվյալները

Օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալները չեն կարող որպես ապացույց օգտագործվել, եթե դրանք ստացվել են այն անձից, որը հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու պատճառով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետ):

Նախ՝ այս նորմից չի կարելի բխեցնել, որ օրենքով արգելվում է հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունեցող անձանց մասնակցությամբ ապացուցողական գործողություններ կատարելը: Եթե օրենքով նշված անձանց մասնակցությամբ գործողությունների կատարումն արգելվեր, ապա պետք է խոսվեր ոչ թե օրենքով սահմանված կարգով ստացված տվյալների օգտագործման սահմանափակման մասին, այլ ապացույցի անթույլատրելիության մասին: Ավելին՝ օրենքով նախատեսված են հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձի հարցաքննությանը վերաբերող հատուկ նորմեր: Օրինակ՝ հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձի հարցաքննությունը չի կարող տևել 2 ժամից ավել (ՀՀ քր. դատ. օր.-ի 217-րդ հոդվածի 3-րդ մաս):

Երկրորդ՝ այս արգելքը կարող է կիրառվել երկու պայմանի գոյության դեպքում՝ 1) անձի մոտ առկա է հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր, 2) առողջական այդ խնդիրների պատճառով անձը զրկված է վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու ունակությունից: Վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները ճիշտ ընկալելու, հիշելու կամ վերարտադրելու՝ վկայի կամ տուժողի ունակ չլինելը հաստատվում է դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մաս):

Երրորդ՝ քննարկվող նորմը վերաբերում է հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունեցող անձից ստացված այնպիսի տվյալների օգտագործման արգելքին, որոնց կրողն անմիջապես այն անձն է, ով այս առողջական խնդիրների պատճառով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու կամ վերարտադրելու այդ տվյալները: Թերևս այս հանգամանքով է պայմանավորված, որ նման անձից ստացված տվյալների օգտագործումն արգելվել է, քանի որ դրանց հավաստիությունը կախված է առողջության խնդիր ունեցող անձի ընկալման, վերարտադրման կամ հիշելու ունակությունից: Օրինակ՝ ճանաչման ժամանակ ճանաչողի փոխանցած տվյալները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, եթե հաստատվի, որ նա մտավոր խնդրի պատճառով կորցրել է հիշելու ունակությունը: Այս պարագայում ճանաչման ենթակա հանգամանքների մասին տվյալների կրողն առողջության խնդիր ունեցող անձն է:

Եթե առողջության խնդիր ունեցող անձը ներկայացրել է, օրինակ, որևէ նյութական կրիչ (օրինակ՝ առարկա), ապա քննարկվող նորմն ինքնին չի արգելում այդ կրիչում արտացոլված տվյալների օգտագործումը, քանի որ այդ տվյալները կրողը ոչ թե առողջական խնդիր ունեցող անձն է, այլ՝ այդ անձի ներկայացրած առարկան: Այդ կրիչում արտացոլված տվյալների գնահատականը կախված չէ այն ներկայացրած անձի՝ որևէ հանգամանք ընկալելու ունակությունից: Այլ հարց է, որ առողջական խնդիր ունեցող անձի հայտնած տվյալները՝ թե ինչ հանգամանքներում (ե՞րբ, որտե՞ղ, ո՞ւմից) է ձեռք բերել այդ նյութական կրիչը, չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

Պաշտպանի բացակայությամբ տրված ցուցմունքից դատարանում հրաժարվելը

Պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մաս): Նույն օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Մինչդատական վարույթում մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող հրապարակվել, եթե դրանք ստացվել են պաշտպանի բացակայությամբ, և մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից»:

ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մասը փոխառվել է հետխորհրդային պետությունների քրեական դատավարության օրենսգրքերից, մասնավորապես՝ 2001թ. ընդունված ՌԴ քր. դատ. օր.-ից, որի 75-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անթույլատրելի է մեղադրյալի՝ մինչդատական վարույթի ընթացքում պաշտպանի բացակայությամբ տված ցուցմունքը, որից նա դատարանում հրաժարվել է¹: «Սալոուզն ընդդեմ Թուրքիայի» գործով Եվրոպական դատարանի մեծ պալատը ևս նշել է. «Արդար դատաքննության իրավունքի բավարար «գործնականությունն ու

¹ Նույնական նորմ մինչ այդ նախատեսված էր նաև 1999 թ. ընդունված Ղրղզստանի Հանրապետության քր. դատ. օր.-ի 81-րդ հոդվածի 4-րդ մասում: Այս նորմի հետագա փոփոխության համեմատական վերլուծության մասին տե՛ս Кылбаев, Аслан. «Уголовно-процессуальный кодекс Кыргызской Республики 2017 года: новеллы. Учебно-практическое пособие.» Бишкек, 2018. – 30 с.

գործունեությունն» ապահովելու համար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը հիմնականում պահանջում է, որ փաստաբանի հասանելիությունն ապահովվի ոստիկանության կողմից կասկածյալի առաջին հարցաքննության պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ յուրաքանչյուր առանձին գործի հատուկ հանգամանքները հնարավորություն են տալիս հիմնավոր կերպով սահմանափակելու այդ իրավունքը: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ հատուկ հանգամանքները կարող են արդարացիորեն թույլ տալ մերժել փաստաբանի ծառայությունների ապահովումը, սակայն նման սահմանափակումները, անկախ պատճառներից, չեն կարող ապօրինի վնաս հասցնել մեղադրյալի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին: **Պաշտպանության իրավունքն անդառնալիորեն կկործանվի, եթե դատական վարույթում օգտագործվեն ոստիկանների կողմից փաստաբանի բացակայությամբ հարցաքննության ժամանակ տրված մեղադրական ցուցմունքները**» (ընդգծումը՝ հեղ.) (ՄԻԵԴ վճիռը «Սալուզն ընդդեմ Թուրքիայի» գործով, կետ 50):

ՌԴ-ում պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված ցուցմունքը, որից նա դատարանում հրաժարվել է, ճանաչվում է անթույլատրելի, այսինքն՝ այս իրավիճակի նկատմամբ, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, կիրառվել է ապացույցի թույլատրելիության ինստիտուտը: Ռուս դատավարագետներն արդարացիորեն քննադատել են օրինական կարգով ստացված ցուցմունքն անթույլատրելիության ինստիտուտի հետ կապելու՝ ռուսական օրենսդրի մոտեցումն այն պարզ պատճառով, որ նկարագրված իրավիճակում մեղադրյալի ցուցմունքը չի կարող որակվել որպես անթույլատրելի ապացույց, քանի որ այն վերցնելիս օրենքի խախտում թույլ չի տրվել, մինչդեռ ապացույցն անթույլատրելի է ճանաչվում, եթե այն ձեռք է բերվել օրենքի խախտմամբ (Балакшин 148, Белоковыльский 81, Кипнис 13, Новиков 41):

ՀՀ օրենսդիրը, ամենայն հավանականությամբ, նկատի ունենալով ռուս դատավարագետների քննադատությունները, ՀՀ քր. դատ. օր.-ում պաշտպանի բացակայությամբ մեղադրյալից ցուցմունք ստանալը, որից նա հետագայում հրաժարվում է, համարել է ոչ թե այդ ցուցմունքն անթույլատրելի ճանաչելու հիմք, այլ այն դասել է օրենքով սահմանված կարգով ստացված այն ապացույցների շարքին, որոնց օգտագործումն արգելվել է:

Պետք է նկատի ունենալ, որ պաշտպանի բացակայությամբ մեղադրյալին հարցաքննելը կարող է մի իրավիճակում լինել օրինական, մեկ այլ իրավիճակում՝ ապօրինի: Այսպես. եթե քննիչը մեղադրյալին հարցաքննելիս անհապաղ միջոցներ չի ձեռնարկել վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, երբ առկա է եղել պաշտպանի պարտադիր մասնակցության հիմք (ՀՀ քր. դատ. օր.-ի 46-րդ հոդվածի 2-րդ մաս), ապա այս իրավիճակում պաշտպանի բացակայությամբ ստացված ցուցմունքը պետք է համարել օրենքի Եական խախտմամբ ձեռք բերված տվյալ, և պետք է այն ճանաչել անթույլատրելի: Մինչդեռ, եթե մեղադրյալը նախաքննության ընթացքում օրինական կարգով հրաժարվել է պաշտպանից (ՀՀ քր. դատ. օր.-ի 47-րդ հոդված), ապա այս իրավիճակում պաշտպանի բացակայությամբ ստացված ցուցմունքն ինքնին ձեռք է բերվել օրինական ճանապարհով, պարզապես, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվում է այդ ցուցմունքից, ապա դրա օգտագործումն արգելվում է:

Տարածված է այն մոտեցումը, որ պաշտպանի բացակայությամբ տրված ցուցմունքի օգտագործումն սահմանափակելու նպատակն այն է, որ մեղադրանքը հիմնականում կամ առավելապես հիմնված չլինի մեղադրյալի ցուցմունքի վրա, և վարույթն իրականացնող մարմինն ինքը շահագրգռված լինի, որ մեղադրյալի հարցաքննությունը կատարվի պաշտպանի ներկայությամբ (Ղուկասյան, Հրայր և ուրշներ 168): Իրականում այս նորմի հիմքում ընկած է առավել խորքային գաղափար: Այս կարգավորման գաղափարախոսության հիմնադիր-դատավարագետները

ժամանակին նշել են. «Պաշտպանի բացակայությամբ տրված մեղադրյալի ցուցմունքն անթույլատրելի է, քանի որ կասկածի տակ է դրվում դրանց կամավորությունը, հետևապես՝ հիմք է տալիս համարելու, որ մեղադրյալն իր դեմ ցուցմունք է տվել հարկադրանքի ազդեցության տակ (Лугинская 6)»:

Այդ նպատակով հետզոտվել են Արցախում Ադրբեջանի կողմից կատարված պատերազմական հանցագործությունները, ինչպես նաև միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումները: Վերլուծվել է Միջազգային քրեական դատարանի դերը՝ պատերազմական հանցագործությունների համար միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու գործում, ինչպես նաև Դատարանի՝ նախկինում կայացրած դատավճիռների նմանություններն արցախյան իրադարձություններին:

Հետազոտության իրականացման ընթացքում հեղինակի կողմից կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (համեմատական-իրավական) սկզբունքներ:

* Հոդվածը ներկայացվել է 12.11.2024թ., գրախոսվել՝ 25.11.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Արցախում տարբեր ժամանակահատվածում կատարվել են պատերազմական հանցագործություններ, որոնց համար միջազգային իրավունքը նախատեսում է միջազգային իրավական պատասխանատվություն:

Հիմնաբառեր՝ պատերազմական հանցագործություններ, միջազգային քրեական պատասխանատվություն, միջազգային քրեական դատարան, Արցախ, խախտումներ, միջազգային իրավունք, միջազգային մարդասիրական իրավունք:

Ներածություն

Ներկա աշխարհաքաղաքական իրողությունների պարագայում, միջազգային հարաբերություններում նկատում ենք զինված հակամարտությունների քանակի կտրուկ աճ, որն էականորեն բարձրացնում է միջազգային իրավական պատասխանատվության ինստիտուտի դերը: Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Ռուսաստանի Դաշնությունում և այլ աշխարհագրական տարածքներում բազմաթիվ զինված հակամարտությունների առկայությունը անհարժեշտություն են առաջացնում միավորել միջազգային հանրության բոլոր ջանքերը՝ դրանք կարգավորելու և հետազայում զինված ընդհարումների առաջացումը կանխելու համար:

Չնայած պատերազմական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության հիմնախնդրի՝ տարբեր տեսական և կիրառական ասպեկտների զարգացման գործում Նշանակալի առաջընթացին՝ մինչ օրս հայաստանյան և արտասահմանյան իրավագետների շրջանում չկա մի շարք հարցերի վերաբերյալ միասնական պատկերացում՝ սկսած պատերազմական հանցագործությունների սահմանման և դրանց դասակարգման խնդրից, վերջացրած այդ արարքների որակավորման ընթացքում հաշվի առնվող հանգամանքների բովանդակությամբ, ներառյալ՝ քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հարցը:

Պատերազմական հանցագործությունների էությունը

Միջազգային իրավունքում պատերազմական հանցագործությունների հարցը շարունակում է մնալ միջազգային արդարադատության կարևորագույն մտահոգություններից մեկը, այն պատճառով, որ դրանք սպառնալիք են համընդհանուր ու տարածաշրջանային խաղաղությանը: Աշխարհում գլոբալիզացիոն գործընթացների արդյունքում ակնհայտ է դառնում զինված հակամարտությունները և պատերազմական հանցագործությունները կարգավորող միջազգային իրավական Նորմերի պահպանման կարևորությունը: Նման հանցագործություններին անդրադառնալով նպատակ ունի կանխելու նմանատիպ վայրագությունները հետագայում: Չնայած պետությունների և միջազգային կազմակերպությունների ջանքերի, որոնք ուղղված են միջազգային հակամարտությունների և պատերազմական հանցագործությունների կանխմանը, այնուամենայնիվ կան մի շարք սուբյեկտներ, որոնք իրականացնում են պատերազմական հանցագործություններ: Նման դեպքերի մենք ականատես ենք եղել Լեռնային Ղարաբաղում, հատկապես՝ 2020 թվականին և դրան հաջորդող ժամանակաշրջանում: Նպատակ ունենալով ուսումնասիրելու և վեր հանելու Լեռնային Ղարաբաղում կատարված իրադարձությունները և դրանց որակում տալու, նախ հարկ ենք համարում անդրադառնալ մի շարք էական հիմքերի՝ կապված պատերազմական հանցագործությունների միջազգային իրավական շրջանակին:

Չինված հակամարտությունները սովորաբար ուղեկցվում են միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումներով: Նման լուրջ խախտումների ցանկը ներկայացված է միջազգային իրավունքի, միջազգային մարդասիրական իրավունքի Նորմերի պայմանագրային աղբյուրներում, միջազգային

քրեական դատարանների կանոնադրություններում և այլն: Ընդ որում, այդ խախտումները ենթադրում են անհատական քրեական պատասխանատվություն այն անձանց համար, ովքեր կատարել են դրանք կամ հրամայել են կատարել, որոշ դեպքերում դրանք ուղղակիորեն համարվում են պատերազմական հանցագործություններ (միևնույն ժամանակ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների տեսակ): Ինչպես նաև համապատասխան միջազգային պայմանագրերի մասնակից պետությունները պարտավորվում են իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային իրավունքի պահանջներին: Իր հերթին ներպետական մակարդակում, որպես պետությունների կողմից ազգային իրավական պարտավորությունների կատարման մաս, ձեռնարկվում են օրենսդրական և այլ միջոցներ, մշակվում և ուժի մեջ են մտնում նման խախտումների համար քրեական պատասխանատվության մասին քրեական օրենսդրության նորմեր: Միջազգային իրավունքի ժամանակակից գիտության մեջ, հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, միջազգային և ազգային քրեական արդարադատության մարմինների պրակտիկան, նման խախտումներ կատարած անձանց քրեական հետապնդման և պատժի առումով դրանց նշանակման մեջ լայնորեն օգտագործվում է նաև «պատերազմական հանցագործություններ» տերմինը (Побанов 166-167):

Նախ՝ հարկ է նշել, որ «պատերազմական հանցագործություններ» տերմինը տարբեր իմաստներով օգտագործվում է տարբեր խախտումներ սահմանելու համար, որոնք ինչ-որ կերպ կապված են պատերազմական գործողությունների և/կամ շարունակվող զինված հակամարտությունների հետ: Միևնույն ժամանակ, շատ հեղինակներ նշում են, որ ցանկացած արարք որպես պատերազմական հանցագործություն ընկալելու ակունքները գալիս են հին ժամանակներից:

Միջազգային քրեական իրավունքի հիմնադիր հայրերից մեկը՝ Ա.Կաստգեն, «պատերազմական հանցագործություններ» տերմինի մասին իր ընդհանուր սահմանման մեջ գրում է, որ դրանք միջազգային մարդասիրական իրավունքի սովորության և պայմանագրային նորմերի «լուրջ խախտումներ» են, դրանք նաև կոչվում են «զինված ընդհարումների միջազգային իրավունք»: Հաշվի առնելով միջազգային ad hoc դատարանների պրակտիկան (Prosecutor v. D. Tadić)՝ ռազմական հանցագործությունը պետք է ունենա հետևյալ հատկանիշները՝

1) կատարված արարքը հանդիսանում է միջազգային մարդասիրական իրավունքի «լուրջ խախտում և «զգալի վնաս է պատճառում» պաշտպանված կարևոր արժեքներին կամ զոհի համար հանգեցնում է «լուրջ հետևանքների»,

2) իրավունքի խախտումը պետք է արտահայտվի սովորության իրավունքի կամ գործող պայմանագրի նորմի խախտմամբ,

3) խախտումը պետք է առաջացնի անհատական քրեական պատասխանատվություն այն կատարած անձի համար,

4) կատարված արարքը պետք է անմիջականորեն կապված լինի միջազգային կամ ներքին բնույթի շարունակվող զինված հակամարտության հետ (Троицкий 135):

Պատերազմական հանցագործությունների սահմանումներ կարելի է գտնել տարբեր իրավական փաստաթղթերում՝ Նյուրբերգի միջազգային ռազմական տրիբունալի, Նախկին Հարավսլավիայի և Բոսնիայի գործերով միջազգային քրեական տրիբունալների կանոնադրություններում, Ժնևի կոնվենցիաներում և դրանց կից լրացուցիչ արձանագրություններում, Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունում, ինչպես նաև «խառը» իրավագործությամբ դատարանների՝ Սիեռա Լեոնեի հատուկ դատարանի, Կամբոջայի դատարանի արտակարգ պալատների փաստաթղթերում: Պատերազմական հանցագործությունների սահմանումների կարող ենք հանդիպել նաև տարբեր երկրների ներպետական օրենսդրություններում և Նախադեպային որոշումներում:

Թեև Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածում բառացի թարգմանությամբ է գործածվում «պատերազմ» հասկացությունը (war crimes), սակայն այսօր այն հնացած իրավական եզրույթ է: Սա պայմանավորված է նրանով, որ «պատերազմ» հասկացությունը XX և XXI դարերի իրավական հասկացությունների շրջանակներում այլևս չի գործում այն պատճառով, որ պատերազմ վարելը (jus ad bellum) հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ մասին, և միայն Կանոնադրության 39-րդ և 51-րդ հոդվածների համաձայն կարելի է դիմել պատերազմի: Այնուամենայնիվ, այդ տերմինաբանությունից խույս տալու նպատակով միջազգային ասպարեզում «պատերազմը» փոխարինվել է «զինված ընդհարում» արտահայտությամբ: Թեպետ պատերազմ վարելը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը, այն նաև միջազգային հանցագործություն է, սակայն՝ ոչ պատերազմական հանցագործություն (jus in bello): Պատերազմական հանցագործությունը, ըստ այդմ, զինված ընդհարման ընթացքում միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարում է: Միջազգային մարդասիրական իրավունքի և միջազգային քրեական իրավունքի միջև նմանությունն այն է, որ միջազգային քրեական իրավունքում առանձին և կոպիտ ոտնահարումների համար նախատեսված է անձնական քրեական պատասխանատվություն: Սակայն միջազգային մարդասիրական իրավունքի ոչ բոլոր նորմերի ոտնահարումներն են հանգեցնում քրեական պատասխանատվության: Ստացվում է, որ բացի նրանից, որ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ խախտումների համար կարող է առաջանալ քրեական պատասխանատվություն, միևնույն ժամանակ ստանձնած միջազգային պարտավորության խախտման համար ևս կարող է առաջանալ պետական պատասխանատվություն: Ուստի՝ պարզելու համար՝ կա՞րոյոք քրեական անձնական պատասխանատվություն միջազգային մարդասիրական նորմի խախտման համար, թե՞ ոչ, անհրաժեշտ է նախ հստակեցնել՝ հնարավոր է արոյոք անհատական մարդասիրական իրավանորմի խախտումը, և արոյոք դա կոպիտ խախտում է, որն անդամայի հետևանքներ է առաջացրել տուժողի համար: Այս մոտեցումը պայմանավորված էր նրանով, որ Հարավսլավիայի և Ռուսիայի միջազգային քրեական դատարանների կանոնադրությունները դատարանին լայն մեկնաբանման հնարավորություն էին տալիս՝ կիրառելու քրեական հետապնդում տարատեսակ մարդասիրական իրավանորմերի խախտումների դեպքում: Այս սովորույթը վերացվեց Հռոմի ստատուտում պատերազմական հանցագործությունների ցուցակի կոդիֆիկացիայով (Պետրոսյան 192):

Պատերազմական հանցագործությունները ճիշտ տարբերակելու համար անհրաժեշտ է դրանք ներկայացնել երկու տեսքով՝ ժնկյան իրավունքի և Հաագայի իրավունքի, որոնք պատմականորեն ու զուգահեռաբար ձևավորվել են և դարձել միջազգային մարդասիրական իրավունքի մաս: Երկուսի միջև տարբերությունն այն է, որ ժնկյան իրավունքով պաշտպանության տակ են առնված առանձին սուբյեկտներ և օբյեկտներ, իսկ Հաագայի իրավունքով արգելված է որոշ տեսակի ռազմական գործողություններ իրականացնելը (method of warfare) (Պետրոսյան 193):

Միջազգային մարդասիրական իրավունքը հստակորեն ամրագրում է դրույթներ, որոնք նվիրված են զինված հակամարտությունների զոհերի պաշտպանությանը, ինչպես նաև պատերազմի վարման մեթոդներն ու միջոցները սահմանափակելուն ուղղված մեխանիզմներին: Միջազգային մարդասիրական իրավունքը պատերազմական հանցագործությունները բնութագրում է որպես միջազգային կամ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների ժամանակ կատարվող միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումներ: Դրանց մի զգալի մասը, որը վերաբերում է միջազգային զինված հակամարտություններին, ներառված է 1949 թվականի ժնկի չորս կոնվենցիաներում և «Լրացուցիչ արձանագրություն 1»-ում (1977 թ.):

1. լուրջ խախտումներ, որոնք ամրագրված են 1949 թվականի ժնկի չորս կոնվենցիաներում (50, 51, 130, 147 հոդվածներ)՝ կանխամտածված սպանություն, խոշտանգումներ և անմարդկային վերաբերմունք՝ ներառյալ Կոնվենցիայի հովանավորությունից օգտվող անձանց կամ գույքի դեմ կենսաբանական փորձերը, կանխամտածված կերպով ծանր տառապանքի կամ լուրջ խեղման պատճառումը, առողջությանը վնաս հասցնելը, գույքի անօրինական, կամայական և մեծ չափերի հասնող ավերումը և յուրացումը, որոնք չեն բխում ռազմական անհրաժեշտությունից:

2. լուրջ խախտումներ, որոնք ամրագրված են 1949 թվականի ժնկի երրորդ կոնվենցիայում (130, 147 հոդված)՝ ռազմագերիներին հարկադրելը՝ ծառայելու հակառակորդ տերության զինված ուժերում կամ Կոնվենցիայով նախատեսված անաչառ և նորմալ դատավարության իրավունքից զրկելը:

3. լուրջ խախտումներ, որոնք ամրագրված են 1949 թվականի ժնկի չորրորդ կոնվենցիայում (147 հոդված)՝ հովանավորող անձանց ապօրինի բռնազաղթը, տեղափոխումը կամ ապօրինի կալանքը, պատանդ վերցնելը:

Միջազգային իրավունքի շրջանակներում գործող միջազգային զինված ընդհարումների ժամանակ կիրառվող օրենքների և սովորույթների լուրջ խախտումները միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների դեպքում 1949թ. օգոստոսի 12-ի ժնկի չորս կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածի լուրջ խախտումները միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների ժամանակ կիրառվող՝ միջազգային իրավունքի շրջանակներում գործող օրենքների և սովորույթների այլ լուրջ խախտումներ:

Այս լուրջ խախտումների ցանկը ներառվել է ժնկի կոնվենցիաներում՝ հիմնականում այն հանցագործությունների հիման վրա, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հետապնդվել են Նյուրնբերգի և Տոկիոյի միջազգային ռազմական տրիբունալների, ինչպես նաև ազգային դատարանների կողմից: Այս ցանկը կրկնվում է նաև նախկին Հարավսլավիայի համար Միջազգային քրեական տրիբունալի կանոնադրության և Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մեջ: Նման լուրջ խախտումները հանդիպում ենք նաև շատ պետությունների ներպետական օրենսդրության մեջ: Այն գաղափարը, որ նման խախտումները ռազմական հանցագործություններ են, որևէ կասկած չի հարուցում (Норма 156. Серьёзные нарушения международного гуманитарного права являются военными преступлениями):

Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 8-րդ հոդվածը ամրագրում է «պատերազմական հանցագործություններ» հասկացությունը:

Ըստ 8-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատերազմական հանցագործություններ են համարվում 1949թ. օգոստոսի 12-ի ժնկի կոնվենցիաների լուրջ խախտումներ, այն է՝ ժնկի համապատասխան կոնվենցիայի դրույթների հիման վրա պաշտպանվող անձանց կամ գույքի դեմ կատարված ներքոհիշյալ գործողություններից յուրաքանչյուրը՝

1. դիտավորյալ սպանությունը

2. խոշտանգումը կամ անմարդկային վերաբերմունքը, ներառյալ կենսաբանական փորձերը

3. դիտավորությամբ ծանր տառապանքներ պատճառելը կամ մարմնական լուրջ վնասվածք հասցնելը, կամ առողջությունը լրջորեն վնասելը

4. գույքի անօրինական, անիմաստ և խոշորածավալ ոչնչացումն ու յուրացումը՝ չպայմանավորված ռազմական անհրաժեշտությամբ

5. ռազմագերիներ կամ պաշտպանյալ այլ անձի՝ արդար և պատշաճ դատաքննության իրավունքից զրկելը

6. անօրինական բռնազաղթը կամ տեղահանությունը կամ անօրինական կերպով ազատությունից զրկելը

7. Պատանդ վերցնելը

Պատերազմական հանցագործությունների այս խումբը ներառված է Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մեջ՝ բացառությամբ ռազմական հանցագործության՝ «դատարանում հակառակորդ կողմի քաղաքացիների իրավունքներն ու հայցերը չեղյալ հայտարարելը, կասեցնելը կամ անթույլատրելի հայտարարելը»: Այս հանցագործությունները արտացոլում են միջազգային իրավունքի սովորական զարգացումը 1977 թ.՝ 1-ին լրացուցիչ արձանագրության ընդունումից հետո:

Ընևարկվող 8-րդ հոդվածի b կետը սահմանում է միջազգային իրավունքի շրջանակներում գործող՝ միջազգային զինված ընդհարումների ժամանակ կիրառվող օրենքների և սովորույթների լուրջ խախտումները (Միջազգային քրեական դատարան փաստաթղթերի ժողովածու 8-10):

Ժնևի Կոնվենցիաներից և արձանագրությունից միանշանակորեն բխում է, որ լուրջ խախտումները ենթակա են պատժի, սակայն պայմանագրերն ինքնին չեն սահմանում պատժամիջոց և ուղղակիորեն չեն նախատեսում հանցագործներին հետապնդելու համար տրիբունալ հիմնադրելու հնարավորություն: Որպես կանոն, այս կամ այն պետության ներպետական քրեական իրավունքը կիրառվում է միայն այն գործողությունների նկատմամբ, որոնք կատարվում են կոնկրետ երկրի տարածքում կամ այդ երկրի քաղաքացիների կողմից (Международное право и ответственность за военные преступления 2005):

Միջազգային մարդասիրական իրավունքն այս առումով ավելի համընդհանուր է: Այն պետություններին պարտավորեցնում է փնտրել և պատժել լուրջ իրավախախտումներ կատարած բոլոր անձանց՝ անկախ նրանց քաղաքացիությունից, հանցագործության կատարման վայրից և վաղեմության ժամկետից: Այս կապակցությամբ հրատապ անհրաժեշտություն էր առաջացել ստեղծել մշտական գործող մարմին՝ Միջազգային քրեական դատարան (ՄԶԴ), որն իրավասու է իրականացնելու Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումների համար պատասխանատու անձանց դատական հետապնդում (Международное право и ответственность за военные преступления 2005):

Արցախում կատարված ռազմական հանցագործություններ

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղում կատարված ռազմական հանցագործություններին, ապա ուսումնասիրությունն ավելի ոյուրին դարձնելու համար կանդիդատանք նախ՝ 2020թ. -ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, այնուհետև՝ 2023թ. -ին կատարվածներին՝ ներառելով Միջազգային քրեական դատարանի մի շարք նախադեպեր, որոնք ներկայացված են յուրաքանչյուր կոնկրետ հանցագործություններից հետո՝ փակագծերում:

2020թ. -ին կատարված հանցագործություններ

Պատերազմական հանցագործություններ-Ռազմական հանցագործությունները վերաբերում են միջազգային մարդասիրական իրավունքի (ՄԻԴ) կոպիտ խախտումներին, որոնք կատարվել են զինված հակամարտությունների ժամանակ: 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում Ադրբեյջանի որոշ կոնկրետ գործողությունները, որոնք կարող են համարվել ռազմական հանցագործություններ, ներառում են.

1. քաղաքացիական անձանց թիրախավորում՝ ադրբեյջանական ուժերի կողմից քաղաքացիական այնպիսի ենթակառուցվածքների թիրախավորում, ինչպիսիք են բնակելի շենքերը, հիվանդանոցները և դպրոցները Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում: Սա կոպիտ խախտում է Ժնևի Կոնվենցիաների, որոնք պաշտպանում

են քաղաքացիական բնակչությանը զինված հակամարտությունների ժամանակ (The Prosecutor v. Stanislav Galic IT-98-29):

2. Արգելված գեղքի կիրառում. հստակ օրինակներ են առկա ադրբեջանական զինուժի կողմից կասետային զինամթերքի կիրառման մասին: Միջազգային իրավունքի համաձայն՝ կասետային զինամթերքն արգելված է դրանց բնույթի և հակամարտությունների ավարտից հետո քաղաքացիական բնակչության համար դրանց երկարաժամկետ վտանգի պատճառով (The Presecuter v. Ante Gotovia et al. IT-06-90):

3. Ռազմագերիների (գերիների) սպանություն. ադրբեջանական զինուժը մեղադրվում է գերիներին մահապատժի ենթարկելու կամ նրանց նկատմամբ դաժան վերաբերմունքի մեջ: Միջազգային իրավունքը պահանջում է, որ ռազմագերիների հետ վարվեն մարդկայնորեն՝ ներառյալ այն, որ նրանք պաշտպանված լինեն բռնությունից, ահաբեկումից և նվաստացուցիչ վերաբերմունքից (The Presecuter v. Dragomir Milošević IT-98-29/1):

4. Մշակութային ժառանգության ոչնչացում. առկա են հիմնավոր ապացույցներ, որ Ադրբեջանը ներգրավված է հայկական մշակութային և կրոնական վայրերի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի եկեղեցիների և վանքերի միտումնավոր ոչնչացման գործում: Նման գործողությունները համարվում են ռազմական հանցագործություններ, քանի որ միջազգային իրավունքը մշակութային ժառանգությունը պաշտպանում է հակամարտությունների ժամանակ (The Presecuter v. Ahmad Ai-Faqi Al-Mahadi, ICC-01/12-01/15):

2023թ. -իև կատարված հանցագործություններ

1. Լեռնային Ղարաբաղի շրջափակում (հումանիտար շրջափակում)- դիտարկում ենք որպես միջազգային մարդասիրական իրավունքի, մասնավորապես՝ ժնկյան կոնվենցիաների խախտում (Prosecutor v. D. Tadić):

2. Բռնի տեղահանում և Էթնիկ զտում. մտահոգություններ կային, որ տեղահանումը «Էթնիկ զտումների» ավելի լայն ռազմավարության մի մասն էր, հատկապես բռնի տեղահանումների, հայերի նկատմամբ բռնությունների և հայկական ունեցվածքի ոչնչացման մասին հաղորդումներով: Էթնիկ զտումները ներառում են Էթնիկ խմբի համակարգված հեռացում տարածքից բռնության, սպառնալիքների կամ հարկադրանքի այլ ձևերի միջոցով (The Presecuter v. Bosco Ntaganda, ICC-01/04-02/06):

3. Թիրախային հարձակումներ քաղաքացիական անձանց և քաղաքացիական ենթակառուցվածքների վրա - ադրբեջանական զինուժի կողմից հրետանային գնդակոծությունների և անօդաչու թռչող սարքերի հարվածների դեպքեր՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Այս հարձակումները վնասել են խաղաղ բնակիչներին, ներառյալ «անօդաչու թռչող սարքերի և կասետային զինամթերքի» օգտագործումը, որոնք արգելված են բազմաթիվ համատեքստերում (The Presecuter v. Slobodan Milošević IT-02-54):

4. Լրագրողների կամայական կալանավորումը և թիրախավորումը. լրագրողներն ու իրավապաշտպանները ենթարկվել են ոտնձգությունների կամ կալանավորման, հատկապես նրանք, ովքեր հաղորդում են Լեռնային Ղարաբաղում մարդասիրական պայմանների մասին: Քաղաքացիական անձանց և լրագրողների կամայական կալանավորումը մարդու իրավունքների միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի խախտում է (The Presecuter v. Thomas Lubanga Dyilo, ICC-01/04-01/06):

5. Մշակութային ժառանգության ոչնչացում. զինված հակամարտությունների ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանությունն ամրագրված է միջազգային իրավունքով, այդ թվում՝ «Հագայի կոնվենցիայով» և «ՅՈՒՆԵՍԿՕ-ի»

կոնվենցիաներով: 2020 թվականի հակամարտության ընթացքում տարածված էին մշակութային ցեղասպանության և հայկական կրոնական վայրերի դիտավորյալ ոչնչացման ապացույցներ: 2023 թվականին այս պնդումները շարունակվեցին, քանի որ ապացույցները շարունակվում էին վնասել հայկական եկեղեցիները և այլ մշակութային հուշարձանները Լեռնային Ղարաբաղում այն բանից հետո, երբ Ադրբեյջանը ստանձնեց տարածաշրջանի լիակատար վերահսկողությունը (The Presecuor v. Al Hassan Ag Abdul Azis Ag Mohamed Ag Mahmoud, ICC-01/12-01/18):

Միջազգային իրավական պատասխանատվության որոշ հիմնահարցեր

Մինչ Նյուրնբերգյան դատավարությունները, միջազգային պրակտիկային հայտնի չէին անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքեր: Համարվում էր, որ միջազգային իրավունքը պարտավորություններ է սահմանում ոչ թե անհատների, այլ պետությունների համար: Այնուամենայնիվ, Տրիբունալը հաշվի չի առել այս իրավական դիրքորոշումը և նշել է, որ «միջազգային իրավունքի դեմ հանցագործությունները կատարվում են մարդկանց կողմից, այլ ոչ թե վերացական կատեգորիաների, և միայն նման հանցագործություններ կատարող անձանց պատժելով կարող են հարգվել միջազգային իրավունքի դրույթները»:

Թե՛ պետությունների և թե՛ անհատների պատասխանատվության դեպքում էլ խոսքը միջազգային իրավական պատասխանատվության տարբեր տեսակների մասին է, որոնք պետք է հստակ տարանջատել: Պետությունը (որպես հասարակության կազմակերպման միջոց), ի տարբերություն անհատի, ի վիճակի չէ ինքնուրույն գործելու, չունի իր սեփական կամքը և ներքին մտավոր վերաբերմունք իր կատարած արարքի նկատմամբ, որը միջազգային իրավունքով ճանաչված է որպես հանցակազմ, չունի հանցագործության անհրաժեշտ տարրերից մեկը՝ սուբյեկտիվ կողմը: Հետևաբար՝ պետությունը չի կարող կատարել հանցագործություն և պատասխանատվություն կրել միջազգային քրեական իրավունքի համաձայն: Բայց պետության մեղքն այն է, որ այն գիտակցաբար վնասում է միջազգային իրավակարգին և դրա համար կրում է քաղաքական, նյութական կամ բարոյական պատասխանատվություն: Միևնույն ժամանակ, պետության արարքի որակումը որպես միջազգային հակաիրավական արարք, և անհատի քրեական պատասխանատվությանը վերաբերող որևէ դրույթ չեն ազդում, պետությունների պատասխանատվության վրա՝ համաձայն միջազգային իրավունքի (օրինակ՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 25-րդ հոդված): Բացի դրանից՝ պետության պատասխանատվության վրա չի ազդում այդ արարքը ներպետական իրավունքի համաձայն իրավաչափ որակելը (Hakamiճze 253-254):

Համաձայն Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի՝ դատարանի իրավագործությունը կարող է գործի դրվել անդամ պետության, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից կամ Միջազգային քրեական դատարանի դատախազի սեփական նախաձեռնությամբ: Համաձայն Հռոմի ստատուտի 14-րդ հոդվածի՝ անդամ պետությունը կարող է Միջազգային քրեական դատարանի դատախազին ներկայացնել այն իրավիճակը, որտեղ ենթադրաբար կատարվել են Դատարանին ընդատյա մեկ կամ մի քանի հանցագործություններ: Միաժամանակ, անդամ պետությունը պետք է նշի կոնկրետ հանգամանքները և տրամադրի ենթադրյալ հանցագործությունների մասին վկայող հասանելի փաստաթղթերը: Անդամ պետությունները կարող են ներկայացնել փաստեր ոչ միայն իրենց տարածքում, այլ նաև այլ անդամ պետության տարածքում ենթադրաբար տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ (օրինակ՝ Ուկրաինա, Ուզանդա, Կենտրոնաաֆրիկյան Հանրապետություն, Մալի, Պաղեստին, Վենեսուելա): ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից դատախազին իրավիճակ ներկայացնելը հիմնվում է ՄԱԿ-ի Կանոնադրության VII գլխի վրա և կարող է ընդգրկել այն պետությունների տարածքները, որտեղ Միջազգային քրեական դատարանը չունի իրավագործություն (օրինակ՝ Սուդան և Լիբիա): Համաձայն Հռոմի

ստատուտի 15-րդ հոդվածի՝ Միջազգային քրեական դատարանի դատախազը կարող է սկսել գործի քննությունը սեփական նախաձեռնությամբ, երբ նրան հասանելի են տեղեկություններ այն հանցագործությունների մասին, որոնք գտնվում են Դատարանի իրավագործության ներքո: Եթե այդ տեղեկությունների մանրակրկիտ գնահատման արդյունքում դատախազը եզրակացնում է, որ քննություն սկսելու համար բավարար հիմքեր կան, դիմում է Միջազգային վարույթի պալատին՝ քննություն իրականացնելու թույլտվություն ստանալու համար: Եթե Միջազգային վարույթի պալատը դիմումի և ներկայացված կյուբերի ուսումնասիրության արդյունքում համարում է, որ քննություն սկսելու համար բավարար հիմքեր կան և գործը, ըստ ամենայնի, գտնվում է Դատարանի իրավագործության շրջանակում, թույլատրում է քննություն սկսել՝ առանց կանխորոշելու գործով իրավագործության և ընդունելիության վերաբերյալ Դատարանի հետագա որոշումները: Մերժումը չի կանխում, որ ապագայում նույն գործի շրջանակում քննություն իրականացվի: Տուժողները կարող են ներգրավվել այս գործընթացում և ներկայացնել իրենց կյուբերը Միջազգային վարույթի պալատին: Այս գործընթացը հայտնի է որպես նախնական ուսումնասիրության փուլ (օրինակ Քենիա, Վրաստան, Բուրունդի, Աֆղանստան, Բանգլադեշ/Մյանմար, Ֆիլիպիններ) (Պետրոսյան 50-51):

Արցախյան իրադարձությունների համար միջազգային իրավական պատասխանատվության լավ նախադեպ է Մյանմայի դեպքով ՄԶԴ վճիռը (Statement of ICC Prosecutor Karim A.A. Khan KC: Application for an arrest warrant in the situation in Bangladesh/Myanmar): Մասնավորապես, 2017թ. -ին Ռուհինգայի բնակչությունը բռնի տեղահանվեց Մյանմայից: 2019թ. -ին դատախազը հետաքննություն սկսեց և հետաքննությունից 5 տարի հետո, դատախազը եկավ այն հանգամանքին, որ կան հիմքեր կասկածելու, որ Մյանմայի գործող նախագահը կատարել է մարդկության դեմ հանցագործություն, մասնավորապես՝ բռնի տեղահանություն և հալածանք: Սա նոր հույս է տալիս, որ կգա ժամանակը, որ նույն այս դիմումը բառ առ բառ կօգտագործվի Արցախի կոնտեքստում (Միջազգային քրեական դատարանը Մյանմայի նախագահին ձերբակալման օրդեր է տվել. նա գործել է Ալիևի նման): Այս նախադեպը մեզ համար կարևոր է այնքանով, որ փաստերի առումով այն նույն հանցակազմն է պարունակում, որ տեղի ունեցավ Արցախում: Պետք է նշել, որ նախորդ տարի այլ երկրների ղեկավարների կապակցությամբ ևս Միջազգային քրեական դատարանը ձերբակալման որոշում էր կայացրել:

Ադրբեջանի իշխանությունների գործողությունների եւ հռետորաբանության վերլուծությունը, զուգորդված Լեռնային Ղարաբաղի Էթնիկ հայերի կենսափորձի հետ, ողջամիտ հիմքեր է տալիս այն եզրակացության համար, որ կատարված պատերազմական հացագործությունները և հայերի բռնի տեղահանումը կանխամտածված են եղել: Այս քաղաքականությունը իրագործվել է կանոնավոր գործողությունների շնորհիվ, որոնք մարդու իրավունքների՝ միջազգային մարդասիրական իրավունքի և միջազգային քրեական իրավունքի կոպիտ խախտումներ են: Ըստ այդմ, Ադրբեջանի փաստաթղթավորված գործողությունները համապատասխանում են նախկին Հարավսլավիայի հակամարտության համատեքստում ընկալվող Էթնիկ զտումների չափանիշներին, որոնք իրականացվում են արտադատական մահապատիժների, խոշտանգումների, կամայական ձերբակալությունների և կալանավորման, սննդի և կյանքը փրկող դեղերի հասանելիության սահմանափակումների միջոցով, քաղաքացիական բնակչության բռնի տեղահանում, կանխամտածված ռազմական հարձակումներ կամ հարձակման սպառնալիքներ խաղաղ բնակչության և քաղաքացիական տարածքների վրա, և գույքի անխնա ոչնչացում (Why Are There No Armenians In Nagorno-Karabakh? 18):

Եզրակացություն

Արցախում տեղի ունեցած իրադարձությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ ադրբեջանական գործողությունները նույնպես պատերազմական հանցագործություններ են՝ միջազգային իրավունքի նորմերի համաձայն: Առկա իրավիճակում միակ ելքը գործը Միջազգային քրեական դատարանին հանձնելու ուղղությամբ ակտիվ գործողությունների իրականացումն է՝ ապահովելու համար այդ արարքների համար պատասխանատու անձանց հետաքննությունը և հնարավոր դատական հետապնդումը: Այսպիսով՝ կարող ենք եզրահանգել, որ Միջազգային քրեական դատարանը միջազգային իրավասու մարմին է, որը կոչված է դատական հետաքննություն անցկացնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու այն ֆիզիկական անձանց, ովքեր մեղավոր են պատերազմական հանցագործություններ կատարելու մեջ, կարելի է համարել նշանակալի ձեռքբերում միջազգային արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, սակայն ներկայիս պայմաններում ունի գործունեության ոչ արդյունավետ մակարդակ, որը շատ հաճախ կապված է քաղաքական գործընթացների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան, Ավետիք և Գրիգորյան, Մարիամ. «Արցախահայության հիմնարար իրավունքների խախտումներն Ադրբեջանի կողմից Արցախյան 3-րդ պատերազմի ընթացքում», *Գիտական Արցախ*, N 4 (15), 2022, էջ 55-68, DOI: 10.52063/25792652-2022.4.15-55:
2. Հովհաննիսյան, Վլադիմիր և ուրիշներ. *Միջազգային քրեական դատարան (փաստաթղթերի ժողովածու)*, Պաշտոնական հայերեն թարգմանություն, Երևան 2018:
3. Պետրոսյան, Գուրգեն. *Միջազգային քրեական դատարանի հետ համագործակցության վերաբերյալ աշխատանքային ձեռնարկ*, <https://rb.gy/93uiib>, վերջին այցը՝ 21.01.2025:
4. Պետրոսյան, Գուրգեն. *Միջազգային քրեական իրավունք/ Գ. Պետրոսյան: Ոստումնական ձեռնարկ: -Եր., ԵՊՀ հրատ., 2021:*
5. «Միջազգային քրեական դատարանը Մյանմայի նախագահին ձերբակալման օրդեր է տվել. նա գործել է Ալիևի նման», *Youtube*, <https://www.youtube.com/watch?v=lb5l8YtVOuQ>, վերջին այցը՝ 13.01.2025:
6. Лобанов, Сергей. «Военные преступления в международном и внутрисоциальном праве». *Образование и право*, N10, 2017, стр. 66-182.
7. Емельян, Волох. «Международное право и ответственность за военные преступления», *Зарубежное военное обозрение*, №9, 2005, стр.19-23, https://factmil.com/publ/strana/oon/mezhdunarodnoe_pravo_i_otvetstvennost_za_voennye_prestupleniya_2005/145-1-0-978 доступно: 17.01.2025.
8. Накашидзе, Бадри. «К вопросу о субъектах международной уголовной ответственности», *Вестник РУДН*, серия Юридические науки, № 4, 2014, стр. 253-261.
9. Customary International Humanitarian Law. *Норма 156. Серьёзные нарушения международного гуманитарного права являются военными преступлениями*. Cambridge University Press, 2005, том II, глава 44, раздел А., <https://ihl-databases.icrc.org/ru/customary-ihl/v1/rule156>, доступно:17.01.2025.
10. Троицкий, Николай. «Современное доктринальное понимание термина «Военные преступления»». *Гуманитарные и юридические исследования*, 2020, (1), стр. 132-137, <https://doi.org/10.37493/2409-1030.2020.1.17>, доступно: 20.01.2025.
11. "The Prosecutor v. D. Tadić". *International crimes data base*, <https://www.internationalcrimesdatabase.org/Case/99>, Accessed: 21.01.2025.

12. "The Prosecutor v. Stanislav Galic". *Refworld*, IT-98-29, <https://www.refworld.org/jurisprudence/caselaw/icty/2006/en/55709>, Accessed: 21.01.2025.
13. "The Presecuter v. Ante Gotovia et al". *Irmct*, IT-06-90, <https://ucr.irmct.org/scasedocs/case/IT-06-90#eng>, Accessed: 21.01.2025.
14. "The Presecuter v. Dragomir Milošević". *Refworld*, It-98-29/1, <https://www.refworld.org/jurisprudence/caselaw/icty/2007/en/91954>, Accessed: 21.01.2025.
15. "The Presecuter v. Ahmad Ai-Faqi Al-Mahadi". *ICC-CPI*, ICC-01/12-01/15, <https://www.icc-cpi.int/court-record/icc-01/12-01/15-171>, Accessed: 21.01.2025.
16. "The Presecuter v. Bosco Ntaganda". *ICC-CPI*, ICC-01/04-02/06, <https://www.icc-cpi.int/court-record/icc-01/04-02/06-2359>, Accessed: 21.01.2025.
17. "Presecuter v. Thomas Lubanga Dyilo". *Refworld*, ICC-01/04-01/06, <https://www.refworld.org/jurisprudence/caselaw/icc/2012/en/85486>, Accessed: 21.01.2025.
18. "The Presecuter v. Al Hassan Ag Abdul Azis Ag Mohamed Ag Mahmoud". *ICC-CPI*, ICC-01/12-01/18, <https://www.icc-cpi.int/taxonomy/term/780>, Accessed: 21.01.2025.
19. "Statement of ICC Prosecutor Karim A.A. Khan KC: Application for an arrest warrant in the situation in Bangladesh/Myanmar". *ICC-CPI*, <https://rb.gy/q63yhe>, Accessed: 11.01.2025.
20. "Why Are There No Armenians In Nagorno-Karabakh? Fact-Finding Report Summary". *IDPF*, <https://ldpf.am/en/why-are-there-no-armenians-in-nagorno-karabakh-fact-finding-report-summary>, Accessed: 18.01.2025.

WORKS CITED

1. Harutyunyan, Avetiq ev Grigoryan, Mariam. «Arcaxahayut'yan himnaran iravunqneri xaxtumneri Aذربeյani koghmic Arcaxyan 3-rd paterazmi y'nt'acqum», *Gitakan Arcax*, N 4 (15), 2022, e'j 55-68. [Violations of the fundamental rights of Artsaxhi Armenians by Azerbaijan the 3rd Artsakh war, *Scientific Artsakh*, N 4 (15), pp. 55-68]. (In Armenian)
2. Hovhannisyan, Vladimir ev urishner. *Mijazgayin qreakan dataran (p'astat'ght'eri jhoghovac'u)*, Pashtoneakan hayeren t'argmanut'yun, Erevan 2018. [*International Criminal Court (collection of documents)* official armenian translation, Yerevan]. (In Armenian)
3. Petrosyan, Gurgen. *Mijazgayin qreakan datarani het hamagorc'akcut'yan veraberyal ashxatanqayin d'er'nark*, <https://rb.gy/93uiib>, verjin ayacy" 21.01.2025. [*Working Manual on Cooperation with the International Criminal Court*]. (In Armenian)
4. Petrosyan, Gurgen, *Mijazgayin qreakan iravunq* / G. Petrosyan: Usumnakan d'er'nark: -Er., EPH hrat., 2021. [*International Criminal aw*, Educational manual, Yerevan, YSU Publishing House]. (In Armenian)
5. *Mijazgayin qreakan datarany' Myanmar* naxagahin d'erbakalman o'rder e' tvel. na gorc'el e' Ali&i nman, *Youtube*, <https://www.youtube.com/watch?v=lb5l8YtVOuQ>, verjin ayacy" 13.01.2025. [The International Criminal Court has issued an arrest warrant for the President of Myanmar: he acted like Aliyev]. (In Armenian)
6. Lobanov, Sergej. «Voennye prestuplenija v mezhdunarodnom i vnutrigosudarstvennom prave». *Obrazovanie i pravo*, N10, 2017, str. 66-182. [War crimes in International and Domestic Law, *Education and law* 2017, N10, pp.166-182]. (In Russian)
7. Emel'jan, Voloh. «Mezhdunarodnoe pravo i otvetstvennost' za voennye prestuplenija», *Zarubezhnoe voennoe obozrenie*, №9, 2005, str.19-23. https://factmil.com/publ/strana/oon/mezhdunarodnoe_pravo_i_otvetstvennost_za_voenny

e_prestuplenija_2005/145-1-0-978 dostupno: 17.01.2025.[International Law and Responsibility for War Crimes, *Foreign Military Review*, No. 9, 2005, pp. 19-23]. (In Russian)

8. Nakashidze, Badri. «K voprosu o sub'ektah mezhdunarodnoj ugovnoj otvetstvennosti», *Vestnik RUDN*, serija Juridicheskie nauki, № 4, 2014, str. 253-261.[On the Question of Subjects of Interntional Criminal Responsibility, *Vestnik RUDN*, series Legal Sciences, 2014, No. 4, pp. 253-261]. (In Russian)

9. Customary International Humanitarian Law. *Norma 156. Ser'joznye narusheniya mezhdunarodnogo gumanitarnogo prava javljajutsja voennymi prestuplenijami*, Cambridge University Press, 2005, tom II, glava 44, razdel A.,<https://ihl-databases.icrc.org/ru/customary-ihl/v1/rule156>, dostupno: 17.01.2025. [Customary International Humanitarian Law. *Norma 156. Serious Violations of International Humanitarian Law are War Crimes*, Cambridge University Press, 2005, volume II, chapter 44, section A.]. (In Russian)

10. Troickij, Nikolaj. «Sovremennoe doktrinal'noe ponimanie termina «Voennye prestuplenija»». *Gumanitarnye i juridicheskie issledovanija*, 2020, (1), str. 132-137. <https://doi.org/10.37493/2409-1030.2020.1.17>, dostupno: 20.01.2025. [Modern Doctrinal Understanding of the term "War Crimes". *Humanitarian and legal studies*. 2020;(1), pp.132-137]. (In Russian)

SOME ISSUES OF INTERNATIONAL LEGAL RESPONSIBILITY FOR WAR CRIMES COMMITTED IN ARTSAKH

MARIAM GRIGORYAN

*Armenian-Russian University, Lecturer,
Ph.D. in Law,
Yerevan, the Republic of Armenia*

ROMAN BEGLARYAN

*Armenian-Russian University, Institute of Law,
Department of International and European Law, 3rd year student;
2024 KECTIL Program, Colleague
Yerevan, the Republic of Armenia*

There are already important scientific developments on the study of provisions on international criminal responsibility for war crimes, its institutional and legal mechanisms. At the same time, the experience accumulated by specialists in international law, as well as representatives of other scientific fields, in studying various issues of combating war crimes, their prevention and responsibility is invaluable.

The purpose of the article is to examine the problems in the science of international law related to the definition of war crimes. In addition, some issues of international legal responsibility in the light of the Artsakh events were considered.

For this purpose, the war crimes committed by Azerbaijan in Artsakh, as well as specific cases of violation of international law and international humanitarian law were examined. The article analyzes the role of the International Criminal Court in bringing the perpetrators of these war crimes to international legal responsibility. In addition, the study examined certain aspects of international legal responsibility in light of the events in Artsakh.

During the research, the author applied both symmetrical (analysis, historical principle) and special (comparative-legal) principles.

As a result of the study, we have concluded that war crimes, which entail international legal responsibility under international law, have been committed in Artsakh at various times.

Keywords: *war crimes, international criminal responsibility, International Criminal Court, Artsakh, violations, international law, international humanitarian law.*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ВОЕННЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ, СОВЕРШЕННЫЕ В АРЦАХЕ

МАРИАМ ГРИГОРЯН

*преподаватель Армяно-Российского университета,
кандидат юридических наук,
г. Ереван, Республика Армения*

РОМАН БЕГЛАРЯН

*студент 3-го курса кафедры международного и европейского права
Юридического института Армяно-Российского университета,
коллега программы КЕСТИЛ 2024 года,
г. Ереван, Республика Армения*

В настоящее время уже существуют значимые научные исследования, касающиеся изучения положений о международной уголовной ответственности за военные преступления, ее институциональных и правовых механизмах. В то же время бесценен опыт, накопленный специалистами по международному праву, а также представителями других научных направлений при изучении различных вопросов борьбы с военными преступлениями, их предупреждения и ответственности.

Целью статьи является рассмотрение проблем, связанных с определением военных преступлений в науке о международном праве. Кроме того, были рассмотрены некоторые вопросы международно-правовой ответственности в контексте арцахских событий.

С этой целью были рассмотрены военные преступления, совершенные Азербайджаном в Арцахе, а также конкретные случаи нарушения международного права и международного гуманитарного права. Проанализирована роль Международного уголовного суда в привлечении виновных в этих военных преступлениях к международно-правовой ответственности, а также идентичность вынесенных ранее решений Суда с событиями в Арцахе.

В ходе исследования авторы применили как общие (анализ, принцип историчности), так и специальные (сравнительно-правовые) методы и принципы.

В результате исследования мы пришли к выводу о том, что в Арцахе в разное время были совершены военные преступления, за которые международным правом предусмотрена международно-правовая ответственность.

Ключевые слова: *военные преступления, международная уголовная ответственность, Международный уголовный суд, Арцах, нарушения, международное право, международное гуманитарное право.*

ԲՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԻՍՏՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ *

ՀՏԴ 340

DOI: 10.52063/25792652-2024.4.23-49

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՉՈՒԲԱԵԿ

«Կոնսորա» ընկերությունների խմբի հիմնադիր, փաստաբան,
ՀՀ ԳԱՄ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Legaldep02@gmail.com
ORCID: 0009-0006-2481-8175

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել բնական իրավունքի տեսության զարգացման նախադրյալները, ընթացքը և արդյունքները, նախա-նշել իրավունքի և պետության, անձի և քաղաքացիական հասարակության մասին ուսմունքի ընդհանուր տեսական և մեթոդաբանական զարգացման ուղղությունները, բնորոշել իրավական ուսմունքներում՝ համատեքստում հիմնարար բնական-իրավական կատեգորիաների մշակման մեթոդաբանական հիմքերը և առանձնահատկությունը, բացահայտել բնական իրավունքի մասին պատկերացումների պատմական զարգացման հիմնական ուղենիշները և դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև վերլուծել բնական-իրավական հիմնահարցերի լուծման ձևերը նոր ժամանակի տարբեր ուղղությունների փիլիսոփայական-իրավական հայեցակարգերում:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները կազմում են քաղաքական իրավական և փիլիսոփայական-իրավական ուսմունքների համա-լիր վերլուծության սկզբունքները: Հետազոտության մեջ օգտագործվել են ճանաչողության տրամաբանական, համեմատական իրավական, ինչպես նաև պատմական, իրավահամեմատական մեթոդները, որոնք հնարավորություն են ընձեռել հեղինակին բացահայտելու բնական իրավական գաղափարների աղբյուրները և դրանց էությունը:

Գիտության պատմական զարգացման ընթացքում իրավունքի և պետության մասին ուսմունքների, ինչպես նաև գոյի՝ բնական, թե՛ աստվածային կարգից կամ էլ մարդու բնական հատկանիշներից բխող էթիկական ուսմունքների համակարգում բնական իրավունքը հանդես է գալիս որպես հիմնական հասկացություն: Հենց բնական իրավունքի մասին ուսմունքի սահմաններում է ջանում իրավաբանական գիտությունը գտնել իրավունքի ու օրենքի հարաբերակցության հարցի պատասխանը, հասկանալ, որ իրավական սկզբունքներն ու նորմերը փաստացի հասարակական հարաբերությունների հատուկ ձև են՝ ունիֆիկացված ձև, որում գոյություն ունի ներքին տրամաբանություն՝ որպես կոնկրետ իրավահարաբերու-թյունների ներդաշնակության արտահայտություն:

Հիմնաբառեր՝ բնաիրավական հայեցակարգ, իրավական ուսմունք, աստվածային իրավունք, բնական իրավունք, կանոնական իրավունք, սովորութային իրավունք, աշխարհիկ իրավունք, ազատություն:

* Հոդվածը ներկայացվել է 02.12.2024թ., գրախոսվել՝ 18.12.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

Բնաիրավական հայեցակարգը իր ահռելի ազդեցությունն է ունեցել հայ իրավաբանական պատմության վրա: Դա մեծամասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ պետականության բացակայության պայմաններում բնական համարվող իրավունքները նմանվում էին երազանքների, ազգային գաղափարախոսության, որոնց ձգտում է մարդը:

Բնական իրավունքի մասին այս կամ այն հարաբերակցությամբ իրենց կարծիքն արտահայտել են հայ շատ մեծանուն մտածողներ, սակայն համակարգված դոկտրինի իմաստով հայ իրականության մեջ առաջինը Մխիթար Գոշն էր, որ տվեց հայ ժողովրդի բնաիրավական զարգացման հիմնական ուղենիշները: Գոշի ուսմունքը ուներ հստակ արտահայտված ազգային երանգներ, որոնք բխում էին հայ ժողովրդի ազատագրական պայքարից:

Ընդ որում, մինչև Գոշն էլ հայ լուսավորիչները մարդու բնական իրավունքների գաղափարը կապում էին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հետ: Այսպես՝ Մեսրոպ Մաշտոցը, դեմ գնալով իր ժամանակին տիրապետող գաղափարաբանությանը, համաձայն որի աշխարհը ունի երկու նախասկիզբ՝ բարի և չար, հանդես եկավ աստվածային ծագման բացառիկության գաղափարով, որի առանցքը պտտվում էր միակ ակունքի՝ Աստծո գոյության շուրջ [Արևշատյան, 91-110]:

Մաշտոցը գտնում էր, որ չարը՝ որպես ֆունդամենտալ երևույթ, գոյություն չունի: Մաշտոցը մարդկային ազատ կամքի կողմնակից էր և գտնում էր, որ բարին էլ, չարն էլ բխում են Աստծուց, իսկ մարդկային կամքը մարդուն տրված է, որպեսզի մարդ ընտրի իր վարքը՝ ծառայել բարուն, թե՞ չարին: Այստեղ առանցքայինն այն է, որ բարին էլ, չարն էլ ունեն սուբստանցիոն միևնույն ակունքը: Ընդ որում, այս տեսակետը իր հիմնավորումն է գտնում նաև Աստվածաշնչի մեջ՝ կյանքի ծառի գաղափարում: Այսպես՝ «Ծննդոց» գրքում, երբ նկարագրվում է աստվածային արարչագործությունը բարու և չարի մասին, ասվում է, որ Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը, եւ այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն: Տեր Աստված երկրից բուսցրեց նաեւ ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր, իսկ կենաց ծառը եւ բարու ու չարի գիտութեան ծառը տնկեց դրախտի մեջտեղում: Տեր Աստուած պատվիրեց Ադամին ու ասաց. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու եւ չարի գիտութեան ծառից մի՛ կերեք, որովհետեւ այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կը դառնաք» (Աստուածաշունչ, 18):

Այսինքն՝ Աստված մարդուն իր նախնական տարբերակում ստեղծել էր որպես անմահ Եակ, ստեղծել էր նաև բարին ու չարը տարբերակող ծառը, որի պտուղը ճաշակելով՝ մարդը սկսում է ճանաչել նաև չարը, դրանով կտրվում է իր աստվածային ծագումից և դառնում է մահկանացու: Թեև Ավետարանում ուղիղ ասված չէ Աստծո կողմից չարը՝ որպես սուբստանցիալ արարվելու մասին, սակայն թեոլոգիական իմաստով ամեն ինչն է բխում Աստծուց: Այստեղ առաջնային պլան է մղվում կամքը, կամք, որով մարդ ընտրություն է կատարում բարու և չարի միջև, հետևաբար՝ սեփական կյանքը տնօրինելու ազատությունը համապատասխանում է աստվածային մտահղացմանը:

Մաշտոցը, իր թեզերը տեղայնացնելով պետության վրա, գտնում է, որ իշխանությունը՝ որպես երևույթ, առաջացել է Աստծո թողտվությամբ, որի նպատակը իրավակարգ սահմանելն է և իրավակարգը խախտողներին պատժելը (Արևշատյան, 91-110): Այս գաղափարը իր արդիականությունը դժվար թե կորցնի, որովհետև այն պետության գոյության և պետության նշանակության համար առանցքային դերակատարում ունի, քանի որ այս տեսակետով հիմնավորվում է, որ պետությունը և դրանում տեղ գտած իշխանությունները Աստծո կամքի արդյունք են:

Բնական իրավունքի վերաբերյալ իր տեսակետն է հայտնել նաև Եզնիկ Կողբացին: Այստեղ պետք է ընդգծել, որ Կողբացու (նաև մյուս հեղինակների) աշխատությունները հատուկ նվիրված չեն բնական իրավունքի տեսությանը:

Հեղինակի առանձին մտքերն են, որ հնարավորությունն են տալիս կատարելու եզրահանգում առ այն, որ Կողբացին բնափրավական գաղափարախոսության կրող է:

Եզնիկ Կողբացին կտրականապես դեմ է արտահայտվում իր ապրած ժամանակաշրջանի ֆատալիստական հոսքերին և առաջ է քաշում ինքնիշխանության գաղափարը (Կողբացի, 109): Կողբացին տարբերակում էր անձի և ազգի ինքնիշխանությունը, որտեղ հիմնավորվում է անհատի և ժողովրդի կամքի ազատության գաղափարը: Կողբացին հստակ սահմաններ է դնում անհատական ինքնիշխանության վրա և գտնում է, որ ինքնիշխանությունը չի ենթադրում ամենաթողություն: Հակառակը՝ մարդու անձնական իրավունքները ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են այլոց իրավունքները: Պատիժը և պատահականատվությունը ևս Կողբացին կապում է ինքնիշխանության հետ, սակայն՝ արդեն պետության մակարդակում: Պատիժը Կողբացու մոտ ոչ թե ֆատալիստական է, այլ՝ կամքի թելադրանք:

Ազգի, դրա տակ քողարկված պետության ինքնիշխանության գաղափարը, անկախ պետություն ունենալու մարդկանց կամքը հետագայում իրենց խտացված արտահայտությունը գտան հայ ազգային-ազատագրական պայքարներում: Այս գաղափարների գործնական արժեքը կայանում էր նրանում, որ Կողբացին մարդկանց մոլում է պայքարի՝ հանուն ինքնիշխանության, քանի որ ազատությունը ընտրություն է, ոչ թե ճակատագիր, որին մարդը պետք է հպատակվի:

Ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության հիմնաքարերից մեկը անձի և ազգի ինքնիշխանության ուսմունքն էր, որը, հայ ժողովրդի մեջ ձևավորվելով V դարում, իր կենսունակությունը չկորցրեց նրա հետագա ողջ պատմության ընթացքում: Ազգերն իրենք պետք է տնօրինեն իրենց ճակատագիրը, կերտեն իրենց ներկան ու ապագան, այլ ոչ թե ապավինեն ճակատագրի կույր ուժին կամ էլ ինչ-որ երկրորդ և այլ ուժերի ողորմածությանը: Այս կապակցությամբ Եզնիկ Կողբացին հետևյալ ցայտուն օրինակն է բերում. «Երբ ավազակախումբը արշավում է կողոպտելու և կոտորելու համար, թող զորք չհավաքեն ու իրար ետևից գնդեր չկազմեն երկիրը՝ մարդկանց երկրից ավազակներին դուրս քշելու համար, այլ թող պատճառաբանեն, թե՛ «երկրի ճակատագիրն է ավազակից կոտորվել, մենք ինչու՞» պիտի դեմ գնանք ճակատագրին: Բայց զումարելով և երկրի թշնամուն դուրս վնդելով՝ ցույց է տալիս, որ կոտորածները ճակատագրի ինչ-որ սահմանումով չեն տեղի ունենում, այլ՝ ավազակի բռնությամբ, որ գալով ազահաբար կոտորում է ժողովրդին, զրկում ունեցվածքից» (Կողբացի, 109): Ըստ Կողբացու՝ ինքնիշխանությամբ օժտված են ոչ միայն անհատները, այլև ազգը, ժողովուրդը: Եվ պատահական չէ, որ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության հիմնաքարերից մեկը անձի և ազգի ինքնիշխանության ուսմունքն էր, որը, հայ ժողովրդի մեջ ձևավորվելով V դարում, իր կենսունակությունը չկորցրեց նրա հետագա ողջ պատմության ընթացքում:

Բնույթով այսպիսին էին նաև Մովսես Խորենացու պատկերացումները: Խորենացին գտնում էր, որ առանց պետության ժողովուրդը գոյություն ունենալ չի կարող, քանի որ այնտեղ, որտեղ չկա պետություն, ժողովուրդը տառապում է, տիրում է անիշխանություն (Խորենացի, 66-67): Պետության գոյությունը Խորենացու համար նշանակում է անկախություն, ազատություն, պետականության համար պայքարի արդյունք: Խորենացին համոզված էր, որ թագավորության առանցքային առաքելությունը ժողովրդի միավորման մեջ է, որի բացակայությունը բերում է անկախության կորստի: Նախարարական տների և թագավորական իշխանության անհաշտության մեջ է Խորենացին տեսնում միասնականության բացակայությունը և, որպես արդյունք, Հայաստանի բաժանումը հարևանների միջև:

Հետևաբար՝ ազգային միասնությունը այն կարևոր գրավականն է, որը ապահովում է ժողովրդի ազատությունը, անկախությունը, պետականությունը: Այս ամենն ասելով՝ Խորենացին ցանկանում է ընդգծել, որ ինքնիշխանությունը ոչ միայն և

ոչ այնքան ազատություն ու անկախությունն է՝ անելու ամեն ինչ, այլ այն իշխելու և ենթարկեցնելու գործիք է: Ճիշտ է, այսօրվա տեսանկյունից մի փոքր բարդ է համակերպել այսպիսի ձևակերպումների հետ, սակայն չպետք է մոռանալ այն աշխարհաքաղաքական կոնյուկտուրան, որում ապրել է Խորենացին¹:

Շատ արժեքավոր են ֆեոդալիզմի ժամանակաշրջանում ապրած հայ հեղինակների՝ Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի աշխատությունները:

Մխիթար Գոշը բնաիրավական դոկտրինի միջոցով հիմնավորում է ազգի կամքի գաղափարը, կամքի ազատության և անհատի ազատության գաղափարը: Էություն մեջ Գոշի «Դատաստանագիրքը» վերականգնվելիք հայոց պետականության համար նորմատիվ փաստաթուղթ էր, սակայն դրանում տեղ գտած բազմաթիվ դրույթներ բնաիրավական են:

Մինչև Գոշը և Գոշի ապրած ժամանակաշրջանում չէին դադարում կամքի ազատության և աստվածային մտահղացման շուրջ բանավեճերը, կամ, որ ավելի դիպուկ է, դրանց առաջնայնության շուրջ բանավեճերը: Մի կողմից ֆատալիստական և մյուս կողմից կամքի ազատության մասին բանավեճերի ակունքը նախասկզբի որոնումն է:

XII դարի Կիլիկիայի հայկական պետության նշանավոր մտածողներ Ներսես Շնորհալին և Ներսես Լամբրոնացին նույնպես ընդունում են մարդկանց հավասարության գաղափարը: Այսպես՝ Ներսես Շնորհալին, հասարակության իշխող և ունևոր խավերին դիմելով, նշում է. «Մի զվարճս վաստակաւորաց ձեռաց հատանէք իշխանաբար Բաւական լիցի ձեզ, զի վաստակօք նոցա մեծանայք եւ առաւել քան զչափն փափկանայք, եւ այն, զի ոչ թէ այլ բնութիւն է նոցա եւ այլ ձեր, այլ ի միոյ կաւոյ եւ ի խառնուածոյ քանզի նմնապես տերանց եւ ծառայից՝ փարթամաց եւ աղքատաց սկիզբն գալոյ յաշխարհի եւ կատարած ելիցն յաշխարհէ» (Շնորհալի, 67-71):

Թովմա Աքվինացին, բացահայտորեն ընդունելով կամքի ազատությունը, գտնում է, որ կամքի ազատությունը կարող է գոյություն ունենալ բացառապես Աստծո հովանավորչության պայմաններում, քանի որ նա է ամեն ինչի աղբյուրը, այդ թվում՝ մարդկանց որոշումների և իրադարձությունների պատճառների (Боргов, 139):

Մխիթար Գոշը ևս մարդու կամքի ազատության հայեցակարգի կողմնակիցն էր: Առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ Գոշը կամքի ազատությունը տեսնում էր ոչ թե աստվածային մտահղացման, այլ բնական իրավունքի մեջ (Բաստամեանց, 7): Գոշը համոզված էր, որ մարդիկ Աստծուն պարտական են միայն ծնունդի համար, իսկ իրենց գործողություններում և որոշումների կայացման մեջ ազատ են:

Գոշը ուժեղ պետական ապարատի կողմնակից էր և գտնում էր, որ պետության հզորությունը պետք է բխի թագավորի հզորությունից, որի շուրջը պետք է համախմբվեն հայկական նախարարական տները (Մանանդյան, Աճառյան, 23): Գոշի առաջ քաշած տեսության համաձայն՝ թագավորը հանդես է գալիս որպես ազգային ինքնիշխանության արտահայտություն. պետք է ձգտել այնպիսի պետության, որտեղ վերջինս կլինի հարկահան և ոչ թե հարկ տվող: Այս դրույթով Գոշը ցանկանում է ընդգծել այն հանգամանքը, որ պետությունը պետք է ունենա անսահմանափակ իշխանություն ենթակա ժողովուրդների նկատմամբ և վարի ինքնուրույն արտաքին հարաբերություններ:

Մյուս կողմից՝ Գոշը ընդգծում է, որ ոչնչով չսահմանափակված թագավորական իշխանությունը ևս պետք է կաշկանդված լինի օրենքներով: Գոշի մոտ օրենքի

¹ Տեղին է հիշատակել Կարլ Մարքսին, որի ուսմունքի համաձայն՝ հասարակական կեցությունն է որոշում հասարակական գիտակցությունը: Հեղինակը ասել կուզի, որ մարդկային մտածողությունը խստիվ կախված է կյանքի նյութական պայմաններից, քանի որ մարդու նյութական պայմանները թելադրում են նրա աշխարհայացքը:

պահանջները բացարձականացված են և համապատասխանում են հռոմեական *sed lex, dura lex* (օրենքը դժան է՝ բայց օրենք է) կանոնին: Այսինքն՝ օրենքի կարգադրագիրը, ինչքան էլ որ խիստ լինի, անտրամաբանական կամ դժան, միևնույն է՝ այն օրենք է և պետք է անշեղորեն կատարվի, իսկ թագավորն էլ պարտավոր է ապահովել դրա կատարումը: Գոշը օրենքին անվերապահորեն ենթարկվելը այն աստիճան է կարևորում, որ անգամ միտք է արտահայտում առ այն, որ թագավորը պետք է զրկվի թագից, եթե երկրում խախտվի խաղաղությունը, իսկ վերջինս էլ պետությունը կառավարի անարժան ձևով: Գոշը սրանով փաստացի սահմանափակում է առաջին հայացքից անսահման թվացող թագավորական իշխանությունը և բացարձականացնում պետական ինքնիշխանությունը:

Այս ամենով հանդերձ՝ Գոշը ուժեղ միապետության կողմնակից էր և գտնում էր, որ միապետը պետք է ճշշի պետական իշխանությունից տարանջատվելու իշխանական տների բոլոր փորձերը:

Գոշի բնաիրավական հայացքների առանցքը մարդկանց հավասարությունն է: Հավասարության մասին Գոշի հայացքները արտահայտում են իր ապրած ժամանակաշրջանի առանձնահատկությունները, քանի որ մարդկանց հավասարության համար պայքարը չափազանց արդիական էր պատմական այս փուլում: Միևնույն Գոշը մարդկանց անհավասարության ակունքը տեսնում էր սոցիալ-տնտեսական հարաբերությունների մեջ: Անհավասարությունը Գոշը պատճառաբանում էր տնտեսական գործոնով և ֆեոդալիզմի բնորոշ հարստության և բարեկեցության հիմնական միջոցից՝ հողից զուրկ լինելու փաստով: Հողից զուրկ լինելը մարդուն ստիպել է անցնել հողի մշակման վարձակալական հիմունքին, դա վերջինիս գցել է կախյալ վիճակի մեջ և հանգեցրել հողատերերի և վարձու աշխատողների փաստացի անհավասարության: Վերջին միտքը մասնագիտական գրականության մեջ իրապես Նոր էր, քանի որ Գոշից առաջ և Գոշից շատ հետո անհավասարության առաջացման այսպիսի դոկտրին չի եղել: 19-րդ դարում՝ մարքսիզմի ձևավորմամբ, անհավասարության՝ Գոշի առաջ քաշած դոկտրինը ստացավ իր վերջնական ձևակերպումը¹ (Պիվազյան, 137):

Գոշը առանձնացնում էր իրավունքի մի քանի մակարդակներ և գտնում էր, որ իրավունքը բաղկացած է աստվածային, բնական, կանոնական, սովորութային և աշխարհիկ իրավունքներից: Սովորութային իրավունքն այն սովորությունն են, որոնք գոյություն ունեն և մինչև գրավոր օրենքների ձևավորումը: Աստվածային իրավունքը Աստծո կամքն է, որն արտացոլված է Հին և Նոր կտակարաններում:

Ինքը՝ Գոշը, արձանագրում է, որ «Դատաստանագիրքը» բխում է բնական իրավունքից: Գոշի մոտ մարդկանց բնական ազատության և հավասարության գաղափարը բխում է բնական իրավունքի տեսությունից: Խոսելով այն հիմնական աղբյուրների մասին, որոնցից օգտվել է «Դատաստանագիրքը» կազմելիս, Միևնույն Գոշը առաջին և վստահելի աղբյուրը համարում է բնական իրավունքը: Մասնագիտական գրականության մեջ տարակարծություն է ձևավորվել Գոշի բնաիրավական հայացքների վերաբերյալ: Տեսաբանները գտնում են, որ Գոշի առաջ քաշած հայացքները բնաիրավական չեն, այլ՝ սովորութային (Սամուելյան, 80-81): Վերջիններս հարցը կապում են բառօգտագործման հետ և գտնում են, որ այն, ինչ որ Գոշը անվանում է բնական իրավունք, համապատասխանում է չգրված սովորութային իրավունքին:

Գոշը ենթադրում էր, որ բնական իրավունքի ընդունումը Նախ և առաջ նշանակում է մարդկանց ազատության ընդունում: Բնական իրավունքը աստվածային բանականության դրսևորման ձևն է: Եկեղեցական կամ պետական օրենքները պետք

¹ Հեղինակի միտքը չի նշանակում, որ մարքսիզմը հիմնվել է Գոշի վրա, պարզապես այն ինչ Գոշը հիմնավորել էր միջնադարում, իր հետագա զարգացումն է ստացել պատմական այս փուլում:

Ե համապատասխանեն աստվածային կարգին: Ընդ որում՝ առաջինները հարաբերական են և Էապես կախված են իրավիճակներից, իսկ Աստծո սահմանած կարգը օբյեկտիվորեն գոյություն ունի, այն կախված չէ մարդու կամքից և գիտակցությունից: Այս պատճառով Ե, որ Գոշի մոտ աստվածային բանականությանը և աստվածային օրենքին չհամապատասխանող օրենքները դուրս էին մնացել «Դատաստանագրքից»: Գոշի առավելությունը ժամանակակիցների նկատմամբ այն էր, որ վերջինս մինչև իրեն հայտնի եկեղեցական և աշխարհիկ օրենքները համապատասխանեցրել է ժամանակի հրամայականներին: Գոշը այդ օրենքները, այդ թվում՝ նաև մովսիսական օրենքները ենթարկել է խմբագրական փոփոխությունների՝ դրանք համապատասխանեցնելով այդ պահին գոյություն ունեցած հրատապ խնդիրներին: Գոշը տարբերակում էր օրենքները՝ հիմքում դնելով դրանց կատարելության հատկանիշը: Առհասարակ, Գոշը քննադատում էր անարդար օրենքները, կասկածի տակ դնում դրանք կամ՝ մերժում: Գոշը գտնում էր, որ իրավունքի առաքելությունը ճշմարտության, արդարության և բարեկեցության հաստատումն է:

Գոշը չէր ընդունում միասնական իրավունքի առկայությունը: Նա համոզված էր, որ ամեն ազգ և պետություն պետք է ունենա իր առանձնահատուկ իրավունքը, որը պետք է արտահայտի վերջիններիս շահերը և ժամանակի պահանջները: Սրանով Գոշը ընգծել է ուզում հայկական իրավունքի առանձնահատկությունը, որին ներհատուկ է ազգային-ազատագրական ոգին:

Ինքը՝ Գոշը, իր «Դատաստանագիրքը» չէր համարում կատարյալ փաստաթուղթ և գտնում էր, որ վերջինս կարող է և պետք է ենթարկվի փոփոխությունների և լրացումների, որովհետև աշխարհիկ օրենսդրությունը կատարյալ չէ, այն մշտապես բարեփոխվելու անհրաժեշտություն է զգում: Փոփոխությունները և լրացումները այն ճանապարհն են, որ կատարյալ իրավունքը մերձեցնում է կատարյալին:

Այս մտքերը դրված են «Դատաստանագրքի» հիմքում: Գոշը պահանջում էր, որ սերունդները «Դատաստանագրքին» վերաբերվեն քննադատաբար և անընդհատ բարեփոխեն այն, համապատասխանեցնեն արդի խնդիրներին, քանի որ «Դատաստանագիրքը» անսասան չէ, հակառակը՝ այն պետք է լինի փոփոխական:

Այս ամենով հանդերձ՝ Գոշը փոփոխությունների և լրացումների ակունքը տեսնում էր ոչ թե պատեհապաշտության մեջ, այլ՝ բնական իրավունքին համապատասխանելու: Թեև «Դատաստանագիրքը» կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների, սակայն բոլոր դեպքերում դրանք պետք է արտահայտեն արդարության պահանջները, որոնք իրենց հերթին ածանցյալ են բնական իրավունքից:

Հայ իրավաբաղաքական ուսմունքների մեջ բնաիրավական դոկտրինը իր հետագա զարգացումը ստացավ Հայկական լեռնաշխարհից շատ հեռու՝ Ջնդկաստանում՝ խոշորագույն տեսաբան Շահամիր Շահամիրյանի իրավական մտքերում:

Շահամիր Շահամիրյանը Ջնդկաստանի Մադրաս քաղաքի հայ մեծահարուստներից էր և իր կյանքի շատ զգալի հատվածը նվիրել էր Ջնդկաստանի հայ համայնքի առաջ ծագած խնդիրների լուծմանը, ինչպես նաև հայ ազգային-ազատագրական պայքարին:

Այս և այլ խնդիրները լուծելու նպատակով Շահամիր Շահամիրյանը Ջնդկաստանի Մադրաս քաղաքում 1771 թվականին հիմնադրեց տպարան, որում հայերենով լույս էին տեսնում տարբեր տեսակի նորարարական ստեղծագործություններ: Շահամիրյանը այդպիսով ցանկանում էր հայերի մեջ արթնացնել ազգային գիտակցությունը և տարածել եվրոպական լուսավորականության դոգմատիկան:

Շահամիր Շահամիրյանը բնական իրավունքին վերաբերող իր մտքերը շարադրել է «Որոգայթ փառացում»¹, որը նախադեպը չունեցող փաստաթուղթ էր: Կառուցվածքային առումով «Որոգայթ փառացը» բաղկացած էր երկու հատվածից: Առաջինը վերաբերում էր հայ ազգային, քաղաքական, բնաիրավական հիմնախնդիրներին, իսկ երկրորդ հատվածը՝ Նորանկախ Հայաստանի պետական և հասարակական կարգի մասին էր:

Սահմանադրության՝ որպես իրավաքաղաքական փաստաթղթի ծնունդը մասնագիտական գրականությունը կապում է ԱՄՆ հիմնադիր հայրերի հետ՝ գտնելով, որ այն ծնունդ է առել հենց այստեղ, ԱՄՆ հեղափոխության տեսաբանների ջանքերով: Սակայն վերջիններիցս առաջ Շահամիր Շահամիրյանը արդեն իսկ այդպիսի փաստաթուղթ էր ստացել, որովհետև «Որոգայթ փառացը» հենց սահմանադրությունն է, այն իր գոյությամբ որոգայթում է փառքը, սահմանում երկրի պետական կառավարման առանձնահատկությունները, մարդու հիմնական իրավունքները և հիմնարար ազատությունները:

Շահամիրյանի գաղափարները իրապես հեղափոխական էին. այստեղ կարելի է տեսնել սահմանադրության գաղափարի և պետության սահմանադրականության գաղափարի ծնունդը: Շահամիրյանը առաջ ընկավ ժամանակակիցներից և տվեց բնաիրավական դոկտրինի կենսագործման լավագույն մեխանիզմը՝ սահմանադրությունը:

Շահամիր Շահամիրյանի միտքը ունի բնաիրավական ուղղվածություն: Նա բնական իրավունքի ակունքը տեսնում էր մարդու բնականության մեջ, որն Աստծո կողմից տրված է մարդուն: Շահամիրյանը վստահ էր, որ և՛ իշխանությունը, և՛ իրավունքը Աստծո ստեղծածն են, հետևաբար՝ պոզիտիվ իրավունքը պետք է բխի իրերի աստվածային կարգից: Եթե իրավունքը չի համապատասխանում Աստծո կամքին, ապա այն իրավունք համարվելու որակ չունի և չպետք է կիրառվի:

Շահամիրյանը այն հաստատ համոզմունքն ունի, որ, բնությունից ազատ և հավասար լինելով, ունենալով բնականություն, մարդիկ չպետք է հանդուրժեն իրենց վրա ոչ մի իշխանություն՝ բացի բոլորի համար ընդհանուր և պարտադիր այն օրենքներից, որոնք իրենք իսկ կսահմանեն իրենց «բնական բնությանը» և «բնական էությանը» համապատասխան: Ճիշտ է, նա ուղղակիորեն չի նշում, սակայն նկատի ունի ազատության գիտակցման և նրա իրականացման ձևերի անհրաժեշտության հարցը: Բնականությունը մարդու տեսակային հատկանիշն է, որով նա տարբերվում է մյուս արարածներից: Սակայն այն տրված է մարդուն ոչ թե իր նմանի, այլ բնության վրա իշխելու համար: Ավելի հասկանալի ու մատչելի արտահայտվելու համար Շահամիրյանը, ինչպես այդ դեպքում, այնպես էլ գրեթե միշտ, հենվում է Աստվածաշնչի վրա: «Նախնին մեր Ադամ ըստ բնական բնութեամբ գտավ իշխանութիւնի Տեառնէ և ի արարչէն մերմէ զի լիշխեսցէի վրայ միմիայն բնական բնութեամբ կենդանեաց որ ի վերայ երկրի, այլ ոչ՝ ի վերայ բնական բնութեան մարդոյ»: Բնականության ֆենոմենը իր՝ այս ուղղվածությամբ մարդու մոտ ունի նաև մեկ այլ իմաստ: Նրա առկայությունը ոչ միայն պետք է մարդուն հեռու պահի իր նմանի իշխելու հակաբնական մտայնությունից, այլև պետք է մարդուն հուշի, որ ինքն իրավունք չունի և չի կարող ուրիշների գերիշխանության տակ լինել: Ինչ խոսք, կան նաև այնպիսի մարդիկ, որոնք ձգտում են «թագաւորելոյ ի վերայ բնական բնութեան մերոյ», սակայն դրանք հակադիր են իրերի բնական ընթացքին և պետք է մերժվեն, քանի որ անասուններն անգամ այդպիսիներին իրենց մեջ չեն ընդունում, ուստի, - ասում է Շահամիրյանը, - մեր բնական բնությանը մեծ ամոթանք «լինիցի զի հնազանդիցուք մեք ի առն ումեք ըստ նմանութեան և բնութեան մերոյ, զի ինքնակամ բանիվ հրամայեսցէ ի վերայ մեր» (Մեքլումյան, 147):

¹ Փառքի որոգայթ. այսինքն՝ սա մի փաստաթուղթ էր, որը նպատակ ուներ կաշկանդել իշխանավորի փառքը՝ հանուն համապետական նպատակների իրագործման:

«Որոգայթ փառացը» անցողիկ փաստաթուղթ չէ, այն հստակ կոչ ունի հայ ժողովրդի համար, այն կոչ է անում գալիք սերունդներին ապրել և արարել արդարությամբ: «Որոգայթ փառացը» իրավափիլիսոփայության և իրավամտաժողովության առումով ընդհանրացնում է Հովհաննես Օձնեցու, Դավիթ Ալավկոտորդու, Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի և հայ այլ երևելիների նվաճումները իրավաքաղաքական մտքի բնագավառում (Սաֆարյան, 546) :

Այսպիսով՝ գիտության պատմական զարգացման ընթացքում իրավունքի և պետության մասին ուսմունքների, ինչպես նաև գոյի՝ բնական թե՞ աստվածային կարգից կամ էլ մարդու բնական հատկանիշներից բխող՝ էթիկական ուսմունքների համակարգում բնական իրավունքը հանդես է գալիս որպես հիմնական հասկացություն: Բնական իրավունքի հայեցակարգերի պատմական առաքելությունը դարաշրջանի ոգուն համապատասխան իրավական իդեալներ արտահայտելն էր: Բնական իրավունքի բուն բնագավառը, ի տարբերություն դրական իրավունքի ոլորտի, ճշմարտության, արդարության պահանջների բնագավառն է, ընդհանուր իրավական նորմերի համակարգն է, որը բխում է մարդկային բանականությունից և պետք է պարտադիր չափանիշ և ուղեցույց ծառայի դրական իրավունքի համար:

Բնական-իրավական ուսմունքների բազմակարծությունը, հետևաբար՝ բնական իրավունքների և հասկացությունների տարբերվող վարկածները, և իրար հետ մրցակցող ուսմունքները հավակնում են միմյալն բնական իրավունքի իրենց վարկածի, բնական իրավունքի հասկացման իրենց ընկալման ու մեկնման ճշմարտությանը:

Քանի որ բնական իրավական ուսմունքները (և դրանց հիմքում ընկած բնական իրավունքի տարբեր հասկացությունները) տարբերություններից բացի ունեն նաև որոշակի ու էական ընդհանրություններ, որն էլ թույլ է տալիս գատել «բնական իրավունքը» (և բնական-իրավական հայեցակարգերը) ընդհանրապես «պոզիտիվ իրավունքից» (և պոզիտիվիստական հայեցակարգերից), ապա հարց է ծագում. բնական իրավունքի ունիվերսալ բնորոշման, այսինքն՝ բնական իրավունքի ընդհանուր հասկացության սահմանման մասին: Իսկ դրա համար անհրաժեշտ է առաջին հերթին ձևակերպել բնական իրավունքի համընդհանուր սկզբունքը (այսինքն՝ բնական իրավունքի հատուկ տարբերակների մասին ուսմունքներից վերականգնել բնական իրավունքի, նրա գաղափարի ու սկզբունքի տեսական աբստրակցիան), որն էլ խտացված տեսքով կարտահայտի նրա առանձնահատկությունն ու էությունը (դրա հետ մեկտեղ նաև՝ ընդհանուր հասկացությունը):

Ինչպես տեսնում ենք, բնաիրավական հայեցակարգի վերաբերյալ տեսական որոնումները մենք կարող ենք կատարել հայ իրավաքաղաքական ուսմունքների մեջ: Ակնհայտ է, որ մեր մեծերի բնաիրավական մտքերը ոչ միայն չեն զիջում դասականներին, այլև շատ առաջ են վերջիններից: Հայկական բնաիրավական դոկտրինը ունի ընդգծված գործնական նշանակություն, այն է՝ արտահայտել հայ ազգային-ազատագրական շահերը և իրավունքով նպաստել դրա կայացմանը: Մեր մեծերը համոզված են եղել, որ մարդկությունը չի կարող հարատևել առանց Աստծո միջամտության և աստվածային իրավունքի: Թեև հայ բնաիրավական դոկտրինի կրոնական բաղադրիչը շատ մեծ է, սակայն դրանում է մեր ազգային առանձնահատկությունը և առանց պետության պետականություն ունենալու շնորհիվ, որը մեզ համար ունի գենետիկ նշանակություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան, Աշոտ.** *Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց*, թարգմանություն, Երևան, 1970 թվական, 368 էջ:
2. **Աստուածաշունչ,** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Հայաստանի աստուածաշնչային ընկերություն, 1994թ. , <https://www.gahana.am/bible/OldTestament/Genesis.html> /վերջին այցը՝ 14. 01. 2025թ. :
3. **Արևշատյան, Սեն.** *«Մեսրոպ Մաշտոցի փիլիսոփայական հայացքներ».* Պատմաբանասիրական հանդես, թիվ 1-2, Երևան, 1996 թվական, 91-110 էջեր:
4. **Բաստամեանց, Վահան.** *Մխիթարայ Գոշի Պատաստանագիրք Հայոց իրավաբանական հետազոտությունը*, Վաղարշապատ 1880 թվական, 7 էջ:
5. **Մանանդյան, Հակոբ, Աճառյան, Հրաչյա.** *«Հայոց նոր վկաների աշխատունակությամբ»*, Վաղարշակ, 1903, 23 էջ:
6. **Մելքունյան, Գագիկ,** *Մարդու հիմնահարցը Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում*, Երևան, 1995թ. 145-154 էջեր:
7. **Մովսես Խորենացի,** *Պատմություն հայոց*. Երևան, 1991 թվական, 66-67 էջեր:
8. **Ներսես Շնորհալի,** *Ընդհանրական թուղթ Երուսաղեմ*. 1871 թվական, 336 էջ:
9. **Պիվազյան, Էմանուել.** *Մխիթար Գոշի «Պատաստանագրքի» բանասիրական քննություն*. Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1987, 225 էջ:
10. **Սամուելյան, Խաչիկ.** *Հին հայ իրավունքի պատմություն*. 1939 թվական, էջ 80-81:
11. **Սաֆարյան, Գառնիկ.** *Պատմության և իրավունքի տեսության հիմնահարցեր*, Երևան, 2010, 546 էջ:
12. **Боргов, Юзеф.,** *Фома Аквинский, М.*, 1966թ., էջ 139:

WORKS CITED

1. Abrahamyan Ashot, Yeznik Koghbats'i, Yeghts aghandots' [Denial of sects], T'argmanut'yun, Yerevan, 1970 t'vakan, 368 ej. (in Armenian)
2. Astuatsashunch' [The Bible], Mayr At'vorr Surb Ejmiatsin yev Hayastani Astuatsashnch'ayin Ynkerut'iwn, 1994t'. (in Armenian)
3. Arevshatyan Sen, «Mesrop Mashtots'i p'ilisop'ayakan hayats'k'ner» [Philosophical views of Mesrop Mashtots]. Patma-banasirakan handes, t'iv 1-2, Yerevan, 1996 t'vakan, 91-110 ejer. (in Armenian)
4. Bastameants' Vahan, Mkhit'aray Goshi Datastanagirk' Hayots' irawabanakan hetazotut'iwnk' [Mkhitar Gosh's Judicial Book Armenian Legal Research], Vagharshapat 1880 t'vakan, 7 ej. (in Armenian)
5. Manandyan Hakob, Acharryan Hrachya, «Hayots' nor vkaneri ashkhatunakut'yamb» [New Armenian Witnesses], Vagharshak, 1903, 23 ej. (in Armenian)
6. Melk'umyan Gagik. , Mardu himnaharts'y SH. SHahamiryan «Vorogayt' parrats'»-um [The Human Issue in the “Vorogayt parats” by Sh. Shaamiryan], Yerevan, 1995t'. 145-154 ejer. (in Armenian)
7. Movses Khorenats'i, Patmut'iwn Hayots' [The History of Armenia], Yerevan, 1991 t'vakan, 66-67 ejer. (in Armenian)

8. Nerses Shnorhali, Yndhanrakan t'ught'k' yerusaghem [The Paper as a Whole], 1871 t'vakan, 336 ej. (in Armenian)
9. Pivazyan Emanuel, Mkhitar Goshi «Datastanagrk'i» Banasirakan k'nnut'yun [The Philological Research "Datastanagirq" by Mkhitar Gosh], Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, Yerevan, 1987, 225 ej. (in Armenian)
10. Samuyelyan Khachik, Hin hay iravunk'i patmut'yun [The History of Ancient Armenian Law]. 1939 t'vakan, ej 80-81. (in Armenian)
11. Safaryan Garnnik, patmut'yan yev iravunk'i tesut'yan himnaharts'er [Questions of the History and Theory of Law], Yerevan, 2010, 546 ej. (in Armenian)
12. Borgosh Jujef., Foma Akvinskij [Thomas Aquinas], M., 1966թ., էջ 139. (in Armenian)

THE INFLUENCE OF NATURAL LAW ON ARMENIAN LEGAL AND POLITICAL TEACHINGS

ALEXANDER KOCHUBAEV

*Contra Group of Companies, Founder, Advocate;
NAS RA, the Institute of Philosophy, Sociology and Law, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this study is to analyze the prerequisites, course and results of the development of the theory of natural law, to outline general theoretical and methodological directions for the development of the doctrine of law and the state, personality and civil society. To characterize the methodological foundations and specifics of the development of the main natural law categories in the context of legal doctrines, - to identify the main milestones in the historical development of ideas about natural law and their features, and also to analyze the ways of solving natural law problems in philosophical and legal concepts of various trends of Modern times.

The methodological foundations of the research are the principles of a comprehensive analysis of political-legal and philosophical-legal doctrines. The study used logical, comparative legal, as well as historical, legal and comparative methods of cognition, which allowed the author to reveal the source of natural law ideas and their essence.

In the course of the historical development of science in the system of teachings on law and the state, as well as in the ethical teachings of go, originating from the natural or divine order, or from the natural qualities of man, natural law acts as the basic concept. It is within the framework of the doctrine of natural law that legal science tries to find an answer to the question of the relationship between law and law, to understand that legal principles and norms are a special form of actual social relations, a unified form, in which there is an internal logic as an expression of the harmony of specific legal relations.

Keywords: *natural law concept, legal doctrine, divine law, natural law, canon law, customary law, secular law, freedom.*

ВЛИЯНИЕ ЕСТЕСТВЕННОГО ПРАВА НА АРМЯНСКИЕ ПРАВОВЫЕ И ПОЛИТИЧЕСКИЕ УЧЕНИЯ

АЛЕКСАНДР КОЧУБАЕВ

*соискатель Института права, философии и социологии АН РА,
основатель, адвокат группы компаний «Контра»,
г. Ереван, Республика Армения*

Цель настоящего исследования - проанализировать предпосылки, ход и результаты развития теории естественного права, наметить общие теоретические и методологические направления развития учения о праве и государстве, личности и гражданском обществе; охарактеризовать методологические основы и специфику развития основных естественно-правовых категорий в контексте правовых учений, - выявить основные вехи исторического развития представлений о естественном праве и их особенностях, а также проанализировать способы решения естественно-правовых проблем в философско-правовых концепциях различных направлений Нового времени.

Методологические основы исследования составляют принципы комплексного анализа политико-правовых и философско-правовых учений. В исследовании использовались логический, сравнительно-правовой, а также исторический, юридически-сравнительный методы познания, что позволило автору раскрыть источник естественно-правовых идей и их сущность. В ходе исторического развития науки в системе учений о праве и государстве, а также в этических учениях го, происходящих из естественного или божественного порядка или из природных качеств человека, естественное право выступает в качестве основного понятия.

Именно в рамках учения о естественном праве юридическая наука пытается найти ответ на вопрос о соотношении права и закона, понять, что правовые принципы и нормы являются особой формой фактических общественных отношений, унифицированной формой, в котором существует внутренняя логика как выражение гармонии конкретных правоотношений.

Ключевые слова: *естественно-правовая концепция, правовое учение, божественное право, естественное право, каноническое право, обычное право, светское право, свобода.*

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

**ՀԱՎԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼԸ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓՈՒՄ.
ՏԵՍԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ***

ՀՏԴ [327+327.7]

DOI: 10.52063/25792652-2024.4.23-60

ՄՅԵՐ ՇԻՐԻՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի
փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

m.a.shirinyan@mail.ru

ORCID: 0009-0006-4735-7834

Հավաքական անվտանգությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ անվտանգությունը բխում է բոլոր պետությունների շահերից, և անվտանգության սպառնալիքները հաճախ պահանջում են համակարգված միջազգային արձագանք: Ուժերի հարաբերակցության տեսությունը ներկայումս ամենաճշգրիտ պատասխանն է այսօրինակ հարցերի. ի՞նչ պայմաններում են ստեղծվում դաշինքները. ի՞նչն է որոշում, թե ով ում հետ է դաշնակցում. Ինչպե՞ս է ձևավորվում դաշնակիցների միջև ծախսերի և օգուտների բաշխման համակարգը: Սակայն ուժերի հարաբերակցության գնահատման տրամաբանությունը այս հարցերին միայն մասամբ է պատասխանում: Արդի աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների համընդգրկուն գնահատումը ցույց է տալիս, որ անվտանգության ապահովման հավաքական (դաշինքային) մոդելն ամենատարածվածն է և ամենակիրառականը, որտեղ անդամ պետությունները միմյանց օգնություն են ցուցաբերում ավտոմատացված եղանակով, և այդ պարտավորությունն ամրագրված է տվյալ դաշինքի կանոնադրությունում:

Սույն աշխատանքի նպատակն է վերլուծել կոլեկտիվ անվտանգության զարգացող բնույթը ժամանակակից միջազգային համակարգում և գնահատել դրա արդյունավետությունը միջպետական հակամարտությունների և տարածաշրջանային անկայունության լուծման գործում:

Վերլուծության շրջանակներում գնահատվել են բազմաբևեռ աշխարհում անվտանգության ավանդական հայեցակարգերի կարողունակությունը՝ լուծելու ժամանակակից աշխարհաքաղաքական մարտահրավերները, ինչպես նաև դաշինքների առջև ծառացած ռիսկերն ու մարտահրավերները՝ ներառյալ հակամարտությունների սրման և տարբեր ազգային շահերի կառավարումը:

* Հոդվածը ներկայացվել է 10.10.2024թ., գրախոսվել՝ 27.10.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

Սույն աշխատանքում օգտագործվել են պատմահամեմատական մեթոդը, ինչպես նաև ռեալիստական և իդեալիստական տեսական շրջանակներ՝ վերլուծելու հավաքական անվտանգության հայեցակարգը:

Հոդվածում ներկայացված վերլուծության արդյունքում կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Արդի աշխարհաքաղաքական գործընթացներում «հավաքական անվտանգություն» և «հավաքական պաշտպանություն» հասկացությունները շատ լայնորեն են մեկնաբանվում: Ցավոք, ավտորիտար ռեժիմներն օգտվում են իրադարձությունների այս զարգացումից՝ ընդլայնելով պետական միջամտության սահմանները ինչպես սեփական երկրի ներսում՝ քաղաքացիների գործերին, այնպես էլ հարևան պետությունների գործերին:

2. Հավաքական անվտանգությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ անվտանգությունը բխում է բոլոր պետությունների շահերից, և անվտանգության սպառնալիքները հաճախ պահանջում են համակարգված միջազգային արձագանք: Պետությունները համաձայնում են դիմակայել անվտանգության սպառնալիքներին և կիսել խաղաղության պահպանման կամ հարկադրանքի ծախսերը:

3. Հավաքական պաշտպանությունը պայմանագիր է, որը սովորաբար ձևակերպվում է անդամ պետությունների միջև, և որով անդամ պետությունները պարտավորվում են աջակցություն ցուցաբերել անդամ պետության պաշտպանությանը, եթե այն հարձակման է ենթարկվում կազմակերպությունից դուրս գտնվող մեկ այլ պետության կողմից:

4. Որպես հավաքական անվտանգային դաշինքներ առանձնանում են ՆԱՏՕ-ն և ՀԱՊԿ-ը, որոնք առաջին հայացքից ունեն նույն նպատակներն ու խնդիրները, և որոշ տեղերում դրանք համադրելի են, իսկ իրականում նրանք բևեռացված կառույցներ են և պայքարում են միմյանց դեմ:

Անվտանգության թեման շարունակում է արդիական և, միևնույն ժամանակ, բարդ մնալ: Անվտանգության ապահովման հավաքական դաշինքային մոդելն ամենատարածվածն է և ամենակիրառականը, որտեղ անդամ պետությունները միմյանց օգնություն են ցուցաբերում ավտոմատացված եղանակով, և այդ պարտավորությունն ամրագրված է տվյալ դաշինքի կանոնադրությունում: «Հավաքական անվտանգություն» և «հավաքական պաշտպանություն» հայեցակարգերը երկարաժամկետ պաշտոնական պարտավորություն են՝ երկրների խմբերի միջև՝ իրենց շահերի համատեղ ոլորտներում առանձին անդամների անվտանգության շահերը պաշտպանելու նպատակ ունեցող:

Հիմնաբառեր՝ անվտանգություն, գործակցություն, արտաքին քաղաքականություն, միջազգային հանրություն, բազմակողմ ձևաչափ, պետություն, դաշինք, միություն, տարածաշրջան, հավաքական պաշտպանություն, տարածքային ամբողջականություն, սահմանների անձեռնմխելիություն:

Ներածություն

Համաշխարհային կայունություն և խաղաղություն գտնելու՝ միջազգային հանրության ջանքերի՝ մինչ օրս արձանագրած փորձը ցույց է տալիս, որ անվտանգության ավանդական հայեցակարգերը համարժեք լուծումներ չեն տալիս միջպետական հակամարտության և տարածաշրջանային անկայունության մարտահրավերներին: Ժամանակակից ցանկացած անվտանգային քաղաքականության ենթադրյալ, ոչ լատենտային նպատակը խաղաղության պահպանումն է, դրանից ելնելով էլ քաղաքականություն մշակողները պաշտոնական փաստաթղթերում ու

հայտարարություններում ամրագրում են խաղաղության, հաշտության և կայունության առաջնահերթությունները:

20-րդ դարի առաջին տարիներին մարդկությունն ականատես եղավ արտաքին քաղաքականության մեջ Նոր մոտեցման՝ հավաքական անվտանգության գաղափարին, որը գլոբալ շրջանակներում կապված է միջազգային անվտանգության հետ: Անվտանգության թեման շարունակում է արդիական և միևնույն ժամանակ բարդ մնալ: Այս համատեքստում միջազգային հանրության ջանքերն ուղղված են լինում գտնելու երկրների միջև փոխվստահության ձևավորման Նոր ուղիներ և մեթոդներ: Նրանցից շատերը համարում են, որ ներգրավվածների լայն շրջանակն օգնում է հասնելու սեփական անվտանգությանը և ամրապնդելու այն՝ լինելով անվտանգության կոլեկտիվ համակարգերի բաղադրիչներ, դա, իհարկե, չի բացառում նրանց ակտիվ մասնակցությունը միջազգային այլ՝ բազմակողմ կամ երկկողմ գործընթացներին:

Հավաքական անվտանգությունը նաև ներթափանցում է ներսից՝ ինքնիշխան պետությունների ներսում անվտանգությունն ստեղծելու համար: Այստեղից կարելի է հաստատել, որ հավաքական անվտանգության մակարդակը մեծապես կախված է նաև լիբերալ ժողովրդավարությունից: Մյուս կողմից, հավաքական անվտանգության ոլորտում միասնությանը հաջորդում են ուժեղ տնտեսական համագործակցությունը տարածաշրջանի ներսում, օրենքի գերակայության մասով համատեղ ընկալումները, որոնք ամրապնդվում են այն փաստով, որ արևմտաեվրոպական բոլոր երկրները լիբերալ ժողովրդավարություններ են. սա հրամայական է այսօր անցումային տնտեսությունն ունեցող բոլոր երկրների համար:

Ավելին, հավաքական անվտանգության համակարգում հավանական հակառակորդը սպառնալիք է տարածաշրջանային կամ միջազգային խաղաղության և անվտանգության համար: Եթե հավաքական անվտանգության համակարգը իր հասանելիության սահմաններում միջազգային է, ապա սպառնալիք կարող է ծագել ցանկացած տարածաշրջանում, երկրագնդի ցանկացած կետում: Տարածաշրջանային կամ միջազգային համակարգում գտնվող սուբյեկտը, որը ագրեսիա է գործում, վտանգի տակ է դնում խաղաղությունը կամ կոպտորեն խախտում է քաղաքակիրթ վարքի կանոնները, այդ հավաքական անվտանգության համակարգի Նորմերը, ենթակա է հարկադիր ընդդիմական գործողությունների: Ոչ մի նման դերակատար չի ազատվում խաղաղության և անվտանգության պահպանման պատասխանատվությունից՝ անկախ այն բանից, թե իր հավաքական անվտանգության համակարգի շրջանակներում որտեղից է գալիս սպառնալիքը: Եվ որպես այդպիսին՝ վտանգի տակ գտնվող ազգը, իրացնելով հավաքական ինքնապաշտպանության իր անքակտելի իրավունքը, կարող է օգնության կանչել սեփական դաշնակիցներին ու գործընկերներին (Crawford 2016): Հավաքական պաշտպանության մոտեցումը միավորում է այն երկրներին, որոնք բացառում են իրենց միջև պատերազմի հնարավորությունը և ցանկանում են հետապնդել ընդհանուր անվտանգության նպատակներ՝ մեկ դաշնակցի վրա հարձակումը համարելով հարձակում՝ բոլոր դաշնակիցների դեմ» (North Atlantic Treaty Organization 2023):

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվում նաև, որ պետությունները միավորվում են միությունների մեջ՝ հիմնված քաղաքակրթական նմանությունների վրա: Այդպիսին է, օրինակ, «անգլոսաքսոնական» համերաշխությունը, որը բնորոշ է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Ավստրալիայի և Նոր Չեխոսլովակիայի մասնակցությամբ դաշինքներին և կոալիցիաներին: Նույնը կարելի է ասել եվրոպական պաշտպանական-անվտանգային որոշակի ուղղվածությամբ ինտեգրացիոն կառույցների մասին: Դաշնակիցներն ընտրվում են նաև կառուցողական փոխգործակցության հեռանկարի ակնկալիքով կամ ավելի վաղ ձևավորված փոխվստահության հիման վրա:

Բազմաբևեռության պայմաններում, «ուժերի հավասարակշռության» տրամաբանության համաձայն, որոշ պետություններ կարող են ագրեսիայի դրդապատճառ ունենալ, իսկ մյուսները՝ օգնության հասնել տուժողին: Ընդ որում՝ պետություններից յուրաքանչյուրը կարող է ունենալ նաև «հարևանի թիկունքում նստելու» դրդապատճառ: Իրականում այս շարժառիթները շատ դեպքերում հավասարակշռության մեջ են:

Միևնույն ժամանակ, կողմերից յուրաքանչյուրը դրսևորում է իր ուժային դիրքի ամրապնդման երեք հիմնական եղանակ՝ սեփական ուժի արագացված զարգացում, սեփական ուժի ավելացում՝ այլ երկրների հզորության ավելացմամբ, և հավանական հակառակորդի հզորության թուլացում, որը խոչընդոտում է նրա հետ երրորդ երկրների միավորումը: Եթե պետությունն ընտրում է առաջին ճանապարհը, ապա նա խաղադրույք է կատարում սպառազինությունների մրցավազքի վրա, եթե՝ երկրորդը կամ երրորդը, ապա գնում է դաշինքներ կազմելու ճանապարհով:

Նման պայմաններում նախադրյալներ են ստեղծվում միություններ ստեղծելու համար՝ լարվածությունը և փոխադարձ մտավախությունները նվազեցնելու նպատակով: Միության նկատմամբ հետաքրքրությունն ավելի ակնհայտ է դառնում, երբ տարածաշրջանում նկատվում են պետությունների հնարավորությունների զգալի տարբերություն, ինչպես նաև համընկնող շահերի և հակասությունների առկայություն: Իրականում գործընկերներն ընտրվում են մի գործընթացի միջոցով, որը նման է գործարքի կնքմանը: Միևնույն ժամանակ, դա փոխադարձ պարտավորությունների և կողմերի պատասխանատվության հստակությունն է, որը կարող է ավելի ծանրակշիռ լինել, քան այլընտրանքների վերլուծությունը «ընդհանուր շահեր, հակասություններ, ներուժի հարաբերակցություն» պարամետրերով:

Դաշինքի կամ միության հիմնական արժեքը նրա անդամների անվտանգությունն է. միությունը պետք է երաշխավորի նրանց անվտանգության ավելի մեծ մակարդակ: Միևնույն ժամանակ, միության հիմնական թույլ կողմերն են կոալիցիոն պատերազմի մեջ ներքաշվելու մեծ ռիսկը, ինչպես նաև գործողությունների ազատության սահմանափակումը, որոնք պետք է համաձայնեցվեն դաշնակիցների հետ: Միության անդամներից յուրաքանչյուրի համար իրական առավելությունները փոխզիջումներն են միության պայմանագրի արժեքների և պայմանների միջև: Այս փոխզիջումը կառուցվում է միության պայմանագրի պայմանների շուրջ բանակցությունների ընթացքում: Իրենց համար առավել բարենպաստ պայմաններով բանակցում է այն կողմը, որի համար միության նկատմամբ շահագրգռվածությունն ամենաբարձրն է, սակայն դաշնակցային այլընտրանքները բավական լայն են (Мешков 34-35):

Որպես գործընթաց՝ միության պաշտոնականացումից հետո գործընկերները բախվում են կառավարչական ծավալուն խնդիրների: Դրանց թվում են, մասնավորապես, արտաքին քաղաքականության (հատկապես՝ հավանական հակառակորդների հետ կապված), ռազմավարական պլանավորման համակարգումը, ուժերի, խմբավորումների համատեղելիությունը պահպանելու նրանց պատրաստակամությունը (ներառյալ ճգնաժամային ժամանակներում), դաշնակցային պարտականությունների բաշխումը և այլն:

Փորձը ցույց է տալիս, որ նմանատիպ շատ հարցերում կարելի է հասնել լիակատար փոխըմբռնման, մյուսների դեպքում կոնֆլիկտներն անխուսափելի կարող են լինեն: Ուստի՝ միության կառավարումը նրա կայունության և արդյունավետության պահպանումն է՝ անդամների շահերի համակարգմամբ: Այն ներկայացնում է դիրքերի համակարգման (խորհրդատվության) կարգավորված գործընթաց, որի ընթացքում կողմերը փորձում են առավելագույնի հասցնել իրենց շահույթները մասնակցությունից և նվազագույնի հասցնել ծախսերն ու ռիսկերը: Համաձայնեցման գործընթացում լավագույն դիրքերը պատկանում են այն կողմին, որն ամենաբարձրն է կախված միությունից:

Անդամ երկրների անվտանգային երաշխավորվածության տեսանկյունից միության կայունության համար առանցքային դեր է ստանում «դաշնակցային երկընտրանքի» լուծումը: Շահերը համակարգելիս յուրաքանչյուր դաշնակից որոշում է երկընտրանքը՝ հրաժարվել պարտավորություններից՝ ներքաշվել ուրիշների շահերի պաշտպանության մեջ: Հրաժարման վատագույն արդյունքը նշանակում է անջատում (կամավոր դուրս գալ միությունից) և առանց աջակցության մնալու վտանգը: Արդյունքում, դաշնակիցների շահերը պաշտպանելը կտրուկ մեծացնում է պատերազմի մեջ ներքաշվելու վտանգը, այսինքն՝ մի ռիսկի նվազումը հանգեցնում է մյուսի աճին: «Մերժվելու» և «ներքաշվելու» վախերի միջև հավասարակշռությունը ոչ այնքան երկընտրանք է որպես ամբողջություն, որքան՝ փոխզիջում: Հետևաբար՝ միությունում կառավարման էական խնդիր է այս մտավախություններից որոշակի արդյունավետություն գտնելը: Եվ սա դաշնակիցների միջև «սակարկության» առարկաներից միայն մեկն է (թեև շատ նշանակալից):

Միության գոյության ընթացքում նրա անդամները ստիպված են լուծել մի շարք այլ խնդիրներ և հակասություններ, որոնք ազդում են դրա արդյունավետության և կայունության վրա: Դրանք են՝

1. **Միության ընդհանուր արժեքները և նրա անդամների տարբեր շահերը.** սովորաբար ենթադրվում է, որ որքան ավելի տարասեռ են միության անդամները, այնքան քիչ է կայուն գործելու հնարավորությունը և՛ հակառակը: Տարասեռությունը ավելի աշխատատար է դարձնում համաձայնեցված լուծումներ գտնելու գործընթացը (երկրների համար ընդհանուր օրինաչափություններին հարմարվելու ծախսերը կտրուկ աճում են) և, հետևաբար, հանգեցնում է բանակցային գործընթացի՝ որպես այդպիսին, ծավալայնության: Միևնույն ժամանակ, միության առավելությունների ավելացումը այն դարձնում է ավելի կայուն: Սա եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության ձևավորման տիպիկ օրինակն է:

2. **Առաջնորդության խնդիրը.** այս գործոնն ուղղակիորեն ազդում է «մերժում-նահանջ» երկընտրանքի լուծման վրա, քանի որ միությունում ուժերի հնարավորությունների անհավասարակշռությունը (եկելով անդամներից յուրաքանչյուրի ներդրումից) կարող է պայմաններ ստեղծել անդամներին հարկադրաբար դաշինքում պահելու և անդամ պետության քաղաքականությունը միության պահանջներին համապատասխանեցնելու մասով (Мырзакытова 9-20):

Հզոր ուժի (տարածաշրջանային առաջնորդի) միավորման մեջ լինելը, հիմնական ներդրումն ունենալով միության մեջ, որպես կանոն, նրան դարձնում է միության «հեգեմոն»: Իր փոփոխված տարբերակում այս մոտեցումը ենթադրում է ոչ թե մեկ, այլ մի խումբ առաջնորդներ (օրինակ, ԵՄ-ում դրանք Գերմանիան և Ֆրանսիան են, ՀԱՊԿ-ում՝ Ռուսաստանի Դաշնությունը): Որոշակի կոնկրետացող արտաքին սպառնալիքի առկայության դեպքում անհատական ղեկավարությունը մեծացնում է դաշինքի կայունությունն ու արդյունավետությունը (օրինակ՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը ՆԱՏՕ-ի համար և Վարշավայի պայմանագիրը՝ սառը պատերազմի ժամանակ): Բայց հստակ և շոշափելի սպառնալիքի բացակայության դեպքում հզոր ուժի առկայությունը ստիպում է ավելի թույլ երկրներին ձևավորել ոչ պաշտոնական միավորումներ միության ներսում՝ չեզոքացնելու նրա ղեկավարությունը (օրինակ, ՆԱՏՕ-ում դրանք եվրոկենտրոն պետություններ են): Դա, իր հերթին, ստիպում է միության առաջնորդին գնալ դաշնակցային հարաբերությունների ավելի կոշտ ինստիտուցիոնալացման ճանապարհով (օրինակ՝ այդ ճանապարհով ՌԴ-ն գնում է ՀԱՊԿ), կամ դաշնակիցներից կոալիցիաներ ձևավորել այս կամ այն հավաքական խնդրի լուծման ժամանակ (օրինակ՝ ՆԱՏՕ-ի հիման վրա ԱՄՆ-ի հակաիրաքյան կոալիցիոն ծրագրերը): Եթե ներքին ենթասոցիալիզմներն ուժեղացնում են տնտեսական խմբավորումները, ապա ենթատարածաշրջանային ռազմաքաղաքական կառույցների առկայությունը (օրինակ՝ ՌԴ - Բելառուս երկկողմ միությունը՝ ՀԱՊԿ

ընդհանուր միության առկայության դեպքում) ընդհանուր առմամբ միանշանակ չէ մեծ միության կայունության համար: Այս առումով ակնհայտորեն արդյունավետ պետք է դիտարկել Եվրոպայում՝ ՆԱՏՕ-ի հետ կապված «փոխլրացնող» անվտանգության ինստիտուտների հայեցակարգը:

3. Միության կառավարման համակարգը և կառուցակարգերը. որքան արդյունավետ է միության որոշումների կայացման գործընթացը, այնքան կայուն է միությունը: Կարևոր դեր է խաղում նաև միությունում, այսպես կոչված, «վետո խաղացողների» թիվը: Մի կողմից, դրանց թվի աճը նվազեցնում է կոլեկտիվ որոշումներ կայացնելու արագությունը, մյուս կողմից՝ նվազում է ոչ ադեկվատ որոշումներ կայացնելու հավանականությունը: Ուստի՝ «վետո խաղացողների» մեծ թիվը նվազեցնում է միության արդյունավետությունը, բայց միաժամանակ բարձրացնում է նրա կայունությունը:

Ղաշինքների կայունության որոշման գործում նշանակալի դեր է խաղում կոալիցիոն մարմիններին պատվիրակված ֆորմալ լիազորությունների գործոնը: Այսպիսով՝ կենտրոնացված որոշումների կայացման չափազանց մեծ ցանկությունը կարող է հանգեցնել միությանը մասնակցելու մերժմանը և/կամ դրա փլուզմանը: Իսկ վերազգային մարմինների ոչ բավարար լիազորությունները հանգեցնում են միության ամորֆ լինելուն: Ուստի՝ միության կառավարման արդյունավետ համակարգը ենթադրում է ինչպես միությանը՝ իր անդամներից «խլելու» փորձերի, այնպես էլ կոալիցիոն կառավարման մարմինների՝ առաջին հերթին իրենց սեփական, այլ ոչ թե միութենական խնդիրները լուծելու հնարավորության սահմանափակում:

Սա իր հերթին հանգեցնում է այն իրավիճակին, երբ ավելի կանխատեսելի է դաշինքների ձևավորումը երկբևեռ համակարգում: Ընդհանուր շահերի լայն դաշտի առկայությունը (թշնամու պարզությունը) և նրա չեզոքացման հիմնական պատասխանատվությունը, այլընտրանքային դաշինքների բացակայությունը բանակցությունները «սակարկությունից» փաստացի տեղափոխում են «ընդհանուր խնդրի լուծմանը»: Երկբևեռությունը քիչ հնարավորություններ կամ պատճառներ է տալիս դաշինքը «մերժելու» համար, իսկ «դաշինքի երկընտրանքը» թույլ է արտահայտված:

Երկբևեռ համակարգում դաշինքներն ունեն ևս մեկ հատկություն, որը տարբերում է դրանք բազմաբևեռ համակարգի դաշինքներից. դա դաշնակիցների՝ ընդհանուր թշնամու հետ տարբեր հարաբերությունների մեջ մտնելու կարողությունն է: 1980-ականների սկզբին ՆԱՏՕ-ի եվրոպացի անդամները ԽՍՀՄ-ի դեմ վարում էին թուլացման քաղաքականություն, մինչդեռ ԱՄՆ-ն ուժեղացնում էր իր հակախորհրդային ջանքերը: Բազմաբևեռ համակարգի պայմաններում հիմնարար քաղաքականության նման մասնատումը կկործանի ցանկացած դաշինք: Բայց ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ նրա դաշնակիցները միմյանց նկատմամբ առանձնահատուկ սակարկությունների առավելություններ չունեն: Եվրոպական պետությունները կախվածության մեջ են, սակայն այդ թուլությունը, կաշկանդվածությունը փոխհատուցվում են նրանց պաշտպանության հարցում ամերիկյան ռազմավարական շահագրգռվածությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս համաշխարհային միջազգային համակարգն ունի ինչպես միաբևեռության, այնպես էլ բազմաբևեռության նշաններ, նախորդ դարում՝ սառը պատերազմի ժամանակ ձևավորված դաշինքների կառավարման սկզբունքները շատ առումներով մնում են արդյունավետ նաև աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային արդի զարգացումների համատեքստում:

Որպես դասական օրինակ՝ ՄԱԿ-ը, լինելով Ազգերի լիգայի իրավահաջորդ, իրենից ներկայացնում է հավաքական անվտանգության յուրովի համակարգ, բայց հաստատապես ստեղծված է իր նախորդի ավելի մեծ թերությունները շտկելու համար: ՄԱԿ-ը, ի տարբերություն Լիգայի, ունի համընդհանուր անդամություն:

Մասնավորապես ՄԱԿ-ը ունիվերսալ միջազգային կազմակերպություն է, որն արգելում է պատերազմը՝ որպես պետությունների միջազգային քաղաքականության միջոց: ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածը սահմանում է. «Սույն Կանոնադրությունը ոչնչով չի խաթարում անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը՝ Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի հարձակման ենթարկվելու դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման միջոցառումներ: Անդամների կողմից իրենց ինքնապաշտպանության իրավունքն իրականացնելու միջոցառումների մասին անմիջապես հաղորդվում են Անվտանգության խորհրդին և, սույն Կանոնադրության համաձայն, ոչ մի կերպ չեն ազդում Անվտանգության խորհրդի հեղինակության ու լիազորության վրա՝ ցանկացած ժամանակ ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նա անհրաժեշտ կհամարի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար» (ՄԱԿ, հոդված 51, 1945):

ՄԱԿ-ի՝ հավաքական անվտանգության ամենաարտահայտված գործողությունները տեղի են ունեցել երկու անգամ: Այսպես՝ ՄԱԿ-ը հիմնականում արդյունավետ էր գործում Զյուսիսային Կորեայի դեմ 1950 թվականին, բայց միայն այն պատճառով, որ խորհրդային Միությունը բոլորտեց խորհրդի նիստերը: Այն ժամանակ մշտական անդամներն էին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Չինաստանի Զանրապետությունը և խորհրդային Միությունը: Սառը պատերազմի ավարտը հնարավորություն տվեց ՄԱԿ-ի հավաքական անվտանգության ապահովման երկրորդ հաջող գործողությունն իրականացնել՝ 1990 թվականին Իրաքի կողմից Զուվեյթ ներխուժելու դեմ: Պարսից ծոցի ճգնաժամը ցույց տվեց, որ ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր առաջին անգամ Անվտանգության խորհուրդը սկսեց գործել այնպես, ինչպես նախատեսել էին նրա հիմնադիրները: Պարսից ծոցի ճգնաժամի ժամանակ Անվտանգության խորհուրդը, բացի իրաքյան ագրեսիան միաձայն դատապարտելուց և Զուվեյթի ամբողջականության ու ինքնիշխանության վերականգնման պահանջից, քվեարկեց նաև Իրաքի նկատմամբ տնտեսական և ռազմական պատժամիջոցների պարտադիր կիրառման մասին, որն ամբողջությամբ իրականացվեց: 1999 թվականի Կոսովոյի ճգնաժամի ժամանակ Սերբիայի դեմ ՄԱԿ-ի անունից որևէ գործողություն չի եղել: Ռուսաստանն ու Չինաստանը դեմ էին այդ գործողությանը, մասամբ այն պատճառով, որ Սերբիայի ներքին հարցերում ներգրավվածությունը հիմք կստեղծեր նմանատիպ ներքին իրավիճակներում այլ միջամտությունների շահարկումների համար, օրինակ՝ Չեչնիայում Ռուսաստանի, Տիբեթում Չինաստանի հետ կապված և այլն (Mihalka 34):

Հավաքական (կոլեկտիվ) անվտանգության ինստիտուցիոնալ կայացումը կապված է տարբեր գլոբալ ու տարածաշրջանային առանձնահատկությունների հետ: 1975թ. Զեյսիկյան եզրափակիչ ակտը, որտեղ ամրագրված էր հավասար և անբաժանելի անվտանգության սկզբունքը, նշանակում էր եվրատալանտյան տարածքի երկրների պատրաստակամությունը ստատուս քվոն և խաղաղությունը պահպանելու հարցում: Հավաքական, անբաժանելի անվտանգության սկզբունքը ենթադրում էր, որ «գործակցությունը շահավետ է բոլոր մասնակից պետությունների համար, մինչդեռ մասնակից պետությունում մեկ պետության անապահովությունը կարող է ազդել բոլորի բարեկեցության վրա» (Perrin de Brichambaut 1): Գործնականում դա նշանակում է, որ «պետությունները չեն ամրապնդի իրենց անվտանգությունը այլ պետությունների հաշվին»:

Հավաքական անվտանգության հայեցակարգը պատշաճ ուշադրության չի արժանացել ակադեմիական հանրության կողմից. այն մնում է անբավարար հայեցակարգային և որոշ գիտնականների կողմից դիտվում է որպես անորոշ և նույնիսկ՝ կործանարար (Yost 146): Այնուամենայնիվ, հավաքական, անբաժանելի անվտանգությունը դրսևորում է բավականին ծավալուն կիրառական շրջանակներ:

Ավելին՝ այս հասկացությունն ուղղակիորեն հիշատակվել է 1990 թվականի Նոր Եվրոպայի փարիզյան խարտիայում (Organization for Security and Co-operation in Europe 5), 1997 թվականի Ռուսաստան-ՆԱՏՕ հիմնարար ակտում (NATO), ինչպես նաև 1999 թվականի Եվրոպական անվտանգության խարտիայում (Organization for Security and Co-operation in Europe 1):

«Հավաքական անվտանգություն» և «դաշինքային անվտանգություն» հասկացություններին, ինչպես նաև հարակից գաղափարներին անդրադարձել են ինչպես ռեալիստական, այնպես էլ իդեալիստական ավանդույթներով աշխատող գիտնականներ և պրակտիկ փորձագետներ: Վերջիններին կողմից արդարացիորեն և համընդգրկուն ընկալմամբ կարևորվում է այն մոտեցումը, որ կոլեկտիվ անվտանգության վրա կենտրոնացած վերլուծության հիմնարար հատկանիշը դրա բազմազանությունն է՝ առկա հայեցակարգերի առումով, որով էլ պայմանավորվում է այն, թե ինչ է հավաքական անվտանգությունը և որքանով այն կարող է արդյունավետ լինել:

Այսպես, օրինակ, Ուիլյամսը և Ջոնսը ժամանակակից կոլեկտիվ անվտանգությունը դիտարկում են որպես 20-րդ դարասկզբի ավանդույթի շարունակություն: Նրանց տեսանկյունից կոլեկտիվ անվտանգությունը միանշանակ գաղափար կամ հայեցակարգ չէ, որի ժամանակը եկել է կամ կարող է սպառվել (Williams and Jones 88): Այս կարծիքը հիմնավորելու համար հեղինակները վկայակոչում են 1930-ականների հավաքական անվտանգության ձախողումը Իտալիայի կողմից, որն այդ ժամանակ ագրեսիվ արտաքին քաղաքականություն էր վարում, որի արդյունքը եղավ 1935 թվականի հոկտեմբերի 3-ի Ներխուժումը Եթովպիա և 1936 թվականի մայիսին Նրա գրավումը: Ազգերի լիգայի ոչ մի անդամ պատշաճ կերպով չարձագանքեց միջազգային Նորմերի ակնհայտ խախտմանը, այլ Նրանք ընդամենը դժգոհություն հայտնեցին՝ ագրեսիայի ակտը համարելով անհիմն:

Ուիլյամսը և Ջոնսը գտնում են, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ստանձնել է Ազգերի լիգայի դերը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, դա հանգեցրել է հավաքական անվտանգության իրականացման մի քանի նշանակալի փոփոխությունների: Անվտանգության խորհուրդը դժվարացավ համաձայնության գալ, թե ով է իրական ագրեսորը, և արդյունքում Նրա մշտական անդամները բաժանվեցին ու սատարեցին ներգրավված պատերազմող կողմերից մեկին կամ մյուսին: Սա իր հերթին թույլ տվեց, որ հակամարտությունն իր բնական ընթացքն ունենա, և արդյունքը որոշվեց մարտի դաշտում (Williams and Jones 89): Այդ մի քանի ջանքերը, որոնք հաջողությամբ պսակվեցին, չեն բնութագրվում որպես հավաքական, քանի որ դրանք որոշակիորեն «ամերիկյան խնամակալության ներքո էին»:

Կիրառելով այս տեսական շրջանակը՝ Ուիլյամսը և Ջոնսը արևմտյան դաշինքներին վերագրում են այն գաղափարը, որ հավաքական անվտանգությունը դժվար իրագործելի է՝ անվտանգության և պաշտպանության միջև բնորոշ տարբերությունների պատճառով: Նրանք մատնանշում են, որ, որպես այդպիսին, բացահայտված պաշտպանական խնդիրները սովորաբար բանավեճեր չեն առաջացնում դաշնակիցների միջև, ահա թե ինչու՝ շատ հեշտ է պայմանավորվել պաշտպանական ճգնաժամի համաձայնեցված արձագանքի շուրջ, ինչպիսին է 1962 թվականի Կուբայի իրթիռային ճգնաժամը: Ի հակադրություն այդ գաղափարին՝ անվտանգության խնդիրը չի ենթադրում անմիջական սպառնալիք. հետևաբար՝ տնտեսական և քաղաքական շահերի անհամապատասխանությունը բարդացնում է արագ համաձայնեցված արձագանքը:

Այս առումով Զարլզ Ա. Կուլաչանը և Զիֆորդ Ա. Կուլաչանը կոլեկտիվ անվտանգության հայեցակարգը վերլուծելիս այն չեն համեմատում հավաքական պաշտպանության հետ: Նրանք շեշտում են, որ «կոլեկտիվ անվտանգությունը նախընտրելի է, քան հավասարակշռությունը անիշխանության պայմաններում» (Kupchan and Kupchan 53): Կուլաչաններն ընդգծում են, որ «յուրաքանչյուր

հաստատություն, որը հիմնված է կանոնակարգված հավասարակշռության և «բոլորը մեկի դեմ» սկզբունքների վրա, պատկանում է հավաքական անվտանգության ընտանիքին»: Նրանց դիտանկյունից հավաքական անվտանգության հիմնական առավելություններն են՝ «ազդեցությունների դեմ ավելի արդյունավետ» հավասարակշռումը և «վստահության և համագործակցության» խթանումը:

Անվտանգային քննարկվող մոդելի վերաբերյալ Միրշայմերը, ով կառուցվածքային ռեալիստ է, նշում է, որ նախ՝ հավաքական անվտանգության համակարգը կարող է միաժամանակ դիմակայել միայն մեկ կամ երկու սպառնալիքի, որը կարող է բավարար չլինել իրատեսական գլոբալ քաղաքականության մեջ: Երկրորդ՝ հավաքական անվտանգության համակարգի պետությունները, ամենայն հավանականությամբ, կմնան լուսանցքում, եթե նրանց կենսական շահերը վտանգված չլինեն: Եվ երրորդ՝ Միրշայմերը նշում է, որ հավաքական անվտանգությունը պահանջում է վստահություն, որն, իհարկե, քիչ է հանդիպում և կիրառական առումով արժևորվում միջազգային մակարդակում պետությունների գործակցության հարցերում (Mearsheimer 28):

Եզրահանգումներ

Որպես եզրահանգում հարկ է ընդգծել, որ, չնայած ազգային և միջազգային մակարդակներում զինված հակամարտությունները որպես պետությունների միջև վեճերի կարգավորման գործիք օգտագործելուց խուսափելու և այդ երևույթը միջազգային մակարդակով պետությունների շահերը պաշտպանելու մեխանիզմների ցանկից բացառելու բոլոր փորձերին, այդ տարրը առօրյա կյանքի անբաժանելի մասն է, այդ թվում՝ 21-րդ դարում: Ներկայումս էլ գրեթե բոլոր զինված հակամարտություններին բնորոշ է մտնում ներգրավված կողմերի նյութական շահագրգռվածությունը, ինչպես նաև այդ գործընթացին՝ բոլոր փուլերում մասնավոր կառույցների ներկայությունն ու անմիջական մասնակցությունը՝ որպես սեփական անվտանգության առաջնային բաղադրիչ:

Հետևաբար՝ անվտանգության հիմնախնդիրը շարունակում է արդիական լինել նաև պետությունների հավաքական մակարդակով գործակցության շրջանակներում: «Հավաքական անվտանգություն» և «հավաքական պաշտպանություն» ինստիտուտները ծավալային մեծ դրսևորում են ստացել 20-րդ դարի գլոբալ գործընթացներում: Որպես այդպիսին՝ այդ երկու հայեցակարգերը երկարաժամկետ պաշտոնական պարտավորություն են երկրների խմբերի միջև՝ իրենց շահերի համատեղ ոլորտներում առանձին անդամների անվտանգության շահերը պաշտպանելու նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն»։ *Arlis*, 26-րդ հունիսի 1945, www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75801: Accessed: 01.10.2024.
2. Мешков, Алексей. «Стратегическое планирование внешнеполитической деятельности Российской Федерации в интеграционных процессах». *Проспект*, 2019, стр. 34-35, www.dokumen.pub/9785392305490.html.
3. Мурзакулова, Асел. *Развитие институтов межпарламентского сотрудничества СНГ в условиях постсоветской трансформации*. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата политических наук, Бишкек, 2010, стр. 9.
4. "Charter for European Security". *Organization for Security and Co-operation in Europe*, 18 November 1999, p. 1, www.osce.org/mc/17502.

5. "Charter of Paris for a New Europe". *Organization for Security and Co-operation in Europe*, 21 November 1990, p. 5, www.osce.org/mc/39516.
6. *Collective Defence and Article 5. North Atlantic Treaty Organization*. 4 July 2023, www.nato.int/cps/en/natohq/topics_110496.htm.
7. Crawford, Hillary E. "The Transcript of Madeleine Albright's DNC Speech". *Bustle*, 27 July 2016, www.bustle.com/articles/175104-the-transcript-of-madeleine-albrights-dnc-speech-shows-the-two-former-secretaries-of-state-have.
8. "Founding Act on Mutual Relations, Cooperation and Security between NATO and the Russian Federation". *NATO*, 27 May 1997, Paris, www.nato.int/cps/en/natohq/official_texts_25468.htm.
9. Kupchan, Charles A., and Kupchan, Clifford A. "The Promise of Collective Security". *International Security*, vol. 20, no. 1, 1995, p. 53, doi:10.2307/2539215.
10. Mearsheimer, John J. "The False Promise of International Institutions." *International Security*, vol. 19, no. 3, 1994, p. 28, doi:10.2307/2539078.
11. Mihalka, Michael. "Cooperative Security: From Theory to Practice." *Cooperative Security: New Horizons for International Order*, edited by Richard Cohen and Michael Mihalka, *The Marshall Center Papers*, no. 3, 2000, p. 34.
12. Perrin de Brichambaut, Marc. "The Indivisibility of Euro-Atlantic Security." 18th Partnership for Peace Research Seminar, *Vienna Diplomatic Academy*, 4 February 2010, p. 1, www.osce.org/sq/41452.
13. Williams, Geoffrey Lee, and Barkley Jared Jones. "Collective Security or Collective Defence?" *NATO and the Transatlantic Alliance in the 21st Century*, *Palgrave Macmillan*, 2001, p. 88, doi:10.1057/9780230599079_8.
14. Yost, David S. "The New NATO and Collective Security." *Survival*, vol. 40, no. 2, 1998, p. 146, www.tandfonline.com/doi/abs/10.1080/00396338.1998.10107846.

WORKS CITED

1. Miavorvac' azgeri kazmakerput'yan kanonadrut'yun [The Constitution of the United Nations Organization], 26-y' hunisi 1945, www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75801. (in Armenian)
2. Meshkov, Aleksey Jur'evich. Strategicheskoe planirovanie vneshnepoliticheskoy dejatel'nosti Rossijskoj Federacii v integracionnyh processah [Strategic Planning of Foreign Policy Activities of the Russian Federation in Integration Processes]. Prospekt, 2019, str. 34-35, shhshshh.dokumen.pub/9785392305490.html. (in Russian)
Ներկայումս առողջապահական քաղաքականության մշակումը, մոլեկուլային գենետիկայի նվաճումները, վերարտադրողական տեխնոլոգիաների կիրառումը և, առհասարակ, կենսաբանական հետազոտությունների արդի մեթոդներն այլևս հնարավոր չէ դիտարկել միայն մասնագիտական գիտելիքների շրջանակներում: Կենսաէթիկան վաղուց դուրս է եկել զուտ բժշկագիտության կամ կենսաբանության մասնագիտական շրջանակներից և ներթափանցել է հանրային քաղաքականության օրակարգ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ կենսաբժշկական տեխնոլոգիաների և գենետիկ ինժեներիայի շարունակական զարգացումը վերաձևում է ոչ միայն պետությունների առողջապահական և իրավական համակարգերը, այլև հասարակության կողմից բարոյական արժեքների ընկալումները և հանրային

* Հոդվածը ներկայացվել է 01.12.2024թ., գրախոսվել՝ 18.12.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

կյանքը ընդհանրապես: Արդյունքում կենսաէթիկան դարձել է հանրային բանավեճի կարևոր բաղադրիչ, որը ներգրավում է քաղաքական կուսակցություններին, կառավարություններին, հասարակական կազմակերպություններին և քաղաքացիական հասարակությանը: Առանց լայն ներգրավման և ընթացակարգային լեգիտիմության հայեցակարգի կիրառման հնարավոր չէ ապահովել կենսաէթիկական հիմնախնդիրների վերաբերյալ կայացված որոշումների լեգիտիմությունը, դա իր հերթին ենթադրում է մասնակցայնություն, թափանցիկություն և ընթացակարգային համաձայնություն: Այսպիսով՝ կենսաէթիկայի և քաղաքականության փոխառնչությունները դրսևորվում են մասնագիտական գիտելիքների, հանրային արժեքների, սոցիալական կայունության և ժողովրդավարական ներգրավվածության համադրման միջոցով:

Հիմնաբառեր՝ կենսաէթիկա, բարոյագիտություն, քաղաքական փիլիսոփայություն, ընթացակարգային լեգիտիմություն, մասնակցային ժողովրդավարություն, էֆթանագիա, գենոմի խմբագրում:

Ներածություն

Կենսաէթիկական ժամանակակից բարոյագիտության (էթիկայի) զարգացող ոլորտներից է, որն ուսումնասիրում է կյանքի և կենսաբանական գործընթացների հետ կապված բարոյական, իրավական ու հասարակական խնդիրները (Pereira 3-16): Կենսաէթիկան անդրադառնում է այնպիսի կարևորագույն հարցերի, ինչպիսիք են մարդու արժանապատվության ապահովումը բժշկական և գիտահետազոտական գործընթացներում, ինչպես նաև հավասարության և արդարության սկզբունքների գերակայությունը առողջապահության մեջ (Campbell 383-388): Կենսաէթիկան ընդգրկում է հիվանդների բուժման և հոգածության, օրգանների դոնորության և փոխպատվաստման, էֆթանագիայի և հոգեբուժական ծառայությունների էթիկական կողմերը, կարգավորում է մարդու և կենդանիների վրա իրականացվող գիտափորձերի մեթոդներն ու թույլատրելի սահմանները: Կենսաբազմազանության պահպանումը և բնապահպանական հիմնախնդիրները նույնպես գտնվում են կենսաէթիկայի տեսադաշտում (Räsänen և ուրիշներ 109-112): Կենսաէթիկայի հիմքերը կարելի է գտնել դեռևս միջնադարյան հոգևոր-բարոյական ուսմունքների մեջ: Այնուհետև 17-18-րդ դարերում տեղի ունեցած գիտական հեղափոխություններն ու լուսավորչական շարժումները բերեցին հիմնարար փոփոխություններ այն գաղափարի մեջ, թե ինչպե՞ս պետք է հասարակությունը մոտենա կյանքի և առողջության հետ կապված հարցերին (Areeva 100-108): Կենսաէթիկան՝ որպես գիտակարգ, ձևավորվել է 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ գիտատեխնոլոգիական նվաճումները (օրինակ՝ գենետիկական ինժեներիա, վերարտադրողական տեխնոլոգիաներ, օրգանների փոխպատվաստումներ) առաջ բերեցին այնպիսի բարոյական և իրավական հարցեր, որոնց մասին նախկինում քիչ էր խոսվում: Վան Ռենսելեր Փոթերը համարվում է **կենսաէթիկա** եզրույթի առաջին օգտագործողներից մեկը: Նա կենսաէթիկան սահմանում էր որպես «կենսաբանության, էկոլոգիայի և բարոյագիտության համադրված տեսություն, որի նպատակը մարդկության գոյատևման երկարաժամկետ հեռանկարը ապահովելն է» (Դավթյան 28-38):

Ամերիկացի փիլիսոփա Դանիել Զալահանը կենսաէթիկան բնորոշում էր ոչ միայն որպես ինտելեկտուալ ուղղություն, այլև սոցիալական շարժում, որը ձգտում է վերաձևակերպել հասարակության ընկալումը առողջության, հիվանդության և մահվան վերաբերյալ: Նա կարևորում էր առողջապահության և հանրային քաղաքականության կապը և պնդում էր, որ կենսաէթիկան պետք է մշտապես ներգրավված լինի քաղաքական և սոցիալական քննարկումներում (Hottois 15-38):

Վերջին տասնամյակներում կենսաէթիկան Էապես ընդլայնել է իր ազդեցությունը հանրային քաղաքականության ոլորտում: Կենսաբժշկական տեխնոլոգիաների զարգացումը նոր մարտահրավերներ է առաջադրում ժամանակակից հասարակություններին, որոնք պահանջում են ոչ միայն մասնագիտական, այլև ավելի լայն քննարկումներ՝ հանրային արժեքների, սոցիալական արդարության, մարդու իրավունքների և անհատական ազատությունների հարցերի շուրջ (Getz 2735-2748): Կենսաէթիկայի և քաղաքականության կապի դիտարկումը մեզ կանգնեցնում է հետևյալ հիմնահարցի առջև. արդյո՞ք քաղաքական որոշումները պետք է հիմնվեն «բարոյագիտության» վրա՝ ելնելով հարցի բարոյական ասպեկտներից, թե՞ անհրաժեշտ է ձևավորել ընթացակարգային մեխանիզմներ, որոնք կապահովեն որոշումների ընդունման լեգիտիմությունը՝ անկախ վերջնական բարոյական կոնսենսուսի առկայությունից (Veatch 540-559):

Այս առումով հողվածի հիմնական թեզն այն է, որ կենսաէթիկական հիմնախնդիրների լուծման ամենակենսունակ ձևը բարոյագիտական դիրքորոշումներից անցում կատարելն է դեպի ընթացակարգային լեգիտիմություն, սա ենթադրում է մասնակցայնություն, թափանցիկություն և հանրային ընդգրկում բանավեճ:

Կենսաէթիկական բարոյագիտության համատեքստում

Պատմականորեն կենսաէթիկական ձևավորվել է որպես բարոյագիտության կիրառական ճյուղ, որն ուսումնասիրում է մարդ-բնություն-տեխնոլոգիա փոխհարաբերությունները, որոնք ի հայտ են գալիս բժշկագիտության, կենսաբանության, գենետիկայի և հարակից ոլորտների զարգացման արդյունքում: Կենսաէթիկական ձևավորում է ուղեկիշներ, որոնց միջոցով հնարավոր է դառնում գնահատել կենսաբժշկական հետազոտությունների բարոյական հիմնավորվածությունը (Fan 353-376): Սակայն, միևնույն ժամանակ պետք է ընդունել, որ բարոյական սկզբունքների վրա հիմնված մոտեցումները հաճախ հանգեցնում են տարբեր մշակույթների և հասարակությունների միջև արժեքային հակասությունների: Մասնավորապես, այն, ինչ բարոյական է հասարակության որոշ շերտերի կամ խմբերի համար, կարող է անընդունելի լինել ուրիշների համար (Պետոս 189-199): Բազմազգ հասարակություններում մեկ ընդհանուր բարոյական չափանիշ սահմանելը գրեթե անհնարին է, ուստի՝ բարոյագիտական սկզբունքները, չնայած իրենց կարևորությանը, չեն երաշխավորում կայացված որոշումների նկատմամբ հանրային վստահություն և համընդհանուր ընդունելիություն (Boudreau 5): Ընդհանրապես, բարոյագիտության համատեքստում կենսաէթիկական որոշումները հիմնվում են մի քանի առանցքային բարոյական արժեքների վրա.

Բարերարություն և ոչ չարամտություն (beneficence and non maleficence).

Գործողությունները պետք է միտված լինեն ընդհանուր բարիքին, օրինակ՝ բուժական միջամտությունը պետք է նպատակադրված լինի բարելավել հիվանդի վիճակը: Բժիշկը կամ հետազոտողը պետք է նախ ապահովի, որ իր գործողությունները վնաս չհասցնեն մարդուն:

Արդարություն (Justice).

Առողջապահական ռեսուրսների բաշխումը, բուժապասարկման հասանելիությունը և նոր տեխնոլոգիաների կիրառումը պետք է հիմնվեն արդարության սկզբունքի վրա, որպեսզի ապահովվի հավասար իրավունքների և հնարավորությունների միջավայր:

Ինքնավարություն (Autonomy).

Անհատը պետք է ունենա իրավունք ինքնուրույն որոշելու իր բուժման, կենսաբժշկական միջամտությունների և անձնական տվյալների օգտագործման հետ կապված հարցերը (Ferrara 5-13):

Սակայն կենսաէթիկան, հիմնվելով բարոյագիտության այս սկզբունքների վրա, բախվում է մշակութային, կրոնական, սոցիալական և քաղաքական անհամաձայնությունների: Օրինակ՝ աբորտը (հղիության ընդհատում) որևէ հասարակությունում կարող է դիտվել որպես անընդունելի միջամտություն կյանքի սաղմային փուլում, իսկ մեկ այլ հասարակությունում կամ դրա առանձին շրջանակներում կարող է ընկալվել որպես կնոջ ինքնավարության արտահայտություն: Այս պարագայում «բարերարություն և ոչ չարամտություն» և «ինքնավարություն» սկզբունքները կարող են հակադրվել, ուստի՝ կենսաէթիկական տվյալ հիմնախնդրի վերաբերյալ վերջնական որոշման հիմքերը դժվար է գտնել միայն բարոյական սկզբունքների մակարդակում (Page 25-63):

Մեկ այլ օրինակ է Էֆթանագիայի (բժշկական աջակցությամբ մահվան հասնելու) խնդիրը: Մի շարք համայնքներում այն դիտարկվում է որպես կյանքի իրավունքի նկատմամբ աններելի ոտնահարում, իսկ որոշ համայնքներում այն ընկալվում է որպես անհատի արժանապատիվ մահվան իրավունքի ճանաչում: Այստեղ նույնպես «բարերարություն և ոչ չարամտություն» և «ինքնավարություն» սկզբունքները հակադրվում են և բարոյագիտական տեսանկյունից հարցի լուծման համար մեկ ընդհանուր չափանիշ մշակելը դառնում է անհնար (Rigby 549-556):

Գենետիկ ինժեներիայի և գենոմային խմբագրման տեխնոլոգիաների ոլորտում բարոյական հակասությունները նույնպես խորն են: Ոմանք պնդում են, որ գենոմի խմբագրմամբ հնարավոր է կանխարգելել ժառանգական հիվանդությունները, սա նշանակում է «բարերարություն և ոչ չարամտություն» սկզբունքի պահպանում, իսկ ուրիշները մտահոգված են, որ նման միջամտությունները խաթարում են մարդու ինքնության բնականությունը և աղավաղում են ժառանգական բազմազանությունը (Bariffi 1-24):

Ընթացակարգային լեգիտիմության հայեցակարգը

Ընթացակարգային լեգիտիմությունը քաղաքական փիլիսոփայության և Եթիկայի կարևոր գաղափարներից է: Այն հեռանում է հարցի զուտ բարոյական կողմից և կենտրոնանում է որոշումների ընդունման գործընթացի վրա: Ընթացակարգային լեգիտիմության տեսանկյունից որոշումը համարվում է լեգիտիմ, եթե այն կայացվում է արդար, ներառական և թափանցիկ ընթացակարգերի միջոցով: Այստեղ շեշտը դրվում է ոչ թե որոշման «բարոյական» կողմի, այլ այն գործընթացի որակի վրա, որի միջոցով այդ որոշումը կայացվել է (Bottoms 85-110):

Կենսաէթիկական հարցերը իրենց բնույթով շատ վիճահարույց են, քանի որ վերաբերում են կյանքին ու մահվանը, մտավոր ու ֆիզիկական առողջությանը, հասարակական արժեքների շարունակականությանը և այլն: Եթե որևէ հարցի վերաբերյալ չկա բարոյական կոնսենսուս, ապա ընթացակարգային լեգիտիմությունը կարող է ապահովել կայացված որոշման ընդունելիությունը: Այլ խոսքով, եթե որոշումը ընդունվել է արդար և թափանցիկ ընթացակարգերի միջոցով, ապա այն համարվում է լեգիտիմ, նույնիսկ եթե հանրության որոշ խմբեր համաձայն չեն դրա բովանդակության հետ (Barnhill և ուրիշներ 667-687):

Ընթացակարգային լեգիտիմության հիմնական տարրերն են.

Թափանցիկություն. Որոշումների կայացման գործընթացը հանրության համար պետք է լինի բաց և հասանելի: Սա ենթադրում է որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող մարմինների կազմի, նիստերի օրակարգի և արձանագրությունների հրապարակայնացում, ինչպես նաև ընդունված որոշումների հիմնավորումների տրամադրում:

Մասնակցային ժողովրդավարություն. Սա ենթադրում է շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների, ոլորտի մասնագետների, քաղաքացիների և շահառու այլ խմբերի ներգրավում որոշումների

ընդունման գործընթացում: Ներգրավվածությունը կարող է տեղի ունենալ հանրային լուրսների, սոցիալական քննարկումների և խորհրդատվական հանձնաժողովների միջոցով (Rendtorff 289-310):

Արդար և հավասար պայմանների ապահովում. շահագրգիռ կողմերը պետք է հնարավորություն ունենան ներկայացնելու իրենց կարծիքներն ու փաստարկները հավասար պայմաններում: Ոչ մի գործոն (օրինակ՝ ֆինանսական կարողություն, քաղաքական ազդեցություն կամ սոցիալական կարգավիճակ) չպետք է լինի որոշիչ կողմերից որևէ մեկի օգտին:

Հաշվետվողականություն. Որոշում կայացնողները պետք է պատասխանատու լինեն իրենց գործողությունների համար, ինչպես նաև պետք է ներդրվեն վերահսկողական, բողոքարկման և վերանայման մեխանիզմներ, որոնք թույլ կտան շտկել հնարավոր բացթողումները (Леденева 56-61):

Քաղաքականության և կենսաէթիկայի կապը պահանջում է հստակ իրավական և ինստիտուցիոնալ կարգավորումների ներդրում: Իրավական կարգավորումները կարող են նախատեսել կենսաէթիկական հանձնաժողովների ստեղծում, ներմուծել պարտադիր հանրային լուրսներ որոշ առաջնահերթ հարցերի շուրջ, ինչպես նաև սահմանել թափանցիկության և հաշվետվողականության ստանդարտներ: Առանց իրավական երաշխիքների գործընթացային սկզբունքները կարող են մնալ լոկ հռչակագիր և չեղարկվել քաղաքական շահերի բախման պարագայում: Այս համատեքստում չափազանց կարևոր է կենսաէթիկական հարցերով զբաղվող մասնագիտական խորհուրդների ստեղծումը: Այս խորհուրդները ապահովում են քննարկվող հարցի վերաբերյալ բազմակողմանի մոտեցում և հիմք են ստեղծում ընթացակարգային համաձայնությունների համար (Behrend և ուրիշներ 11-15): Մասնավորապես, եկադրենք քննարկվում է մարդու գենոմի խմբագրման սահմանափակումների վերաբերյալ հարցը: Ընթացակարգային լեգիտիմությունը պահանջում է, որ խորհուրդը ոչ միայն հիմնվի փորձագիտական կարծիքների վրա, այլև կազմակերպի հանրային լուրսներ, ֆորումներ, ապահովի տեղեկատվության տարածումը լրատվության միջոցներով, հրավիրի տարբեր շահառուների (հիվանդների իրավունքների պաշտպաններ, բժիշկներ, իրավաբաններ, հոգեբաններ, կրոնական համայնքների ներկայացուցիչներ), ներկայացնի որոշման հիմքերը և ապահովի որոշման հետագա վերանայման հնարավորությունը (Mertz և ուրիշներ 567-587):

Այս համատեքստում ներկայումս չափազանց արդի են աբորտի իրավական կարգավիճակի վերաբերյալ քննարկումները: Եթե որևէ երկրի օրենսդիր մարմինը որոշում է փոխել աբորտի օրինականացման պայմանները, ապա ընթացակարգային լեգիտիմության ապահովումը պահանջում է, որ նախքան օրենքի ընդունումը տեղի ունենան հանրային խորհրդակցություններ, լուրսներ, անհրաժեշտ է, որ այս գործընթացում ներգրավվեն կանանց իրավունքների պաշտպաններ, բժիշկներ, հոգեբաններ, կրոնական խմբեր, իրավաբաններ և այլն: Արդյունքում, եթե նույնիսկ որոշ շրջանակներ դեմ լինեն վերջնական որոշման բովանդակությանը, այնուամենայնիվ կընդունեն որոշման լեգիտիմությունը, քանի որ իրենց տեսակետները նույնպես լսելի են եղել, իսկ օրենքը մշակվել է թափանցիկ և արդար ընթացակարգով (Abdullah 175-190):

Այսպիսով՝ ընթացակարգային լեգիտիմությունը թույլ է տալիս հաղթահարել արժեքային կամ բարոյական անհամաձայնությունները, քանի որ այն ուղղված է գործընթացի որակի բարելավմանը և ոչ թե բարոյական բացարձակ կոնսենսուսի հաստատմանը: Քաղաքականությունն ու կենսաէթիկան այս կերպ մերձենում են՝ ստեղծելով որոշումների կայացման արդար և ժողովրդավարական մեխանիզմներ:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ կենսաէթիկական հիմնախնդիրները բնորոշվում են արժեքային, մշակութային, կրոնական և քաղաքական բազմազանությամբ, որոնք հաճախ խոչնդոտում են ընդհանուր բարոյական կոնսենսուսի հաստատմանը: Ժամանակակից հասարակությունների բազմակարծության պարագայում պարզապես անհնար է առաջարկել մեկ ընդհանուր բարոյական չափանիշ, որը կլինի բոլորի համար հավասարապես ընդունելի: Զաղաքական փոփոխության, կիրառական բարոյագիտության և սոցիալական գիտությունների ոլորտներում բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ մշակութային, կրոնական և սոցիալական տարբերությունները ստեղծում են անշրջանցելի տեսակետային խոչընդոտներ: Ընթացակարգային լեգիտիմությունը գիտականորեն հիմնավորում է, որ գործընթացի մեջ ներգրավվածության, թափանցիկության և արդար պայմանների ապահովումը կարևոր է այնքան, որքան որոշման բովանդակությունը: Որոշումների ընդունման գործընթացների թափանցիկությունը, բանավեճերի և հաշվետվողականության մեխանիզմների առկայությունը բարձրացնում են հանրային վստահությունը: Հանրության համար կարևոր է ոչ միայն որոշման «ճիշտ կամ սխալ» լինելը, այլև այն, թե ինչպես է այդ որոշումը կայացվել: Որքան ավելի հանրային և ներառական է որոշումների կայացման գործընթացը, այնքան ավելի մեծ է վստահությունը ինստիտուտների և որոշում կայացնողների նկատմամբ: Բացի դրանից, փորձը ցույց է տալիս, որ այն որոշումները, որոնք ընդունվել են գործընթացային արդարության սկզբունքներով, սովորաբար ունենում են երկարատև կենսունակություն: Առանց բարոյական համընդհանուր կոնսենսուսի, սակայն ընթացակարգային լեգիտիմության գործընթացներով կայացված որոշումները ավելի քիչ են հանդիպում դիմակայության և հակասությունների: Այսպիսով՝ քաղաքականությունը դառնում է ոչ թե ծայրահեղությունների բախման արդյունք, այլ համաձայնեցված ընթացակարգով ձեռք բերված որոշում, որը կարող է ադապտացվել և զարգանալ ժամանակի ընթացքում:

Այսպիսով՝ բարոյագիտական սկզբունքները սովորաբար բավարար չեն կենսաէթիկական հիմնախնդիրների ամբողջ շրջանակը լուծելու համար: Բազմազգ հասարակություններում «մեկ ընդհանուր բարոյական չափանիշ» կամ «համընդհանուր բարոյական ճշմարտություն» սահմանելը գործնականում անհնար է: Բարոյական սկզբունքներից բխող ընդհանուր համաձայնության բացակայությունը երբեմն հանգեցնում է անորոշությունների և ընդհարումների, որոնք անհնար է հարթել առանց լրացուցիչ մեխանիզմների: Հենց այստեղ է, որ գործընթացային և ինստիտուցիոնալ մոտեցումները սկսում են ձեռք բերել առանցքային նշանակություն: Եթե բարոյագիտական դիրքորոշումների հիման վրա անհնար է հասնել համընդհանուր կոնսենսուսի, ապա անհրաժեշտ է ձևավորել այնպիսի ընթացակարգեր, որոնք թույլ կտան ապահովել որոշումների ընդունման լեգիտիմությունը: Կենսաէթիկական, մալով բարոյագիտական հիմնախնդիրների ուսումնասիրության ոլորտ, այսօր այլևս չի կարող սահմանափակվել զուտ մասնագիտական և նեղ ակադեմիական շրջանակներով: Այն դարձել է քաղաքական և հանրային հետաքրքրությունների առարկա, քանի որ առանց քաղաքական և ինստիտուցիոնալ մեխանիզմների անհնար է բարդ, բազմաշերտ կենսաէթիկական հարցերի համար գտնել բարոյագիտական տեսանկյունից հիմնավոր և հանրային վստահություն վայելող լուծումներ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դավթյան, Սուսաննա. *Բիոէթիկա: Ղախազիրք*. Երևանի պետական բժշկական համալսարան, 2009, 208 էջ:
2. Агеева, Наталия. «Биоэтика как новое синтетическое направление современной науки». *Гуманитарные и социальные науки*, 6, 2012, стр. 100-108.
3. Леденева, Елена и Максим Монин. «Биоэтика как этическая технология и биологическая политика». *Международный научно-исследовательский журнал*, 6-3, 60, 2017, стр. 56-61.
4. Летов, Олег. «Проблемы и принципы биоэтики». *Человек: Образ и сущность». Гуманитарные аспекты 3-4*, 30-31, 2017, стр. 189-199.
5. Abdullah, Rahmawan. "Ethics and legal issues in the abortion case". *Semarang State University Undergraduate Law and Society Review*, 1(2), 2021, pp. 175-190.
6. Bariffi, Francisco. "Genetic Engineering and Disability: Ethical Dilemmas in the Verge of Artificial Evolution". In: Rioux, M.H., Viera, J., Buettgen, A., Zubrow, E. (eds) *Handbook of Disability*, Springer, 2022, Singapore, pp 1–24.
7. Barnhill, Anne et al. "Vaccine Passports and Political Legitimacy: A Public Reason Framework for Policymakers". *Ethic Theory Moral Prac*, 26, 2023, pp. 667–687.
8. Behrend, Claudia et al. "The Role of Ethics Committees. In: Human Chromosome Atlas". Springer, Cham, 2023, pp 11–15.
9. Bottoms, Anthony and Justice Tankebe. "Procedural justice, legitimacy, and social contexts". In *Procedural justice and relational theory*, 2020, Routledge, pp. 85-110.
10. Boudreau LeBlanc, Antoine. "At the confluence of ethics, laws and society: global working theory merging bio-ethics". *SN Soc Sci* 4, 5, 2024. pp. 1-21.
11. Campbell, Alastair. "Bioethics and Public Reason: How the History of Bioethics Has Led to the Need for Some Concept of Public Reason". In: Li, HL., Campbell, M. (eds), *Public Reason and Bioethics*, Palgrave Macmillan, Cham, 2021, pp 383–388.
12. Fan, Ruiping. "Principlism as Global Bioethics: A Critical Appraisal from a Confucian Perspective". *Dao*, 23, 2024, pp. 353–376.
13. Ferrara, Lyndsie. "Ethical Principles". In: *Ethical Reasoning in Forensic Science*. Library of Ethics and Applied Philosophy, vol 41, Springer, Cham, 2024, pp. 5–13.
14. Getz, Landon and Graham Dellaire. "Back to Basics: Application of the Principles of Bioethics to Heritable Genome Interventions". *Sci Eng Ethics*, 26, 2020, pp. 2735–2748.
15. Hottois, Gilbert. "Defining Bioethics: Back to the Sources". In: *Meacham, D. (eds) Medicine and Society, New Perspectives in Continental Philosophy*. Philosophy and Medicine, vol 120, Springer, Dordrecht, 2015, pp. 15–38.
16. Mertz, Marcel et al. "Values, decision-making and empirical bioethics: a conceptual model for empirically identifying and analyzing value judgements". *Theor Med Bioeth*, 44, 2023, pp. 567–587.
17. Page, Sarah-Jane and Pam Lowe. "Abortion in the Public Discourse". In: *Abortion and Catholicism in Britain*. Palgrave Studies in Lived Religion and Societal Challenges, Palgrave Macmillan, Cham, 2024 pp. 25–63.
18. Pereira, Alfredo et al. "Bioethics of Public Governance: A Strategy Towards the "Reduction of Inequality"". In: Pereira Jr, A., Sousa, F. (eds) *Principles for Governance. Sustainable Development Goals Series*, Springer, Cham, 2023, pp. 3–16.
19. Räsänen, Joona et al. "Introduction: controversial arguments in bioethics". *Theor Med Bioeth* 44, 2023, pp. 109–112.
20. Rendtorff, Jacob Dahl. "Foundations of Bioethical Decision-Making in Bioethics and Biolaw". In: Valdés, E., Lecaros, J.A. (eds) *Handbook of Bioethical Decisions*. Volume II. Collaborative Bioethics, vol 3, Springer, Cham, 2023, pp. 289–310.
21. Rigby, Briann and Xavier Symons. "Abortion, euthanasia, and the limits of principlism". *Med Health Care and Philos*, 26, 2023, pp. 549–556.

22. Veatch, Robert. "Reconciling Lists of Principles in Bioethics". *The Journal of Medicine and Philosophy: A Forum for Bioethics and Philosophy of Medicine*, Volume 45, Issue 4-5, August 2020, pp. 540–559.

WORKS CITED

1. Davtyan, Susanna. "Bioetika: Dasagirq. [Bioethics, textbook, Yerevan State Medical University, (2009)]": Erevani pet. bjhshk. hamals., 2009, 208 ej. (in Armenian)
2. Ageeva, Nataliya. "Bioetika kak novoe sinteticheskoe napravlenie sovremennoy nauki. [Bioethics as a New Synthetic Direction of Modern Science, Humanities and Social Sciences 6 (2012)]" *Gumanitarnye i socialnye nauki* 6 (2012): 100-108. (in Russian)
3. Ledeneva, Elena i Maksim Monin. "Bioetika kak eticheskaya tehnologia i biologicheskaya politika. [Bioethics as an Ethical Technology and Biological Politics, International Research Journal (2017)]" *Mezhdunarodny nauchno-issledovatel'skij zhurnal* 6-3 (60) (2017): 56-61. (in Russian)
4. Letov, Oleg. "Problemy i principy bioetiki. [Problems and Principles of Bioethics, Human: Image and Essence, Humanitarian aspects, (2017)]" *Chelovek: Obraz i sushhnost'. Gumanitarnye aspekty* 3-4 (30-31) (2017): 189-199. (in Russian)

BIOETHICS IN THE SYSTEM OF MODERN POLITICAL SCIENCE: BIOETHICS AND MORAL IMPERATIVES OF FORMING POLITICAL RESPONSIBILITY

BAGRAT VARDANYAN

*RA National Assembly, Staff, Internal Audit Department, Leading Specialist;
Yerevan State University, Faculty of International Relations,
Department of Political Science, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The article aims to examine the political and ethical dimensions of bioethics through the lens of political philosophy and procedural legitimacy. To achieve this, it explores societal ethical perceptions of bioethical issues and the potential for implementing a legitimate decision-making process.

The study was conducted by analyzing perspectives from professional literature, employing methods such as analysis, comparison, induction, and deduction. The findings suggest that the most effective approach to addressing bioethical challenges is to transition from purely ethical considerations to ensuring procedural legitimacy—where policy decisions are grounded in public debate, broad participation, and transparent, fair processes.

The article underscores that bioethics is no longer solely a professional discipline but a socio-political issue of significant importance, necessitating the reinforcement of democratic institutions. The development of health policies, advancements in molecular genetics, the use of reproductive technologies, and modern biological research methods can no longer be confined to the realm of specialized knowledge. Bioethics has extended beyond medicine and biology, entering the public policy sphere due to the profound impact of biomedical technologies and genetic engineering on healthcare systems, legal frameworks, and societal perceptions of moral values.

As a result, bioethics has become a focal point of public discourse, engaging political parties, governments, non-governmental organizations, and civil society. Without broad participation and adherence to procedural legitimacy, decisions on bioethical issues risk lacking legitimacy. Ensuring legitimacy requires participation, transparency, and procedural consensus. Thus, the intersection of bioethics and politics manifests in the integration of professional expertise, societal values, social stability, and democratic engagement.

Key words: *bioethics, moral philosophy, political philosophy, procedural legitimacy, participatory democracy, euthanasia, genome editing*

БИОЭТИКА В СИСТЕМЕ СОВРЕМЕННОЙ ПОЛИТИЧЕСКОЙ НАУКИ: БИОЭТИКА И МОРАЛЬНЫЕ ИМПЕРАТИВЫ ФОРМИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

БАГРАТ ВАРДАՆՅԱՆ

*соискатель кафедры политологии
факультета международных отношений
Ереванского государственного университета,
ведущий специалист отдела внутреннего аудита
аппарата Национального Собрания РА,
г. Ереван, Республика Армения*

В современную эпоху особенности восприятия политических рисков неразрывно связаны с биоэтическим подходом, а также с принципами образования, социализации и политической культуры. Необходимость настоящего исследования обусловлена поиском новых аксиологических обоснований в политологии и организацией процессов формирования профессиональной ответственности в контексте современных достижений в области биоэтики.

В настоящее время разработку политики в сфере здравоохранения, достижения молекулярной генетики, применение репродуктивных технологий и, в целом, современные методы биологических исследований уже невозможно рассматривать исключительно в границах узкопрофессиональных знаний. Биоэтика уже давно вышла за рамки исключительно медицинской или биологической специализации и вошла в повестку дня общественной политики. Это обусловлено тем, что непрерывное развитие биомедицинских технологий и генной инженерии трансформирует не только системы здравоохранения и правовые институты государств, но и общественное восприятие нравственных ценностей, а также всю общественную жизнь в целом. В результате этого биоэтика превратилась в значимый компонент общественного диалога, в котором участвуют политические партии, правительственные структуры, неправительственные организации и гражданское общество. Без широкого вовлечения заинтересованных сторон и применения концепции процедурной легитимности невозможно обеспечить легитимность принимаемых решений в сфере биоэтики, что, в свою очередь, подразумевает участие, прозрачность и согласованность процедур. Таким образом, взаимодействие биоэтики и политики проявляется через синтез профессиональных знаний, общественных ценностей, социальной стабильности и демократического участия. Цель настоящей статьи — показать, что наиболее действенным способом решения биоэтических проблем является переход от морально-нормативных позиций к обеспечению процедурной легитимности. В рамках этого подхода политические решения основываются на широких общественных дискуссиях, всестороннем вовлечении различных групп, прозрачности и процедурах, имеющих непредвзятый характер. Таким образом, данная статья подчеркивает, что биоэтика перестала быть исключительно профессиональной сферой деятельности и приобрела статус общественно-политического вопроса особой важности, решение которого требует укрепления демократических институтов.

Ключевые слова: *биоэтика, моральная философия, политическая философия, процедурная легитимность, партисипативная демократия, эвтаназия, редактирование генома.*



ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՂԱՐՁՎԱԾՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ *

ՀՏԴ 81`28

DOI: 10.52063/25792652-2024.4.23-108

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
հայագիտության ամբիոնի դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

rena-mov@mail.ru

ORCID: 0009-0007-1359-8362

Ղարաբաղի բարբառի ուսուցումը մեր օրերում բազում անգամ կարևորվում է, որովհետև բարբառը կտրվել է բարբառային միջավայրից, Ադրբեջանը վարում է արցախագիտության ոչնչացման հետևողական քաղաքականություն, դրա դեմ պայքարելու եղանակներից մեկն էլ Ղարաբաղի բարբառի և նրա մեջ արտացոլված լեզվամտածողության, մշակույթի, աշխարհայացքի, արժեհամակարգի ուսուցումն ու պահպանումն է՝ դրա միջոցով սերունդների մեջ ձևավորելով ազգային ինքնաճանաչողություն, ինքնավստահություն և ինքնապաշտպանական կարողություններ:

Լեզվական միավորներից դարձվածները լավագույնս են արտացոլում ժողովրդի մտածողությունը, բարքերը, բարոյական արժեքները, կենսափիլիսոփայությունը, որովհետև դրանք ժողովրդական լեզվում հղկված, իմաստային առումով խտացված կառույցներ են:

Մեր աշխատանքի նպատակն է առաջարկել սկզբունքներ և մեթոդական հնարներ, որոնք սովորողների կողմից Ղարաբաղի բարբառի դարձվածների և դրանց միջոցով Արցախի ժողովրդի լեզվամտածողության ու կենսափիլիսոփայության յուրացումը կդարձնեն ավելի արդյունավետ և համակողմանի:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել Ղարաբաղի դարձվածները, դրանց դասակարգման սկզբունքները
2. տարբեր սերունդների ներկայացուցիչներից հարցումներ կատարելու միջոցով որոշել այն դարձվածների կենսունակությունը, որոնց անդրադարձել ենք
3. առաջարկվող մեթոդական հնարները կիրառել տարբեր լսարաններում՝ արդյունավետությունը որոշելու համար

Հոդվածում կիրառվել են վերլուծության, համադրության, համեմատության մեթոդները:

Բարբառային դարձվածների ուսուցման արդյունավետությանը կնպաստեն հետևյալ սկզբունքները.

* Հոդվածը ներկայացվել է 08.12.2024թ., գրախոսվել՝ 23.12.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

1. Դարձվածներն ուսուցանել զուգադրական մեթոդով՝ համեմատելով գրական հայերենի համապատասխան միավորների հետ՝ հենվելով սովորողների՝ գրական հայերենի դարձվածաբանությունից ունեցած գիտելիքների վրա:

2. Առանձնապես կարևորել և որպես օրինակներ ընտրել այնպիսի դարձվածներ, որոնք ավելի ընդգրկուն պատկերացում են տալիս արցախցու բնավորության ամենաարտահայտված գծերի, կենսակերպի ու մտածողության մասին:

3. Ուսուցման գործընթացում արդյունավետորեն համադրել ավանդական և ժամանակակից մեթոդները, կիրառել մեթոդական հնարներ, որոնք ուսուցումը կդարձնեն հետաքրքիր և ոչ միապաղաղ:

4. Հաշվի առնել տվյալ դարձվածների գործածության հաճախականությունը, կենսունակությունը ինչպես բնավոր խոսքում, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ:

Հիմնաբառեր՝ Ղարաբաղի բարբառ, լեզվամտածողություն, զուգադրական մեթոդ, քառաթև աղյուսակ, դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն, դարձվածային կապակցություն, հիմնաբառ, բառացի փոխադրում:

Ներածություն

Այս կամ այն լեզվի բարբառների ուսուցումը նպաստում է տվյալ լեզվի պատմության, լեզուն կրող ժողովրդի պատմության, մշակութաբանության, ազգագրության համակողմանի ուսուցմանը: Հետևապես՝ սովորողների կողմից հայերենի բարբառների ուսումնասիրությունը կնպաստի ազգային արժեհամակարգի խորապես ճանաչմանն ու պահպանմանը: Այս առումով Ղարաբաղի բարբառի ուսուցումը մեր օրերում բազում անգամ կարևորվում է, որովհետև բարբառը կտրվել է բարբառային միջավայրից, ազերիների կողմից ոչնչացվում է Արցախի մշակույթը, խեղաթուրվում հազարամյակների պատմությունը: Աղբյեջանը վարում է արցախագիտության ոչնչացման հետևողական քաղաքականություն, ինչի դեմ պայքարելու եղանակներից մեկն էլ Ղարաբաղի բարբառի և նրա մեջ արտացոլված լեզվամտածողության, մշակույթի, աշխարհայացքի, արժեհամակարգի ուսուցումն ու պահպանումն է՝ դրա միջոցով սերունդների մեջ ձևավորելով ազգային ինքնաճանաչողություն, ինքնավստահություն և ինքնապաշտպանական կարողություններ:

Լեզվական միավորներից դարձվածները լավագույնս են արտացոլում ժողովրդի մտածողությունը, բարքերը, բարոյական արժեքները, կենսափիլիսոփայությունը, որովհետև դրանք ժողովրդական լեզվում հղկված, իմաստային առումով խտացված կառույցներ են. «Դարերից ի վեր սերնդից սերունդ ավանդված այս դարձվածները անընդհատ մշակվել են, հղկվել ու բյուրեղացել՝ ընդհանրացնելով ու խտացնելով իրենց մեջ փորձությունների հորձանքների ու արհավիրքների բովով անցած մի ամբողջ ժողովրդի կենսափիլիսոփայությունը, ազգային սովորություններն ու բարքերը, դառնալով միայն իրեն՝ հայությանը հատուկ մտածողության ձև» (Պապոյան 79):

Բացի դրանից դարձվածի ուսուցումն իր առանձնահատուկ տեղն ունի, քանի որ այն «ոչ միայն հարստացնում է խոսողի բառապաշարը, զարգացնում է լեզվամտածողությունը, այլև յուրահատուկ կապող օղակ է լեզվի բաժինների միջև: Դարձվածքները կարելի է ուսումնասիրել բառային, ձևաբանական, շարահյուսական, ոճաբանական կտրվածքներով» (Դարձվածային տարբերակների ուսուցումը բուհական դասընթացում նախագծային մեթոդի կիրառումով):

Մեր աշխատանքի նպատակն է առաջարկել սկզբունքներ և մեթոդական հնարներ, որոնք սովորողների կողմից Ղարաբաղի բարբառի դարձվածների և դրանց միջոցով Արցախի ժողովրդի լեզվամտածողության ու կենսափիլիսոփայության յուրացումը կդարձնեն ավելի արդյունավետ և համակողմանի:

Սույն հոդվածը կարող է կիրառվել «Դարձվածաբանություն», «Բարբառագիտություն» դասընթացների ուսուցման համար:

Բարբառային դարձվածների ուսուցման սկզբունքներ

Բարբառային դարձվածների ուսուցման արդյունավետությանը կնպաստեն հետևյալ սկզբունքները.

1. Դարձվածներն ուսուցանել զուգադրական մեթոդով՝ համեմատելով գրական հայերենի համապատասխան միավորների հետ՝ հենվելով սովորողների՝ գրական հայերենի դարձվածաբանությունից ունեցած գիտելիքների վրա:

2. Առանձնապես կարևորել և որպես օրինակներ ընտրել այնպիսի դարձվածներ, որոնք ավելի ընդգրկուն պատկերացում են տալիս արցախցու բնավորության ամենաարտահայտված գծերի, կենսակերպի ու մտածողության մասին:

3. Ուսուցման գործընթացում արդյունավետորեն համադրել ավանդական և ժամանակակից մեթոդները, կիրառել մեթոդական հնարներ, որոնք ուսուցումը կդարձնեն հետաքրքիր և ոչ միապաղաղ:

4. Հաշվի առնել տվյալ դարձվածների գործածության հաճախականությունը, կենսունակությունը ինչպես բանավոր խոսքում, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ:

Ուսուցումն արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է նյութը մատուցել գրական հայերենի հետ զուգադրման մեթոդով՝ հենվելով գրական հայերենի դարձվածների մասին սովորողների ունեցած գիտելիքների վրա:

Եվ որպեսզի մատուցվող նյութը ամբողջապես ընկալելի լինի նաև ոչ բարբառակիր սովորողների համար, առաջարկում ենք կազմել քառաթև աղյուսակ, որտեղ կներկայացվեն դարձվածը, բառացի թարգմանությունը՝ գրական հայերենով, դարձվածային իմաստը և դարձվածի՝ գրական հայերենի տարբերակը, եթե կա: (Աղյուսակ 1)

Աղյուսակի օգնությամբ գրական հայերենի հետ զուգադրումը և միավորների դարձվածային իմաստը ավելի ընկալելի կլինի, ուստի առաջարկում ենք ամբողջ դասին այս աղյուսակը ունենալ ձեռքի տակ և ուսումնասիրվող բոլոր դարձվածները տեղադրել այստեղ:

Ղարաբաղի բարբառի դարձվածների դասակարգումը

Խթանման փուլում նպատակահարմար է առանձնացնել կարևոր հասկացություններն ու եզրույթները՝ **դարձված, կայուն կապակցություն, վերափմաստավորում, դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն, դարձվածային կապակցություն, հաղորդակցական դարձվածային միավորներ** և այլն, վերիիշել դրանց սահմանումները:

Բարբառային դարձվածները պետք է դասակարգել՝ հիմք ընդունելով հայ և օտար լեզվաբանության մեջ ամրագրված սկզբունքները՝ ըստ դարձվածը կազմող բաղադրիչների սերտության աստիճանի և ըստ կառուցվածքափմաստաբանական բնութագրության:

Ելնելով դարձվածի ընդհանուր իմաստի և դարձված կազմող բաղադրիչների իմաստների ձուլվածության աստիճանից՝ Ղարաբաղի բարբառի դարձվածները ևս

բաժանվում են երեք խմբի՝ **դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն և դարձվածային կապակցություն:**

Դարձվածային սերտաճումներն ունեն բաղադրիչների իմաստային ձուլվածության սերտ աստիճան, այնպես որ դրանք հասկանալ կարող է միայն տվյալ ժողովրդի սովորությունները լավ իմացող, նրա աշխարհընկալմանը լավ ծանոթ ընթերցողը: Այսպես՝ **պոփկերը կօխ տալ¹** (խմորագնդերը կոխկրտել)-**չափն անցնել, փօխկումը փրթորաղ ինիլ** (փողջում կռատուկ (կպչուն սերմերով վայրի խոտաբույս լինել))-**մեղավոր լինել, քանդիրը ծըմակավր օնել** (պարանը անտառով անցկացնել), **դժվար՝ կարողություններից վեր գործ ձեռնարկել, պօրտը շօն տարած** (պորտը շուն տարած)- **պարսպ-սարսպ թափառող, փեշկը քօլեն տալ** (քղանցքը տալ թփին)- **չարչարվել, տքնել, շօնը ճողած, մաչան տուն եկած** (շունը պատռած, միջից դուրս եկած)- **ճարպիկ, խորամանկ, տափան անգուն օնել** (գետնին ականջ դնել)- **քնել, հափռումը չօփ տինիլ** (բռան մեջ փայտիկ դնել)-**մեկին գերազանցել հնարամտությամբ, գործով, կըռքեն տակեն շիրա մընալ** (ատամի տակ խաղողի հյութ մնալ)-**մի բանի համը, հաճույքը չմոռանալ** և այլն:

Դարձվածային միասնությունների իմաստները թույլ կերպով ենթադրվում են բաղադրիչների իմաստներից, **քըբըր ցեց- գոռոզ, թակ օտել-ծեծվել, նըստա մըրդավըտ կյալ -մարդկային լինել, օնքեն թուխպերը յըտ տանել -տխրությունն անցնել, խըբըր կտրել -հասկանալ, խօսկ քաշիլ -գաղտնիքը փորձել իմանալ, պերանը կարել -լռեցնել, կուպար անել -շատ գնալ-գալ, ծօխը կըտըրցընել**- օջախը քանդել, **լուզվան լւնց օտել -բամբասանքից տուժել, կըռքըր կըտրել- ի գորու լինել** և այլն:

Դարձվածային կապակցությունները իմաստային առումով ավելի թույլ միացություններ են, այսինքն՝ դարձվածի ընդհանուր իմաստը համարյա բխում է կապակցություն կազմող բաղադրիչների բառային իմաստների գումարից: Ինչպես՝ **ուրան թափ տալ -լիցքաթափվել, խըբըր տեղը չինիլ-1. անուշադիր լինել, 2.խենթ լինել, լուս լուսանալ -հաջողություն գալ, լուս ընգնել -հայտնվել, կըլխեն պահել -մեծարել, խօսկը տըբդավը տանել -նպատակին հասնել, Աստուծ մըբ ա-մի ելք կգտնվի, պետք չէ հույսը կորցնել, թակ օտել- ծեծվել, պըռօշը նի չի տալ- ուտելիքից բոլորովին չօգտվել** և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածներն ըստ կառուցվածքային մասնատրանսկան առանձնահատկությունների բաժանվում են երկու խմբի՝ **անվանական դարձվածային միավորներ և հաղորդակցական դարձվածային միավորներ:**

Առաջին խմբի դարձվածներն ունեն բառակապակցության, երկրորդ խմբի դարձվածները՝ նախադասության կառուցվածք:

Ինչպես գրական հայերենում, Ղարաբաղի բարբառում ևս ոչ հաղորդակցական դարձվածային միավորները կարող են փոխաբերաբար արտահայտել առարկա կամ երևույթ, առարկայի կամ գործողության որակական հատկանիշ, գործողություն կամ նշել խոսողի գնահատողական վերաբերմունքը առարկայի կամ երևույթի նկատմամբ՝ այդ առումով հարաբերակցվելով համապատասխան գոյական, ածական, մակբայ, բայ և վերաբերական խոսքի մասերին: Ղարաբաղի բարբառի դարձվածային միավորները ենթարկվել են հետևյալ դասակարգման՝ **գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող դարձվածային** միավորներ (Մինասյան 33):

Անվանական դարձվածի այս կամ այն խոսքի մասին վերաբերելը կախված է ոչ թե բաղադրիչների իմաստային առնչությունից, այլ դարձվածի արտահայտած ամբողջական իմաստից:

¹ Դարձվածների բացատրությունները տրվում են ըստ Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանի»:

ա) **Գոյականական** են **հալալ ծըծկեր** (ազնիվ մարդ), **պեց ըշկերավ արագ** (ցանկալի իրականություն), **օխտը պօրտը** (ամբողջ տոհմը), **ըստըծու կօտե** (ծիածան), **ըստըծու հըղե**- (բարություն, արդարություն), **անրթանը քըրտնօնք**- (ազնիվ աշխատանք), **յըբե բաղեն խընծօր** (արտոնյալ մարդ) **ճիրատած ճեղաց**- (կարևորությունից զուրկ իր) և այլն:

բ) **Ածականական** են **մաղ կապողեն սիմ տըվող** (անամոթ, աներես), **տափուլ յեկած** (անամոթ, անզգամ), **աղու տանձ կըծած** (անտրամադիր), **մամուլ բալա** (փափկասուն՝ դժվար իրավիճակներին անընտել), **մըծացած-կուճուրացած** (մեծի նման (ասվում է երեխաների մասին), **ռանդա տված** (համաչափ, նաև՝ բարեկիրթ), **գյուլլու պատառ** (շատ գեղեցիկ), **ըստծու կըրակ** (չար, անզուլթ), **ըստուծեն ծաղեգը յիրան**- (*անարատ, մաքուր*), **թօռ թակած, արեվ էրած** (շատ չարչարված, փորձություններով անցած, **ըռնու կյին** (թանկարժեք), **անրունը քախծըր**- (համակրանք առաջացնող, գրավիչ), **վըննը ծանդըր** -իդի և այլն:

գ) **Դերանվանական** են **հուլ ասիս** (ամենքը), **հուլ ասօղը** (դու), **մին ջուվար** (նա), **մին փարա** (ոմանք, որոշ):

դ) **Բայական** են. **կըլխեն պահել** (մեծարել), **թարթափն ընգնել** (1.վախից թպրտալ, 2.ծախորդության հանդիպել), **խօսկը յըտ տալ** (մերժել), **պօրտը վըբըր ընգնել** (կոփվել), **պռօշը կախ տալ** (դեմքին դժգոհ արտահայտություն տալ), **զինքը կըտօրել** (խիստ հուզվել), **նամուսը տափը կօխել** (անպատվել, պատվազրկել), **կըզօ-մըզօ անել** (1.այրել, 2.գործը դժվարացնել), **օնքը փօթ քցիլ** (մռայլվել, տխրել), **աշկին թօզ փըջիլ** (չնչին բաներով հրապուրելով՝ խորամանկությամբ խաբել), **չափարը ճըմօռել** (չափն անցնել), **կապը քաշիլ** (կարգի հրավիրել), **պօզերը տուս օնել** (չարությունը, կոպտությունը ցույց տալ) **ըստուծեն քարավ տալ** (եղածով չբավարարվել), **արեվը հուրթավը տըբնալ** (մեկուսացած ապրել), **բախտեն կըծեգը յըտ տալ** (դժբախտությունները հաջորդել իրար), **էշին չուլ ասել** (թեթև վիրավորել) և այլն:

ե) **Մակբայական՝ ռըխեն լայաղ** (իրեն վայել, արժանի), **հիտիլ կապած** (մի գծով, իրար ետևից), **քօռեն ժամը** (մուլթն ընկած), **քօռ ու փօշման** (փոշմանած), **էրկու պերան** (քիչ (խոսելու մասին)), **աշկեն տակավը** (գաղտագողի), **մըտքեն դօնն ընգած** (մտախոհ), **ջըհնամեն տակեն** (անհայտ հեռավորության վրա), **ըրեվեն գահուլը** (արևի կիզիչ պահին), **հալած յըբուլ նըման** (անխոչընդոտ):

զ) **Եղանակավորող. մատաղ ինիմ, բօյիտ մատաղ** (բարեմաղթանքներ՝ ուղղված թանկ մարդու), **աշկես յիրա** (սիրով, ամենայն հոժարությամբ):

Իրենց բովանդակային ընդգրկունությամբ առանձնանում են հաղորդակցական դարձվածային միավորները (սրանք ունեն նախադասության կառուցվածք, հետևապես՝ նախադասությանը հատուկ հետևյալ հատկանիշները՝ ստորոգում, հնչերանգ, մտքի ավարտվածություն): Սրանք «ժողովրդախոսակցական լեզվում ունեն մեծ գործածություն և առանձնապես վառ են արտացոլում նրա կառուցվածքային և զգացական առանձնահատկությունները (Մինասյան 66):

Ինչպես՝ **տանա դերին օրհնյալ չի կա** (*մտերիմից օգուտ չկա*), **վեջը չի** (*ուշադրություն չի դարձնում*), **հըրթնաշօրը ծալին ա** (*պատրաստվում է ամուսնանալ*), **ինքն ա վեր կա** (*անփոխարինելի է*), **շօնն էլ յօր չօնել** (*անտանելի է*), **քիզանա հինչ կեղիմ** (*վկայում է անկեղծության մասին*), **շեն կընաս** (օրհնանք), **մին խօսկը օխտը փուլթ մըբորավ օտվել չի** (*ասում են տիպի, ծանր խոսողի մասին*), **ամըբնը-ծըմըբնը մին խըլթըր հինչ անե** (*ասում են այն ժամանակ, երբ մոռանում են որևէ բան, կամ դժվարանում են որևէ հարց լուծելիս*) և այլն:

Բարդ նախադասության կառուցվածք ունեն **իրըբեն թըքում ըս, ասում ա՝ հինչ լավ թօռ ա կյամ** (*արժանապատվություն չունեցող մարդկանց մասին*), **քաչալը ճար անօղ լինի, ուրան կըլխեն ճար կանե** (*որևէ պակասություն ունեցողը, եթե հնարավորություն ունենա, իր պակասությունը կվերացնի*), **քօն իլ, յեր կաց, բախտ**

օգի (ասում են անբան մարդու մասին, որ անսպասելի հաջողության է հանդիպել), **Աստուծ քոս ա տուվալ**. **դէյնը չի տամ**, **թա ջանը դըրփէ** (անելանելի ծանր կացության մեջ է), **անէ Զուրին, ծաղկէ Փուրին** (աշխատում, վաստակում է մեկը, արդյունքից օգտվում է մեկ ուրիշը), **թան չըս տըհալ**, **թընըթաթախ աման էլ չըս տըհալ** (ասում են տվյալ գործին, իրավիճակին բոլորովին անտեղյակ մարդուն), **կուկուն անէ, ճիճին տանէ** (ասում են այն ժամանակ, երբ մեկը աշխատում է, մյուսը՝ արդյունքը վայելում) և այլ դարձվածներ:

Բարբառային դարձվածների ուսուցման հնարներ

Ուսուցումը նպատակային դարձնելու համար որպես օրինակներ ընտրել, հատուկ կարևորել այնպիսի դարձվածներ, որոնք ըստ էության են բնութագրում արցախցու բնավորությունն ու կենսափիլիսոփայությունը՝ պատվախնդրությունը, աստվածա-պաշտությունը, համառությունը, սկզբունքայնությունը, հայրենասիրությունն ու զենքի պաշտամունքը և այլն:

Արցախցու մասին վերոնշյալ բնութագրումներն արտացոլված են լեզվամտածողության մեջ: Այդ են վկայում այսօրինակ դարձվածները. **Նամուսը շանը տըվէն, կերավ վէչ** - մարդ պետք է արժանապատվություն ունենա, **Նամուսը յըբ օնէլ** - արժանապատվությունը թույլ տալ, **Նամուսը յըբ օնէլ, դըրաղ կէնալ** - իր արժանապատվությունը պահելու համար մի կողմ քաշվել, **անախորժությունից խուսափել**, **Նամուսը շանը տալ** - արժանապատվություն չունենալ, **Նըմուսու յեսիր** - բարոյականության անձնվեր պաշտպան, **Նամուսը փօրումը օռչիլ** - միևնույն ամուսնանալը հղիանալ, **աբուռը իրեսեն** - ամոթի զգացում ունեցող, **աբուռը հախավ կընի** - ամոթը պիտի ունենալ, **պետք չէ չափն անցնել**, **աբուռը տափավը կ'ալ** - պատվի զգացումն արատավորել, **աբուռը չըփարեն տակեն տիրած չի** - պատիվը ունենալը և պահելը հեշտ բան չէ, **թասիբ / թասիբի ըղնէլ** - պատվի խնդիր դարձնել, **թասիբը յօր օնէլ** - պատվախնդրությունը, **ինքնասիրությունը ներել**, **թասիբին վըեննը կէնալ** - թասիբը պահել-մեկի պատիվը պաշտպանել, **թասիբու քըցիլ** - մեկին պատվախնդրության դրդել և այլն:

Արցախցին աստվածապաշտ ու աստվածավախ է: Միայն **Աստուծ** (Աստված) բառով մոտ 100 դարձված է գետնեղված Արմեն Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանում»։ **Աստուծ Երկու ծերքավ ա տամ** - Աստված երկու ձեռքով է տալիս-Աստված շոբայլ է, **Աստուծ կըլխան փախած** - անհաջողակ, **Աստուծ չինիլ** - դաժան լինել, **Աստուծ ըրէնանը տակեն պահում ա** - Աստված փրկում է, հովանավորում է, **Աստուծ մըհ ա** - մի ելք կգտնվի, **պետք չէ հուսահատվել**, **Աստուծ մաչին Նըստած** - գեղեցիկ, առատ, կատարյալ, **ըստուծեն ծըրավը քիհիլ** - բարեպաշտ, օրինավոր լինել և այլն:

Չենքը դարեր շարունակ արցախցու գոյության կարևոր երաշխիքն է եղել, և զինապաշտությունը դարձել է նրան բնութագրող գծերից մեկը. **թօրը հինչ վեր կարէ վէչ կըտրէ, հացը կըկըտրը** - բռնությամբ, ուժով չլուծվող հարցը խաղաղ ճանապարհով կարելի է լուծել, **բարութը կըլիւլ** - սնանկանալ, **կատրեճ կըտրըցընէլ** - ամեն ինչից զրկել, **հըհտան գ'ուլլա քըցիլ** - մեկի, մի բանի կարիքը շատ զգալ, **իընչալեն քարը վեր ըղնէլ** - արժապատվությունը վիրավորվել, **թօփու գ'ուլլա** - գեղեցիկ, ամրակազմ երեխա, **բարութ կըտրըլ** - բորբոքվել, գայրանալ:

Հաճախ դարձվածների (հատկապես դարձվածային սերտաճումների) մտապահումը իմաստի անկանխատեսելի լինելու պատճառով դժվար է լինում սովորողների համար: Առաջարկում ենք մի քանի առաջադրանքներ, որոնց կատարումը կօգնի սովորողներին ավելի հեշտ մտապահել դարձվածները: Դրանք հանձնարարվել են են ԱրԴՀ բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժնի երկրորդ կուրսում, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մագիստրատուրայի «Հայոց լեզու» բաժնի 1-ին կուրսում:

1. **Ընտրել դարձվածներ և արտահայտել նկարներով.** այս հանձնարարությունը առաջադրել ենք ԱրԴՀ բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողներին:

Հետաքրքրական է, որ սովորողները 3 տարբեր մոտեցումներով են կատարել նշված հանձնարարությունը:

Ա. Կազմել են կոլաժ, որտեղ դարձվածը կազմող յուրաքանչյուր բաղադրիչ արտահայտված է առանձին նկարով: Այդպես արտահայտել են, օրինակ, **ա կօժ քեզ ասիմ, ա կօլա տու սկաց (նկար 1), Էշին ընգունումը քօն իլած-շրջապատի** իրադարձություններից կտրված, անտեղյակ **(նկար 2)** դարձվածները:

Բ. Ընդհանուր նկարը ներկայացնում է դարձվածի բառացի իմաստը: Այսպես արտահայտել են հետևյալ դարձվածները. **ճօտը ծռվումն ա մահլիճն անում - մարդու բնավորությունը ի սկզբանե է երևում (նկար 3), հիբ խօզը յը՛ր ընցընե ծառը- երբեք (նկար 4)** և այլն:

Գ. Նկարում երևում է նաև կապակցության դարձվածային իմաստը, ինչպես՝ **իրեսան լուս կաթել- շատ գեղեցիկ լինել (նկար 5), Աստուծ մաչին նըստած-գեղեցիկ, առատ (նկար 6)** և այլն:

Շատ ավելի մոտիվացնող կլինի, եթե սովորողներն իրենք նկարեն դարձվածը: 1-ին կուրսի ուսանողուհի Աննա Ասրյանի նկարում ևս երևում են **Աստուծ մաչին նըստած** կապակցության ինչպես դարձվածային, այնպես էլ բառացի իմաստները **(նկար 7):**

Հետաքրքիր կլինի նաև կիրառել դարձվածի բաղադրիչ բառերն արտահայտող նկարներով քարտեր, սովորողներին հանձնարարել հավաքել դարձվածները:

Դարձվածների ուսուցման գործընթացում կարելի է կիրառել նաև հետևյալ ամրապնդող առաջադրանքները.

1. Գեղարվեստական գրականությունից դուրս գրել բարբառային դարձվածները, որոշել ոճական արժեքը. որպես սկզբնաղբյուր կարելի է ընտրել արցախցի գրողներ Մ. Հովհաննիսյանի, Գ. Գաբրիելյանի, Վ. Հակոբյանի, Արտաշես Ղահրիյանի, Համլետ Մարտիրոսյանի և այլոց ստեղծագործությունները:
2. Սովորողների տարբեր խմբերի հանձնարարել ներկայացնել դարձվածներ, որոնց հիմնաբառերը պատկանեն իմաստային որոշակի խմբերի՝ կենդանանուն, բուսանուն, բնության երևույթներ, մարմնի մասեր (սովորողները կարճվածներ) և այլն:
3. Ընտրել դարձվածներ, որոնց հիմնաբառերը լինեն՝
ա) բնիկ հայերեն բառեր,
բ) արևելյան փոխառություններ,
գ) ռուսերենից կատարած փոխառություններ:
4. Առանձնացնել **հայ և թուրք** հիմնաբառերով դարձվածները, համեմատել:
5. Տրված հատվածներից¹ դուրս գրել դարձվածները, բացատրել:

1. Ինըմ ա, չինըմ, մին թաքավեր ա ինըմ: Էդ թաքավերին մին արմաղ-շարմաղ, դնձանգ՝ կընեգ ա ինում, մին էլ Էրկու տղա խօխա:

2. Թաքավերըն ապրած կենա, քնցալ ընք տըհսալ կ'ետեն ղըրաղեն մին քնսիք մարթ՝ նըհետըն էլ Էրկու խօխա, մինգ'ել մին հարթնը, վար իրիքնանկեն ասում ա՛տուս մի կյալ, յես տուս ըմ յեկալ:

3. Էտ խեղճ մարթը ծույները վեր թըկելավ, կ'անքան զըզված, քիսամ ա հըմնում մին քաղաք տըհե թաքավերեն բաղումը բաղվանչի տննում:

¹ Հատվածներն ընտրված են «Արցախի ժողովրդագիտություն» գրքի 12-րդ հատորից:

4. Այսպիսով մատաղ ծըճող, հունցը տրեւսնում ըբ՝ յըս էս ըմ մին վընսս հընգիստին հըղեցը, սօր կամ, էբիւց կամ վէշ, էլ կարում չում ծըճող պահիմ, լաւըն էս կընի՝ տուք մարթա մին տըճող քիւնաք, ըշխադանք անիք՝ ծեր կըլիսէն ճարը տըճանաք:

5. Արչէն քօհնա կըռէք՝ ա ինում ըղվէսին յիրա, ըսքըսում ա ըսլանէն տակը տալը:

6. Շընաճանջը կըտաղում ա, հախէ-նըհախէ լօխճին կըծում:Մի օր էլ աշկը ունքան էնքան ա պըցըրանում, վար մըթկումը տընում ա՝ ասլանէն կըծէ ըսպանէ, ինքը տիւննա թաքալէր:

7. Զամի ախալէր, մարթը ճօկ հէյվան ա, նըրա օժժալ կարալ չըս յախնէս, թա օգում ըս կօրծըտ տէսնաս, պիտի կօք տաս, քախճըր լուգի պինըցընէս, սիլի-բիլի անէս, վար կարաս խաթիրը քըթաննաս:

Եզրակացություն

Ղարաբաղի բարբառի դարձվածները Արցախի դարավոր ժողովրդի իմաստութեամբ և կենսավորով թրծված միավորներ են, որոնց ուսուցմամբ սովորողներին կփոխանցվի նաև այդ ժողովրդի մտածողությունն ու արժեհամակարգը: Եվ բարբառային իրողությունների ուսուցումը նպատակային ու արդյունավետ դարձնելու յուրաքանչյուր մեթոդ և հնար կնպաստի դրանց պահպանմանը ոչ բարբառային միջավայրում:

Աղյուսակ 1. Դարձվածների համեմատական քննություն

Բարբառային դարձված	Գրական տարբերակ	Դարձվածային իմաստը	Գրական հայերենի տարբերակը
աշկումը մազ փրսնել	աչքում մազ բուսնել	երկար սպասել	աչքի մեջ մազ բուսնել
Երկու վըննալ թալակ ըղնել	երկու ոտքով թակարդն ընկնել	սաստիկ խաբվել, փորձանքի մեջ ընկնել	երկու ոտքով թակարդն ընկնել
սըրտէն փօշը տոնա օնել	սրտի փուշը հանել	ուրախացնել, մխիթարել	սրտի փուշը հանել
հաքին ծալիլ, տակէն տինիլ	պոչը ծալել, դնել տակը	հեռանալ, մի կողմ քաշվել	պոչը քաշել
կուռնըտակէն ծըմէրուկ տինիլ	թևատակին ծմերուկ դնել	ոգևորել	թևերի տակ ծմերուկ դնել
էշը հինչ ա գիղում մօշը հինչ ա	էշը ինչ է իմանում մոշը ինչ է	հիմարը, անհասկացողը լավի արժեքը չի իմանա	էշն ինչ իմանա՝ նուշն ինչ բան է
ալլերը մաղել, մաղը կախ տալ	ալյուրը մաղել, մաղը կախել	անելիք գործերը վերջացնել	ալյուրը մաղել, մաղը կախել
սադանէն ծին յը՛ր ինիլ	սատանայի ծին հեծնել	համառ, կամակոր լինել	սատանայի ծին հեծնել
յը՛րէ բաղէն խընձօր	վերին այգու խնձօր	արտոնյալ	վերին արտի ցորեն
արու նըման դըվումը վըննը կէնալ	սարի պես թիկունքում կանգնել	մեկին ուժեղ անընկճելի պաշտպան լինել, հովանավորել	սարի թիկունքում կանգնել

Նկար 1.



Նկար 2



Նկար 3



Նկար 4



Նկար 5



Նկար 6



Նկար 7



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Արցախի ժողովրդագիտությունը. բանահյուսություն*, (Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Բ.Գ.Թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Արմեն Յուրիկի Սարգսյանի), հհ 1-12, Երևան, «Արմավ» հրատ, 2020 -2024թթ.:
2. *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011, 1404 էջ:
3. Դավթյան, Կարո. *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզ*, Հայկ. ՍՍՀԳԱ հրատարակչություն, Երևան, 1966, 508 էջ:
4. Կատվայան, Վիկտոր. *Հայ բարբառագիտության հարցեր*. «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 2014, 231 էջ:
5. *Հայոց լեզվի բարբառային բառարան*, (գլխ. խմբագիր՝ Արտեմ Սարգսյան), հհ 1-4, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2001-2007, 428-432-426-451 էջ:
Վ. Բոյունյի անվան պետական համալսարանի ընդհանուր և
համեմատական լեզվաբանության ֆակուլտետի անգլերեն հաղորդակցության
ամբիոնի դասախոս, ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Սույն հոդվածն ուսումնասիրում է, թե սոցիալական ցանցերում տեղադրված հայերեն գովազդներում ինչպիսի լեզու է օգտագործվում՝ ուշադրություն գրավելու և լսարանին ներգրավելու նպատակով: Նպատակն է հասկանալ, թե ինչն է որոշ

գովազդները դարձնում ավելի գրավիչ և արդյունավետ և առաջարկել գործնական խորհուրդներ՝ թվային մարքեթինգի արագ փոփոխվող աշխարհի համար:

Հոդվածում առաջադրում է հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել գովազդների լեզուն, վերլուծել հայկական գովազդների օրինակներ և բացահայտել դրանց լեզվական ռազմավարությունը:
- Ցույց տալ, թե ինչպես են հատուկ բառեր, արտահայտություններ և ոճեր ներգործում մարդկանց վրա:
- Գնահատել, թե որ լեզվական ռազմավարությունն է ամենաարդյունավետը:
- Տրամադրել գործնական խորհուրդներ մարքեթոլոգներին՝ գովազդներում ավելի արդյունավետ լեզվական ռազմավարություններ կիրառելու համար. հատկապես՝ հայկական շուկայում:

Հոդվածում կիրառվել է համակարգային մոտեցում՝ վերլուծելու հայերեն առցանց գովազդի լեզվական բնութագիրը: Ճշգրիտ վերլուծության հասնելու համար համակցվել են մի քանի մեթոդներ:

Դիսկուրսի վերլուծությունը կիրառվել է ուսումնասիրելու համար, թե ինչպես է գովազդի լեզուն ազդում լսարանի վրա: Այս մեթոդը ցույց է տալիս, թե ինչպես կարող են որոշակի բառեր կամ նախադասությունների կառուցվածքներ նպաստել գովազդի համոզիչ լինելուն:

Բովանդակության վերլուծության մեթոդը օգտագործվում է գովազդների լեզվաոճական միջոցների դասակարգման համար: Հոդվածում վերլուծվում են գովազդների թեմաները, դրանք արտահայտելու ձևերը և դրսևորվում են հայկական առցանց գովազդների լեզվական կադապարները:

Ուսումնասիրելով գովազդների լեզվական արվեստը՝ այս հոդվածով բացահայտում ենք, թե ինչպես կարող են բառերը ձևավորել թվայնացված իրականության հաջողությունը արագ փոփոխվող առցանց աշխարհում:

Հիմնաբառեր՝ *Լեզվական ռազմավարություններ, գովազդ, սոցիալական մեդիայի գովազդ, առցանց գովազդներ, գովազդային մարտավարություն, լսարանի ներգրավվածություն, մարքեթինգային մարտավարություն, լեզվի օգտագործում, լսարանի համոզում:*

ОСОБЕННОСТИ АРМЯНОЯЗЫЧНОЙ РЕКЛАМЫ В СОЦИАЛЬНЫХ СЕТЯХ

СПАРТАК МХИТАРЯН

*преподаватель, аспирант кафедры английской коммуникации
факультета общего и сравнительного языкознания
Ереванского государственного университета им. В. Брюсова,
г. Ереван, Республика Армения*

Основная проблема данного исследования - как язык используется в армяноязычной рекламе в социальных сетях для привлечения внимания и взаимодействия с аудиторией. Цель исследования состоит в том, чтобы понять, что делает некоторые рекламные объявления более привлекательными и эффективными и предложить практические рекомендации для тех, кто работает в стремительно меняющемся мире цифрового маркетинга.

В статье ставятся следующие задачи:

- Исследовать язык рекламы. Рассмотреть реальные примеры армяноязычной рекламы и выявить языковые стратегии.
- Проанализировать, как определённые слова, фразы и стили находят отклик у людей, затрагивая их эмоции и культурные особенности.

- Оценить, какая языковой выбор помогает брендам выделиться и мотивировать аудиторию к действиям, будь то повышение осведомлённости о бренде или стимуляция покупки.
- Предоставить практические советы маркетологам о том, как эффективно использовать язык в рекламе, особенно на армянском рынке.

В данной статье был использован качественный подход для анализа лингвистических характеристик армянской интернет-рекламы. Несколько методов были объединены для проведения всестороннего анализа:

дискурсивный анализ был применен для изучения того, как язык в рекламе конструирует смысл и влияет на аудиторию. Этот метод фокусируется на том, как определенные слова или структуры предложений могут способствовать убедительности рекламы.

метод контент-анализа использовался для категоризации типов языковых и стилистических приемов, используемых в анализируемых объявлениях. Анализируя выражения и темы, в данной статье можно выявить уникальные лингвистические модели армянской интернет-рекламы.

Углубляясь в искусство языка в рекламе, статья проливает свет на то, как слова формируют успех цифровых кампаний в постоянно меняющемся онлайн-мире.

Ключевые слова: языковые стратегии, онлайн реклама, реклама в социальных сетях, вовлечение аудитории, маркетинговые тактики, использование языка, рекламные тактики, убеждение аудитории.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ՈՒ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ *

ՀՏԴ 82. 09

DOI: 10.52063/25792652-2024.4.23-143

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության
պատմության և գրաքննադատության ամբիոնի ասպիրանտ,

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

hovhanneshovakimian.hh@gmail.com

ORCID: 0009-0003-2751-3957

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Վանո Սիրադեղյանի գրական մոտեցումը՝ հասկանալու, թե ինչպիսի ստեղծագործություններով է հեղինակը սկսել իր գրական ճանապարհը և ինչպիսի արձագանքներ է ստացել, ովքեր են անդրադարձել նրա ստեղծագործություններին. գնահատվել է արդյոք հեղինակն իբրև գրող, քննադատվել է, թե՞ ոչ: Նպատակին հասնելու համար ուսումնասիրվել է այդ թվականների գրական մամուլը, որտեղ հրապարակվել են Սիրադեղյանի առաջին ստեղծագործությունները և տպագրվել գրականագետների կողմից գրված գրախոսությունները, ուսումնասիրվել են հեղինակի ժողովածուները, այլ հեղինակների կողմից հոլշագրությունները և թեմային առնչվող այլ նյութեր և աղբյուրներ: Ուսումնասիրվել է տեսական գրականություն ևս: Հոդվածում ներկայացվել և ուսումնասիրվել է Վանո Սիրադեղյանի գրական մոտեցումը, որը տեղի ունեցավ 1970-ականների վերջում և դարձավ հայ արձակի նշանակալի իրադարձություն: Նրա վաղ ստեղծագործություններում, ինչպիսիք են «Տղամարդու խիղճը» և «Թերեզի երջանկությունը», հեղինակը կենցաղային նկարագրությունների միջոցով ցուցադրել է հասարակության հոգեբանության խոր էությունը:

Ուսումնասիրությունը կատարվել է համադրական-վերլուծական մեթոդով:

Հետազոտության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ Սիրադեղյանի արձակն առանձնանում է թեմատիկ խորությամբ, կերպարների հոգեբանական վերլուծությամբ և սոցիալիզմից հեռու գեղարվեստական մոտեցմամբ: Չնայած որոշ շրջանակների քննադատական վերաբերմունքին՝ նրա գործերը նշանակալի ազդեցություն ունեցան հայ գրականության զարգացման վրա: Սիրադեղյանի գրական մոտեցումը եղավ բավականին բուռն և քննարկվող. հեղինակի առաջին պատմվածքներին անդրադարձան ականավոր գրականագետներ և գրողներ՝ բարձր գնահատելով Սիրադեղյանի գիրը:

Հիմնաբառեր՝ հայ արձակ, Թերեզի երջանկությունը, սոցիալիզմ, գրական մոտեցում, հոգեբանական վերլուծություն, խորհրդային գրականություն, գրական քննադատություն, Վանո Սիրադեղյան:

* Հոդվածը ներկայացվել է 09.11.2024թ., գրախոսվել՝ 25.11.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

Ներածություն

Նախորդ դարավերջը չափազանց կարևոր և նշանակալի պիտի լիներ հայ գրականության պատմության մեջ, քանի որ երևան էր եկել մի սերունդ, որն արդեն յուրացրել էր ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության իմաստնությունը, քաղել դրանցից հարկ եղածը, որ ամբողջությամբ նոր խոսք էր ասում գրականության տարածության մեջ՝ պոեզիայից մինչև արձակ: Այդ սերունդին հետագայում պայմանականորեն պիտի կոչեին «գարունական սերունդ»:

Այդ սերունդի ամենատաղանդավոր ու սիրված-ընթերցված հեղինակներից մեկը Վանո Սիրադեղյանն էր, որը պետք է ընդունվեր մեծ ոգևորությամբ և գրկաբաց, ինչպես և կարծես թե ընդունվեց: Այստեղ իրավացիորեն հաշվից դուրս պետք է թողնել հրանտմաթևությանական և վարդգեսպետոսյանական կիսագրական-կիսագիտական բանավեճը, որին իրենք՝ Հրանտ Մաթևոսյանն ու Վարդգես Պետրոսյանը, այնքան տուրք չտվեցին, որքան նրանց շուրջ «հայտնված» մարդիկ: Այդ քաջքշուկի մեջ մի քանի հարված էլ կրեց նոր օրերի արձակագիրը՝ Վանո Սիրադեղյանը:

Սիրադեղյանի՝ իբրև գրողի մուտքը հայ գրականության տարածություն Բավականին երկար սպասված էր, քանի որ նա ընթերցողին արդեն իսկ հայտնի էր 70-ական թվականների գրական մամուլից՝ «Գարուն» ամսագրում, «Գրական թերթում», «Սովետական գրականություն» ամսագրում և այլուր հրապարակած իր պատմվածքներից: Առաջին պատմվածքը, որ Սիրադեղյանը հրապարակեց, «Թերեզի երջանկությունն» էր, իսկ առաջին գիրքը՝ «Կիրակի» ժողովածուն, լույս տեսավ 1983 թվականին և բավական մեծ հետաքրքրություն առաջացրեց ընթերցողի մոտ: Հետաքրքրական էր նաև գրականագետների արձագանքը: Նրանք Հրանտ Մաթևոսյանի գրական մուտքից հետո կարծես արդեն սովորել էին պարզ, նաև փորձարարական գրական լեզվի և պատկերների կիրառություններին: Իսկ առաջին գրկաբաց ընդունողը եղավ հենց ինքը՝ խորհրդահայ մեծագույն արձակագիր Մաթևոսյանը, որը հանձն առավ լինել Սիրադեղյանի «հովանավորը» գրականության մեջ. *«Արձակի երկիր էր մտել մի տղա, որ, իր բոլոր ու բոլոր նախորդներից ավելի ճշգրիտ՝ ճշգրիտ բառերով ճշմարիտ պատմություններ էր պատմում, մոտավոր բառեր չունեի, որպես թե խոսքը որձաքարին է անցնելու՝ ժլատ ու ընտրող էր, վրիպած բառ չունեի, նրա բառն ու առարկան իրարու նույն պահին էին գտնում, հպանցիկը, ակնթարթայինը, անորսալին, անասունը հայտնվում էին նրա բառը արդեն գտած, արդեն կերպար ու պատկեր դարձած ու անուն առած...»* (Մաթևոսյան 251):

Եվ անսխալ էր Մաթևոսյանն այս գնահատումի հարցում, քանզի հենց Սիրադեղյանը պիտի դառնար այն արձակի շարունակողն ու առաջամարտիկը, որն այդպես ժառանգաբար փոխանցվել-հասել էր իրեն՝ սկսելով Աբովյանից, հասնելով Թումանյանին, հետագայում՝ Բակունցին ու Մաթևոսյանին: Գրական այս ժառանգականության թերևս վերջին օղակը պետք է լիներ հենց Սիրադեղյանը: Ժառանգականության, որն իր մեջ պիտի ներառեր Աբովյանին՝ իբրև մեծագույն հայրենասերի, որ պիտի ուրվագծեր հայրենիքը, Թումանյանին՝ իբրև ժողովրդի որդու, որն ամենից լավ գիտեր իր ազգությունը, Բակունցին, որն ամենից մոտ էր կանգնած հայրենի բնօրրանին, և Մաթևոսյանին, որը բոլորից լավ էր տեսնում իր ժամանակը: Եվ այս մեծերի կողքին դնել, թե՛ չդնել Սիրադեղյանին, համարձակվել խոսել նրա մեծության մասին առանց սովորածավալ ստեղծագործության... Իսկ արդյո՞ք Սիրադեղյանը չդարձավ գրական ժառանգը այս երկարածիզ շղթայի: Եվ որքա՞ն զգույշ, ի՞նչ փութաշնչությամբ ստանձնեց ի ծննդե հանձն առված, գուցե չգիտակցված այդ ժառանգությունը, որքա՞ն զգույշ արվեցին հավելումները, որքան թեթև ու անվսաս ընդունեց այդ մեծ գրողին հայ գրականությունը: Իսկ հավելումը, ավելացումը եղավ ոչ այլ ինչ, քան ներքին քննությունը, զգացմունքի և զգացողության բացարձակ նկարագրությունը՝ առանց այլևայլությունների, առանց «վրիպած բառերի», և ինչպիսի՞ ռիթմի զգացողությամբ: Եվ այդ ռիթմը հանգիստ չպիտի թողներ ընթերցողին՝ «Թերեզի

երջանկությունից» մինչև «Գառ ախպերիկ», «Կիրակիից» մինչև «Անանձրև հուլիս», որոնց ընթերցման ժամանակ գուցե փորձառու ընթերցողի կողմից պիտի նկատվեին մի նոր տաղաչափական համակարգ, հանգավորման տեխնիկայի նոր դրսևորում՝ արձակի ռիթմ, արձակի հանգ, արձակի տաղաչափություն, որոնք երբևէ չեն եղել և գուցե չկան, բայց Սիրադեղյանը, կարծես, գիտի դրանց տեղը:

Վանո Սիրադեղյանի երկրորդ գիրքը լույս տեսավ 1987-ին միայն՝ կրելով «Ծանր լույս» վերնագիրը: Այդ գրքի պատմվածքներն արդեն վերջնականապես հաստատեցին նրա ուրույն տեղը հայ գրականության մեջ՝ իրենց յուրօրինակ ոճականությամբ, թեմատիկ-բովանդակային նախընտրություններով և այդ ամենը մատուցելու հմտությամբ: «Ծանր լույսն» ստիպեց արդեն ավելի սևեռուն հայացք նետել հեղինակի և իր ստեղծագործության վրա, առավել խոր դատելու հնարավորություն տվեց ինչպես հասարակ ընթերցողին, այնպես էլ գրական շրջանակներին: Եվ հենց դա էր պատճառը, որ Սիրադեղյանի՝ արդեն հաջորդ փոքրիկ ժողովածուն՝ «Շատ չհամարվի»-ն, նշանավորվեց Հրանտ Մաթևոսյանի կողմից գրված «Երկու խոսք» առաջաբանով, որտեղ մեծանուն արձակագիրը իր հիացմունքը հայտնեց գրողի մասին: Դրան հաջորդեց մի շրջան, երբ Սիրադեղյան արձակագիրը երկար լռության մեջ էր: Տարիներ անց վերջապես լույս տեսավ արդեն երրորդ գիրքը՝ «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» (2000), որը, կարելի է ասել, Սիրադեղյանի արձակի ընտրանին էր՝ երեսունվեց պատմվածքներից բաղկացած: Առաջաբանը նորից Հրանտ Մաթևոսյանին էր: Մեծանուն արձակագիրը տարիների փորձառությունից եկած իր խոսքն էր ասում՝ հղում կատարելով գրողի նախորդ գրքի՝ իր կողմից գրված առաջաբանին, սակայն այս պարագայում առավել շոշափելի, առավել հանգամանալից մեկնաբանություններով: Մաթևոսյանի խոսքում մեծ ափսոսանք է նկատվում, տխրություն, ինքն իրեն չներելու զգացողություն. «1988-ին գրիչը ցած է դրել. ի՞նչ խնամքոտ և անվրեպ ձեռք, ճշմարիտ պատումի ի՞նչ տիրական դեմք է ետ քաշվել գրականությունից, գործի ի՞նչ հայացք է կտրվել երեխաների ու կենդանիների, ծերերի ու պարմանիների, կանանց ու տղամարդկանց մեր բազմությունից, որ գործի սիրող, ներող, մեզ, ինչպես որ կանք, այդպես ընկալող այդ հայացքում երբեք, ինչքան էլ մեզ կորցնենք, ինչքան էլ աղարտվենք ու աղավաղվենք, չենք տպվելու որպես ամբոխ, որովհետև մենք մայրեր ենք՝ իր մայրը, եղբայրներ ենք՝ իր եղբայրը, փոքրեր ենք՝ իր տղեկությունը, հայրենիք ենք՝ իր ապրելու, հաստատվելու, հանգչելու միակ տեղը, և վերահաս ժամանակի քաղաքական միտքը տասներկու տարի առաջ ի՞նչ անվրեպ է եղել՝ իր անցյալի մեր հարյուրներից ու հազարներից ընտրելով նրան, ով գործում է կեղծիքը խոտանել՝ լինի այդ կեղծիքը իրողությամբ ծանրացող կյանքի թե գրական իրականություն, ով կարողանում է իրեն չկաշկանդել ոչ անդիմադիր պայմանականությամբ գրական իրականության («Դե բան է՝ գրուցում ենք էլի») և ոչ էլ համոզիչ ներկայությամբ կյանքի իրողության («Դե կյանք է՝ ենթարկվում ենք, էլի»), այլև իրեն հարատև երթուղարձի մեջ է պահում վերացարկումի և իրականի միջև» (Սիրադեղյան 1) :

Այս ամենը, իհարկե, խոսում է մի բանի մասին. Սիրադեղյանը այն հասարակության արձակագիրն էր, գրում էր այն կյանքի ու մարդկանց մասին, որոնց պատկանում էր, որոնց մեջ ապրում էր, որոնց զավակն էր ինքը, և որոնք էլ իր համար որպես զավակ էին, ինչպես որ միշտ լինում է զառամյալ հոր ու ավագ որդու պարագայում:

Վստահաբար կարող ենք փաստել. Վանո Սիրադեղյան արձակագիրը, չնայած իր սակավաթիվ ստեղծագործություններին, խոր հետք թողեց հայ գրականության նախորդ դարի պատմության մեջ՝ ամրագրելով իր տեղն ու դերը դրանում: Այս ամենի վկայությունն է գրողի ստեղծագործությունների կարևորվածությունը՝ ընթերցողական տարբեր շերտերի կողմից, այդ ստեղծագործությունների ժողովրդայնությունը, լայն տարածումն ու ընթերցողների սերը: Եթե փորձենք հասկանալ՝ ինչու, ապա կնկատենք. Սիրադեղյանի պատմվածքներում հստակորեն տարրորոշվում է մեկ ընդհանուր գիծ: Դա հայ մարդու հոգեբանության ընկալումն է, այդ հոգեբանության

վերակերպումը՝ գյուղական միջավայրից մինչև քաղաքային իրականություն: Սա իսկ, խոշոր հաշվով, ավանդ է՝ ստացած հայ մեծանուն արձակագիրներից, մասնավորապես՝ Հրանտ Մաթևոսյանից, որի ազդեցությունը գուցե նյութապես բավականաչափ շոշափելի չէ, սակայն, ըստ էության, զգացվում է հեղինակի ստեղծագործություններում՝ ելնելով հեղինակի ստեղծագործության ընդհանուր գաղափարաբանությունից և մոտեցումներից, աշխարհայացքից և արժեքային համակարգից:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Վանո Սիրադեղյանի առաջին արձակ ստեղծագործությունները հրապարակվեցին 1970-ականների վերջին: «Գարուն» ամսագրի 1978 թվականի 8-րդ համարում Սիրադեղյանը ընթերցողին ներկայացրեց միանգամից երկու պատմվածք՝ «Տղամարդու խիղճը» և «Թերեզի երջանկությունը»: Սիրադեղյանն այդ ժամանակ արդեն փոքրիշատե հայտնի էր ընթերցողին. դեռևս 1972 թվականին «Գարուն» ամսագրի առաջին համարում լույս էին տեսել նրա չորս բանաստեղծությունները: Այդ չափածո գործերում ուրվագծվում էր հեղինակի ձեռագիրը, որն ակնհայտորեն շատ ավելի մեծ հավակնություն կարող էր ունենալ արձակում՝ հաշվի առնելով նրա բանաստեղծությունների պատկերային համակարգը, բառապաշարն ու ոճը, ինչպես նաև հստակորեն ընդգծվող պատումամյակությունը: Ահա այդ բանաստեղծություններից մեկը, որը, ըստ էության, ցույց է տալիս հեղինակի պատկերավոր մտածողությունն ու այդ պատկերավոր մտածողության իրացումը՝ բանաստեղծական տարածության մեջ.

*Նա մի ոտք ուներ ու մի որդի
Եվ մի հենակ ուներ:*

*Նա մահից մի ոտք էր փրկել
Ու մի բարուր աշխարհի
և որդով վերապրելու մի հույս էր փրկել:*

*Նա մի ոտք ուներ
Որ հենակի հետ պար էր բռնել
Երբ մանկան ճիչն էր պայթել ականջներում նրա,
Որ սրտի պես թունդ էր առել
Երբ առաջին քայլից կիսաոտքն իրեն էր փարվել. . .
Ու հետո. . . ծերացել էր ոտքը,
Երբ իր միակ հույսը նրան՝ հենակի հույսին էր թողել:
Իսկ հենակը. . . փայտ էր, չէր դիմացել,
Ճաքճքել, մաշվել ու. . . տնքացել էր հենակը. . .*

*Նա մի ոտք ուներ
Ու մաշված մի հենակ. . .*

Մի օր էլ փոստատարը գյուղից մետաղե մի հենակ էր բերել («Գարուն» ամսագիր 17):

Սիրադեղյանի՝ բանաստեղծություններ գրելու մասին հիշատակվում է նաև իր մտերիներից շատերի հուշերում, և կան պահպանված մի քանի բանաստեղծական նմուշներ ևս, որոնք արժանի են հիշատակման: Ահա դրանցից մեկը, որը պահպանվել է արձակագիր, բանաստեղծ, հրապարակախոս Ռուսնոյ Շառոյանի հուշերում.

*Նավերս արդեն ծով են դուրս գալիս,
Մտում են ափին հեգ ճամփողներս,
Տերը կտա՞ ինձ մի հաջող քամի,*

*Որ հույսով լցվեն առազաստներս:
Առազաստներս պատա՞նք կլինեն,
Թե՞ վերադարձի դրոշակներս.
Նավաբեկյալիս ափ չհանես, ծո՛վ,
Որ հույսով մնան սպասողներս (Դարբինյան, էջ 28):*

Պետք է նկատել, որ բանաստեղծական այս մի քանի հատվածներում մենք կարծես տեսնում ենք մի մարդու ամբողջական ճակատագիր, դեպքերի ընթացք, ինչպես նաև ապրում ու զգացականություն: Հենց այս հատկանիշներն էլ հետագայում պիտի կրի Սիրադեղյանի արձակը, և կարծում ենք, որ արձակի տարածության մեջ Սիրադեղյանն այլևս կաշկանդվածություն չի ցուցաբերում՝ պատմություններ պատմելու, կառուցելու հետաքրքիր և հուզական դիպաշարեր, դա կարծես նկատվում էր պոեզիայի տարածության մեջ, քանի որ պոեզիան թելադրում է իր օրենքներն ու պահանջները, որոնք արձակը կարծես բաց է թողնում:

Պետք է նշել, որ հեղինակը երկար է սպասել տալիս, նախքան նորից գրական տարածությունում կհայտնվի, և գրականություն է մտնում բոլորովին հասուն վիճակում՝ այլևս ազատված երիտասարդական փորձարարություններից: Սիրադեղյանի մոտքը միանգամայն ամուր և շիտակ է՝ ոտքերը արդեն ընկղմած արձակի մեր ողջ կենսափորձում: Նա առաջին հրապարակումներից հետո կարողանում է ուշադրություն սևեռել իր վրա, և չեն ուշանում գրականագիտական կարծիքներն ու գրաքննադատական հայացքները, որովհետև, իրապես, արձակի երկիր էր մտել մի տղա, որը մեծ հայտ էր ներկայացնում և կարծես պետք է դառնար հայ արձակի հերթական բարձր նշանո՞ղ սահմանողը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ ՄԱՍՈՒՆՈՒՄ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Սիրադեղյանի արձակի մասին ամենից շատ գրախոսություններն ու հոդվածներ գրվել են հենց գրական մոտքի առթիվ, սա պայմանավորված է այն հանգամանքով, որ իսկապես հետաքրքիր ու ինքնատիպ հեղինակ էր հայտնվում, որին պետք էր թե՛ ուղղորդել, թե՛ հասկանալ, թե՛ մեկնաբանել:

Պետք է նշել, որ այդ հոդվածներում առկա էին ինչպես գովեստի, այնպես էլ քննադատության խոսքեր: Որոշ դեպքերում երևում էր գրախոսողի և կամ գրաքննադատի կողմնապահ վերաբերմունքը, որը բնական էր այդ տարիների համար. դեռևս թարմ էր այն երկարածավալ բանավեճի հետքը, որը սկսվեց 1960-ական թվականներին և տևեց մինչև 1980-ական թվականները: Զանի որ Սիրադեղյանը, ըստ էության, Հրանտ Մաթևոսյանի գրական գծի շարունակողն էր և հետագայում պիտի դառնար Մաթևոսյանի գրական «ժառանգը», հետևաբար բոլոր այն հոդվածներում, որտեղ հոդվածագիրը նախորդող բանավեճերում հանդես էր եկել Մաթևոսյանին հակադիր դիրքերից, պետք է քննադատական որևէ գիծ ցուցաբերեր Սիրադեղյանի հանդեպ, և հակառակը՝ մյուս պարագայում:

Այսպիսով՝ Սիրադեղյանի մոտքը ստացվեց բավական շոնդալից: Գրական մոտքի հանդեպ ցուցաբերված նման հետաքրքրությունն ոչ վաղ անցյալում նկատել էինք Հրանտ Մաթևոսյանի մոտքի կապակցությամբ: Մաթևոսյանը մտավ գրականություն 1959 թվականին՝ «Տափաստանում» ակնարկով, հետո նաև «Զննություն» պատմվածքով, որին հաջորդեց «Ահնիժորը», որը միանգամից սևեռեց բոլորի հայացքը դեպի երիտասարդ գրողը: Այդ ժամանակ մեծ ողջույններ հղվեցին Լևոն Հախվերդյանի և Սուրեն Աղաբաբյանի կողմից. «Հրանտ Մաթևոսյանի ակնարկի ուժը ճշմարտության մեջ է, և ոչ թե կառուցվածքային և ոճական այն հնարագիտության, որ նրան երբեմն տանում է դեպի մաներայնություն և ոճավորում:

Ձիրքառատ գրողը պետք է զգուշանա սրանցից, ամեն բանից վեր դասի հոգեբանական և կենսական ճշմարտությունը:

Պետք է ողջունել նրա մոտքը գրականության դժվարին ասպարեզում, իսկ ընթերցողին խորհուրդ տալ կարդալու «Անիծորը»՝ Մաթևոսյանի անաղմուկ ու վստահ քայլը» (Աղաբաբյան, Հախվերդյան 21):

Հետաքրքրական է այն, որ նման ողջույնի խոսքի արժանացավ և Սիրադեղյանը՝ իր գրական մոտքից անմիջապես հետո, երբ 1978 թվականին «Գարուն» ամսագրում լույս տեսան նրա երկու պատմվածքները՝ «Տղամարդու թախիծը» և «Թերեզի երջանկությունը», որոնցից մասնավորապես երկրորդը «սկսնակ» գրողի համար չափազանց ստացված կարելի էր համարել: Համենայնդեպս, մեր գրականության մեջ՝ մասնավորապես արձակում, եզակի հեղինակներ են նման հաջողված քայլով սկսել իրենց ընթացքը: «Թերեզի երջանկության» ամենից առանձնացող հատկանիշը գրողի դիպուկ հայացքն է, պատկերի ճշգրտությունը, որով հեղինակը հստակորեն կարողանում է ցույց տալ իր ժամանակը, այդ ժամանակի բոլոր խնդրահարույց կողմերը: Հերոսուհին՝ գյուղից քաղաք տեղափոխված Թերեզը, պարբերաբար նամակներ է գրում քրոջը և այդ նամակներում փորձում ներկայանալ իբրև քաղաքացի՝ քաղաքի կյանքով ապրող, գյուղացուց վեր դասվող և վերևից հայացք նետող հոգեբանությամբ. «Թերեզը աշխույժ նամակներ է գրում: Ամեն նամակի մեջ մի հետաքրքիր լուր է փնտում քաղաքի կյանքից: Քաղաքն էլ չլինի, շենքը, որ իրենց գյուղի չափ մի գյուղ կտեղավորի, ապրում է բուռն, արկածալի կյանքով: Համենայնդեպս, Թերեզին այդպես է թվում: Համենայնդեպս, տարիուկես քաղաքում է ապրում, ու գրելիքը չի պակասել: Քաղաքը՝ մեծ, ժողովուրդը՝ ծով, կյանքը՝ հետաքրքիր...» (Սիրադեղյան 18):

Ահա այսպես է սկսվում պատմվածքը: Չափազանց կենցաղային պատկեր, որը հետագայում վերաճում է հերոսուհու ու նաև ժամանակի ողջ հոգեբանության արձարծմանը: Մի կարևոր նշում ևս. կենցաղային պատկերներով (դրանցով Սիրադեղյանի մյուս ստեղծագործությունները ևս աչքի են ընկնում) հագեցած այս պատմվածքը չպետք է շփոթել կենցաղագրության հետ, որովհետև հեղինակը կարողանում է թափանցել շատ ավելի խոր և շատ ավելի կարևոր հարցադրումներ կատարել՝ հիմնականում դրանք քողարկելով տողատակերում: Սիրադեղյանի այս ֆենոմենի վերաբերյալ հետագայում կարևոր արձանագրում պիտի կատարի նաև ժամանակի ամենաակտիվ քննադատներից մեկը՝ Ազատ Եղիազարյանը՝ Սիրադեղյանի «Կիրակի» ժողովածուի լույսընծայման վերաբերյալ գրված գրախոսության մեջ, որին կանոնադաշտանք ավելի ուշ: Սակայն մինչ այդ Եղիազարյանը խոսում է հեղինակի թեմատիկ նախընտրությունների մասին. «Նա սիրում և կարողանում է պատկերել կենցաղը, դրա անհրապույր կողմերը, մանրուքները, թեև նրա գրածը ոչ մի կապ չունի կենցաղագրության հետ» (Եղիազարյան 114):

Ահա այսպես՝ Թերեզի կերպարի միջոցով Սիրադեղյանը պատկերում է քաղաքի անցուդարձը, գյուղից քաղաք տեղափոխված, դեռևս վստահորեն չհիմնավորված մարդկանց հոգեբանությունը, նրանց խնդիրները: Սա ժամանակի ողջ դրամատիզմն է: Համենայնդեպս, հերոսուհին ոչ թե գոռոզանում է կամ դժվամություն ցուցաբերում, այլ փորձում է նամակների միջոցով փոխանցել այն ամենը, ինչն ակնկալվում է նամակը կարդացողի կողմից: Թերեզը չի կիսվում իր դժվարություններով, չի տրտնջում, չի խոսում քաղաքի, քաղաքի կյանքի վատ կողմերի մասին: Ընդհակառակը, Թերեզն իրեն այլևս գյուղացի չի համարում, և Սիրադեղյանը բավականին հետաքրքիր ձևով խաղարկում է մի չնչին մանրուք, որով ի ցույց է դնում Թերեզի մտածողությունը, մասնավորապես՝ խեղճությունը. «...Եվ, եթե ծրարը օդային փոստի չէ, աչքի ընկնող մի տեղ գրում է *աստ*, թեև փոստը նրանց գյուղ երբեք ինքնաթիռով չեն տանում: Թերեզը երբեմն ավիացիոն փոստի ծրար էլ է ունենում,

բայց սեփական ձեռքով ձես գրելը մի ուրիշ հաճույք է: Բոլորովին այլ բան է, որ Թերեզը ռուսերենից բոքիկ է և տառասխալով գրում է *авая*: Եվ կարևոր չէ նույնիսկ, որ նամակը շաբաթից շուտ տեղ չի հասնում: Թերեզի մտքով էլ չի անցնում, որ կարող է շուտ հասնել: Ժամանակ չափելու համար չէ, որ կրկնակի նամականիշով ծրարի վրա ձես է գրում, այլ կարևորության համար: Եվ շքեղության համար է գրում: Թերեզի երջանկությունը պիտի հենց ծրարից երևա: Կարմիր շերտերիզով, ինքնաթիռի պատկերը վրան ու փայլուն ծրարից: Կամ թեկուզ սովորական, բայց ճեփ-ճերմակ թղթից, մի լավ շենքի նկարով, կրկնակի նամականիշով՝ վրան էլ իր ձեռքով գրած ձես ծրարից» (Սիրադեղյան 18-19):

Այս մեկ նկարագրության մեջ հեղինակը ոչ միայն վեր է հանում հերոսուհու տիպը, այլև ի ցույց է դնում, թե ինչպիսին էր հերոսուհու այդ երջանկությունը. այդ երջանկությունը որևէ բանով աչքի ընկնելու, իրեն այլևս ճահճից դուրս երևակայելու մեջ է, և սա, կարելի է ասել, հասարակության մի ամբողջ խավի հոգեբանություն է, մտածողություն և խեղճության ցուցիչ:

Իսկ ձախողված խնջույքից հետո առավել ներփակվում է, դադարում է նամակ գրել, դադարում է կիսել իրեն բաժին հասած երջանկությունը: Կարելի է կարծել, որ հեղինակը պատումը կավարտեր հենց նամակ գրել դադարող հերոսուհու նկարագրությամբ, բայց դա չէր լինի Սիրադեղյանը, սակայն, քանզի գործ ունենք բացառիկ տաղանդ և դիտողականություն ունեցող հեղինակի հետ, նա ոչ միայն պատմվածքը եզրափակում է հոգեբանական-զգացական նկարագրությունով, այլև առաջ է բերում գեղարվեստական գեղեցիկ հևարք՝ կոմպոզիցիոն շրջանակումով (սա կարծես Սիրադեղյանի ամենասիրելի հևարքներից մեկն է) ամբողջացնելով այն. «...Թող որ համբերի քույրը, թող ամեն գնացող-եկողի հարցուկործ չանի՝ ինչ է պատահել: Չի պատահել, Թերեզի քույրիկ: Ոչ մի վատ բան չի պատահել: Իրենք ողջ ու առողջ են, նույնն էլ ձեզ են կամենում: Մի քիչ ձախ գնաց գործը, ո՛րմ հետ չի պատահում, ի՞նչ մի գրելու բան է: Աստծով, մի օր էլ իրենք տուն կունենան...» (Սիրադեղյան 26):

Պատկերների հրաշալի ճշգրտություն է ցուցաբերում Սիրադեղյանը, կարողանում է բացառիկ դիտողականության շնորհիվ հասկանալ մարդկանց հոգեբանությունը. այո՛, մարդկանց, և ո՛չ Թերեզի: Թերեզը մի ողջ սերնդի հավաքականություն ունի, գյուղ-քաղաք հակադրության ողջ բովանդակային կողմը կարողանում է պարունակել իր մեջ, սա ցույց է տալիս, որ Սիրադեղյանը կարողանում է նկատել խնդիրը, ապրումը, պատկերը: Իսկ որ ավելի կարևոր է, կարողանում է ճշգրիտ ձևով այդ խնդիրը բացատրել՝ ստեղծելով կենսական արձակ, առանց հավելյալ հուզականության և պաթոսի, որը այդ ժամանակ գերիշխող դիրքեր էր զբաղեցնում մեր գրականության մեջ: Ի՞նչն է առավել հետաքրքիր. Սիրադեղյանը կարծես որևէ ազդեցության չէր ենթարկվում և չէր շեղում իր արձակի ոչ միայն բովանդակային, այլև գաղափարաբանական միտումները՝ ի հակադրություն աշխատավորական, հավաքականության ընդհանուր տրամադրությունների՝ կապված խորհրդային կարգերի հետ: Միամտություն կլինի կարծել, որ Սիրադեղյանը սոցիալիզմի դիրքերից է հանդես գալիս, որովհետև, ինչպես գրական առաջին շրջանում, առավել ևս՝ հետագայում, չի փորձում գովերգել խորհրդային կարգերը, դեռ հակառակը՝ մանրամասն ընթերցանության պարագայում ակնհայտ է դառնում նրա բողոքն ու հակակրանքը այդ կարգերի հանդեպ: Սոցիալիզմը, իհարկե, նաև թելադրում է հավաքականություն, իսկ Սիրադեղյանը, ընդհակառակը, իր հերոսներին տանում է դեպի անհատականը: Եվ չպետք է կարծել, որ այդ հերոսները, շատ դեպքերում լինելով հավաքական կերպարներ, իրենց մեջ բովանդակում են ընդհանուրի, այսինքն՝ եղբայրության, հավասարության գաղափարները: Ո՛չ, այդ հերոսները ճակատագրով և միջավայրով հավաքական են, ասել է թե՛ տիպական, սակայն բոլորն ունեն մասնավոր

և ներանձնային բազում ապրումներ, որոնք էլ հեղինակը հրաշալի կերպով վեր է հանում:

Ահա այսպիսի գրական մոտքից հետո առաջին կարծիքը կարծես Պերճ Չեյթունցյանինն է, ով Սիրադեղյանի երրորդ պատմվածքի հրապարակման վերևում մի քանի նախադասությամբ կարևորում է հեղինակի մոտքը, ողջունում տաղանդավոր արձակագրին, հայտնում իր ուրախությունը՝ ասելով, որ Նոր երիտասարդ արձակագիրը խոստումնալից հայտ է ներկայացնում և որոշակի հույսեր ներշնչում. *«Ընդամենը երեք պատմվածք, որ, անշուշտ, քիչ է գրողի հեռանկարի մասին կանխագուշակումներ անելու համար, բայց և բավական՝ նկատելու գրական անուրանալի կուլտուրա, ճաշակ, հոգեբանական վերլուծության ունակություն, կերպարի զգացողություն. հանգամանքներ, որոնք շատ կարևոր են, մանավանդ, երբ հանդես են գալիս արձակագրի հենց առաջին գրական քայլերից...»* (Գրական թերթ 10):

Իհարկե, ողջունելի և ուրախալի է այն հանգամանքը, որ այդ ժամանակ արդեն բավական փորձառու արձակագիր Չեյթունցյանը ողջունեց Սիրադեղյանի մոտքը, սակայն այստեղ կան իրարամերժ գաղափարներ և իսկություններ ևս: Սիրադեղյանի՝ խորհրդային իրականության հանդեպ ունեցած քննադատական հայացքները Չեյթունցյանի նշած երեք պատմվածքներում արդեն իսկ դրսևորվել էին, այնինչ Չեյթունցյանը հասցրել էր հարմար դիրքեր զբաղեցնել կուսակցական գաղափարախոսության բողի տակ, որը քանիցս ի ցույց էր դրել նախորդող իր՝ ինչպես հրապարակումներում, այնպես էլ՝ բանավոր զեկուցումներում և խոսքերում, դիցուք՝ *«Իր խոսքի վերջում Պ. Չեյթունցյանը հույս հայտնեց, որ կուսակցության հոգատարությանը երիտասարդ գրողները կպատասխանեն գաղափարական և գեղարվեստական բարձրարժեք գործերով և արժանիորեն կշարունակեն արվեստի մեծ ու հետաքրքիր ճանապարհ անցած իրենց ավագ ընկերների գործը»* (Գրական թերթ 49):

«Գրական թերթի» նույն համարում գովեստի խոսքեր են ասվում երիտասարդ արձակագիրների վերաբերյալ, որոնց թվում, ի զարմանս մեզ, նշվում է Վանո Սիրադեղյանի անունը՝ իբրև արձակի տարածությունը լավ զգացող հեղինակի: Սա ևս մի ցուցիչ է, որ Սիրադեղյանի գրական մոտքն իրապես տպավորիչ է եղել բոլորի համար, և, եթե դա այդպես չլիներ, 1978 թվականին դեռևս երկու պատմվածք հրապարակած Վանո Սիրադեղյանի անունը դժվար թե նշվեր արդեն բազում հրապարակումներ ունեցած այլ երիտասարդների կողքին: Սակայն, այնուամենայնիվ, այդ ընտրողականությունը, որը ցուցաբերվում է ժամանակի արձակագիրների հանդեպ, չափազանց ընդգծվում է նաև հետագայում, երբ, ասենք, Վանո Սիրադեղյանի՝ մեր կողմից արդեն իսկ քննարկված «Թերեզի երջանկությունը» պատմվածքը թարգմանվում-հրապարակվում է ժամանակի լրջագույն պարբերականներից մեկում՝ «Литературная газета»-ում, և արժանանում է խորհրդային իրականության համար բավական շոշափելի և հարգի համարվող մրցանակի՝ «Дружба народов» ամսագրի կողմից: Սիրադեղյանն այդ հաջողությունը գրանցում է հենց առաջին պատմվածքի համար, իսկ մրցանակը ստանում է 1982 թվականին (Խաչատրյան 512): Պետք է հակադրվենք Ազատ Եղիզարյանին, ով իր՝ մեր կողմից արդեն իսկ հիշատակված հոդվածում գրում է, թե արձակագիրը մրցանակը ստացավ իր հրապարակումների, մասնավորապես՝ «Կիրակի» ժողովածուի համար: Այնինչ նա մրցանակը ստացավ պատմվածքի համար. այդ ամենամյա մրցանակը տրվում է «Լավագույն պատմվածք» անվանակարգում: Դեռևս լույս չէր տեսել հեղինակի առաջին ժողովածուն: Հայկական գրական ամսագրերը լռում են դրա մասին՝ գերադասելով պատմել, թե ինչով էր զբաղված Վարդգես Պետրոսյանը այդ տարի. ո՞ր դպրոցն այցելեց, ու՞մ հետ հանդիպեց և ինչպիսի՞ ելույթ ունեցավ պլենումների ընթացքում: Իհարկե, հասկանալի է, թե ինչու է Սիրադեղյանի մեծ

հաջողությունն այսքան աննկատ «Գրական թերթի» խմբագրությունում: Արդեն իսկ սկսվել և ավարտին էր մոտենում գյուղագրություն-քաղաքագրություն կոնֆլիկտը, ու քանի որ Վարդգես Պետրոսյանը հանդես էր գալիս հենց «քաղաքային» արձակի հիմքերից, և քանի որ այդ ժամանակ հենց նա՝ էր Հայաստանի գրողների միության վարչության նախագահ, իսկ «Գրական թերթը» պատկանում էր գրողների միությանը, հետևաբար ի՞նչ անհրաժեշտություն կար հերթական «գյուղագրի» մասին խոսելու:

Սակայն, այնուամենայնիվ, նման խտրականությունը չէր կարող խանգարել և չխանգարեց Սիրադեղյանին շարունակելու իր ընթացքը: Անկողմնակալ լինելու համար պետք է նաև նշել, որ այս վերաբերմունքը չափազանց կոշտ և ոխակալ համարել չի կարելի, պարզապես քանիցս նկատելուց հետո անհրաժեշտ է ամրագրել մի հանգամանք. «Գրական թերթը» եղել և շարունակում է մնալ հարթակ՝ գրողների միության նախագահի և նրան մտերիմ գրչակիցների վաստակը գովերգելու համար:

Այնուամենայնիվ, «Թերեզի երջանկությունը» Վանո Սիրադեղյանի գրականության բարձր արժեքի և գրողական ինքնատիպության ապացույցն ու հավաստիքն է, որի արձագանքները հաճախ լսվեցին նրա հետագա պատմվածքներում. սա գրական մուտքի բարձր նշանող էր: Անհրաժեշտ է նաև նշել, որ պատմվածքի այդ հաջողությունները չկուրացրին հեղինակին, նա չտարվեց հաջողության պատրանքով և շարունակեց չափազանց մանրակրկիտ և երկարատև աշխատել իր պատմվածքները գրելիս: Հենց սա է պատճառը, որ Սիրադեղյանի պատմվածքներում, ինչպես հրաշալի նկատել էր Հրանտ Մաթևոսյանը, վրիպած բառեր չկան, մոտավորություններ չկան:

Վերադառնալով Սիրադեղյանի՝ Չեյթունցյանի կողմից ողջունված գլխատողերով պատմվածքին՝ անհրաժեշտ է նշել, որ հերթական հաջողված և վարպետորեն գրված պատմվածքն է ծնվում: Խոսքը «Դուռը» պատմվածքի մասին է, որը լույս տեսավ «Գրական թերթի» 1979 թվական մարտի 8-ի համարում: Պատվածքում հեղինակը իրեն բնորոշ ոճով փորձում է կերտել ժամանակի շունչը, ընտրված հերոսի՝ Մայիսի միջոցով ցույց տալիս մարդու մի ամբողջ տիպ, որն ապրում է իր առօրյա հոգսերով, թվացյալ միապաղաղ կյանքով, սակայն ապրում է ներքին տարաբնույթ խմորումների բարդ շրջափուլ: Պատմվածքը սկսվում է պարզ, հասարակ նկարագրությամբ, որը բնորոշ է Սիրադեղյանի շատ պատմվածքների. «Մայիսը մի փոքրիկ երագանք ուներ՝ «Չապորոժեցի» առներ, դրանով աշխատանքի գնար ու գար, ազատ ժամերին լվար ու կոկեր, ազատ օրերին ընտանյոք դուրս գար քաղաքից և մի օր էլ, տեսար, քե՛ց ծովափ՝ Սև ծովի ափերը» (Գրական թերթ 10):

Առանց ավելորդ նախաբանի և խոսքը նախապատրաստելու հեղինակը սկսում է պատմությունը, որը հետագայում տանում է չափազանց հետաքրքիր դեպքերով ու ապրումներով հագեցած պատկերների: Սակայն մինչ այդ անհրաժեշտ է նշել, որ Սիրադեղյանի ստեղծագործություններում չկան ավելորդ նկարագրություններ, և որ այստեղ գործում է չեխովյան տրամաբանությունը՝ պատից կախված հրացանի նկարագրության և այդ հրացանի՝ ստեղծագործության որևէ հատվածում կրակելու մասին: «Չապորոժեցի» մասին հեղինակի խոսքն ինքնանպատակ չէ, որովհետև, ինչպես պատմվածքի հետագա դրվագներից մեկում ենք տեսնում, այդ մեքենան գնելու համար հերոսը կատարել էր բազում խնայողություններ և սկսում է կասկածել՝ արդյո՞ք ճիշտ է ծախսել այդ խնայողությունը, թե՞ ոչ: Այդ միտքը հերոսին պիտի տանի հոգեբանական ծանր ապրումների և պետք է բացահայտի նրա իրական հույզերն ու մտածումները:

Խոշոր հաշվով այս մեքենան պատմվածքի համար հանգույցի դեր է խաղում՝ բացելով գործողությունների ընթացքը, սակայն միևնույն ժամանակ մնալով բացակագոյություն՝ որևէ դեր և նշանակություն չունենալով և այլևս ի հայտ չգալով նյութում: Սա յուրատեսակ հանգույցի կիրառությունն է, որը ոչ միայն բացում է գործողությունների ընթացքը, այլև հոգեբանական ապրումի և զգացմունքի համար

զարգացման ու նկարագրության պարարտ հող է պատրաստում. «... Ավտոմեքենայի համար խմայողությունը սկսվել էր այն տասը ռուբլուց, որ երեխայի առաջին քայլը գցելու օրը, իր ձեռքով, հանդիսավոր գցեց ծոծրակին ճեղք ունեցող գիպսե արձանիկի մեջ: Հենց այդ հիշողությունից էլ խանգարվեց հոր հանգիստը» (Նույն տեղում):

Սա արդեն երկրորդ և վերջին խոսքն է մեքենայի մասին՝ պատմվածքի միջին հատվածում, երբ մեզ արդեն պարզ է Մայիսի՝ բանակ ճանապարհվող որդու հոր ապրումների պատճառը: Մայիսը կարծում է, որ ունակ է որդուն ուսման տալու և դրանով իսկ ազատելու բանակ գնալու ճակատագրից: Նրան դրա համար կօգնեն այն գումարը, որը նա ծախսել էր մեքենա գնելու համար: Ու ողջ գիշեր հերոսը ինքն իրեն ձաղկում ու մեղադրում է տարաբնույթ ծախսերի համար, սկսում է հաշվել, թե որքան գումար է ծախսել խմելու, ծխելու, տաքսիներից օգտվելու և այլ պատճառներով:

Ի վերջո՝ հերոսը հայտնվում է հիվանդանոցում, բայց ապրում է: Ու ապրելը ստիպում է իրերին ու երևույթներին փոքր-ինչ այլ կողմից նայել: Պատմվածքը Սիրադեղյանը ավարտին է հասցնում մարդու, փոքր մարդու անդառնալիության գաղափարի շուրջ քննարկումով՝ ցույց տալով, որ եթե անգամ Մայիսը չապրեր, էական որևէ բան չէր փոխվի ոչ ոքի կյանքում, ընդամենը որոշ ժամանակավոր անհարմարություններ կբերեր դա իր միջավայրին. «Կտիրեր տիեզերական անտարբերությունը ինչ-որ մեկի լինել-չլինելու հանդեպ» (Նույն տեղում):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սիրադեղյանի բոլոր ստեղծագործությունները բազում խմբագրումների են ենթարկվել հենց իր՝ հեղինակի կողմից: Բացառություն չէ նաև հենց այս՝ «Դուռը» պատմվածքը: Դրանք բավական տարբեր խմբագրություններ են՝ սկսած բառային փոփոխություններից մինչև ամբողջական պարբերությունների կրճատում և նախադասությունների վերաձևակերպում: Մեզ ծանոթ են հեղինակի առաջին պատմվածքի՝ «Թերեզի երջանկության» ութ, «Դուռը» պատմվածքի՝ հինգ աշխատանքային տարբերակներ: «Դուռը» պատմվածքի առաջին հրապարակված տարբերակը, որից էլ մեջբերել ենք հատվածներն աշխատանքի այս գլխում, էապես փոփոխված են հրատարակվել արդեն «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ժողովածուում: Բայց քանի որ աշխատանքի այս գլխում քննարկում ենք հեղինակի գրական մոտքը, հետևաբար անհրաժեշտություն ենք համարում մեջբերել դրանց՝ սկզբում հրապարակված տարբերակը: Այնուամենայնիվ, «Դուռը» պատմվածքի՝ մամուլում հրապարակված տարբերակն ավարտվում է հետևյալ պատկերով, որը Սիրադեղյանը հետագայում դուրս է թողել ամբողջությամբ. «Հենց միայն դրա համար նա չպիտի մեռներ: Առավել ևս չպիտի մեռներ ողորմելի բանի պատճառով, որի համար ապրել չարժեր, ինչ մնաց՝ մեռնել: Եվ առհասարակ մարդ չպիտի մեռնի: Զանի դեռ հնարավոր է, մարդ չպիտի մեռնի անսեթևեթ մահով, որովհետև շատ է վիրավորական տիեզերական անտարբերությունը թեկուզև իր նման մեկի լինել չլինելու հանդեպ» (Նույն տեղում):

Փորձենք հասկանալ՝ ինչու է Սիրադեղյանը հանել այս պարբերությունը: Պատմվածքի ողջ ընթացքում Սիրադեղյանը նախ և առաջ ստեղծում է դրական հերոսի, թեկուզ ոչ այնքան արժեքավոր, սակայն բարի հերոսի, որին ընթերցողը նայում է մեղմ հայացքով, որի ապրումները կիսում է և ոչ երբեք՝ մեղադրում: Սա հերոսի այն տիպն է, որն այսօր կա և գերակշիռ մաս է կազմում: Երկրորդ՝ հեղինակը պատմվածքի սկզբում խոսում է մահվան անխուսափելիության ու, միևնույն ժամանակ, անարձագանք հետևանքի մասին: Եթե ի մի բերենք այս ամենը, ապա կհասկանանք, որ մեջբերված հատվածում «թեկուզ և իր նման մեկի» արտահայտությունը կարծես բացասում է հերոսին, իջեցնում ավելի ցածր մակարդակ, քան նա ուներ մինչ այդ: Դա անբնական կլիներ առնվազն: Իսկ «և առհասարակ մարդ չպիտի մեռնի»-ն արդեն հերքում է հեղինակի ողջ կենսափիլիսոփայությունը՝ մահվան անխուսափելիության վերաբերյալ: Այս երկու պատճառները բավարար կլինեին այս հատվածը պատմվածքից դուրս թողնելու համար: Սրան էլ գումարվում է մեջբերված

հատվածին նախորդող նախադասության շատ ավելի մեծ հուզականությունն ու ամփոփիչ բնույթը՝ «Կտիրեր տիեզերական անտարբերությունը ինչ-որ մեկի լինել-չլինելու հանդեպ», և կրճատումը միանգամայն հասկանալի և ընկալելի է դառնում:

Ահա հենց սա է ի ցույց դնում Սիրադեղյանի՝ չափազանց բծախնդիր և մանրամասն աշխատող հեղինակ լինելու հատկանիշը, որը, անխոս, իր բարերար ազդեցությունն է թողնում հեղինակի հաջողության և պատումի ճշգրտության վրա, որն էլ մատնանշում էր Զրանտ Մաթևոսյանը:

Եզրահանգումներ

Ուսումնասիրելով Վանո Սիրադեղյանի և Զրանտ Մաթևոսյանի գեղարվեստական արձակը, հեղինակների գրական մոտեքն ու արձագանքները, թեմատիկ նախընտրությունները, նրանց կողմից ստեղծված ժանրային իրացումներն ու պատկերակերտման համակարգը, լեզուն և ոճը՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Վանո Սիրադեղյանը հայ գրականության ժամանակակից փուլի գլխավոր ներկայացուցիչներից է, որը պայմանավորում է հայ գրականության հատկապես 1980-ական թվականների ընթացքը:

2. Սիրադեղյանն իր առաջին գրական փորձերը կատարել է բանաստեղծության ժանրում, որն ի ցույց է դրել նրա առավել մեծ հավակնությունները արձակի տարածության համար: Դա զգացել է նաև հեղինակը՝ անցում կատարելով դեպի փոքր արձակի ժանրերը:

3. Զեդինակի գրական մոտեքն արժանացել է տարաբնույթ արձագանքների և մեկնաբանությունների: Ժամանակի գրաքննադատությունը կարողացել է նկատել Սիրադեղյանին: Նրա ստեղծագործության մասին գրված գրեթե բոլոր հոդվածներն ու գրախոսությունները արժևորում են հեղինակի ստեղծագործությունը:

4. Զեդինակի առաջին գիրքը՝ «Կիրակին», ըստ էության հստակ կառույց ունեցող ժողովածու է, որտեղ հեղինակն իր ուշադրությունն ու սևեռումն է հատկացնում հայ մարդու մտածողության, նրա հոգեբանության ընկալման ու խնդիրների վերհանման հարցերին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Գարուն» ամսագիր, թիվ 1, Երևան, 1972:
2. «Գրական թերթ», թիվ 8, Երևան, 1961:
3. Դարբինյան, Վասակ, *Վանոյի հետ և առանց Վանոյի*, Զեդինակային հրատարակություն, Երևան, 2019:
4. Խաչատրյան, Զայկ, *Գրական տեղեկատու*, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1986:
5. Մաթևոսյան, Զրանտ., *Սպիտակ թղթի առջև*, «Հայագիտակ» հրատ, Երևան, 2004:
6. Սիրադեղյան, Վանո., *Դուռը*, «Վանո Սիրադեղյան» հիմնադրամ, Երևան, 2021:

WORKS CITED

1. "Garun" amsagir, tiv 1, ["Garun" Magazine Issue 1] Yerevan, 1972. (In Armenian)
2. "Grakan t'ert", tiv 8, ["Literary Newspaper", Issue 8] Yerevan, 1961. (In Armenian)
3. Darbinyan Vasak, Vanoi het yev arants Vanoi, Heghinakayin hratarakutyun, [With Vano and Without Vano, Author's Publication] Yerevan, 2019. (In Armenian)

4. Khachatryan Hayk, Grakan teghekatu, "Sovetakan grogh" hrat., [Literary Encyclopedia, "Soviet Writer" Publication] Yerevan, 1986. (In Armenian)
5. Matevosyan Hrant, Spitak t'ghti arjèv, " Hayagitak" hrat., [Facing the White Paper, "Hayagitak" Publication] Yerevan, 2004. (In Armenian)
6. Siradeghyan Vano, Durë, "Vano Siradeghyan" himnadran, [The Door, "Vano Siradeghyan" Foundation] Yerevan, 2021. (In Armenian)

VANO SIRADEGHYAN'S LITERARY DEBUT AND RESPONSES

HOVHANNES HOVAKIMYAN

*Yerevan State University, Faculty of Armenian Philology, Department of
Modern Armenian Literature and Literary Criticism, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The article aims to explore Vano Siradeghyan's literary debut, examining the nature of his early works, the reception they received, and the extent to which he was recognized or criticized as a writer. To achieve this, the study analyzes the literary press of the time, where Siradeghyan's first works were published, along with reviews by literary critics. Additionally, the research incorporates the author's collections, memoirs of other writers, and other relevant materials and sources, including theoretical literature.

This article presents and evaluates Siradeghyan's literary debut in the late 1970s, which marked a significant moment in Armenian prose. In his early works, such as *A Man's Conscience* and *Therese's Happiness*, he delved into the psychological depths of society through vivid domestic narratives, offering a profound exploration of human nature and social dynamics.

The study was conducted using a comparative-analytical method.

The main conclusion of the research is that Siradeghyan's prose is distinguished by thematic depth, psychological analysis of characters, and an artistic approach far from socialist realism. Despite critical attitudes in some circles, his works had a significant impact on the development of Armenian literature. Siradeghyan's literary debut was quite vibrant and discussed. His first short stories were reviewed by prominent literary critics and writers, who highly praised his writing.

Keywords: *Armenian prose, "Therese's Happiness", social realism, literary debut, psychological analysis, Soviet literature, literary criticism, Vano Siradeghyan.*

ЛИТЕРАТУРНЫЙ ДЕБЮТ ВАНО СИРАДЕГЯНА И ОТКЛИКИ

ОВАННЕС ОВАКИМЯН

*аспирант кафедры истории армянской новейшей литературы и
литературной критики факультета армянской филологии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи — исследовать литературный дебют Вано Сирадегяна, чтобы понять, какими произведениями автор начал свой литературный путь и какие отклики он получил, кто комментировал его произведения, был ли он признанным писателем и подвергалось ли его творчество критике. Для достижения цели была изучена литературная пресса тех лет, где публиковались ранние произведения

Сирадегяна, а также обзоры на них, написанные литературоведами. Были изучены сборники автора, мемуары других писателей и другие материалы и источники, связанные с темой; была рассмотрена также теоретическая литература. В статье представлен и проанализирован литературный дебют Вано Сирадегяна, который состоялся в конце 1970-х годов и стал значимым событием в армянской прозе. В своих ранних произведениях, таких как «Совесь мужчины» и «Счастье Терезы», автор раскрыл глубокую сущность психологии общества через бытовые описания.

Исследование проведено с использованием сравнительно-аналитического метода.

Основной вывод исследования заключается в том, что проза Сирадегяна отличается тематической глубиной, психологическим анализом персонажей и художественным подходом, далеким от социалистического реализма. Несмотря на критическое отношение к его творчеству в некоторых кругах, его произведения оказали значительное влияние на развитие армянской литературы. Литературный дебют Сирадегяна был достаточно ярким и обсуждаемым; первые его рассказы были рассмотрены известными литературоведами и писателями, которые высоко оценили творчество писателя.

Ключевые слова: *армянская проза, «Счастье Терезы», соцреализм, литературный дебют, психологический анализ, советская литература, литературная критика, Вано Сирадегян.*

ԱՐՎԵՍ, ИСКУССТВО, ART



ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅ ԱՐՎԵՍԱԳԵՏՆԵՐԻ ՕՖՈՐՏՆԵՐԻ ԺԱՆՐԱԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՆՁԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՏԵՔՍՈՒՄ *

ՀՏԴ 7/76

DOI: 10.52063/25792652-2024.4.23-156

ՄԻՍԱԿ ՀԱՐԹԵՆՅԱՆ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mhartenyan1998@mail.ru
ORCID: 0009-0001-0937-8865

Սույն հոդվածի նպատակն է հնարավորինս ամփոփ ներկայացնել աշխարհի տարբեր երկրներում պատմական, սոցիալ-քաղաքական բարդ իրավիճակներում, 20-րդ դարի 1930-80-ական թվականներին գործած սիյուռքահայ մի շարք նկարիչների՝ օֆորտի տեխնիկայով արված ստեղծագործությունների ամբողջական պատկերը:

Հոդվածում ուսումնասիրվում են ինչպես հայտնի ֆրանսահայ նկարիչներ Գառզուի, Ժանսեմի, այնպես էլ արվեստասեր հանրության ավելի նեղ շրջանակներին ծանոթ եգիպտահայ Օննիկ Ավետիսյանի, իտալահայ Ժիրայր Օրագյանի՝ մեզ հասանելի օֆորտները, և առանձին աշխատանքների ժանրաթեմատիկ և բովանդակային վերլուծությունների միջոցով ցույց են տրվում մշակութային տվյալ միջավայրում ստեղծագործող նկարչի արվեստի առանձնահատկությունները և առնչությունները՝ ժամանակաշրջանին բնորոշ գեղագիտական զարգացումներին:

Աշխատանքը շարադրված է սիյուռքահայ արվեստագետների ստեղծագործությունների՝ արվեստաբանական, ոճական և օֆորտի տեխնիկայի ուսումնասիրությունների հիման վրա:

Կատարված ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ օտարության մեջ ստեղծագործող հայազգի արվեստագետները սերտորեն կապված էին տվյալ երկրում տեղի ունեցող մշակութային խմորումներին և մեծապես կրում էին ժամանակի՝ արևմտյան, մասնավորապես՝ ֆրանսիական ռեալիզմից մինչև մոդեռնի տարատեսակ ուղղությունների ազդեցությունները:

Այդուհանդերձ, նրանք անհաղորդ չէին ազգային խնդիրներին, ուստի՝ նրանց արվեստի յուրահատկությունները բազում թելերով կապվում են ազգային արմատների ու ինքնության ընկալումների հետ:

Հիմնաբառեր՝ Սիյուռքահայ արվեստագետներ, գրաֆիկա, օֆորտ, փորագրություն, գաղթօջախ, մշակութային միջավայր, համաշխարհային արվեստ:

* Հոդվածը ներկայացվել է 30.09.2024թ., գրախոսվել՝ 17.10.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

Ներածություն

20-րդ դարի հայ արվեստի զարգացման ամբողջական պատկերը ստանալու համար անգնահատելի է հայկական սփյուռքի՝ տարբեր գաղթօջախների ականավոր արվեստագետների՝ այդ թվում նաև օֆորտիստների դերը: Սփյուռքահայ արվեստում օֆորտի¹ անգուզական վարպետներ Էդգար Շահինը, Տիգրան Փոլադը արդեն դարասկզբին հասել էին համաշխարհային ճանաչման: Նրանց ստեղծագործությունները, բարձր կատարողականությամբ հանդերձ, առավելապես ակադեմիական հստակ դիմագիծ ունեն, իսկ 20-րդ դարի 10-ական թվականներից սկսած՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում նոր գեղագիտական խմորումներ էին ընթանում, ձևավորվում էին նոր ուղղություններ և աշխարհընկալում:

Անցյալ դարը բացառիկ էր ինչպես գիտատեխնիկական մեծ ձեռքբերումներով, այնպես էլ պատմական դրամատիկ իրադարձություններով: Բավական է միայն նշել Առաջին և Երկրորդ աշխարհամարտերը, որոնք միլիոնավոր մարդկային կյանքեր խլեցին. այս պատերազմների ստվերում էլ իրականացվեց նաև Հայոց ցեղասպանությունը: Իրադարձությունների նման ընթացքն իր սոցիալ-հոգեբանական կնիքը թողեց հայ և համաշխարհային մշակութային զարգացումների վրա:

20-րդ դարում պատերազմներին և դրանց աղետաբեր հետևանքներին առերեսվող արվեստագետները գրաֆիկայում նոր՝ ոչ ակադեմիական, հայացքով էին ներկայացնում իրադարձությունները, սակայն քչերն էին դիմում տպագրական փորագրության բարդ և աշխատատար տեխնիկային: Այս տեսանկյունից տպավորիչ են հոլանդացի Ժյուլ դե Բոյոլքերի, գերմանացի Էքսպրեսիոնիստ Կետե Կոլվիցի՝ չքավորների, մայրության և կորստի ցավ ապրող մարդուն նվիրված օֆորտների շարքերը: Վառ արտահայտչականությամբ են առանձնանում Օտտո Դիքսի՝ պատերազմական թեմաներով, սուբյեկտիվ ու ագրեսիվ շեշտադրությամբ «Պատերազմական շարքի»՝ 1923-1924 թթ.՝ դեֆորմացած մարդկային դիակոպտերի պատկերներով սարսռազդու օֆորտները: Սրանք Դիքսի հիշողություններն էին և պատերազմող աշխարհի այնպիսի դիմանկարը: 1914-1918 թթ. աշխարհամարտն անսպասելի ու ողբերգական էր՝ մարդկային զոհերի, պետությունների ընգրկվածության, երկարատև ընթացքի, գեղեցկության ու մարդասիրության մասին պատրանքների արմատական վերափոխման առումով: Այսուհետև իրականության՝ ականատեսի սուբյեկտիվ տեսանկյունից ներկայացնելը, ինչպես վարվում էին Էքսպրեսիոնիստները, նկարչի հիմնական գործելակերպն էր, ինչն անհանդուրժելի էր ձևավորվող նոր տոտալիտար ռեժիմների համար: Գերմանիայում Ադոլֆ Հիտլերի կառավարությունը Օտտո Դիքսին, Էմիլ Նոլդեին, Օսկար Կոկոշկային, Մարկ Շագալին, Ամադեո Մոդիլիանսին և այլ արդի նկարիչների պիտակավորեց որպես «դեգեներատ», «վտանգավոր» արվեստի ներկայացուցիչներ: Անգամ ցուցահանդեսներ կազմակերպվեցին՝ ծաղրելով այս հեղինակներին, կամ էլ նրանց աշխատանքների ճնշող մեծամասնությունը ոչնչացվեց (Сидельникова 1): Շուտով Գերմանիան իր գաղափարախոսությունն ու դիկտատուրան հաստատատեց եվրոպական գրեթե բոլոր երկրներում՝ մերժելով արվեստում մոդեռնիզմի որևէ դրսևորում: Նացիստական տոտալ բյուրոկրատիայի մեջ հայտնվեց նաև Ֆրանսիան, որտեղ հայկական ամենախոշոր գաղութներից մեկն էր ձևավորվել: Փարիզն այդ ժամանակ

¹ Օֆորտը (ֆրանսերեն՝ eau-forte - թունդ օղի), մետաղի վրա կատարվող փորագրության տեսակ է: Օֆորտը հաստոցային գրաֆիկայի (փայտափորագրություն, լինոփորագրություն, վիմագրություն, մենատիպ և այլն) բազմաթիվ տեխնիկաներից մեկն է: Աշխարհում առաջին օֆորտային թերթերը ստեղծվել են դեռ 16-րդ դարում Գերմանիայում, Հյուսիսային վերածննդի ժամանակահատվածում: Գոյություն ունեն օֆորտի տեխնիկայի բազմազան եղանակներ՝ աքվատինտա, փափուկ լաք, ռեզերվաժ, լավիս, մեցցո-տինտո, չոր ասեղ: Տե՛ս ավելի մանրամասն Звонцов и Шистко, Офорт, Москва, 1971:

միջազգային ավանգարդի էպիկենտրոնն էր՝ նորարարությունների խառնարանը, և այստեղ ևս, ի դեմս Պաբլո Պիկասոյի, Ամադեո Մոդիլիանիի և այլոց, տպագրական փորագրությունը նոր հաջողություններ էր արձանագրում: 1923-ից այստեղ ժամանած Լևոն Թությունջյանը, Երվանդ Զոչարը, Պետրոս Կոնտուրաջյանը ընդգրկվել էին Փարիզյան գեղարվեստական դպրոցի՝ «École de Paris»-ի մեջ և ակտիվ գործունեություն էին ծավալում՝ հետկուբիստական մետաֆիզիկական, աբստրակտ, սյուրռեալ, գեոմետրիկ աբստրակցիայի ոլորտներում և անգամ՝ գրանցում աննախադեպ հաջողություններ: Այսպես՝ Թությունջյանը 1930 թ. Թեո ֆոն Դուռգելուրգի, Ժան Դելիոնի և Օտտո Կառլսոնի հետ հիմնել է «Art Concret» (Կոնկրետ արվեստ) խմբավորումը, Երվանդ Զոչարը՝ տարածակարի եռաչափ գեղարվեստական երևույթը: Այս վերելքը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմն էր: Հետագայում՝ 1940-1960-ական թթ., հետպատերազմյան՝ թե՛ պարտված, թե՛ հաղթանակած երկրներում հասարակությունը կանգնեց նոր՝ տնտեսական և ստեղծագործական ճգնաժամի առջև. ի՞նչ պատկերել և ինչպե՞ս պատկերել ողբերգությունից հետո: Ահա այս իրականության մեջ՝ պատերազմների մասնակից երկրներում էին ապրում և իրադարձությունների հետևանքները կրում, արվեստում գեղագիտական տրանսֆորմացիաների՝ տարբեր «-իզմերի» մասնակից էին դառնում նաև օտարության մեջ հայտնված հայ արվեստագետները:

Հայերի՝ օտար երկրներում հաստատվելու պատճառները տարբեր էին՝ հայրենիքի բռնազավթում, վերաբնակեցումներ, 1910-1920-ական թթ. Թուրքիայում հայաջինջ քաղաքականության հետևանքով արտերկրի հայ գաղթականների թվի մեխանիկական համալրում (Դավաքյան 10-11): Արևմտահայությունն այսկերպ հաստատվել է Մերձավոր Արևելքում, Եվրոպական տարբեր երկրներում, Իրանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում և այլն: Ֆրանսիական ազդեցության գոտում հայտնված Սիրիայից, Լիբանանից՝ ավելի ուշ՝ 1970-ականներին հրահրված քաղաքական պատերազմների ֆոնին հայերի արտահոսք է սկսվել դեպի Ֆրանսիա և ԱՄՆ: Այսօր էլ սփռուքահայ արվեստի խոշոր կենտրոններ են Ֆրանսիան և ԱՄՆ: Ֆրանսիահայ արվեստը շարունակում է զարգանալ և հայությանն ու եվրոպային տալ նորանոր տաղանդաշատ նկարիչներ: Հայերը ներդաշնակորեն ընդգրկվել են իրենց նոր բնակավայրերի հասարակական և մշակութային կյանքում: Միաժամանակ նորաստեղծ Խորհրդային Հայաստանում շրջանառության մեջ են մտնում «գաղթօջախ», «սփյուռք» հասկացությունները, դա, կարծես, արհեստականորեն տարաբաժանում է հայ հասարակությունը և մշակույթը: Այսօր արդեն նոր գնահատականի և վերլուծության է ենթարկվում տարբեր երկրներում և հասարակարգերում հայազգի արվեստագետների՝ համազգային և համամարդկային նշանակության գործունեությունը:

Արևելքում և Արևմուտքում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական տարբեր իրավիճակների ու աշխարհայացքների բազմազանության պայմաններում ձևավորված հայկական գաղթօջախների արվեստը զանազան որակական մակարդակներում է գտնվել: «Սփյուռքահայ շատ արվեստագետներին հասկանալու համար ավելի հեշտ է նրանց համեմատել նույնատիպ ուղղության, ոլորտի, հոսանքի ու խմբի այլազգի արվեստագետների, քան հայրենիքի կամ սփյուռքի որևէ հայ արվեստագետի հետ» (Աղասյան և ուրիշներ 545):

Հայ օֆորտիստների արվեստի դրսևորումները արտերկրում՝ 1930-1960-ական թթ. Օննիկ Ավետիսյան, Ժիրայր Օրադյան

Եղեռն վերապրած հայ նկարիչները, կարծես, առերես փորձում էին մոռացության տալ սարսափելի իրականությունը, որի վկան էին եղել իրենք և իրենց նախնիները՝ նախորդ դարի սկզբում: Սա հոգեբանական տրավմայի մերժման և


աստիճանաբար ընդունման փուլ էր, որ անցնում էին գրեթե բոլոր տարագիրները: Վերապրումները Սարգիս Խաչատուրյանի, Պետրոս Կոստրաջյանի, Հակոբ Հակոբյանի արվեստում ժամանակ առ ժամանակ արտահայտվել են անուղղակի վկայագրության նման, ավելի ուշ բուն դրամատիկ տեսարանները հայտնվել են Մելքոն Բեպապչյանի, Գառզուի, Ժանսեմի, Պոլ Կիրակոսյանի և այլոց գործերում: Նրանց ստեղծագործությունը որքան տարբեր, նույնքան ընդհանուր գծերով է օժտված: Դա օտարին անհասկանալի համագգային ցավն է, որն այս կամ այն կերպ արտահայտվում էր արվեստում ու իր բնույթով որոշ դեպքերում համընկնում համաշխարհային արվեստում տիրող հոգեբանական տրամադրություններին:

Հայրենակիցների ճակատագիրն էր կիսում Բուրսայից Ստամբուլ տեղափոխված Օննիկ Ավետիսյանը (1898-1974)՝ Կոստանդնուպոլիսում հայտնի գեղանկարիչ Սերոբ Զյուրբյանի (1972-1924) աշակերտը: Երիտասարդ նկարիչը 1921-1925 թթ. մասնագիտական կրթություն է ստացել Վիեննայի գրաֆիկայի և փորագրության դպրոցում (այսօր Վիեննայի գրաֆիկայի բարձրագույն դաշնային ուսուցման հետազոտական ինստիտուտ HGBLUVA): 1920-ից հաստատության տնօրենն էր Եվրոպայում հայտնի օֆորտիստ և էքսիբերիսի արքա համարվող Ալֆրեդ Կոսսմանը (1870-1951), ում մոտ էլ Օննիկը հմտացել է մետաղի փորագրության՝ օֆորտի տեխնիկայի բնագավառում (Brin 1): Այնուհետև 1927-1929 թթ. կատարելագործվել է Հռոմի գեղարվեստի ակադեմիայում՝ Ումբերտո Կարմալոյի մոտ: Ավետիսյանը զբաղվել է նախ օֆորտով, ավելի ուշ՝ գեղանկարով և քանդակով (Kürkman 191): Եգիպտոսի Կահիրե քաղաքում 1932-ին կազմակերպված առաջին անհատական ցուցահանդեսում ներկայացվել են նրա 40 օֆորտները: Նկատենք, որ եթե Ավետիսյանի գեղանկարներին բնորոշ են մոնումենտալ հնչողությունը, ֆովիստական գունային և ընդհանրացված ձևերի կիրառումը, ապա օֆորտում իշխում է ակադեմիական կանոնիկ ձևամտածողությամբ ռեալիստական մոտեցումը: Կրելով ակադեմիայի և ավստրիացի ուսուցչի ազդեցությունը՝ նկարիչն աստիճանաբար ձևավորում է սեփական ձեռագիրը: Եթե Կոսսմանի փոքրադիր օֆորտներում մշտապես առկա են անտիկ ճարտարապետական դետալներ, իդեալականացված, էլեգանտ հերոսներ, դիսամիզմ ու հանդիսավորություն, ապա հայ վարպետի օֆորտներում գերիշխում են առօրյա անցուղարձով լի, ծուռուժուռ փողոցների պատկերներով արևելյան քաղաքային տեսարաններ: Օֆորտները նկարչի՝ Իտալիա, Սիրիա, Լիբանան և Եգիպտոս ճանապարհորդությունների տպավորություններից ծնված ուշագրավ պատկերներ են: Փորագրության տեխնիկայով արված այս թերթերին բնորոշ են լուսաստվերի մեղմ անցումները, դանդաղահոս՝ գրեթե ստատիկայի հասնող շարժումը: Այստեղ արևելյան հագուկապով մարդկային հատուկենտ կերպարները երկրորդական բնույթ են կրում, Կահիրեի, Հալեպի նեղիկ փողոցներում և շուկաների խարխուլ կրպակների՝ երկարող ստվերների ներքո մուգ, ակնթարթային հետքեր հիշեցնում: Այս շարքի լավագույն գործերից են՝ «Նահասիկի փողոցը» (թուղթ, օֆորտ, 16,5 x 22 / 24,7 x 33,5, **Նկ. 1**), «Քենեսերիմի դարպասը» (թուղթ, օֆորտ, 17 x 13 / 32,5 x 25) (երկուսն էլ ՀԱՊ) և այլն: Օֆորտի տեխնիկան նկարչին հնարավորություն է տալիս տեսարանները վերարտադրելու վկայագրի հայացքով: Թերթերում գլխավոր դերը ստանձնում է քաղաքն՝ իր գողտրիկ, հնամենի թաղամասերով: Նկարիչը միջավայրը ստեղծում է նրբերանգային խազվածքների մանրամասն մշակումներով և հաղորդում տվյալ վայրին բնորոշ տրամադրություն և արևելքին հատուկ խորհրդավորության զգացողություն, օրինակ՝ «Մամելուկների փողոց. Հելիոպոլիս» (թուղթ, օֆորտ, 21,3 x 16,5 / 33 x 24,5), «Քանդված դամբարան. Կահիրե» (թուղթ, օֆորտ, 22 x 25,5 / 31,2 x 41,5) (երկուսն էլ ՀԱՊ): Հեղինակի աշխատանքների մեծ մասն այսօր ընտանիքի սեփականությունն է, մի մասն էլ պահպանվում է Կահիրեի, Հալեպի, Հայաստանի թանգարաններում, մասնավոր հավաքածուներում:

ՕՆՆԻԿ ԱՎԵՏԻՍԻԱՆԸ 1925, 1937 թթ. Հռոմ ճանապարհորդելու ժամանակ հանդիպել է իր սերնդակից, իտալահայ տաղանդավոր նկարիչ Ժիրայր (Ժերարդո) Օրագյանին (1901-1961), ում արվեստին հետազայում անդրադարձել է իր «Peintres et Sculpteurs Arméniens» հայտնի աշխատության մեջ: Այս գրքում ՕՆՆԻԿԸ ներկայացնում է Օրագյանի կյանքը, նրա տարբեր տարիների՝ մասնագիտական ակնառու և մեծ ձեռքբերումները, և գրաֆիկական աշխատանքներում արձանավոր թեմաների արդիականությունը (Avedissian 298-303):



Օրագյանի հայրը բժիշկ էր, 1915 թ. Պոլսում ապրիլյան իրադարձությունների զոհ դարձած մտավորականներից մեկը (Չարյան 16-17): 13-ամյա Ժիրայրը դեպքերի վկան էր ու անմիջական վերապրողը, ուստի նրա ամբողջ ստեղծագործական կյանքն իր ներքին տագնապների ու կորստի ցավն է ամփոփում: 1920 թ. Օրագյանը տեղափոխվել է Իտալիա, ուսանել Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում: 1920-ականներին Իտալիայում ճգնաժամային տրամադրությունների ներքո ֆաշիզմն էր հասունանում, այդ հանգամանքը ևս ճնշող ազդեցություն է գործել երկրի մշակութային կյանքի վրա: 1930-ականներին Օրագյանը դասավանդել է Հռոմի «Վիլլա Մեդիչի» գեղարվեստի վարժարանում: Նկարիչը վրձնել է գրեթե նատուրալիզմի հասնող, արհավիրքներով լի իրականությունը՝ «Ջարդ» (1947, փայտ, յուղաներկ, 118 x 114, ԺԱԹ), «Գաղթ» (թուղթ, տուշ, 49 x 37, ՀԱՊ): Անկումային տրամադրությամբ, միայնակ մարդու թեմատիկայով Օրագյանի արվեստը հարում էր իտալական նեոռեալիզմի «Fronte Nuovo delle Arti»-ի («Նոր արվեստի ճակատ») ֆիգուրատիվ ճյուղի ներկայացուցիչներին՝ Ռենատո Գուտուզո, Էնիո Մուրլոտտի, Վեդովա Էմիլիո և այլք: 1946-1955 թթ. «Fronte Nuovo delle Arti»-ի խումբը ստորագրել է «Մանիֆեստո ռեալիզմի մասին» (Лозинская 1) որի համար ներշնչանքի աղբյուր էր Պաբլո Պիկասոյի հակապատերազմյան «Գեռնիկան»: Պիկասոյի արվեստը հոգեհարազատ էր հայազգի նկարչին, և նրա «Ջարդը» հաճախ են համեմատում «Գեռնիկայի» հետ: Օրագյանի կրկեսային և արտիստիկ միջավայրը ներկայացնող ջրաներկերի՝ «Կրկեսում» (թուղթ, գուաշ, 49 x 37), «Ծաղրածուներ» (ստվարաթուղթ, գուաշ, 49 x 37) (երկուսն էլ՝ ՀԱՊ) և այլ գործերի զուգահեռներ կարելի է տեսնել իսպանացու վարդագույն և նեոակադեմիական շրջանի արվեստում: Հայկական կերպարվեստի զարգացման տեսանկյունից բացառիկ են Օրագյանի նյութերը: Մերկ և ջղաձգված «մարմնի լեզվի» արտահայտչամիջոցներով թե՛ գեղանկար և թե՛ գրաֆիկական աշխատանքները հեռավոր ասիմետրիկ զուգահեռներ ունեն նաև ավստրիացի Էքսպրեսիոնիստ Էդու Շիլլեի հետ: Այս ժանրի յուրահատուկ ստեղծագործություններից են մետաֆիզիկական միջավայրում պատկերված «Կոմպոզիցիա կարմիր ֆիգուրներով» (կտավ, յուղաներկ, 65 x 47), «Կոմպոզիցիա. հինգ ֆիգուրներ» (1934, կտավ, յուղաներկ, 109 x 55)



գեղանկարներն (բոլորը ՀԱՊ) ու ՀԱՊ հավաքածուի միակ օֆորտը՝ «Կոմպոզիցիա» (1934, թուղթ, օֆորտ, 24,5 x 20 / 35 x 24, **Նկ. 2**): Գրաֆիկական թերթը հորինվածքային և էմոցիոնալ արտահայտչականության առումով չափազանց նոր հնչողություն ունի: Նկարչի ձևաստեղծ, ազատ գիծը տեսարանի որոշ հատվածներում վեր է ածվել մանր շտրիխների հոծ զանգվածի, որի արդյունքում հորինվածքը ստացել է երանգային, արտահայտիչ, էքսպրեսիվ շեշտադրություն: Եռաֆիգուր կոմպոզիցիայի ետին խորքը կազմված է գալարուն գծի՝ լեռնաշղթա հիշեցնող պարզ պատկերից: Լակոնիկ գծապատկերը հեղինակի կորուսյալ հայրենիքի՝ երևակայական ու իրական պատկերն է՝ մետաֆիզիկական տիրույթում, որտեղ վեր է խոյանում զվարթնոցատիպ տաճարը: Նրա աշխատանքներում հաճախ կարող ենք հանդիպել հայրենիքի կարոտի և միայնության զգացումից ծնված հայկական ճարտարապետության սիմվոլիկ պատկերներ, գրկախառնված կերպարներ «Կոմպոզիցիա» (թուղթ, ջրաներկ, 25,3 x 37), «Կոմպոզիցիա» (թուղթ, սանգինա, գնդիկավոր գրիչ, 55 x 34,5), «Կոմպոզիցիա. Ընտանիք» (թուղթ, տուշ, գնդիկավոր գրիչ, 55 x 37,5): Աշխատանքների առաջին պլանում զանգվածեղ մերկ ֆիգուրներն են՝ ձեռքերը տարածած, փարվելու պատրաստ, հանդիման քայքայով: Դեֆորմացած ֆիգուրները պլաստիկնե գրոտեսկների են նման: Նեոպրիմիտիվիստական լուծումներով կոմպոզիցիան եվրոպական մոդեռնիզմի լավագույն օրինակներից է, որտեղ փշրվում են մարդկային մարմնի՝ կատարելության մասին պատկերացումները, ավելի խոսուն է ժեստը, արտահայտիչ և չափազանցեցված՝ միմիկան:

Ցավոք, Օրագյանի ստեղծագործական ժառանգության մեծ մասը՝ այդ թվում նաև օֆորտները, մնացել են Իտալիայում՝ մասնավոր հավաքածուներում, և այդ գործերն այսօր հասանելի չեն:

Օրագյանի կյանքը Հռոմում միայնակ էր ու ներամիտ, իսկ ստեղծած արվեստը, ըստ հեղինակի, ազգային թախիծով լի: (*Հայ արվեստագետներ Իտալիոյ մեջ. Հուլիս 7*): Օրագյանը իր կյանքի օրոք ունեցել է անհատական ցուցահանդեսներ Հռոմում (1947, 1958, 1961): Իսկ 1966 թ. Երևանում կազմակերպվել է նրա հետմահու ցուցահանդեսը, և միլանահայության համայնքի ղեկավար Երվանդ Հյուսիսիյանի ջանքերով նկարչի աշխատանքների մի մասը՝ շուրջ 100 ստեղծագործություններ, նվիրաբերվել են Հայաստանի պետական պատկերասրահին (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ):

Գառզուկի և Ժանսենի օֆորտները

Չանգվածային ջարդեր ապրած հասարակությունների և արվեստում դրանց դրսևորումների մասին գրվել են և այսօր էլ գրվում են տարաբնույթ ուսումնասիրություններ: 1915 թ. Վիեննայում Չիզմունդ Ֆրոյդն առաջին անգամ իր գեկույցում խոսել է կյանքի և մահվան, տրավմաների մասին, որն ամփոփվել է 1920 թ. «Jenseits des Lustprinzips» («Հաճույքի սկզբունքից այն կողմ») գրքում¹: Համաշխարհային պատերազմից հետո փիլիսոփաները, հոգեբանները սկսեցին խոսել նաև «կոլեկտիվ տրավմա» հասկացության մասին: Ֆրանսիացի հոգեվերլուծաբան Եվա Վեյլը կոլեկտիվ տրավման հետևյալ կերպ է մեկնաբանում. «Կոլեկտիվ տրավման վերաբերում է հսկայական թվով մարդկանց, սակայն նրանցից յուրաքանչյուրը յուրովի է վերապրում այն՝ սեփական փորձի և պաշտպանական մեխանիզմներից, հարմարվելու և աշխարհաճանաչողության հնարավորություններից ելնելով»: (Психоанализ и психоаналитическая психотерапия 1): Այս վերլուծությունը հոյդոքստից հետո է գրվել, բայց, ըստ էության, վերաբերում է նաև ավելի վաղ դրամա ապրած հայերին: Նրանք մշտապես կրում են եղեռն վերապրածի, հանցավորի կողմից

¹ Տե՛ս ավելի մանրամասն Զիգմунդ, Ֆրեյդ, По ту сторону принципа удовольствия, Москва, 1925:

մեղքի հերքման խորը հոգեբանական ցավը, որն իր արտահայտությունն էր գտնում նաև վերապրածների ստեղծագործություններում: Գերմանացի սոցիոլոգ, փիլիսոփա, երաժշտագետ Թեոդոր Ադորնոն Օսվենցեմի դեպքերից հետո գտնում էր, որ բարբարոսություն է պոգոհայով զբաղվել, կամ, առհասարակ, ապրել և ստեղծագործել (Adorno 323): Եվ Երկրորդ աշխարհամարտից հետո եվրոպական հասարակությունը կանգնած էր ստեղծագործական ճգնաժամի առջև: Կորուստներն անդամնայի էին թվում, իսկ ապրելն ու առավել ևս՝ արարելը՝ մեղք և անիմաստ: Ֆրանսիական նեոռեալիստներից և վերացական արվեստի հետևորդներից յուրաքանչյուրը յուրովի փորձում էր փակուղուց դուրս գալու ելքեր գտնել: Հայերը շարունակում էին ապրել և ստեղծագործել Ղեր Զորից հետո, Տրապիզոնից հետո, հայրենիքի կորստից հետո, Եվրոպայում համաշխարհային աղետները տեսնելուց հետո:

Այսօր արդեն մեծ հռչակ վայելող անվանի արվեստագետ Գառզուն՝ Գառնիկ Զուլումյանը (1907-2000) ևս եղեռն վերապրած սերնդի նկարիչներից է: Ֆրանսիական և միջազգային բազմաթիվ մրցանակների արժանացած¹ գծի և գույնի անզուգական վարպետի գործերը ներծծված են հումանիզմի շնչով: Նա ծնունդով Հայկաից էր, թուրքական վայրագություններից տարագիր հայերի՝ Հայեպում մահապատիժների ականատես (Զեյսեյան 15): Հետագայում տեղափոխվել է Եգիպտոս, այնուհետև՝ Փարիզ, ուր 1910-20-ականներից ձևավորվել էր Փարիզյան գեղարվեստական դպրոցը (École de Paris): Այն ընդգրկում էր արվեստագետների՝ աշխարհի տարբեր երկրներից՝ ռուսներ, հրեաներ, իսպանացիներ, հոլանդացիներ, իտալացիներ և անգամ՝ ճապոնացիներ (Герман 186-239): Այս գործընթացը ընդհատվել է 1939-ին և վերսկսվել՝ Երկրորդ աշխարհամարտից հետո: Փարիզյան դպրոցի հետպատերազմյան արվեստագետների խմբին են դասվում նաև բախտակից նկարիչներ Գառզուն և Ժանսեմը՝ Հովհաննես (Ժան) Սեմերջյանը (1920-2013), որոնք սերտորեն կապված էին ազգային արմատներին: Նրանք ակտիվորեն մասնակցել են ինչպես Փարիզի «Անկախների», «Աշխատային» սալոններին, այնպես էլ հայկական «Անի», «Հայ ազատ արվեստագետների» միությունների ցուցահանդեսներին (Խաչատրյան 6): 1929 թ. Գառզուն ստացել է ճարտարապետական կրթություն, զուգահեռաբար սովորել Մոնպառնասի Գրան Շոմիեր ակադեմիայում: Ակադեմիան վճռական դեր է ունեցել Գառզունի կյանքում, նպաստել՝ նրա ստեղծագործական ինքնատիպ ձեռագրի ձևավորմանը: Նա սկսել է արքայապետական արվեստից, ներկայացել է նաև Փարիզի «Գերանկախների» սալոնում, բայց աստիճանաբար բյուրեղանալով՝ նրա արվեստը վերադարձել է ֆիգուրատիվ՝ իրեն բնորոշ երազային ու կախարդական աշխարհը՝ ստեղծելով «Ապոկալիպսիս», «Երկրային դրախտ», «Պրովանս», «Ամառային լույս» վիմագրական շարքերը: Գառզուն միավորում է ավանդական ու նորը, նրա Վենետիկյան քաղաքային «մետաղահյուս» տեսարանները («Վենետիկի կառավարական շենքը» 1962 թ., «Մեծ ջրանցք. Վենետիկ» 1967 թ. բոլորը պահվում են մասնավոր հավաքածուներում) հիշեցնում են Ջովաննի Անտոնիո Կանալետտոյին, իսկ Նյույորքյան երկնաքերներով փողոցները, Փարիզի Սենայի՝ առանց մարդկային կերպարների բնապատկերները՝ Բերնար Բյուֆեի բնանկարները:

Գառզունի արվեստը սնվում է բնությունից, բայց նկարիչը դեմ էր բնության ուղղակի վերարտադրությանը: Ֆանտաստիկ բուսականությամբ տեսարանները բնապաշտի ընդվզումն պատասխանն է տեխնոլոգիական առաջընթացի վնասակար ազդեցությանը: Սյուրռեալ միջավայրում հաճախ հանդիպող՝ կենաց ակունք հիշեցնող ծաղկող կանանց մերկ ֆիգուրները կյանքի հարատևության, կնոջ նախընտրելի կերպարներն են, որոնք գարգուլական էսթետիկական լեզվով հաղորդում են

¹ Նյու Յորքում 3 անգամ արժանացել է «Հովմարի» միջազգային մրցանակի (1943, 1951, 1953 թթ.), 1954 թ. «Իլ-դը Ֆրանս» մրցանակի, 1956 թ. շնորհվել է Ֆրանսիայի «Պատվո լեգիոն» շքանշան, 1958-ին Արվեստի և գրականության ասպետի կոչում, 1978 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաքինի կողմից պարգևատրվել է «Գրիգոր լուսավորիչ» շքանշանով:

գեղեցկության փրկակար ուժի մասին: Ժամանակի քննադատները նրան բնորոշում էին որպես սյուրռեալիստի և միգրաբլիստի: Չուլույանի ֆանտասմագորիկ գեղանկարները, ինչպես և օֆորտները, առերես այս ուղղությունների հատկանիշներն են կրում, սակայն, սյուրռեալիզմի ենթագիտակցական, ավտոմատ պատկերմանը հակառակ, հիմքում իրական խնդիրներն են, իր օրերի դրամատիկ իրադարձությունների արձագանքները: 1940-50-ականների Եվրոպայի փորձում էր վերականգնել տնտեսական կյանքը՝ անտեսելով բնապահպանական խնդիրները, դա հղի էր աղետաբեր հետևանքներով: Այս մասին առաջիններից մեկն իր աշխատանքներում ահագնացում է Գառզուն: Հեղինակի «Կաթողիկե» (1957, կտավ, յուղաներկ, 97 x 129,8, ՀԱՊ) և այլ բնանկարներում հաճախ բացակայում է կառույցի իրական պատկերը, և հորինվածքներն գործարանային հագարավոր մետաղալարերից ու խողովակներից հյուսված կոնստրուկցիաներ են, դրանք տեխնածին տագնապի մթնոլորտ են ստեղծում:

Հստակ և ստատիկ գիծը մշտապես գերիշխող է նրա աշխատանքներում: Գառզուն աշխատել է գրաֆիկայի տարբեր տեխնիկաներով՝ մատիտ, պաստել, մելան, գուլափոր վիմագրություն և, իհարկե, օֆորտ. «Ես նախ գծագրություն կը մտածեմ» (Զեուսեան 70): Վիմագրությամբ և փորագրությամբ՝ մասնավորապես օֆորտով, սկսել է զբաղվել 1950-ականներից:

Նկարիչը կատարել է նաև գրքի նկարազարդումներ, մասնավորապես՝ Ա. Վերդեի «Գերված սիրտ և դառը սերը» 1965 թ. (5 օֆորտ) և Արթուր Ռեմբոյի «Լուսախաղ» ժողովածուները: Արձակ և չափածո էջերը նկարիչը նկարազարդել է իր ֆանտաստիկ ասեղնագործ հորինվածքներով՝ այսպես թեթևացնելով և նոր շունչ հաղորդելով գրական ստեղծագործությանը: Գուլափոր վիմագրության տեխնիկայով են կատարված Էռնեստ Յեմինգուեյի, Ալբերտ Զամյուի, Էդգար Պոյի և այլ հայտնի գրողների գրքերը: 1975 թ. Փարիզի խոշորագույն ցուցասրահներից մեկում բացվել է Գառզունի վիմագրությունների և օֆորտների «Նոր հայացք» ծավալուն ցուցահանդեսը, որն արժանացել է մեծ ընդունելության:

1960-ականներից արևմտյան արվեստը՝ ի դեմս Բ. Բյուֆեի, Ռ. Գուտտուզոյի, Ա. Ֆուլժերոնի և սփյուռքահայ նկարիչ-քանդակագործների, մուտք է գործել ԽՍՀՄ և Հայաստան¹: Ֆրանսիացի այս արվեստագետների աշխատանքները ընդունելի էին այստեղ, որովհետև ֆիգուրատիվ, սոցիալական բնույթ էին կրում, և հեղինակներն էլ գաղափարական համակրանք ունեին կոմունիզմի հանդեպ: Գառզուն, ժանսեմին և սփյուռքահայ այլ արվեստագետներին Միության հետ կապում էր խորհրդայնացված հայրենիքը, որի հետ կապերն աշխուժացել էին «խրուշչովյան ձևալից» հետո: 1966 թ. Գառզուն առաջին անգամ ժամանել է Հայաստան, Նկարչի տանն ունեցել գրաֆիկական աշխատանքների ցուցահանդես, ներկայացրել նաև այն 6 օֆորտները, որոնք հեղինակը 300-ից ավել այլ աշխատանքների հետ նվիրել է Հայաստանի պետական պատկերասրահին (ՀԱՊ): Դրանցից է վաղ շրջանի «Հրետանի» (1956, 35 x 27 / 61,5 x 49,5, ՀԱՊ) օֆորտը, որն ունի նաև գեղանկար տարբերակները՝ «Թնդանոթը նավամատուցում» (1951, մասնավոր հավաքածու), «Հրանոթը նավահանգստում» (1957, ՀԱՊ): Աշխատանքը հակապատերազմյան թեմայով արված օֆորտային թերթ է՝ գծային քառսից ծնվող մարդագուրկ բնություն, մի քանի շտրիխով ձևավորված երկինք, դեպի ուր ուղղված է մահաբեր հրանոթի փողը: Այս լակոնիկ հորինվածքը մեծ աղետի նկատմամբ մարդկային անտարբերության դեմ ահագնազ է, հետպատերմազյան ունայնության պատկեր, որի առջև հայտնվել է բնությունից հեռացող մարդը:

¹ Այս հեղինակներն իրենց գործերից նվիրեն են խորհրդային միության թանգարաններին, Բեռլին Բյուֆեի այրին ամուսնու մեկ գեղանկար էլ նվիրել է Հայաստանի ազգային պատկերասրահին:

Գառզուն իր նկարաշարերում հաճախ է կիրառում ճարտարապետական դետալներ, որոնք տեսարանին գծային հեռանկարչական անթերի խորություն և պատրանքի տպավորություն են հաղորդում: Նման գործերում հստակ գծագրվում է ճարտարապետի կոնստրուկտիվ ձևամտածողությունը: Կատարողական տեխնիկայի առումով ակնառու են հատկապես «Երազների քարափը» (1963, թուղթ, օֆորտ, 39 x 51 / 50 x 66, ՀԱՊ, ՆԼ. 3), «Երազների ծովածոցը» (1963, թուղթ, գունավոր օֆորտ, 37,5 x 54 / 50 x 66, ՀԱՊ) փորագրությունները: Առաջին աշխատանքի ետին պլանում իրական և երևակայական դետալներ պարունակող բնանկար է՝ կետագծերով ձևավորված ջրային տարածքով, հորիզոնի գծին զուգահեռ լեռնաշղթայով, մետաղակուռ առագաստանավ: Սա գարգուլական երևակայական և մարդաստեղծ իրական առարկայականներով բնակեցրած աշխարհն է: Առաջին պլանում բյուրեղապակյա խորհրդավոր դյակի մոտ գտնվող կնոջ միստիկ կերպարն է՝



սարդոստայն հիշեցնող, հյուսածո զգեստով, սիմվոլիկ վարդով և դեպի նավը ուղղված հրաժեշտի ժեստով: Նրբագեղ գծերից հյուսված փխրուն աշխարհների միջև գոթական ճարտարապետությունը հիշեցնող դարպասն է: «Երազների ծովածոցը» ևս մեկ կիսաֆանտաստիկ տեսարան է, որտեղ մարդկային գծապատկերները միաձուլվում են խիտ շտրիխներից հյուսված բնությամբ: Ի տարբերություն նախորդ աշխատանքի ստատիկ հնչողությամբ՝ այստեղ գծի դինամիկան է գերիշխում, ասպետական կերպարների աշխույժ շարժը:

Գեղանկարների մոգական հերոսուհիները սահուն անցում են կատարել նաև օֆորտներ՝ 1965 «Չույզը» (29 x 21 / 43 x 31,5), «Կիսադեմ ծաղկեփնջով» (42,5 x 59 / 57 x 72,3), «Կինը» (40,5 x 60 / 57,5 x 75,5) և այլն: Այստեղ ճառագայթավոր գիծը կենսատու երանգ է ստանում լույսի աղբյուր: Գլխավոր կերպարը կինն է՝ սֆինքսային, միստիկական, մոնումենտալ կիսադեմից մինչև երկփեղկվող մերկ եղություն ու խորհրդավոր կամերային միջավայրում արքայադուստր-կախարդուհու կերպարանք ընդունած առեղծվածային էակ: Գարզուի արվեստը չափազանց ընգրկուն է, մտորելու տեղիք տվող և համամարդկային խնդիրներ պարունակող:

Ֆրանսահայ Յովհաննես (Ժան) Սեմերջյանը՝ Ժանսեմը, ևս համաշխարհային ճանաչում ունի և առանձնահատուկ գրաֆիկական ձեռագիր, որին հավատարիմ էր ողջ կյանքի ընթացքում: Ի տարբերություն Գառզուի հստակ ճարտարապետական գծի՝ այստեղ գերիշխում է մազանոթներ ու նյարդաթելեր հիշեցնող դողացող ուրվագիծը, որը կերտում է միջավայր, կերպար և մեխանիկիկ տրամադրություն:

Ժանսեմը ծնունդով Արևմտյան Հայաստանի Սելեզ քաղաքից է, 1922-ին ընտանիքը գաղթել է Հունաստան, 1931-ին՝ Ֆրանսիա: Ապագա նկարիչն այստեղ էլ հանդիպել է իր առաջին ուսուցչին՝ գեղանկարիչ Արմիսին՝ Արմենակ Միսիրյանին: Արվեստը փրկարար օղակ էր տղայի համար, որոշիչ՝ մասնագիտության ընտրության հարցում: 1936 թ. ավարտել է Մոնպառնասի ազատ արվեստանոցները, 1939-ին՝ Փարիզի դեկորատիվ արվեստի բարձրագույն դպրոցը: Ինքնամիտ, միայնակ մարդու ներաշխարհը, կենցաղը, դժվարություններն ու խնդիրները նրա ստեղծագործության հիմքն են: Սյուժետային, ժանրաթեմատիկ նախասիրություններով Ժանսեմը տիպիկ միգրեաբլիստ է, ում համար աշխարհում չկա հավասարություն և ճշմարտություն. դա իրականում նաև ազգային գենետիկ ցավի զգացողությունից է ծնվել: 1940-1960-ականներին Ֆրանսիայում ձևավորված այս ուղղությունը (Бункевич 386)

հետպատերազմյան իրականության թշվառ մարդու անկումային տրամադրությունն էր արտահայտում:

1940-ականներին եվրոպական շատ երկրներում փակ էին թանգարանները, սկսնակ նկարիչները չունեին հնարավորություն առերեսվելու դասական արվեստի հետ, ցուցահանդեսները հազվադեպ էին, ժամանակակիցներից շատերը միմյանց չէին ճանաչում, բայց բնագոյաբար Նույնն էին զգում և գրեթե Նույնը՝ պատկերում (Mazars 6): Ի տարբերություն միգրեթիստների Ֆրանսիս Գրուբերի, Բերնար Բյուֆեի՝ անելանելի միայնություն արտահայտող արվեստի՝ ժանսեմի ստեղծագործություններում ճարահատյալ վիճակում անգամ մարդը շրջապատված է իր նմաններով՝ նեցուկ և օգնության պատրաստ: Նրա օֆորտներում էլ նախընտրելի են պարուհիների, կյու ժանրի, կրկեսային և թատերական թեմատիկ տեսարանները:

Նկարչի ստեղծագործությունների բնօրինակները տեսնելու ու ուսումնասիրելու համար կարևոր է այն, որ Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուում պահպանվում են նրա՝ ավելի քան 490 ստեղծագործությունները, որից 43-ը օֆորտներ են: Վաղ շրջանի կենցաղային ժանրի աշխատանքներից առանձնանում է «Կոլիուրի արվեստանոցը» (թուղթ, օֆորտ, 50 x 66 / 32,6 x 39,3, ՀԱՊ), որն արդեն կանխորոշում է նկարչի հետագա ստեղծագործությունների ոճային առանձնահատկությունները: Սխեմատիկ գծագրությամբ արվեստանոցի ինտերիերում փորագրության տեխնիկայի ընձեռած համեստ հնարավորությունների միջոցով դարչնաճերմակ պատերին նկարչի աշխատանքներն են: Միևնույն ժամանակ, հարթային ձևամտածողությամբ տեսարանը հաղորդակից է արևելիքի՝ ճապոնական գրաֆիկական դպրոցի հարթային և ֆրոնտալ ընկալմանն ու արտահայտչաձևերին:¹ Պարզ գծագրումներով պատուհաններից լուսաօդային ազատ միջավայրում արվեստագետի աշխարհն է՝ ստեղծագործական առարկաներով ու գործիքներով: Նրա ուշադրության կենտրոնում մշտապես մարդն է՝ իր ապրումներով, գործունեության միջավայրով:

Ժանսեմի ուրվագծային դողդողացող հոսքերով կմախքային ֆիգուրների էմոցիոնալ պատկերներ է ստանում նաև իր խորը փորագրություններում: Նման

կերպարանքները արտահայտիչ են հատկապես մուգ, գրեթե սև ու խուլ խորքերի վրա, խոսում են հատկապես միմիկան, ժեստերը՝ «Բնորոշի» (թուղթ, օֆորտ, ակվատինսո, 30,5 x 26,7 / 66 x 50,2), «Պառկած կին» (թուղթ, օֆորտ, ակվատինսո, 34 x 30 / 64,5 x 50), «Ֆլորանս» (1957, թուղթ, օֆորտ, ակվատինսո, 23 x 32 / 45,5 x 54,5) (բոլորը ՀԱՊ), վերջիններս նաև



ակվատինսոի ուղեկցությամբ են հարստացած, դա գունեղանգային և էքսպրեսիվ հնչողություն է հաղորդում ստեղծագործություններին: Սեմերջյանի համար պղնձե թիթեղը նմանվում է այն սև էկրանին, որի վրա իր թրթռացող եզրագծերով հյուսվում է վտիտ ու դատապարտված անձի պատմությունը՝ «Հիշողություն» (թուղթ, օֆորտ, 39 x 32,5 / 64,5 x 50), «Ռիկյա (Բնորոշի)» (թուղթ, օֆորտ, 12,8 x 18 / 28,5 x 38): Այս կերպարները՝ եղեռնյան պատմություններից, եվրոպական հետպատերազմյան

¹ Պատահական չէ, որ Ժանսեմի արվեստը հոգեհարազատ դարձավ և մեծ ընդունելության արժանացավ ճապոնիայում, որտեղ նկարիչի արվեստը ներկայացնող 2 պատկերասրահ կա:

իրականությունից ծնված արվարձանային թշվառները՝ միայնակ և թափոռների խմբանկարներով, կուղեկցեն նրան ողջ կյանքում:

Ժանրային և գեղագիտական նոր մեկնաբանությամբ են աչքի ընկնում բիբլիական թեմաներով արված օֆորտները՝ «Սամսոն և Դալիլա» (26,5 x 30,4 / 45 x 55), «Լողացող Սյուզանը» (23,2 x 32,3 / 45 x 54,5), «Հուդիթի և Օլոֆերնի տեսակցությունը» (17,5 x 23,5 / 45 x 54,5) (բոլորը ՀԱՊ) և այլն: Հին- կտակարանային պատկերազրույթունը նորովի է բացահայտվում ժանսեմյան օֆորտների հերոսների մերկ, թափանցիկ, դեֆորմացած, նյարդային կծիկ հիշեցնող կերպարային մեկնաբանմամբ: «Աբրահամը. Սառան և Ագարը» (թուղթ, օֆորտ, 23 x 32,5 / 45 x 54,5, ՀԱՊ, **Նկ 4, 5**) երկնկարը սյուժեի դետալային ու խորը հոգեբանական ենթատեքստով է ներկայանում: Այս եռյակին ժանսեմը նախ պատկերում է հարուստ հանդերձանքով. գահերին բազմած Աբրահամի և Սառայի առջև հղի Ագարն է՝ մեղսավորի կերպարանքով: Հաջորդ տեսարանում նույն կերպարները մորեմերկ տեսքով են՝ հեռացող Ագարի և նրա որդու հրաժեշտի պահին: Սա սիմվոլիկ ժեստ է, որով ժանսեմը հերոսների մեղքի բաժինը կարծես նույնասման մերկ «հանդերձանքով» հավասարեցնում է: Հաճախ նկարիչը լուսաստվերի հակադրություններով, ակվատինտայի ֆակտուրային ու տոնային փոփոխություններով վառ ու արտահայտիչ պլաստիկական տպավորության է հասնում, որոնցից են՝ «Հուդիթի և Օլոֆերնի տեսակցությունը» (թուղթ, 17,5 x 23,5 / 45 x 54,5), «Պարզամիտը (Job)» (թուղթ, 26,5 x 30 / 45 x 54), «Թոբիի հրաժեշտը» (թուղթ, 23 x 32,3 / 45 x 55), «Լոթի փախուստը» (թուղթ, 22,8 x 31,8 / 44,5 x 54,5) օֆորտները (բոլորը ՀԱՊ):

Ֆրանսիայի հարավ, Իսպանիա, Իտալիա ճանապարհորդությունների արդյունքում ծնված արտիստիկ հերոսների՝ դիսամիկ և դիմակավորված բազմաֆիգուր հորինվածքներով օֆորտները հարստացրել են նրա ստեղծագործությունը: Դրանք ճերմակ թերթի անսահմանության և անժամանակ տարածության պատրանքի վերածած դատարկ մակերեսը լցնում են դեկորատիվ



ձևավորումներով, բեմական ներկայացումների հնամենի դրվագներով՝ «Բիզո» (թուղթ, օֆորտ, ակվատինտ, 23 x 32), «Դիմակներ» (թուղթ, օֆորտ, 23,5 x 33,5), «Շղարշավոր կանայք և պաժը» (թուղթ, օֆորտ, 32,5 x 23,3 / 56 x 44,5), «Այծքաղի պարը» (թուղթ, օֆորտ, 33 x 28) (բոլորը ՀԱՊ): Պատկերների՝ խորհրդավոր ու ներքին լարումով լի մթնոլորտը հիշեցնում են Ֆրանցիսկո Գոյայի և, անգամ, Հիերոնիմոս Բոսխի միստիկ արվեստը: «Առլեկինը և Պարուհին» (թուղթ, օֆորտ, 32,5 x 23,3), «Աղջնակը թռչնի հետ» (թուղթ, օֆորտ, 38 x 28,5 / 20 x 14,8),

«Փոքրիկ պարուհին և ծերունին» (թուղթ, օֆորտ, 40,5 x 49,8 / 65,4 x 50) կրկեսային խելված ճակատագրերի, միմյանց նկատմամբ կարեկցանքի զգացումով լցված դերասանների իրական դիմապատկերներն են՝ ժանսեմյան թրթռացող ուրվագծերով հյուսված: Արդի հնչողություն ունեն «Տոն. Նոկտյուրն» (27 x 30,5), «Կաբարե» (26,8 x 30,8 / 50,3 x 66) (բոլոր վերոհիշյալ աշխատանքները գտվում են ՀԱՊ) օֆորտները, որտեղ ժամանակակից գիշերային կյանքն է՝ հակասական ու դիսամիկ, գայթակղիչ մթության մեջ գալարվող կանացի մերկ ու ճկուն ֆիգուրների խոսուն լեզվով:

Ժամսեմը, թողնելով գրաֆիկական աշխատանքների մեծ ժառանգություն, իր կարևոր ավանդն ունի սփյուռքահայ գրաֆիկայի զարգացման գործում:

Եզրահանգումներ

Ամփոփելով կարելի է ասել, որ 20-րդ դարի՝ փորձություններով լի եվրոպական արվեստում՝ տարաբնույթ դրամատիկ իրադարձություններով և նորաստեղծ գեղարվեստական ուղղություններով, հեղինակավոր արվեստագետների բազմազանության մեջ սփյուռքահայ նկարչի համար բավականին դժվար էր ճանաչման արժանանալ, մնալուն խոսք ասել:

• Հայ արվեստում հաստոցային գրաֆիկան և մասնավորապես՝ օֆորտը, ի տարբերություն արվեստի մյուս տեսակների, ավելի քիչ են ուսումնասիրված: Մինչդեռ 20-րդ դարում այդ տեխնիկայով աշխատել և ստեղծագործել են մի շարք հայ արվեստագետներ, ստեղծել բազմաթիվ բարձրարվեստ գործեր: Ուստի՝ օֆորտի տեխնիկայով արված աշխատանքների ուսումնասիրությունների շնորհիվ մենք առավել ամբողջական պատկերացում ենք կազմում ժամանակաշրջանի սփյուռքահայ արվեստագետների գործունեության մասին:

• Ժամսեմը, Գառզուն, Օրազյանը, Ավետիսյանը կարողացան հաղթահարել այդ անջրպետը՝ ինչպես գեղանկարչության, այնպես էլ գրաֆիկայի բնագավառում՝ պահպանելով ազգային դիմագիծը, հասկանալի և հասանելի լինել նաև արևմուտքի քմահաճ արվեստասեր հասարակությանը, դառնալ համամարդկային մշակութային զարկերակի մի մասը:

• Իհարկե, այս հեղինակների արվեստում օֆորտի տեխնիկայով աշխատանքները բացարձակ մեծամասնություն, չեն կազմում, ինչպես՝ Էդգար Շահինի, Տիգրան Փոլադի մոտ, բայց իրենց կառուցողական, թեմատիկ և էմոցիոնալ արտահայտչականությամբ համաքայլ են եվրոպական ավանգարդ զարգացումներին: Շոշափելով ժամանակի հուզող հոգեբանական հարցեր և խնդիրներ՝ նրանք ներդաշնակորեն ընդգրկվել են գրական, գեղարվեստական և թատերական աշխարհ: Օֆորտի նուրբ գծային և խորը հոգեբանական արտահայտչալեզվով պատկերել են արդի թեմաների և հավերժորեն աղմկող հարցերի սեփական տեսլականը:

• Հոդվածում ներկայացված և սփյուռքահայ այլ հեղինակների ստեղծագործական ժառանգության մեծ մասը գտնվում է արտերկրի թանգարաններում և մասնավոր հավաքածուներում, դա հավելյալ դժվարություններ է ստեղծում ուսումնասիրությունների համար: Միաժամանակ 1960-1980-ական թթ. նրանց շնայլ նվիրատվությունների շնորհիվ Հայաստանում հայտնված աշխատանքները թույլ են տալիս հնարավորինս ամբողջական պատկերացում կազմել հայ արվեստի զարգացումների վերաբերյալ:

• Հայաստանի թանգարաններում հանգրվանած սփյուռքահայ արվեստագետների գեղարվեստական ժառանգության նմուշները, այդ թվում նաև օֆորտները, նպաստել են, որ տեղի գրաֆիկ նկարիչները կարողանան ծանոթանալ արևմտյան գեղարվեստական լեզվին, թարմ շունչ հաղորդել այս ոլորտին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադայան Արարատ և ուրիշներ, *Հայ արվեստի պատմություն*. Չանգակ 97, Երևան, 2009, 574 էջ:
2. Դալլաքյան Կարլեն, *Հայ սփյուռքի պատմություն: Համառոտ ակնարկ*. Չանգակ 97, Երևան, 2004, 288 էջ:
3. Չարյան Անահի, Ժիրայր Օրազյան, *Սովետական Հայաստան*, №2, 1984, էջ 16-17:

4. Խաչատրյան Շահեն, *Գառզու. Գառնիկ Չուկումյան 1907-2000*, Երևան, 2017, 140 էջ:
5. Զեօսեան Գրիգոր, *Գառզու Սոգական աշխարհի մը նկարիչ*. Հայկական բարեգործական ընդհանուր միություն ՀԲԸՄ, Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամ, Միջիգան, 1982, 201 էջ:
6. «Հայ արվեստագետներ Խոսվող մեջ». *Հոլափեր*, 21 փետրվարի 1948, էջ 7:
7. Адорно, Теодор. *Негативная диалектика*. Научный мир, Москва, 2003, 374 с.
8. Бункевич, Дарья. «Мизерабилизм во французском искусстве 1940–1960-х годов. К истории происхождения понятия». *Художественная культура*, № 2, 2023, стр. 382-405, doi:10.51678/2226-0072-2023-2-382-405.
9. Герман, Михаил. *Парижская школа*. Азбука, Санкт-Петербург, 2019, 312 с.
10. Звонцов, Василий и Шистко, Владимир. *Офорт*. Искусство, Москва, 1971, 185 с.
11. Лозинская, Рита. «Неореализм». *Архиве*, 24 февраля 2020, https://artchive.ru/encyclopedia/4329-Different_phenomena, Досупно: 14.03.2024.
12. «Психоанализ и психоаналитическая психотерапия». *Национальный исследовательский университет. Высшая школа экономики*, https://www.hse.ru/ma/therapy/psy_community7, Досупно: 06.05.2024.
13. Сидельникова, Анна. «Дегенеративное искусство». *Архиве*, 30 ноября 2018, https://arhive.com/ru/encyclopedia/3736-Degenerate_Art, Досупно: 20.08.2024.
14. Фрейд, Зигмунд. *По ту сторону принципа удовольствия*. Москва, 1925, 569 с.
15. Avedissian, Onnig. *Peintres et Sculpteurs Armenians*. Gaire, 1959, 492 p.
16. Brin, Morik. *Peintres et Sculpteurs de l'Egipte coneproraine*. Egypte, 1937, 98 p.
17. Kürkman, Garo. *Armenian painters in ottoman empire 1600-1923*. Istanbul, 2004, 988 p.
18. Mazars, Pier. *Jansem*. Editions Andre Saurent, Monte Carlo, 1974, 140 p.

WORKS CITED

1. Aghasyan, Ararat ev urishner. Hay arvesti patmut'yun. Zangak 97, Erevan, 2009, 574 e'j: [History of Armenian Art. Zangak 97, Yerevan, 574 p] 2009. (In Armenian)
2. Dallaqyan, Karlen. Hay sp'yur'qi patmut'yun: Hamar'ot aknark. Zangak 97, Erevan, 2004, 288 e'j: [History of the Armenian Diaspora: A brief review. Zangak 97, Yerevan, 288 pages.] 2004. (In Armenian)
3. Zaryan, Anais. «Jhirayr O'ragyan». Sovetakan Hayastan, №2, 1984, e'j 16-17: ["Zhirair Oragyan". "Soviet Armenia", №2, pp. 16-17] 1984. (In Armenian)
4. Xachatryan, Shahen. Gar'zu. Gar'nik Zulumyan 1907-2000. Erevan, 2017, 140 e'j: [Garzu. Garnik Zulumyan 1907-2000. Yerevan, 140 p] 2017. (In Armenian)
5. Qe'o'se'ean, Grigor. Gar'zu Mogakan ashxarhi my' nkarich. Haykakan baregorc'akan y'ndhanur miut'yun HBY'M, Aleq Manukyan mshakut'ayin himnadram, Michigan, 1982, 201 e'j: [Artist of Garzu's Magical World. Armenian General Benevolent Union AGBU, Alec Manukian Cultural Foundation, Michigan, 201 p] 1982. (In Armenian)
6. «Hay arvestagetner Italioy mej». Husaber, 21 p'etrvari 1948, e'j 7: ["Armenian artists in Italy". Husaber, February 21, p 7] 1948. (In Armenian)
7. Adorno, Teodor. Negativnaja dialektika. Nauchnyj mir, Moskva, 2003, 374 s [Negative Dialectics. Scientific World, Moscow, 2003, 374 pp.] 2003. (In Russian)

8. Bunkevich, Dar'ja. «Mizerabilizm vo francuzskom iskusstve 1940–1960-h godov. K istorii proishozhdeniya ponjatija». Hudozhestvennaja kul'tura, № 2, 2023 g., str. 382-545, doi:10.51678/2226-0072-2023-2-382-405. ["Miserabilism in French art of the 1940s–1960s. On the history of the origin of the concept". Artistic Culture, No. 2, 2023, pp. 382-405, doi:10.51678/2226-0072-2023-2-382-405]. (In Russian)
9. German, Mihail. Parizhskaja shkola. Azbuka, Sankt-Peterburg, 2019, 312 s. [Paris School. Azbuka, St. Petersburg, 312 p] 2019. (In Russian)
10. Zvoncov, Vasilij i Vladimir Shistko. Ofort. Iskusstvo, Moskva, 1971, 185 s. [Etching. Art, Moscow, 185 p] 1971. (In Russian)
11. Lozinskaja, Rita. Neorealizm. Artchive, 24 fevralja 2020 g. https://artchive.ru/encyclopedia/4329~Different_phenomena, Dosupno: 14.03.2024. [Neorealism. Artchive, February 24, 2020 https://artchive.ru/encyclopedia/4329~Different_phenomena, Available: 03.14.2024]. (In Russian)
12. «Psihoanaliz i psihoanaliticheskaja psihoterapija». Nacional'nyj issledovatel'skij universitet «Vysshaja shkola jekonomiki», https://www.hse.ru/ma/therapy/psy_community7, Dosupno: 06.05.2024. ["Psychoanalysis and Psychoanalytic Psychotherapy." National Research University Higher School of Economics, https://www.hse.ru/ma/therapy/psy_community7, Available: 05/06/2024]. (In Russian)
13. Sidel'nikova, Anna. «Degenerativnoe iskusstvo». Artchive, 30 nojabrja 2018, https://arthive.com/ru/encyclopedia/3736~Degenerate_Art, Dosupno: 20.08.2024. [Degenerate art. Artchive, November 30, 2018, https://arthive.com/ru/encyclopedia/3736~Degenerate_Art, Available: 08.20.2024]. (In Russian)
14. Frejd, Zigmund. Po tu storonu principa udovol'stvija. Moskva, 1925. [Beyond the Pleasure Principle. Moscow] 1925. (In Russian)

GENRE-THEMICAL INDIVIDUALS OF ETCHINGS BY ARMENIAN DIASPORA ARTISTS IN THE CONTEXT OF SOCIO-POLITICAL EVENTS IN EUROPE OF THE 20TH CENTURY

MISAK HARTENYAN

*State Academy of Fine Arts of Armenia, Ph.D.Student,
Yerevan, the Republic of Armenia*

This article aims to provide a concise yet comprehensive overview of the etching works created by various artists of the Armenian diaspora during the 1930s–1980s. These works were produced under challenging historical and socio-political circumstances in different countries around the world.

The article examines the available etchings of famous French-Armenian artists Garzu, Zhansem, as well as Egyptian-Armenian Onnik Avetisyan, Italian-Armenian Zhirayr Oragyan, who are known to the narrower circles of the art-loving public, and through genre-thematic analyzes of individual works, the features of the artist's work in a given cultural environment and the connection with the aesthetic achievements of that time are shown.

The work is based on studies of artistic, stylistic and etching techniques employed by Armenian Diaspora artists.

As a result of the study, we come to the conclusion that Armenian artists working abroad were closely related to the cultural ferment taking place in the given country and were greatly influenced by the Western, to different directions of modernism. Nevertheless, their art remained deeply intertwined with national issues, as its unique characteristics were closely connected to their cultural roots and notions of identity.

Keywords: *Diaspora Armenian artists, graphics, etching, engraving, colony, cultural environment, world art.*

ЖАНРОВО-ТЕМАТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ОФОРТОВ АРМЯНСКИХ ХУДОЖНИКОВ ДИАСПОРЫ В КОНТЕКСТЕ ОБЩЕСТВЕННО- ПОЛИТИЧЕСКИХ СОБЫТИЙ В ЕВРОПЕ XX ВЕКА

МИСАК АРТЕНЯН

*соискатель Государственной академии художеств Армении,
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – кратко представить полную картину произведений, выполненных в технике офорта ряда художников армянской диаспоры, работавших в 1930-80-е годы XX века в сложных исторических, социально-политических ситуациях в разных странах мира.

В статье рассматриваются как офорты известных франко-армянских художников Гарзу, Жансема, так и известных в более узких кругах художников, египетского армянина Онника Аветисяна, итало-армянского офортиса Жирайра Орагяна; дается анализ жанрово-тематических особенностей отдельных произведений, указываются особенности творчества художника в данной культурной среде и связь с эстетическими достижениями того времени.

Работа проведена на основе изучения художественных, стилистических и офортных техник произведений художников армянской диаспоры.

В результате исследования мы приходим к выводу о том, что армянские художники, работавшие за рубежом, были тесно связаны с культурными процессами, происходившими в данной стране, и находились под сильным влиянием западного, в частности, французского реализма и разных направлений модернизма. Тем не менее, их творчество не было лишено национальной проблематики, поэтому особенности их искусства множеством нитей связано с национальными корнями и представлениями о самобытности.

Ключевые слова: *армянские художники диаспоры, графика, офорт, гравюра, колония, культурная среда, мировое искусство.*



**ՏՐԱՎՄԱՏԻԿ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ
ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿՐԿՆՎՈՂ ՏՐԱՎՄԱՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ***

ՀՏԴ 159. 96

DOI: 10.52063/25792652-2024.4.23-171

ԱՆԻ ԱՎԱԳՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի
ակադեմիկոս Մ. Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի դասախոս,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

avagyanani24@aspu.am

ORCID: [0000-0003-4966-8186](https://orcid.org/0000-0003-4966-8186)

ԱՆՆԱ ԱՌԱԲԵԼՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի
կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի
կիրառական հոգեբանության ամբիոնի դասախոս,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

aragelyananna23@aspu.am

ORCID: [0000-0002-8668-4698](https://orcid.org/0000-0002-8668-4698)

**Հոդվածի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել տրավմատիկ
հիշողությունների հոգեկան վերափոխումների առանձնահատկությունները
կրկնվող տրավմաների դեպքում:**

Խնդիր է դրվում քննարկելու կրկնվող տրավմաների ազդեցությունը
հասարակության հոգեկան առողջության և բարոյահոգեբանական վիճակի
վրա, ներկայացնելու տրավմատիկ հիշողությունների հոգեկան
վերափոխումների բնութագրերը:

Ըստ այդ բնութագրերի՝ վերլուծվել են Արցախյան 44-օրյա պատերազմի
ընթացքում տեղահանվածների հոգեբանական խնդիրները և դրանց
դրսևորման առանձնահատկությունները:

Հոգեթերապևտիկ աշխատանքներն իրականացվել են Էկլեկտիկ
մոտեցման շրջանակներում: Նշվում է, որ առավել արդյունավետ են եղել
հատկապես խմբային աշխատանքները: Աշխատանքի առաջին փուլում
օգտագործվել են հողակցման և կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի
տեխնիկաներ, հիմնական փուլում առավել արդյունավետ է եղել
արտթերապիայի տարբեր տեխնիկաների կիրառությունը, իսկ աշխատանքի

* Հոդվածը ներկայացվել է 09.11.2024թ., գրախոսվել՝ 26.11.2024թ., տպագրության
ընդունվել՝ 31.12.2024թ.:

ավարտին կիրառված քոռչինգ տեխնիկաները նպաստել են այցելուների մոտ ապրելու և արարելու ձգտման ակտիվացմանը:

Հեղինակները ներկայացրել են պատերազմից տուժածներին հոգեբանական աջակցության ծրագրի շրջանակներում մեկ տարի շարունակ իրականացված հոգեթերապևտիկ աշխատանքների ընթացքը և վերլուծել արդյունքները: Պարզվել է, որ կրկնվող տրավմային արձագանքման առաջին փուլին բնորոշ է եսի ուշացած հակազդումը կատարված աղետին, խեղաթյուրված համոզմունքներն ու մտածողության հետընթացը: Անօգնականությունը, հուսահատությունը, անտեսվածությունը, ագրեսիան ի հայտ են գալիս ավելի ուշ փուլում:

Հիմնաբառեր՝ տրավմա, կրկնվող տրավմա, հարմարում, խմբային հոգեթերապիա, էկլետիկ մոտեցում, մարդածին աղետներ, տագնաապայնություն:

Ներածություն

Վերջին 100 տարիների ընթացքում հայ ազգաբնակչությունը մի քանի անգամ դաժան կերպով տեղահանումների է ենթարկվել: 19-րդ դարի վերջին քառորդից սկսած՝ Արևմտյան Հայաստանում կազմակերպված ջարդերը և տեղահանումները իրենց տրամաբանական հանգուցալուծմանը հասան 1914-1915 թվականների մեծ ջարդերով, որ հետագայում համաշխարհային հասարակությունը համարեց ցեղասպանություն: Տեղահանումը շարունակվեց ԽՍՀՄ-ի տարիներին, երբ Նախիջևանի ինքնավար մարզը հայաթափվեց Խորհրդային Ադրբեջանի վարած քաղաքականության արդյունքում: Այս տեղահանումներն էլ իրենց վերջնական հանգուցալուծումը գտան ԽՍՀՄ-ի փլուզմամբ և Սումգայիթյան ջարդերով:

2020թ. -ի Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և Արցախի շրջափակումից ու հայաթափումից հետո Արցախում բնակվող 100000-ից ավելի անձինք հարկադրված տեղահանվեցին: Հայաստանի Հանրապետությունը 2020 թվականի սեպտեմբերից 2023 թ.-ի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում ընդունեց տեղահանվածների ամենամեծ խմբաքանակը: Այս հանգամանքը չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ հասարակության հոգեկան առողջության և բարոյահոգեբանական վիճակի վրա:

Թվարկված աղետները՝ բռնաճնշում, էթնիկ զտում, ցեղասպանություն, տեղահանում, պատերազմ, էքզիստենցիալ ոչնչացում, համարվում են մարդածին աղետներ, որոնք հասարակության վրա խորը տրավմատիկ հետևանքներ են թողնում և դրսևորվում են սերնդեսերունդ: Կրկնվող տրավմաները հնարավորություն չեն տալիս հայ ժողովրդին հաղթահարելու հետտրավմատիկ խնդիրները, ընդհակառակը՝ ձևավորվում է սոցիալ-հոգեբանական խնդիրների փաթեթ, որը կրում է կոլեկտիվ և համազգային բնույթ:

Մեթոդաբանական հիմքերը

Հ. Կրիստալը նշում է, որ «տրավմատիկացված անձանց ինքնապաշտպանական մղումը դրդում է ճնշելու, թաքցնելու, լռելու, դեռեալիզացնելու հոգեբանական վնասվածքները: Սակայն չլուծված հոգեբանական խնդիրների արդյունքում մենք ոչ միայն ունենում ենք անառողջ հասարակություն, այլև այդ խնդիրները փոխանցվում են սերնդեսերունդ՝ ինչպես գիտակցական, այնպես էլ ենթագիտակցական մակարդակներում: Երկարաձգված տրավմատիկացված հասարակություն ունենալը կրճատում և հետընթացի մեջ է պահում երկրի զարգացումը» (Krystal 368):

Պետք է նշել, որ «եսի տրավմատիկ վիճակները հիմնականում ենթակա չեն ադապտացիայի, նույնիսկ այն դեպքում, երբ անձը ունի կրկնվող տրավմա, որի

արդյունքում տրավմատիկ փորձը կարելի է օգտագործել, որպես ասոցիատիվ կապ՝ առկա խնդիրը հաղթահարելու համար» (Krystal 368):

Ըստ Վ. Բալթերի՝ տրավմատիկ հիշողությունների հոգեկան վերափոխումները դրսևորվում են միայն շատ սահմանափակ չափով կամ ընդհանրապես տեղի չեն ունենում, դրանք ունեն յուրահատուկ բնութագրեր: Կարելի է առանձնացնել դրանցից երեքը, բայց միևնույն ժամանակ ընդգծել, որ սա տրավմայի ախտանշանների մանրամասն նկարագրություն չէ (Բոլեծեր 2010):

Մեր կողմից առանձնացվել են այն բնութագրիչները, որոնք բնորոշ են անընդհատ տրավմատիզացիայի ենթարկված հասարակությանը և ուղղակի կապ ունեն 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմից տուժածների և Արցախից տեղահանվածների հետ կատարած հոգեբանական աշխատանքների և դրանց վերլուծության հետ:

1. Տրավմատիկ փորձը բախում է եսի և կատարված փաստի միջև: Եսի արձագանքը հիմնականում ուշ է առաջանում: Դա ձևավորվում է ոչ թե որպես սպառնացող վտանգի պատասխան, այլ այն բանից հետո, երբ տրավմատիկ փորձն արդեն առկա է, և եսը պասիվորեն հանձնվում է տրավմային, քանի որ նրա պաշտպանական գործառնությունները փլուզված են: Հաճախ տեղի է ունենում մտածողության հետընթաց՝ որպես անտանելի անօգնականությունից պաշտպանություն: Երբ տրավմատիզացված մարդն իրեն մեղադրում է կատարվածի համար, ապա պասիվ անօգնականության զգացումը վերածվում է սեփական գործունեությունը կամ անգործությունը պայմանավորող միջոցի: Եթե մտածողության նման հետընթացին զուգարկվում են նաև գիտակցությունից արտամղված ներքին համոզմունքներ, վախեցնող պատկերացումներ, ապա ձևավորվում են պառակտված համոզմունքներ, որոնք իրականությանը չեն համապատասխանում:

2. Տրավմատիզացված եսի ոչ համարժեք մտավոր գործունեությունը հանգեցնում է հոգեկան զգացողության սառեցմանը և առաջացնում է ներքին կանգ: Խախտվում է անցյալի, ներկայի և ապագայի միջև ընկած ժամանակահատվածը, տրավմատիզացված անձը կորցնում է արտաքին ազդեցությունները ընկալելու կարողությունը:

3. Համատարած տրավմատիզացիայի դեպքում անօգնականության զգացումը այնքան մեծ է լինում, որ ճնշում է ինքնապաշտպանական մեխանիզմների գործունեությունը: Փլուզվում է հավատի զգացումը այն բանի նկատմամբ, որ իրենց կյանքում կարող է ինչ-որ դրական բան տեղի ունենալ, ինչպես նաև կորչում է շրջապատողների կողմից ապրումակցման, հասկացված լինելու պահանջմունքի բավարարման հույսը: Տեղի է ունենում անձի մեկուսացում, որը ուղեկցվում է վախի, ամոթի, հուսահատության և ատելության բուռն զգացողություններով (Բոլեծեր 2010):

Էմպիրիկ հետազոտության արդյունքները

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել տրավմատիկ հիշողությունների հոգեկան վերափոխումների առանձնահատկությունները կրկնվող տրավմաների դեպքում:

Հետազոտության հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ տրավմատիզացված անձանց մեծ մասի ապաքինումը երկարաձգվում է՝ պայմանավորված նրանց պաշտպանական մեխանիզմներով. մարդիկ արտամղում, մերժում և ճնշում են իրենց հոգեբանական խնդիրները:

Էմպիրիկ հետազոտությունն իրականացվել է պատերազմին հաջորդած մեկ տարվա ընթացքում, պատերազմից տուժածներին հոգեբանական աջակցության ծրագրի շրջանակներում՝ ամփոփելով անհատական և խմբային հոգեթերապևտիկ աշխատանքի արդյունքները: Հարկ ենք համարում նշել, որ հետազոտության մասնակիցների մեծ մասը եղել են արցախյան առաջին, ապրիլյան քառօրյա և 44-օրյա պատերազմների մասնակիցներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունն ու ընդհանրացումները կատարվել են ինդուկտիվ մոտեցման շրջանակներում, իդեոգրաֆիկ մեթոդով, անհատական հոգեբանական աշխատանքի ընթացքում դիտարկման արդյունքների, փաստերի ուսումնասիրության համադրմամբ:

Պետք է նշել, որ տեղահանվածների ծանրակշիռ մասը պատերազմին հաջորդած 6 ամիսների ընթացքում չէին նշում սոցիալ-հոգեբանական կամ աղապատացիոն խնդիրների մասին և դա պատճառաբանում էին նրանով, որ «ուրախ ենք, որ փրկվել ենք», «սպասում ենք պատերազմի ավարտին», «մենք ստիպված էինք ժամանակավոր լքել մեր տները, շուտով ամեն ինչ կավարտվի, և մենք հետ կգնանք»: Սա վկայությունն է այն բանի, որ նրանց մոտ գործում էր վերևում նշված առաջին կետին բնորոշ հոգեբանական մեխանիզմները. եսի ուշացած հակազդումը տեղի ունեցած աղետին, հակասական համոզմունքները և մտածողության հետընթացը: Նույնիսկ հոգեբանի կողմից աղապատացիոն խնդիրների, տրավմատիկ հիշողությունների առկայության մասին հատուկ հարցադրումները վերոհիշյալ խնդիրների բացակայության պատասխաններով էին հիմնավորվում: Առաջին հայացքից թվում է, թե տեղահանվածների բարոյահոգեբանական վիճակը կարելի է բավարար գնահատել: Սակայն այս երևույթը բացատրվում է նրանով, որ տեղահանված և տրավմատիզացված անձինք կորցնում են արտաքին ազդեցությունները ընկալելու կարողությունը. պատերազմից հետո հավատով սպասում էին տուն վերադառնալուն, չնայած որ կնքվել էր պատերազմի դադարեցման պայմանագիր, որն արցախցիների մի մասին զրկեց իրենց ծննդավայրից, տնից, աշխատանքից: Այս տևական ժամանակահատվածը, որի ընթացքում տրավմատիզացված անձը չի գիտակցում, չի ընդունում, չի գտնվում ճիշտ ժամանակի և տարածության մեջ, նրանից խլում է մեծ էներգիա և տանում հուզական հյուծվածության: Վերջինս հանգեցնում է ագրեսիվության և տագնապայնության մակարդակի բարձրացմանը, հիասթափության, անօգնականության զգացողության ամրապնդմանը, պայքարելու, կյանքի նոր պայմաններին հարմարվելու ցանկության բացակայությանը:

Ինչպես նշեցինք, եսի տրավմատիկ վիճակները հիմնականում աղապատացիայի ենթակա չեն, սակայն սոցիալական աղապատացիայի տեսանկյունից դիտարկելու դեպքում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ արցախցիների՝ տեղահանումից հետո հատկապես Հայաստանում ապաստանելը, ունի մի շարք առավելություններ: Տեղահանվածները եկել են մի միջավայր, որի մշակույթը, լեզուն, կրոնը և ազգային առանձնահատկությունները նույնն են: Հոգեբանական աջակցության դիմած տեղահանվածները հաստատում էին այն փաստը, որ իրենց զգում են ինչպես տանը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ պետք էր ենթադրել, որ սոցիալ-հոգեբանական աղապատացիան շատ ավելի սահուն պետք է ընթանար, իհարկե, հատուկ ուշադրություն դարձնելով այն փաստին, որ մարդիկ անձնական ողբերգություն են ապրում, քանի որ կորցրել են իրենց ծննդավայրը, տունը, աշխատանքը, հարազատներին, ընկերներին, համագյուղացիներին, հարևաններին:

Դրամական հոսքերի ձևավորման վրա ազդող գործոնների ցանկը, մեր կարծիքով, պետք է լրացվեն "Ժամանակակից ֆինանսական տեխնոլոգիաներ և էլեկտրոնային կառավարում" արտաքին միջավայրի գործոններով, որոնք օպտիմալացնում և ավտոմատացնում են տարբեր ֆինանսական առաջադրանքները, ապահովում են իրական ժամանակում ֆինանսական տվյալների հասանելիությունը դա թույլ է տալիս կազմակերպություններին կայացնել տեղեկացված որոշումներ և արագ արձագանքել շուկայի փոփոխություններին:

Ֆինանսական հոսքերին աջակցելու համար թվային տեխնոլոգիաների և համակարգերի օգտագործումը նպաստակ ունի բարելավել ֆինանսական գործարքների արդյունավետությունը, ճշգրտությունը և թափանցիկությունը: Կազմակերպության ֆինանսական հոսքերի էլեկտրոնային կառավարումը, օգտագործելով տեխնոլոգիաներ և թվային գործիքներ, պետք է նպաստի բիզնեսի ֆինանսական գործընթացների օպտիմալացմանը: Շատ առումներով այս խնդիրը լուծվում է էլեկտրոնային հաշվետվությունների միջոցով, որոնցում տեղեկատվության գաղտնիությունն ապահովվում է հատուկ հաղորդակցման ուղիներով, և էլեկտրոնային ստորագրությունը որոշում է փաստաթղթի իրավական կարգավիճակը:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական կառավարման մեջ թվային տեխնոլոգիաների և էլեկտրոնային աջակցության ինտեգրումը զգալիորեն մեծացնում է ժամանակակից կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և մրցունակությունը:

Գծապատկեր 2. Կազմակերպության դրամական հոսքերի ձևավորման վրա ազդող գործոնները (Коновалова, 9):



Ընկերության ֆինանսական հոսքերի թվային աջակցությունը ենթադրում է թվային տեխնոլոգիաների և համակարգերի օգտագործում՝ կազմակերպության կառավարման ֆինանսական գործարքներին և գործընթացներին հետևելու և օպտիմիզացման համար:

- Առցանց բանկային և վճարային համակարգերը ենթադրում են առցանց հարթակների օգտագործումը բանկային գործառնությունների կառավարման համար՝ ներառյալ իաշիվների վճարումը, վճարումների ստացումը և միջոցների փոխանցումը:

- Հաշվապահական հաշվառման ծրագրային ապահովումը ենթադրում է ծրագրային ապահովման օգտագործում՝ հաշվապահական հաշվառման գործընթացները ավտոմատացնելու համար, որոնցից են հաշվապահական հաշվառումը, հաշիվ-ապրանքագրերը և ֆինանսական հաշվետվությունները:

- Հաշիվների էլեկտրոնային ներկայացումը ենթադրում է էլեկտրոնային համակարգերի օգտագործում՝ դրանց ստեղծման, բաշխման և վճարման գործընթացները կառավարելու համար. դա թույլ է տալիս կրճատել ձեռքով մշակումը և բարձրացնել արդյունավետությունը,

- Ֆինանսների կառավարման թվային գործիքը թվային գործիքների օգտագործումն է՝ ֆինանսական տվյալների կառավարման և տեղեկացված որոշումների կայացման համար՝ ներառյալ բյուջետավորման ծրագրային ապահովումը, կանխատեսման գործիքները և ֆինանսական վերլուծության

հարթակները:

• Բլոկչեյն տեխնոլոգիանապակենտրոնացված, անվտանգ և թափանցիկ հաշվապահական հաշվառման համակարգերի օգտագործումն է՝ ֆինանսական գործարքներին հետևելու և ավելի մեծ թափանցիկություն ու անվտանգություն ապահովելու համար:

Աղյուսակ 1. «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ դրամական հոսքերի շարժը 2020-2023 թթ մլն. դրամ

Ցուցանիշը	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.	Շեղումը 2023 թ. 2020 թ. նկատմամբ
Դրամական հոսքերն ընթացիկ գործունեությունից*					
Մուտքեր՝ ընդամենը	34086,323	34110,188	36168,302	37416,914	3330,591
Վճարումներ՝ ընդամենը	-27929,919	-23864,957	-27986,733	-29313,850	-1383,931
Ընթացիկ գործունեությունից դրամական հոսքերի սալդո հաշվետու տարվա վերջին	6156,404	10245,231	8181,569	8103,064	1946,66
Դրամական հոսքերը ներդրումային գործունեությունից					
Մուտքեր՝ ընդամենը	19758,445	2435,986	2172,420	9229,291	-10529,154
Վճարումներ՝ ընդամենը	-5264,563	-14326,919	-21405,098	-17197,430	-11932,867
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքերի սալդո՝ հաշվետու տարվա վերջին	14493,882	-11890,933	-19232,678	-7968,139	-22462,021
Դրամական հոսքերը ֆինանսական գործունեությունից					
Մուտքեր՝ ընդամենը	4941,895	7058,409	20524,762	9820,280	4878,385
Վճարումներ՝ ընդամենը	-28995,138	-4151,174	-10173,971	-9584,669	19410,469
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքերի սալդո՝ հաշվետու տարվա վերջին	-24053,243	2907,235	10350,791	235,611	24288,854
Դրամական հոսքերի սալդո՝ հաշվետու տարվա վերջին	-3402,957	1261,533	-700,318	370,536	3773,493
Դրամական հոսքերի սալդո հաշվետու տարվա վերջին՝ ներառյալ դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա փոխարժեքային տարբերությունները*	-3351,75	1251,534	-851,26	373,962	3725,712

Վերլուծություն

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում մեր կողմից ուսումնասիրվել է ՀՀ կապի ոլորտի «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ դրամական հոսքերի ձևավորման գործընթացը՝ 2020-2023 թթ.:

*-Ներառյալ փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա

Ուսումնասիրվող կազմակերպության դրամական հոսքերը ձևավորվում են գործունեության բոլոր երեք՝ գործառնական, ներդրումային և ֆինանսական տեսակներից:

Հարկ է նշել, որ դրամական հոսքերի մեծ մասը ձևավորվում է գործառնական գործունեությունից: 2023 թվականին այն կազմել է 66,3 տոկոս, որը վկայում է ընթացիկ գործունեությունից դրամական միջոցներ գեներացնելու ընդունակության մասին: Ընդ որում այդ գործունեությունից դրամական հոսքերի մնացորդները բոլոր չորս հաշվետու տարիների վերջերին միշտ եղել են դրական:

Ներդրումային գործունեությունից դրամական հոսքերի մնացորդները 2021-23 թվականների հաշվետու տարվա վերջերին եղել են բացասական դա կարող է ստացած վարկերի, փոխառությունների վերադարձի և այլ վճարումների հետևանք լինել:

Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքերի մնացորդները 2020-23թթ հաշվետու տարվա վերջերին եղել են դրական, սա հնարավոր է եղել ապահովել այդ գործունեության գծով դրամական հոսքերի մուտքերի զգալի աճի շնորհիվ:

Դրամական միջոցների հոսքերի ձևավորման արդյունավետությունը բնութագրվում է՝

դրամական միջոցների հոսքի արդյունավետության գործակցով, որը հաշվարկվում է որպես զուտ դրամական հոսքերի և ընդհանուր բացասական դրամական հոսքերի հարաբերակցություն (ձևավորված գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության արդյունքում),

- զուտ դրամական միջոցների հոսքի համարժեքության գործակցով, որը հաշվարկվում է որպես զուտ դրամական միջոցների հոսքի հարաբերակցություն՝ վարկերի գծով հիմնական պարտքի, ապրանքանյութական պաշարների աճի և վճարված շահաբաժինների գումարին,

– զուտ դրամական հոսքի վերաներդրման գործակից, որը ցույց է տալիս կազմակերպության սեփական միջոցների հաշվին որոշակի ժամանակահատվածում իրական ներդրումներ և երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ կատարելու հնարավորությունը (դրական զուտ դրամական հոսքերի ձևավորման արդյունքում) (Сokolov 2023):

Դրամական հոսքերի արդյունավետության գործակցի նորմատիվային արժեքը պետք է հավասար կամ մեծ լինի զրոյից: Ուսումնասիրվող կազմակերպությունում այն գտնվում է բավականին ցածր մակարդակում՝ 2023 թ.-ին կազմել է 0,007, իսկ 2020 - 2022 թթ.-ին բացասական էր (Бычкова, Бадмаева 27):

Չուտ դրամական հոսքերով համարժեքության գործակցի նորման սահմանված է մեծ կամ հավասար 1-ի: Դիտարկվող կազմակերպությունում ցուցանիշը գիջում է նշված նորմային, այսինքն՝ կազմակերպությունը չի ունեցել բավարար զուտ դրամական հոսքեր ավելի արդյունավետ գործունեության համար:

Իսկ դրամական հոսքերի վերաֆինանսավորման գործակցի հաշվարկը հնարավոր չէ կատարել միայն ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա, որոնցում չեն ներկայացվում տվյալներ՝ անկանխիկ եղանակով կատարված ծախսերի և ստացած եկամուտների վերաբերյալ (Мырavyeva 21-24):

Եզրակացություն

Թեմայի ուսումնասիրության արդյունքում կարելի է գալ այն հետևության, որ հայրենական, գիտական և մասնագիտական շրջանակներում դեռևս անհրաժեշտ խորությամբ և ծավալով չեն մշակվում ու ներկայացվում ֆինանսական և դրամական հոսքերի ձևավորման գործընթացի տեսական դրույթները, դրանց գործնական

դրսևորման առանձնահատկությունները, առկա խնդիրներն ու չեն կատարվում դրանց լուծման վերաբերյալ գործնական առաջարկություններ հատկապես տնտեսության իրական հատվածում:

Որպես կանոն, դրանց լուծման գործում մեծ նշանակություն ունեն մի շարք խնդիրների հայտնաբերումը և լուծումը, այդպիսիք են դրամական ռեսուրսների բավարարվածությունը, դրանց պլանավորման և վերաբաշխման մեխանիզմը և օգտագործման օպտիմալ դեպքերը:

Դրանցում դեռևս չեն ներդրվել ֆինանսական հոսքերի հաշվառման ու վերլուծության ժամանակակից մեթոդներ և եղանակներ՝ ինչպես հաշվապահական հաշվառման ու վերլուծության ոլորտներում, այնպես էլ աուդիտի անցկացման պրակտիկայում:

Դրամական միջոցների հոսքերի արդյունավետ կառավարման համար ցանկացած խոշոր առևտրային կազմակերպության ղեկավարություն պետք է ունենա օպերատիվ, հուսալի և բավարար տեղեկատվություն, որը թույլ կտա ապահովել այս խնդրի լուծումը՝ հատկապես երկրի տնտեսության անկայունության պայմաններում:

Քանի որ հաշվապահությունը ցանկացած կազմակերպության հիմնական տեղեկատվական օղակն է, ուստի նրանում պետք է ձևավորվի կառավարման համար անհրաժեշտ դրամական հոսքերի վերաբերյալ բոլոր տեղեկությունները:

Սակայն ՀՀ-ում ո՛չ տեսականորեն և ո՛չ էլ հաշվապահական հաշվառման պրակտիկայում դրամական հոսքերը դեռևս չեն առանձնացվում որպես հաշվապահական հաշվառման անկախ օբյեկտ, որի պատճառով դեռևս չեն կիրառվում անհրաժեշտ տեսական-մեթոդաբանական և մեթոդական մոտեցումները, այդ հանգամանքը թույլ կտա մշակել հաշվապահական հաշվառման մատյանների ձևեր և ներքին հաշվետվություններ, որոնք, ընդհանուր առմամբ, կապահովեն այս խնդրի լուծումը հաշվառման պրակտիկայում:

Ներկայումս կարևորվում է ճյուղավորված կառուցվածքով խոշոր առևտրային կազմակերպություններում դրամական հոսքերի խնդիրները համակարգային մոտեցման շրջանակներում դիտարկելու անհրաժեշտությունը՝ դրանք դասակարգելով ըստ ձևավորման աղբյուրների, նպատակների, ժամանակի, գործունեության տեսակների, ստորաբաժանումների, դա հնարավորություն կտա իրական ժամանակում գնահատել յուրաքանչյուր ստորաբաժանման կարողությունը՝ դրամական հոսքեր ձևավորելու, ինչպես նաև դրամարկղերում և հաշվարկային ու այլ հաշիվներում դրամական միջոցների մնացորդների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն 31 դեկտեմբերի 2020-2023թթ.», <https://bit.ly/4f3gCR0>: Վերջին մուտք՝ 06.12.2024:

2. Соколов, Егор. «Анализ денежных потоков компании», // Dasreda, 2023, <https://dasreda.ru/media/for-managers/analiz-denezhnykh-potokov-kompanii>. Accessed: 06.12.2024.

3. Горбунова, Олеся, Кот, Екатерина и другие. «Оценка денежных потоков и пути их оптимизации». *Образование и право*, 2023, с. 168-174, <https://cyberleninka.ru/article/n/otsenka-denezhnykh-potokov-i-puti-ih-optimizatsii>, Accessed: 06.12.2024.

4. Бычкова, Светлана, Бадмаева, Дина. «Методика анализа денежных средств и денежных потоков организации».

http://controlcashflow.ru/publ/metody_analiza_denezhnykh_potokov/metodika_analiza

[denezhnykh sredstv i denezhnykh potokov organizacii/3-1-0-69.](#)

Accessed:

06.12.2024:

5. Муравьева, Наталья. «Критерии эффективности управления денежными потоками в коммерческих организациях» // *Экономика и бизнес: теория и практика*, №5, 2015, стр. 21-24.

WORKS CITED

1. «TELEKOM Armenia» P'BY'. «Finansakan hashvetvut'yunneri mijazgayin standartnerin hamapatasxan` finansakan hashvetvut'yunner ev ankax auditorakan ezrakacut'yun 31 dektemberi 2020-2023t't'.», [In accordance with the International Financial Reporting Standards, Financial Statements and an Independent Auditor's Opinion for December 31, 2020–2023], <https://bit.ly/4f3gCR0>, Verjin mutq 6/12/2024. (In Armenian).

2. Sokolov Egor. «Analiz denezhnyh potokov kompanii», // Dasreda, <https://dasreda.ru/media/for-managers/analiz-denezhnykh-potokov-kompanii>, [Analysis of the Company's Financial Flows], 2023. (In Russian)

3. Gorbunova Olesja Sergeevna, Kot Ekaterina Mihajlovna i drugie. «Ocenka denezhnyh potokov i puti ih optimizacii». *Obrazovanie i pravo*, 2023, s. 168-174, <https://cyberleninka.ru/article/n/otsenka-denezhnyh-potokov-i-puti-ih-optimizatsii>, [Assessment of Cash Flows and Ways to Optimize them], 2023. (In Russian).

4. S.M. Bychkova, D.G. Badmaeva. «Metodika analiza denezhnyh sredstv i denezhnyh potokov organizacii». http://controlcashflow.ru/publ/metody_analiza_denezhnykh_potokov/metodika_analiza_denezhnykh_sredstv_i_denezhnykh_potokov_organizacii/3-1-0-69, [Methodology for analyzing finance and financial flows of an organization], 2014. (In Russian).

5. Murav'eva Natal'ja Nikolaevna. «Kriterii jeffektivnosti upravlenija denezhnymi potokami v kommercheskih organizacijah» // *Jekonomika i biznes: teorija i praktika*, №5, 2015, s. 21-24, [Criteria for the Effectiveness of Cash flow Management in Commercial Organizations], 2015. (In Russian).

PROCESS OF FORMATION OF FINANCIAL FLOWS IN COMMERCIAL ORGANIZATIONS OF THE RA

KAREN NERSISYAN

*National Academy of Sciences of the Republic of Armenia,
the Institute of Economics after M. Kotanyan, Senior researcher
Yerevan, the Republic of Armenia*

In any economic condition, the process of cash flow formation in the practical activities of any organization is one of the most complex issues.

As a rule, solving this issue involves discovering and solving several problems, such as the sufficiency of financial resources, their planning and redistribution mechanisms, and optimal usage cases.

The study presents the features of cash flow formation in commercial organizations and the factors influencing them, substantiating the need for applying computational indicators in this process. The study also examines the factors influencing the formation of cash flows in an organization, and an analysis of their formation is conducted based on a specific company example.

The purpose of the study is to explore the theoretical provisions of cash flow

formation at the micro-level, identify and assess the factors influencing them, and develop practical recommendations aimed at improving financial flow management in commercial organizations in Armenia.

The research used comparative, logical, analytical, and methods for comparing financial indicators and calculating factor dependencies.

The study utilized data from the last four years of financial reports of a specific organization, which are published on the official website of the company.

The scientific novelty of the study is the development of theoretical and methodological provisions and practical recommendations for improving the quality of the management system of operational, investment, and financial activities in organizations of the real sector of the Armenian economy, through improving the methodological tools of economic analysis of cash flows.

Taking into account modern methods of analyzing and assessing the factors influencing financial flows, specific recommendations have been developed for their implementation in the real sector of the Armenian economy.

Keywords: *Cash flows, accounting documents, influencing factors, digital support, efficiency ratio, adequacy ratio, methodological and methodological approaches.*

ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ФИНАНСОВЫХ ПОТОКОВ В КОММЕРЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЯХ РА

КАРЕН НЕРСИСЯН

старший научный сотрудник

*Института экономики им. М. Котаняна при Национальной
академии наук Республики Армения,
г. Ереван, Республика Армения*

В любых экономических условиях процесс формирования денежных потоков в практической деятельности какой-либо организации является одной из самых сложных задач.

Как правило, решение этой задачи включает выявление и решение ряда проблем, таких как достаточность финансовых ресурсов, механизмы их планирования и перераспределения, а также оптимальные случаи их использования.

В исследовании представлены особенности формирования денежных потоков в коммерческих организациях и факторы, влияющие на них; обоснована необходимость применения расчетных показателей в этом процессе. Также рассмотрены факторы, влияющие на формирование денежных потоков в организации, и проведен анализ их формирования на примере конкретной компании.

Цель исследования — изучить теоретические положения формирования денежных потоков на микроуровне, выявить и оценить факторы, влияющие на них, а также разработать практические рекомендации, направленные на совершенствование управления финансовыми потоками в коммерческих организациях Армении.

В исследовании использованы методы сравнения, логического, аналитического анализа, а также методы сопоставления финансовых показателей и расчета факторных зависимостей. В исследовании использованы данные финансовых отчетов конкретной организации за последние четыре года,

опубликованные на официальном сайте компании.

Научная новизна исследования заключается в разработке теоретических и методических положений и практических рекомендаций для улучшения качества системы управления операционной, инвестиционной и финансовой деятельностью организаций реального сектора экономики Армении через совершенствование методологических инструментов экономического анализа денежных потоков.

С учетом современных методов анализа факторов, влияющих на финансовые потоки, разработаны конкретные рекомендации по их внедрению в реальный сектор экономики Армении.

Ключевые слова: *денежные потоки, учетные документы, факторы влияния, цифровая поддержка, коэффициент эффективности, коэффициент адекватности, методологические и методические подходы.*

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ *

ՀՏԴ 330.3: 330.4: 338.2

DOI: 10.52063/25792652-2024.4.23-199

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի
կրեատիվ տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ceo@antares.am

ORCID ID: 0009-0009-1857-9595

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել Հայաստանի մշակութային առանձնահատկությունների ազդեցությունը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացման վրա:

Հետազոտությունում քննության են առնվում Հայաստանի մշակութային առանձնահատկությունների ազդեցությունը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) իրականացման վրա: «Մշակույթ» հասկացության տակ այսուհետ կհասկանանք ավանդույթները, սովորույթները և արժեքները, որոնք ազդում են հասարակական զարգացման վրա: Օգտագործելով Գերտ Յոնստեդեի մշակութային չափումները՝ հետազոտվում են, թե ինչպիսին է ազգային մշակույթի ներազդումը սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման գործին: Ներկայացված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները:

Առաջին խնդիրը Հայաստանի մշակութային ցուցանիշների համակողմանի վերլուծելն է՝ օգտագործելով Յոնստեդեի մոդելը: Այս վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտելու կայուն զարգացման ծրագրերի իրականացման գործընթացների վրա ազդող հիմնական մշակութային բնութագրիչները:

Երկրորդ խնդիրն ուղղված է ուսումնասիրելու Հայաստանի կողմից ԿՁՆ-ների իրականացման գործում ձեռք բերված առաջընթացը: Այս ուսումնասիրությունը ներառում է երկրում ԿՁՆ-ների ձեռքբերման վերաբերյալ ազգային զեկույցների, վիճակագրական տվյալների և փորձագիտական գնահատականների ուսումնասիրություն:

Երրորդ խնդիրը մշակութային ցուցանիշների և ԿՁՆ-ների իրականացման ցուցանիշների միջև կորելյացիոն վերլուծության իրականացումն է: Այս վերլուծությունն անհրաժեշտ է հասարակության մշակութային առանձնահատկությունների և կայուն զարգացման ծրագրերի իրականացման արդյունավետության միջև էական փոխկապակցությունները բացահայտելու համար:

Չորրորդ խնդիրը կայուն զարգացման ծրագրերը Հայաստանի մշակութային համատեքստին հարմարեցնելու վերաբերյալ գործնական առաջարկությունների մշակումն է: Այս առաջարկությունները հիմնված կլինեն կատարված վերլուծության արդյունքների վրա և ուղղված կլինեն ազգային մշակութային առանձնահատկությունների հաշվառմամբ ԿՁՆ-ների իրականացման արդյունավետության բարձրացմանը:

* Հոդվածը ներկայացվել է 10.09.2024թ., գրախոսվել՝ 10.11.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

Մեթոդաբանությունը ներառում է Հայաստանի մշակութային ցուցանիշների վերլուծություն՝ հիմնված Հոֆստեդեի մոդելի վրա, ԿՂՆ-ների ձեռքբերման վերաբերյալ երկրի առաջընթացի զեկույցների ուսումնասիրություն, տնտեսական ցուցանիշների վերլուծություն և կորելյացիոն վերլուծություն մշակութային ցուցանիշների և ԿՂՆ-ների հասանելիության միջև: Բացի դրանից իրականացվել է ԿՂՆ ինդեքսի և Մարդկային զարգացման ինդեքսի (ՄՁԻ) միջև կապի Էկոնոմետրիկ վերլուծություն:

Արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի մշակութային ասպեկտները, ինչպիսիք են իշխանությունից մեծ հեռավորությունը (դիստանցիա), կոլեկտիվիզմը և անհատականությունը, չափավոր առնականությունը, անորոշությունից խուսափման բարձր աստիճանը, չափավոր երկարաժամկետ կողմնորոշումը և հանդուրժողականության ցածր մակարդակը, զգալի ազդեցություն են ունենում ԿՂՆ-ների իրականացման վրա: Բացահայտվել են թվարկված մշակութային առանձնահատկությունների ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունները կայուն զարգացման տարբեր ասպեկտների վրա: Էկոնոմետրիկ վերլուծությունը բացահայտել է ԿՂՆ ինդեքսի և ՄՁԻ-ի միջև դրական կապ, ըստ որի՝ ՄՁԻ-ի մեկ միավոր աճը հանգեցնում է ԿՂՆ ինդեքսի 53,87 միավոր աճի: Մոդելը բացատրում է ԿՂՆ ինդեքսի վարիացիայի 64,1%-ը:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ Հայաստանում ԿՂՆ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է մշակել ռազմավարություններ, որոնք հաշվի կառնեն Նշված մշակութային առանձնահատկությունները՝ օգտագործելով դրանց ուժեղ կողմերը և նվազագույնի հասցնելով հնարավոր բացասական ազդեցությունները: Առաջարկվում են կայուն զարգացման ծրագրերը Հայաստանի մշակութային համատեքստին համադրելու և հարմարեցնելու առաջարկություններ՝ ներառյալ կենտրոնացված կառավարումն ու տեղական մասնակցությունը, ավանդական մեթոդների ինտեգրումը ժամանակակից տեխնոլոգիաների հետ և գենդերային զգայուն ծրագրերի մշակումը:

Հիմնաբառեր՝ Կայուն զարգացման նպատակներ (ԿՂՆ), մշակութային չափումներ, Հոֆստեդեի մոդել, մարդկային զարգացման ցուցիչ (ՄՁՑ), սոցիալ-տնտեսական զարգացում, Հայաստան, մշակութային ազդեցություն, Էկոնոմետրիկ վերլուծություն:

Ներածություն

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել Հայաստանի մշակութային առանձնահատկությունների ազդեցությունը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների իրականացման վրա: Այս նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները.

- Վերլուծել Հայաստանի մշակութային ցուցանիշները՝ օգտագործելով Հոֆստեդեի մոդելը,
- Ուսումնասիրել Հայաստանի առաջընթացը ԿՂՆ-ների իրականացման գործում.,
- Իրականացնել կորելյացիոն վերլուծություն մշակութային ցուցանիշների և ԿՂՆ-ների իրականացման ցուցանիշների միջև,
- Մշակել առաջարկություններ կայուն զարգացման ծրագրերը Հայաստանի մշակութային համատեքստին հարմարեցնելու վերաբերյալ:

Կայուն զարգացումը սահմանվում է որպես զարգացում, որը բավարարում է ներկայի կարիքները՝ չվտանգելով ապագա սերունդների կարիքները բավարարելու հնարավորությունը: Այս հասկացությունը սերտորեն կապված է յուրաքանչյուր երկրի մշակութային առանձնահատկությունների հետ, քանի որ մշակույթը ձևավորում է հասարակության արժեքները, վարքը և որոշումների կայացման գործընթացները:

Համաշխարհային բանկի գեկույցում նշվում է, որ «Հայաստանի տնտեսական աճը պետք է ուղեկցվի ներառական զարգացմամբ՝ հաշվի առնելով երկրի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները» (World Bank 2021): Սա ընդգծում է մշակութային գործոնների կարևորությունը ԿՀՆ-ների իրականացման գործում:

Այսպիսով՝ կայուն զարգացումը ոչ միայն կարևոր, այլև անհրաժեշտ պայման է՝ անկախ արտաքին իրադարձություններից: Այն ապահովում է երկրի կենսունակությունը և դիմակայունությունը երկարաժամկետ հեռանկարում:

ՄԱԿ-ի 2030 օրակարգում նշվում է, որ «Կայուն զարգացման նպատակները համընդհանուր կոչ են՝ ուղղված աղքատության վերացմանը, միլիարդի պաշտպանությանը և բոլորի համար բարգավաճման ապահովմանը» (United Nations, New York 2015): Սա ընդգծում է Հայաստանի՝ այս գլոբալ նախաձեռնությանը միանալու կարևորությունը:

«Կայուն զարգացումը, աստիճանաբար ահազանցող բազմաթիվ և բազմաշերտ հիմնախնդիրների շարքում, ենթադրում է կենսագործունեության տնտեսական, սոցիալական և բնապահպանական հատվածների փոխկապակցված և հաշվեկշռված զարգացում, որը բավարարում է ներկա սերնդի պահանջմունքները՝ չգրկելով դրանց բավարարման հնարավորությունից ապագա սերունդներին» (Քոչինյան և Ուրիշներ 195-208):

Կայուն զարգացումը՝ որպես գլխավոր հիմնախնդիր, չունի այլընտրանք: Հակառակ պնդումներն ու դատողությունները ժամանակավորեալ ու սնանկ են: Կարճաժամկետ հատվածում ԿՀ հետին պլանում պահելն ու ստորադասելու գործելակերպը ինչ-ինչ հանգամանքներում հանգեցնելու է երկարաժամկետ հատվածում երկրի զարգացման խաթարմանը: Այս երևույթը կարելի է բացատրել տնտեսագիտության, ռիսկերի կառավարման և կայուն զարգացման հայեցակարգերի միջոցով:

Տնտեսական հեռանկարի հայեցակետ.


Փողի ժամանակային արժեքի տեսությունը չի հակասում կայուն զարգացման գաղափարին: Ընդհակառակը, այն կարող է օգտագործվել երկարաժամկետ կայուն զարգացման ներդրումների արդյունավետությունը գնահատելու համար: Օրինակ՝ այն կարող է օգնել գնահատել Էկոլոգիական նախագծերի երկարաժամկետ օգուտները՝ համեմատելով դրանք ներկա ծախսերի հետ:

Որպես **ելակետային սահմանում**՝ կայուն զարգացումը դիտարկվում է որպես մարդկանց կենսագործունեության ինդիկատորների և ինստիտուտների գործառնման փոխկապակցված և բալանսավորված այնպիսի զարգացում, որը բավարարում է ներկա սերնդի պահանջմունքները՝ ապագա սերունդներին չգրկելով դրանց բավարարման հնարավորությունից (Sargsyan et al 4-23):

Այսպիսով՝ կայուն զարգացումը համառոտ կարելի է բնութագրել որպես կոնսենսուսի (լավագույն դեպքում) կամ կոմպրոմիսի (փոխզիջման) (վատագույն դեպքում) ապահովման ձգտում զարգացման տնտեսական, Էկոլոգիական և սոցիալական գերակայությունների միջև: (Սարգսյան 46)

Հայաստանի կառավարությունը կայուն զարգացման գաղափարները սկսել է ներդնել դեռևս 2003 թվականից: Այս ուղղությամբ ձեռնարկված կարևոր քայլերից մեկը 2003 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ կառավարության ընդունած N 994-Ն որոշումն է «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» (ՀՀ կառավարություն, N 994-Ն որոշում 2003): Որոշմամբ հանձնարարվել է պետական մարմիններին ԱՀԴԾ ցուցանիշների համակարգի մշակման ընթացքում հաշվի առնել ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման նպատակները և դրանց տեղայնացման առանձնահատկությունները Հայաստանում 2003-2015 թթ. ծրագրային ժամանակահատվածի համար: Այն, ըստ էության, անկախությունից հետո ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջին երկարաժամկետ ռազմավարական ծրագիրն է: Ծրագրի հիմնական նպատակը նյութական աղքատության նշանակալի կրճատումն էր: Ըստ ծրագրի՝ նախատեսվում էր աղքատության մակարդակը 2015 թ. հասցնել 19,7 տոկոսի, իսկ ծայ-

րահեղ աղքատության մակարդակը՝ 4,1 տոկոսի՝ 2001 թ. համապատասխանաբար 50,9 տոկոս և 16 տոկոս ցուցանիշների փոխարեն (United Nations, New York 2015): Նյութական աղքատության կրճատման հետ մեկտեղ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը նպատակ է հետապնդել կրճատել նաև Հայաստանում շատ բարձր մակարդակի հասած եկամտային անհավասարությունը՝ 2001 թ. 53,5 տոկոսից մինչև 44,6 տոկոս՝ 2015 թվականին:



Գծապատկեր 1. Կայուն զարգացման համակարգը: Կայուն զարգացումը հանգեցնում է խնդիրների ինտեգրման այնտեղ, որտեղ դա հնարավոր է և խնդիրների միջև փոխզիջման, որտեղ ինտեգրումը հնարավոր չէ (Sargsyan et al 4-23):

2008 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 1207-Ն որոշումը (ՀՀ կառավարություն, N 1207-Ն որոշում 2008), որով ՀՀ Էկոնոմիկայի նախարարին հանձնարարվել է մշակել Կայուն զարգացման ծրագրի մոնիթորինգի համակարգի զարգացման միջոցառումների ծրագիրը:

Այս նախաձեռնությունները ցույց են տալիս, որ Հայաստանը կայուն զարգացման գաղափարները սկսել է ներդնել շատ ավելի վաղ, քան ՄԱԿ-ի կողմից 2015 թվականին Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) հռչակումը: Սա վկայում է երկրի երկարաժամկետ հանձնառության մասին՝ ուղղված կայուն զարգացմանը:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները (ԿՁՆ) ներկայացնում են գլոբալ օրակարգ՝ բոլոր երկրների համար առավել կայուն ապագա ապահովելու համար: Հայաստանը՝ որպես հարուստ մշակութային ժառանգությամբ զարգացող երկիր, բախվում է այս նպատակներին հասնելու յուրահատուկ մարտահրավերների: Այստեղ է, որ Գերտ Յոնսոնի առաջարկած մշակութային չափումները արժեքավոր հիմք են վերլուծելու համար, թե ինչպես կարող է ազգային մշակույթն ազդել սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման և ԿՁՆ-ներին հասնելու վրա:

ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը նշում է, որ «Հայաստանը հանձնառու է ԿՁՆ-ների տեղայնացմանը և դրանց ինտեգրմանը ազգային քաղաքականության մեջ» (UNDP 2030): Սա ցույց է տալիս երկրի պատրաստակամությունը՝ հաշվի առնելու իր մշակութային համատեքստը կայուն զարգացման գործընթացում:

Մեթոդաբանություն

Սույն հետազոտությունը հիմնված է քանակական և որակական մեթոդների համադրության վրա՝ նպատակ ունենալով բացահայտելու Հայաստանի մշակութային անունահատկությունների ազդեցությունը Կայուն զարգացման նպատակների (ԿՀՆ) իրականացման վրա:

Այս հետազոտության շրջանակներում մշակույթը սահմանվում է որպես հավաքական մտածելակերպ, որը տարբերակում է մի խմբի անդամներին մյուսներից: Մենք կենտրոնանում ենք Հոֆստեդեի կողմից առանձնացված մշակութային չափումների վրա, քանի որ դրանք հատկապես կարևոր են սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում:

Մշակութային վերլուծության համար գոյություն ունեն մի շարք հայտնի մոդելներ, ինչպիսիք են՝

1. Շվարցի մշակութային արժեքների տեսությունը
2. Տրոմպենաարսի և Համփոլեն-Թըրների յոթ չափանիշների մոդելը
3. GLOBE (Global Leadership and Organizational Behavior Effectiveness) հետազոտության մոդելը
4. Ֆոնս Տրոմպենաարսի մշակութային չափումների մոդելը
5. Էդվարդ Հոլի բարձր և ցածր համատեքստի մշակույթների տեսությունը:

Հոֆստեդեի մշակութային չափումների մոդելն ընտրվել է այս հետազոտության համար մի քանի պատճառներով:

Նախ՝ այն տրամադրում է ազգային մշակույթի վերլուծության կառուցվածքային և քանակական մոտեցում, որը հատկապես կարևոր է ԿՀՆ-ների հետ կապը գնահատելու համար: Ի տարբերություն այլ մոդելների՝ Հոֆստեդեի մոդելը ունի հստակ քանակական չափումներ, որոնք հեշտացնում են միջերկրային համեմատությունները:

Երկրորդ՝ Հոֆստեդեի մոդելը լայնորեն ճանաչված է և կիրառվում է միջազգային հետազոտություններում, դա թույլ է տալիս մեր արդյունքները համեմատել այլ երկրների հետ: Օրինակ՝ GLOBE մոդելը, չնայած իր համապարփակությանը, ավելի քիչ է կիրառվում և ավելի բարդ է մեկնաբանման համար:

Երրորդ՝ Հոֆստեդեի մոդելը հատկապես արդյունավետ է կազմակերպչական և սոցիալ-տնտեսական համատեքստում մշակույթի ազդեցությունը գնահատելու համար, դա համապատասխանում է մեր հետազոտության նպատակներին: Մյուս կողմից, Շվարցի մոդելը կենտրոնանում է անհատական արժեքների վրա, որը պակաս համապատասխան է մեր ուսումնասիրությանը:

Չորրորդ՝ Հոֆստեդեի մոդելի համար առկա են տվյալներ Հայաստանի վերաբերյալ, նույնը չի կարելի ասել բոլոր մյուս մոդելների մասին: Օրինակ՝ Տրոմպենաարսի մոդելը, չնայած իր օգտակարությանը, չունի հստակ տվյալներ Հայաստանի համար:

Սակայն պետք է նշել, որ Հոֆստեդեի մոդելն ունի որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես՝ այն հաշվի չի առնում ներմշակութային տարբերությունները և կարող է պարզեցնել բարդ մշակութային երևույթները: Այնուամենայնիվ, հաշվի առնելով մեր հետազոտության նպատակները և հասանելի տվյալները, Հոֆստեդեի մոդելը համարվում է առավել նպատակահարմար այս ուսումնասիրության համար:

Հետազոտությունում քննության են առնվում Հայաստանի մշակութային անունահատկությունների ազդեցությունը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (ԿՀՆ) իրականացման վրա: Օգտագործելով Գերտ Հոֆստեդեի մշակութային չափումները՝ հետազոտվում են, թե ինչպիսին է ազգային մշակույթի ներազդումը սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման գործում:

Հետազոտության մեջ օգտագործվել են հետևյալ մեթոդները.

1. ԿՀՆ-ների իրականացման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցների բովանդակության վերլուծություն,


2. Տնտեսական ցուցանիշների վիճակագրական վերլուծություն՝ նկարագրական վիճակագրության մեթոդների օգտագործմամբ,
3. Կորելյացիոն վերլուծություն՝ մշակութային ցուցանիշների և ԿՁՆ-ների իրականացման ցուցանիշների միջև կապերը բացահայտելու համար,
4. Ռեգրեսիոն վերլուծություն՝ ԿՁՆ-ների իրականացման վրա մշակութային գործոնների ազդեցությունը գնահատելու համար:

Մեթոդաբանությունը ներառում է Հայաստանի մշակութային ցուցանիշների վերլուծություն՝ հիմնված Հոֆստեդեի մոդելի վրա, ԿՁՆ-ների ձեռքբերման վերաբերյալ երկրի առաջընթացի զեկույցների ուսումնասիրություն, տնտեսական ցուցանիշների վերլուծություն և կորելյացիոն վերլուծություն մշակութային ցուցանիշների և ԿՁՆ-ների հասանելիության միջև: Բացի դրանից՝ իրականացվել է ԿՁՆ ինդեքսի և Մարդկային զարգացման ինդեքսի (ՄԶԻ) միջև կապի էկոնոմետրիկ վերլուծություն:

Այս մեթոդների համադրումը թույլ է տալիս համապարփակ կերպով գնահատել Հայաստանի մշակութային առանձնահատկությունների ազդեցությունը ԿՁՆ-ների իրականացման վրա՝ հաշվի առնելով ինչպես քանակական, այնպես էլ որակական ասպեկտները: Մշակութային գործոնների և կայուն զարգացման ցուցանիշների միջև կապերի բացահայտումը կարող է օգնել մշակելու ավելի արդյունավետ և մշակութային առումով զգայուն ռազմավարություններ՝ ԿՁՆ-ների իրականացման համար:

Արդյունքներ և քննարկում


Ստորև ներկայացվում է Հոֆստեդեի կոորդինատների համակարգով պատկերվող դիմանկարները Հայաստանի հարևան երկրների կտրվածքով:



Գծապատկեր 2. Հայաստանի և հարևան երկրների Հոֆստեդեի դիմանկարները

Ըստ Hofstede Insights-ի տվյալների՝ «Հայաստանը բնութագրվում է ինդիվիդուալիզմի բարձր աստիճանով, կոլեկտիվիզմով և անորոշությունից խուսափման բարձր մակարդակով» (Hofstede Insights 2021): Այս գործոնները էական ազդեցություն ունեն երկրում ԿՁՆ-ների իրականացման վրա:

Ստորև ներկայացվում է Հոֆստեդեի կոորդինատների համակարգով պատկերվող՝ Ճապոնիայի, ԱՄՆ, Ռուսաստանի, Չինաստանի ու Գերմանիայի դիմանկարները:



Պատկեր 2. Ճապոնիայի, ԱԶՆ, Ռուսաստանի, Չինաստանի ու Հայաստանի Հանրապետության դիմանկարները

1. Իշխանության հեռադրություն և աղքատության վերացում (ԿԶՆ 1):

Հայաստանի իշխանության հեռադրության ինդեքսը մոտավորապես 85 է, այն ցույց է տալիս միջինից բարձր իշխանության հեռադրություն:

Դրական կողմեր.

Բրգաձև կառուցվածքը կարող է նպաստել աղքատության դեմ պայքարի կենտրոնացված ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Հեղինակությունների նկատմամբ հարգանքը կարող է հեշտացնել կառավարության կողմից նախաձեռնված սոցիալական նախաձեռնությունների ներդրումը:

Բացասական կողմեր.

Իշխանության բարձր հեռադրությունը կարող է խոչընդոտել սոցիալական շարժունակությանը՝ ամրապնդելով առկա անհավասարությունը: Կարող է նվազեցնել աղքատության դեմ պայքարի հիմնական նախաձեռնությունների արդյունավետությունը:

Առաջարկություններ.

Մշակել ծրագրեր, որոնք համատեղում են կենտրոնացված կառավարումը տեղական մասնակցության հետ: Բարձրացնել թափանցիկությունը և հաշվետվողականությունը աղքատության դեմ պայքարի և ռեսուրսների բաշխման գործում:

2. Անհատականություն և պարենային անվտանգություն (ԿԶՆ 2): Հայաստանի անհատականության ինդեքսը համեմատաբար նվազ է՝ մոտ 17, դա ցույց է տալիս կոլեկտիվիստական հասարակություն:

Դրական կողմեր.

Ուժեղ ընտանեկան և համայնքային կապերը կարող են ապահովել պարենային աջակցության ոչ ֆորմալ համակարգեր: Կոլեկտիվիստական արժեքները կարող են նպաստել պարենային ռեսուրսների ավելի հավասար բաշխմանը: Համաձայն Համաշխարհային բանկի հետազոտության՝ «հայկական սփյուռքը նշանակալի դեր է խաղում երկրի տնտեսական զարգացման մեջ» (World Bank 2019): Սա ցույց է տալիս, թե ինչպես կարող են կոլեկտիվիստական արժեքներն օգտագործվել կայուն զարգացման նպատակներին հասնելու համար:

Բացասական կողմեր.

Կարող է դանդաղեցնել նորարարական գյուղատնտեսական պրակտիկաների ներդրումը՝ ավանդական մեթոդներին հավատարմության պատճառով: Պոտենցիալ կերպով սահմանափակում է խոշորածավալ առևտրային գյուղատնտեսության զար-

զացումը:

Առաջարկություններ.

Մշակել ծրագրեր, որոնք համատեղում են գյուղատնտեսության վարման ավանդական մեթոդները ժամանակակից տեխնոլոգիաների հետ: Խրախուսել գյուղատնտեսական արտադրության կոոպերատիվ ձևերը:

3. Առնականությունը և առողջ ապրելակերպ (ԿՇԼ3): Հայաստանի առնականության ինդեքսը մոտ 50 է, սա ցույց է տալիս հավասարակշռություն առնական և կանացի արժեքների միջև:

Դրական կողմեր.

Հավասարակշռությունը կարող է նպաստել առողջապահության համապարփակ մոտեցմանը՝ հաշվի առնելով ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բարեկեցությունը: Կարող է նպաստել բնակչության առողջության բարելավման ինչպես մրցակցային, այնպես էլ համագործակցային մոտեցումների զարգացմանը:

Բացասական կողմեր.

Պահպանվող գենդերային կարծրատիպերը կարող են ազդել բնակչության տարբեր խմբերի համար բժշկական ծառայությունների հասանելիության և որակի վրա, հակասություններ ստեղծել առողջ ապրելակերպի խթանման մոտեցումներում: Տնտեսության մեջ առնականության ոչ բարձր մակարդակը բերում է հոսքագծային արտադրության թուլության: Առնական հասարակություններում անհատը մրցակցության բարձր մակարդակին դիմակայելու նպատակով սերնդեսերունդ ձեռք է բերել տարբեր հմտություններ, մասնավորապես՝ միաժամանակ 30-40 պարամետրերի վրա ուշադրություն դարձնելը և արձագանքելը, որն անհրաժեշտ է հոսքագծային արտադրությունում ներգրավված մասնագետների համար:

Առաջարկություններ.

Մշակել գենդերային զգայուն առողջապահական ծրագրեր: Խթանել առողջ ապրելակերպը տարբեր ուղիներով՝ հաշվի առնելով ինչպես մրցակցային, այնպես էլ համագործակցային մոտիվացիաները: Կրթական համակարգի ծրագրերի փոփոխությամբ և կիրառմամբ հասնել առնականության մակարդակի բարձրացմանը:

4. Անորոշությունից խուսափում և որակյալ կրթություն (ԿՇԼ 4): Հայաստանի անորոշությունից խուսափման ինդեքսը բարձր է՝ մոտ 88:

Դրական կողմեր.

Կրթության բարձր արժեքավորում՝ որպես կայուն ապագայի ապահովման միջոց: Կառուցվածքային և համապարփակ կրթական համակարգի ձգտում:

Բացասական կողմեր.

Կարող է խոչընդոտել նորարարական կրթական մեթոդների ներդրմանը: Պոտենցիալ կերպով սահմանափակում է կրթական համակարգի ճկունությունը և նրա՝ աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին հարմարվելու կարողությունը: Խոչընդոտում և դանդաղեցնում է բարեփոխումները՝ դարձնելով անարդյունավետ: Խանգարում է գործարարության զարգացմանը, նորարարությունների ստեղծմանը¹:

¹ Այստեղ արժե խոսել նաև սխալի մշակույթի և սխալներից խուսափելու վարքագծից: Հայաստանի մեծ և փոքր քաղաքների և որոշ գյուղերի մշակույթում դեռահասների շրջանում առկա է այսպես կոչված՝ «սխալ հանելու» վարքագիծ: Երբ դեռահասն արել է մի արարք կամ արտասանել մի միտք, որը մեծամասնության կարծիքով հարիր չէ այդ բակին, թաղին, շրջապատին, ապա այդ դեռահասին «սխալ են հանում», այսինքն՝ պիտակավորում են: Եվ արդյունքում դեռահասի համար սկսվում են դժվար ժամանակներ՝ օտարում են, մասնակից չեն դարձնում խաղերին, կարող են աղջիկները նրանից խուսափել, ընկերություն չեն անում, լինում են ավելի ծանր հետևանքներ, ընդհուպ՝ ինքնասպանության դրոշմ: Ակնհայտ է, որ այդ պիտակից խուսափելու համար դեռահասը պետք է խուսանալի, ձգտի ամեն ինչ անել չպիտակավորվելու համար: Իսկ դրա հետևանքը հնարավոր սխալի վերլուծելուց խուսափումն է: Ինչպե՞ս ստացվեց, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունն ու հասարակությունը 1920-ին և 2020-ին արեցին նույն ռազմավարական սխալները: Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում

Առաջարկություններ.

Աստիճանաբար ներդնել նորարարական կրթական մոտեցումներ՝ պահպանելով ավանդական կառուցվածքի տարրերը: Արմատախիլ անել դեռահասների շրջանում, տարբերվելուց, նորարար լինելուց և սխալվելուց խուսափելու արատավոր մշակույթը հեռուստատեսության, կրթական համակարգի, նախակրթարաններում հատուկ ծրագրեր մշակելու միջոցով, որոնք կնպաստեն համապատասխան մշակութային կողերի և արժեքների հաստատմանը այդ միջավայրում: Չարգացնել շարունակական կրթության ծրագրեր՝ հարմարեցված անորոշությունից բարձր խուսափման մշակութային համատեքստին:

Առկան ընդգծում է, որ «մշակութային արժեքները և ոչ ֆորմալ ինստիտուտները կարող են և՛ նպաստել, և՛ խոչընդոտել տնտեսական զարգացմանը» (Ayazh): Սա հատկապես արդիական է Հայաստանի համար՝ նորարարությունների և տնտեսական աճի հետ կապված ԿՂՆ-ներին հասնելու համատեքստում:

5. Երկարաժամկետ կողմնորոշում և գենդերային հավասարություն (ԿՂՆ 5): Հայաստանի երկարաժամկետ կողմնորոշման ինդեքսը նվազ է՝ մոտ 38 (Hofstede Insights 2021):

Համաշխարհային բանկի՝ Հայաստանում գենդերային հավասարության մասին գեկույցը նշում է «կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ հետագա ջանքերի անհրաժեշտության մասին» (World Bank 2016): Սա ընդգծում է ԿՂՆ 5-ին հասնելու ծրագրերի մշակման ժամանակ մշակութային նորմերը հաշվի առնելու կարևորությունը:

Դրական կողմեր.

Կարևորում է գենդերային հավասարության ոլորտում երկարաժամկետ պլանավորումը: Կարող է աջակցել գենդերային դերերի աստիճանական, բայց կայուն փոփոխություններին¹:

Բացասական կողմեր.

Փոփոխությունների դանդաղ տեմպը կարող է հիասթափեցնել գենդերային հավասարության ակտիվիստներին: Ավանդական գենդերային դերերի պահպանումը կարող է դանդաղեցնել առաջընթացը: Երկարաժամկետ կողմնորոշման ոչ բարձր մակարդակն արտահայտված է «Նաղդը թողած՝ ընկել ես Նիսյայի հետևից» կամ «Նաղդը թողած՝ մի ընկնի Նիսյայի հետևից» ասացվածքներում: Պետական համակարգում բյուջեի պարբերաբար վերանայումը նույնպես ցույց է տալիս երկարաժամկետ կողմնորոշման ինդեքսի ոչ պատշաճ մակարդակը:

Առաջարկություններ.

Մշակել գենդերային հավասարության հասնելու երկարաժամկետ ռազմավարություններ՝ հաշվի առնելով մշակութային առանձնահատկությունները: Գենդերային հավասարության հարցերը ինտեգրել կրթական համակարգերում և աշխատանքային հարաբերություններում:

6. Հանդուրժողականությունը և դրա ազդեցությունը ԿՂՆ-ների ձեռքբեր-

գիտականի աշխատանքը: Սխալների հաջորդականություն, որը կամ կրերի հաջողության կամ, լավագույն դեպքում, կհանդիսանա հենք աշակերտի, կամ այլ գիտական հետևողի աշխատանքների համար: Ինչո՞ւ է Հայաստանում գիտությունն այս վիճակում: Ինչո՞ւ է նորարարությունների մակարդակն այսքան ցածր: Ինչո՞ւ են այսքան քիչ թվով մարդիկ զբաղվում ձեռնարկատիրությամբ: Մեծ մասամբ՝ սխալի մշակույթի և սխալներից խուսափելու վարքագծի պատճառով, որ չափազանց արմատավորված է:

¹ Այստեղ պետք է նշել կնոջ դերը հայ հասարակության մեջ: Մի կողմից կա անհավասարություն, կան տղամարդկանց կողմից բռնություններ, կա կանանց սակավություն պետական համակարգում, հատկապես ղեկավար պաշտոններում: Սակայն մյուս կողմից, ավանդաբար, հայ կինը եղել է ընտանիքի և հասարակության՝ այսպես կոչված՝ գորշ կարդինալը և մնայով ստվերում՝ կողմնորոշել, թե իր տղամարդկանց (ամուսնուն, հորը, եղբայրներին, զավակներին), թե նրանց միջոցով այլոց:

ման վրա: Հայաստանի հանդուրժողականության ինդեքսը ցածր է՝ մոտ 28 (Hofstede Insights 2021):

Դրական կողմեր.

Ուժեղ սոցիալական նորմերը կարող են նպաստել հասարակության համախմբվածությանը: Կարող է աջակցել մշակութային ավանդույթների պահպանմանը, որոնք կարևոր են ինքնության համար:

Բացասական կողմեր.

Կարող է խոչընդոտներ ստեղծել մարգինալացված խմբերի համար՝ ռեսուրսների և ծառայությունների հասանելիության հարցում: Պոտենցիալ կերպով սահմանափակում է սոցիալական նորարարությունները և խնդիրների լուծման մոտեցումների բազմազանությունը (Inglehart and Welzel):

Առաջարկություններ.

Մշակել ծրագրեր՝ ուղղված սոցիալական ներառականության և հանդուրժողականության բարձրացմանը: Խթանել միջմշակութային երկխոսությունը և կրթական նախաձեռնությունները, որոնք ուղղված են աշխարհայացքի ընդլայնմանը:

Ինչպես նշվում է ՏՀԶԿ-ի (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն)՝ Հայաստանում նորարարությունների վերաբերյալ զեկույցում, «երկրի մշակութային առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն նորարարական քաղաքականության մշակման ժամանակ» (Advancing the Digital Transformation... 2024): Սա հաստատում է Հայաստանի մշակութային համատեքստին կայուն զարգացման ծրագրերը հարմարեցնելու անհրաժեշտությունը:


Վերը բարձրացված խնդիրների և Ինգլիարթի արժեքների քարտեզի միջև կարելի է տեսնել հետևյալ կապերը:

1. Իշխանությունից հեռավորություն և աղքատության վերացում (ԿՉՆ 1): Ինգլիարթի քարտեզի «ավանդական vs. աշխարհի ռացիոնալ» առանցքը կարող է արտացոլել հասարակության վերաբերմունքը հիերարխիայի և իշխանության նկատմամբ: Ավելի ավանդական հասարակությունները հակված են ունենալ իշխանության ավելի բարձր հեռավորություն, ինչը կարող է ազդել աղքատության դեմ պայքարի ռազմավարությունների վրա:
2. Անհատականություն և պարենային անվտանգություն (ԿՉՆ 2): «Գոյատևում vs. ինքնաարտահայտում» առանցքը կարող է ցույց տալ, թե որքանով է հասարակությունը կենտրոնացած հիմնական կարիքների բավարարման վրա: Գոյատևման արժեքներով հասարակությունները կարող են ավելի մեծ ուշադրություն դարձնել պարենային անվտանգությանը:
3. Առնականություն և առողջ ապրելակերպ (ԿՉՆ 3): Ինգլիարթի քարտեզը կարող է օգնել հասկանալու, թե որքանով է հասարակությունը շեշտադրում մրցակցային արժեքները (որոնք կապված են առնականության հետ) կամ կյանքի որակը (որը կապված է առողջ ապրելակերպի հետ):
4. Անորոշությունից խուսափում և որակյալ կրթություն (ԿՉՆ 4): «Ավանդական vs. աշխարհիկ-ռացիոնալ» առանցքը կարող է արտացոլել հասարակության վերաբերմունքը կրթության և նորարարությունների նկատմամբ: Ավելի աշխարհիկ-ռացիոնալ հասարակությունները կարող են ավելի բաց լինել կրթական նորարարությունների նկատմամբ:
5. Երկարաժամկետ կողմնորոշում և գենդերային հավասարություն (ԿՉՆ 5): «Գոյատևում vs. ինքնաարտահայտում» առանցքը կարող է ցույց տալ, թե որքանով է հասարակությունը պատրաստ ընդունել գենդերային դերերի փոփոխությունները: Ինքնաարտահայտման արժեքներով հասարակությունները հակված են ավելի մեծ ուշադրություն դարձնելու գենդերային հավասարությանը:
6. Հանդուրժողականություն և դրա ազդեցությունը ԿՉՆ-ների ձեռքբերման վրա: Ինգլիարթի քարտեզի երկու առանցքներն էլ կարող են արտացոլել հասարակության հան-

դուրժողականության մակարդակը: Ավելի աշխարհիկ-ռացիոնալ և ինքնարտահայտման արժեքներով հասարակությունները հակված են լինելու ավելի հանդուրժող:

Այսպիսով՝ Ինգլիհարթի քարտեզը կարող է օգնել ավելի խորը հասկանալու այն մշակութային համատեքստը, որում իրականացվում են ԿՆՆ-ները Հայաստանում, և թե ինչպես են մշակութային արժեքները ազդում դրանց իրականացման վրա:

The Inglehart-Welzel World Cultural Map 2023



Պատկեր 3. Ինգլիհարթի մշակութային քարտեզ (WVS Wave 7, 2017-2022)

Հոֆստեդեի ինդեքսների, որոնք նկարագրում են հասարակության մշակութային չափումները, և մարդկային զարգացման ցուցիչի (ՄՁ) միջև կորելացիան, որը չափում է երկրի սոցիալ-տնտեսական նվաճումները, բարդ հարց է, քանի որ այս ցուցանիշներն արտացոլում են հասարակական կյանքի տարբեր, թեև փոխկապակցված ասպեկտները: ՄՁ-ն գնահատում է երկարակեցությունը, կրթությունը և կյանքի մակարդակը, մինչդեռ Հոֆստեդեի ինդեքսները գնահատում են մշակութային ասպեկտները, ինչպիսիք են իշխանությունից հեռադրությունը, անհատականությունը, առևտրականությունը, անորոշությունից խուսափումը, երկարաժամկետ կողմնորոշումը և ներողամտությունը:

Մշակութային չափումների և ՄՁ-ի փոխկապակցվածությունը

Ինչպես նշում են Աճեմօղլուն և Ռոբինսոնը, «ինստիտուտները և մշակութային նորմերը առանցքային դեր են խաղում տնտեսական զարգացման և ազգերի բարեկեցության մեջ» (Աճեմօղլուն և Ռոբինսոն 45-258): Սա ընդգծում է Հայաստանի մշակութային առանձնահատկությունները կայուն զարգացման ծրագրերի իրականացման ժամանակ հաշվի առնելու կարևորությունը (Acemoglu and Robinson 267-293):

Հոֆստեդեն նշում է, որ «մշակույթը մտքի կոլեկտիվ ծրագրավորում է, որը տարբերակում է մի խմբի կամ կատեգորիայի անդամներին մյուսներից» (Hofstede 21-22): Այս սահմանումը կարևոր է Հայաստանի մշակութային առանձնահատկությունները հասկանալու համար՝ ԿՆՆ-ների համատեքստում:

Իշխանությունից հեռադրություն: Իշխանությունից ցածր հեռադրություն ունեցող երկրները հաճախ ունեն ավելի ժողովրդավարական և ներառական կառավարություններ, որը կարող է նպաստել ռեսուրսների և ծառայությունների ավելի մեծ հասանելիությանը՝ բարելավելով ՄՁ-ն: Այնուամենայնիվ, իշխանությունից ցածր հեռադ-

րությունը միշտ չէ, որ կորելացվում է բարձր ՄՁ-ի հետ, քանի որ բազմաթիվ այլ գործոններ՝ ներառյալ տնտեսական կայունությունը և արտաքին ազդեցությունները, նույնպես դեր են խաղում:

Անհատականություն: Անհատականության բարձր մակարդակ ունեցող երկրներում սովորաբար ՄՁ-ն ավելի բարձր է, քանի որ այդպիսի հասարակությունները խրախուսում են անձնական նախաձեռնությունը և ավելի շատ հնարավորություններ են տալիս կրթության և ձեռներեցության համար: Անհատական ազատությունը և պատասխանատվությունը կարող են նպաստել տնտեսական աճին և սոցիալական բարեկեցությանը:

Առևտրականություն/կանաչություն: Կանաչի հասարակությունները, որոնք շեշտը դնում են բարեկեցության և կյանքի որակի վրա, կարող են ունենալ բարձր ՄՁ՝ սոցիալական աջակցության և առողջապահության վրա մեծ կենտրոնացման պատճառով: Առևտրական հասարակությունները նույնպես կարող են ունենալ բարձր ՄՁ, եթե հասնում են տնտեսական հաջողության մրցակցության և նվաճումների միջոցով:

Անորոշությունից խուսափում: Անորոշությունից խուսափման բարձր մակարդակ ունեցող երկրները կարող են ունենալ ավելի կայուն սոցիալական համակարգեր և ավելի քիչ սոցիալական կոնֆլիկտներ, դա նպաստում է ՄՁ-ի բարելավմանը: Սակայն ռիսկերից չափազանց խուսափելը կարող է զսպել նորարարությունները և տնտեսական զարգացումը:

Երկարաժամկետ կողմնորոշում և ներողամտություն: Երկարաժամկետ պլանավորումը և ապագա սերունդների վրա շեշտադրումը հաճախ կապված են կրթության և առողջապահության բարելավման հետ, սա ուղղակիորեն ազդում է ՄՁ-ի վրա: Ներողամիտ մշակույթները, որոնք աջակցում են արտահայտման ազատությանը և անձնական բավարարվածությանը, նույնպես կարող են նպաստել սոցիալական պայմանների բարելավմանը և ՄՁ-ի բարձրացմանը:

Միջանկյալ եզրակացություն


Հոֆստեդեի մշակութային չափումների և ՄՁ-ի միջև կորելյացիան կարող է լինել բարդ և անհստակ, քանի որ այս ցուցանիշներն արտացոլում են հասարակական կյանքի տարբեր կողմերը: Այնուամենայնիվ, այս փոխկապակցվածության ըմբռնումը օգնում է ավելի խոր վերլուծելու, թե ինչպես են մշակութային նորմերն ու արժեքները ազդում երկրի սոցիալական և տնտեսական զարգացման վրա: Հայաստանի և այլ երկրների համատեքստում այս գիտելիքը կարող է օգնել ձևավորելու կայուն զարգացմանն ուղղված քաղաքականություններ:

ԿԶՆ և ՄՁ ցուցանիշների միջև վիճակագրական կապը բացահայտելու նպատակով EViews ծրագրային փաթեթի միջոցով կատարվել է Էկոնոմետրիկ վերլուծություն, որի արդյունքում ստացվել է հետևյալը՝ ռեգրեսիոն կապը (ելքային տվյալները բերված են աղյուսակ 1-ում)՝

$$SDG_INDEX_SCORE = 28.4716582742 + 53.8672629304 * HDI + \varepsilon$$

որտեղ՝ SDG_INDEX_SCORE -ը կայուն զարգացման ցուցիչն է, HDI -ը՝ մարդկային զարգացման ցուցիչը: Բանաձևում ε -ը ներկայացնում է մոդելի սխալը կամ չբացատրված մասը:

Վերլուծությունը կատարվել է 119 երկրների կտրվածքով՝ օգտվելով համապատասխան տվյալների բազայից: Համապատասխան գծապատկերը տեսանելի է դարձնում հետազոտվող ԿԶՆ և ՄՁի ցուցանիշների միջև գծային ուղիղ կապի առկայությունը:



